

ԽԱՉԻԿ ԳԱԼՈՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱՆԱԿԵՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսություն
ԵՒ
ՊՐԵՍԻՆԿԱ

ԽԱՉԻԿ ԳԱԼՈՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(Տեսություն եւ Պրակտիկա)

ԵՐԵՎԱՆ
ՎՎ
«ՎԱՆ ՄԱԳԱՆ»
2007

Դրատարակության է երաշխավորվել
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերություններ Փակուլտետի
Խորհրդի և Քաղաքագիտության ամբիոնի կողմից

ԴՏԴ 32.001

ԳՄԴ 66

Գ 206

ԳԱԼՍՏՅԱՆ ԽԱՉԻԿ
Գ 206 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Տեսություն և պրակտիկա/
Խաչիկ Գալստյան.- Եր.: Վան Արյան, 2007. 228 էջ:

Գլխավոր խմբագիր՝
Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գրախոսներ՝
Փիլիսոփայական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Գ. ՄԱՆՈՒԿՐՅԱՆ
Փիլիսոփայական թեկնածու, դոցենտ Ա.Խ. ԹԱՍԱԶՅԱՆ

Աշխատությունը նվիրված է քաղաքական տեսական և գործնական
նշանակություն ունեցող հիմնահարցերի պարզաբանմանը, ինչպես նաև
Դարաբաղյան հակամարտության առաջացման, շարժընթացի և կարգա-
վորման հեռանկարների վերլուծությանը:

Գիրքը նախատեսվում է քաղաքական բանակցությունների հիմնահար-
ցով գրադադարձելու միջազգայնագետների, ուսանողների Դա-
րաբաղյան հիմնահարցի բանակցային գործընթացով հետաքրքրված ըն-
թերցողների լայն շրջանակի համար:

ԵՊՀ Գրադարան

Գ 0802000000
854(01)2007 2007 թ.



ՏՍ0178399

ԳՄԴ 66

Ը Գալստյան Խ., 2007 թ.

ISBN 978-99941-67-52-4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Գլուխ 1. Քաղաքական բանակցությունները հասարակության քաղաքական կյանքում9	
§ 1. Քաղաքական բանակցությունների առաջացման նախադրյալները.....9	
1.1. Քաղաքական բանակցությունների էական հատկանիշները.....17	
§ 2. Քաղաքական բանակցությունների հիմքերը և սկզբունքները	23
2.1 Բանակցությունների արժեքային հիմքերը.....	24
2.2 Ծահերի գերակայությունը բանակցային գործընթացում.....	30
2.3 Բանակցությունների նորմատիվ-իրավական հիմքերը.....	36
2.4 Քաղաքական բանակցությունների սկզբունքները.....	41
§ 3. Քաղաքական բանակցությունների սուբյեկտները.....	45
§ 4. Իշխանական բանակցություններ.....	57
Գլուխ 2. Քաղաքական բանակցությունների գործընթացը 66	
§ 1. Քաղաքական բանակցությունների գործընթացի փուլերը.....68	
1.1. Բանակցությունների նախապատրաստման փուլը.....	71
1.2. Բանակցությունների վարման գործընթացը.....	77
§ 2. Բանակցությունների ռազմավարությունը.....	80
§ 3. Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական բանակցություններում.....	85
§ 4. Բանակցային որոշումների բնույթը և ընդունման մեխանիզմը....	101
§ 5. Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում.....	111

ԳԼՈՒԽ 3. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը	132
§ 1. Ղարաբաղյան հակամարտության առաջացման գործոնները	133
3.1.1 Հակամարտության իրավաքաղաքական գործոնները	135
3.1.2 Էթնոմշակութային գործոնները	140
3.1.3 Տնտեսական գործոնները	143
3.1.4 Աշխարհաքաղաքական գործոնները	148
3.2 Ղարաբաղյան հակամարտության շարժընթացը	159
§ 3.2.1 Պատերազմական գործողությունների հիմնական փուլերը	167
3.2.2 Բանակցային գործընթացի փուլը	170
§ 3.3 Կարգավորման հեռանկարները	177
3.3.1 Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի հիմնահարցը	179
3.3.2 Փախստականների հիմնահարցը	185
3.3.3 Զինված ուժերի հետ քաշման և տարածքների վերադարձի խնդիրները	191
3.3.4 Հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափակման խնդիրները	193
3.3.5 Կարգավորման նոր միտումներ. խորհրդարանական և ժողովրդական դիվանագիտության ձևաչափեր	195
Վերջաբան	208
Հավելված	211
Օգտագործված գրականության ցանկ	223

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի զարգացման արդի փուլում մարդկանց կենսագործունեության տարբեր բնագավառներում լայնորեն կիրառվում են բանակցությունները՝ որպես նրանց ամենօրյա փոխհարաբերակցությունների, վլիճահարույց հարցերի, հակամարտությունների կարգավորման, շահերի արտահայտման ու պահանջմունքների բավարարման, միջայտական հարաբերությունների հաստատման և պետությունների միջև համագործակցության ապահովման առավել արդյունավետ ու քաղաքակիրք եղանակ:

Բանակցությունները, հանդիսանալով հասարակության քաղաքական կյանքի կարևոր գործընթացներից և քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից մեկը, իրենց առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունեն հատկապես անցումային փուլ ապրող հասարակական-քաղաքական համակարգերում: Հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման գործընթացներին զուգահեռ, նորանոր մարդիկ, տոցիալական խմբեր, պետական և ոչ պետական հաստատություններ, հասարակական - քաղաքական կազմակերպություններ ու մարդկանց զանազան միավորումներ են ներգրավվում բանակցային գործընթացներին, դրանով իսկ, առավել հաճախ դիմելով համատեղ որոշումների նախապատրաստման և ընդունման այդ միջոցին: Հայաստանում նույնպես, հատկապես՝ արդի անցումային ժամանակաշրջանում, բանակցությունների միջոցով զանազան հիմնահարցերի լուծումն իր արտահայտությունն է գտնում հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում՝ միջայտական փոխհարաբերություններում, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ու կառույցների շրջանակներում, իշխանության տարբեր ճյուղերի, խորհրդարանական խմբակցությունների, քաղաքական կուսակցությունների, կուսակցական խմբավորումների փոխհարաբերություններում և այլն:

Այդ ոլորտներից շատերում առկա հիմնախնդիրների ու առաջ եկած հակասությունների լուծմանը կամ կարգավորմանն ուղղված բանակցությունների արդյունավետությունը, ինչպես նաև բանակցությունների

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

մասնակիցների մասնագիտական պատրաստվածության աստիճանը միշտ չէ, որ լիովին համապատասխանում են հասարակական-քաղաքական նոր իրողությունների առաջադրած պահանջներին, որը, բնական է, չի կարող բացասականորեն շագել Հայաստանի քաղաքական համակարգի ժողովրդագրացման գործընթացների վրա: Չնայած նրան, որ մեր հասարակական-քաղաքական կյանքի տարրեր ուրախություններում արդեն իրենց հաստատում տեղն են գտել բանակցությունները, այնուամենայնիվ, Հայաստանում բացակայում են բանակցությունների հիմնախնդրի համակողմանի հետազոտությունները և տեսական-վերլուծական բնույթ կրող աշխատանքները: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ շնայած այն հանգամանքին, որ քաղաքական բանակցություններն իրենց կիրառումն են գտնում հասարակության ծևավորման հնագույն ժամանակներից սկսած, այնուամենայնիվ, բանակցությունների վերաբերյալ ուսումնասիրությունները, բանակցությունների տեսության ծևավորումն ու մեծածավալ հետազոտություններն այս հիմնահարցի վերաբերյալ սկսվում են 20-րդ դարի 50-ական թվականներից սկսած, հատկապես ԱՄՆ-ում. եվրոպական մի շարք երկրներում, ինչպես նաև Խորհրդային Միությունում, որտեղ հետազոտությունները հիմնականում տարփում էին միջազգային բանակցությունների գործընթացի վերլուծության ուղղությամբ: Բանակցությունների հիմնահարցն առավել մշակված է ամերիկյան քաղաքագիտական դպրոցի կողմից, որտեղ այլ ուսումնասիրաթյունները տարփում են բազմաթիվ ուղղություններով, որոնց հիմքում ընկած են տարրեր մոտեցումներ: Մի դեպքում բանակցությունները լիտոարկվում և արժևորվում են որպես խաղաղության հաստատման և հակամարտությունների կարգավորման կարևոր միջոց (Չ. Օսգուդ, Ռ. Ֆլիշեր, Ու. Ուրի, Հ. Ռայֆա), մյուս դեպքում որպես քաղաքականության «ուժային հայեցակարգի» արտահայտություն, որպես գերակայության հաստատման և առավելագույն օգուտների ձեռք բերման միջոց (Հ. Մորգենթաու, Ս. Միջենել, Լ. Ֆուրենեկեր): Ներկայումս ԱՄՆ-ում գործում են մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ Հարվարդի, Ջորջ Մեյսոնի, Բուստոնի, Կալիֆորնիայի և այլ համալսարաններում, որոնք զբաղվում են բուն բանակցությունների տեսական և կիրառական հարցերի ուսումնասիրմամբ: Բնականաբար այս աշխատանքի շրջանակներում անհնար է ամբողջությամբ ներկայացնել միջառարկայական բնույթ կրող բանակցությունների տեսության հարցերի ողջ համալիրը: Բանն այն է, որ բանակցությունների հիմնահարցը գտնվում է ոչ միայն քաղաքագիտության, այլև տնտեսագիտության, փիլիսոփայության, պատմության,

Ներածություն

Իոգերանության, սոցիոլոգիայի, միջազգային հարաբերությունների տեսության, դիվանագիտության և այլ հումանիտար գիտությունների ուսումնասիրության տիրություն: Այդ գիտություններից յուրաքանչյուրին հետաքրքրում է բանակցային գործընթացի այս կամ այն կողմը: Տնեսագիտության շրջանակներում ուշադրություն է լրացնելու հատկապես՝ գործարար բանակցությունների և բիզնես-գործարքների հետ կապված հարցերին, իոգերանության տեսանկյունից առավել հետաքրքրական են բանակցային սուբյեկտների վարքագծի, բանակցությունների մասնակիցների կողմից հիմնախնդիրների սուբյեկտիվ ընկալման հարցերը: Սոցիալոգիան բանակցությունների հիմնախնդիրն մոտենում է բանակցություններին ներգրավված սուբյեկտների սոցիալական կարգավիճակի, սոցիալական գործընկերության տեսության, աշխատանքային և սոցիալական կոնֆլիկտների կարգավորման տեսանկյունից: Դիվանագիտության մեջ հիմնականում մշակվել են բանակցությունների արարտղակարգային և փաստարդաբային կողմերի վերլուծության հետ կապված հարցերը: Փիլիսոփայության ուշադրության կենտրոնում հայտնվում են բանակցությունների առանձին փուլերի օրինաչափությունների, մասնավորապես՝ դիրքորոշումների ձևակերպման, փաստարկման և հիմնավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը և այլն:

Ավանդաբար, քաղաքագիտության մեջ, բանակցություններին վերաբերու ուսումնասիրությունները տարվել են միջազգային հարաբերությունների տեսության, իսկ վերջերս՝ նաև կոնֆլիկտաբանության շրջանակներում: Բանակցությունների վերաբերյալ հետազոտությունները զարգացել են հատկապես միջազգային հակամարտությունների վերլուծության համատեքստում: Այսօր քաղաքագիտության այս երկու ճյուղերն ել զարգանում են հարաբերականորեն ինքնուրույն, միաժամանակ հարստացնելով քաղաքագիտության տեսական և կիրառական գիտելիքների քազան:

Քննարկման առարկա դարձնելով միջառարկայական բնույթ կրող հետազոտվող հիմնահարցը՝ սույն աշխատանքում ուսումնասիրվում են բանակցությունների տեսության այնպիսի հարցեր ևս, որոնք կարող են գտնվել այլ գիտությունների հետազոտության տիրություն՝ առավելագույն շեշտը դնելով հիմնահարցի քաղաքագիտական կողմի վրա: Նախ, բանակցությունները դիտարկվում են որպես հասարակության քաղաքական կյանքում ընթացող քաղաքական գործընթացների կարևորագույն, քաղաքացուցիչ տարր: Բանակցությունների գործընթացի ուսումնասիրությունը բույլ է տալիս հետազոտվող հիմնահարցը ներառել քաղաքագի-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

տական գլուխելիքների համակարգի մեջ: Երկրորդ կարևոր հանգամանքը, որով ավելի է շեշտադրվում հիմնահարցի քաղաքագիտական տեսանկյունը, վերաբերում է իշխանական հարաբերությունների դրաւորմանը քաղաքական քանակցություններում: Երրորդ՝ հիմնահարցի քաղաքագիտական կողմն է արտացոլում նաև քաղաքականության սուբյեկտների համատեղ որոշումների մշակման և/կամ դրանց ընդունման գործընթացի ուսումնասիրումը: Եվ վերջապես, քանակցությունների տեսական և կիրառական նշանակություն ունեցող հարցերի ուսումնասիրումը կարևորվում է հատկապես Ղարաբաղյան հակամարտության քանակցային գործընթացի վերլուծության տեսանկյունից, որին նվիրված է գրքի երրարդ գլուխը: Կարծում ենք, այս հանգամանքներով է, թերևս, պայմանավորված նման թեմայով մենագրության ստեղծման անհրաժեշտությունը, ինչպես նաև այդ հիմնահարցի քաղաքագիտական ուսումնասիրման արդյունականությունն ու հրատապությունը:

Գլուխ 1.

Քսուքսկսն բանսկառությունները ՀՍԱՐՍԿՈՒԹՅՈՒՆ ՔՍՈՒՔՍԿՍՆ ԿԵՍԱՔՈՒՄ

1. ՔՍՈՒՔՍԿՍՆ ԲԱՆՍԿԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱԶՄԱՄՆ ԽՈԽՍԴՐՅԱԼՆԵՐԸ

Բանակցությունների կիրառումը՝ որպես մարդկային փոխհարաբերությունների կարգավորման, նրանց միջև երկխառնության հաստատման եղանակ, սկիզբ է առնում հասարակական կյանքի ձևավորման հնագույն ժամանակներից սկսած:

Որոշ հեղինակների կարծիքով, բանակցությունների դրսերման սաղմեր կարելի է նկատել նախնադարյան, ավանդական, պարզունակ ցեղային համայնքներում, որ ոչ միշտ և ոչ բոլոր վիճակարույց հարցերն էին լուծվում բռնի ուժի կիրառմամբ: Հ. Նիկոլսոնը, չհամաձայնելով միջնադարյան այն հեղինակների հետ, որոնք երկրի վրա առաջին քանագնացներ համարում էին երեշտակների¹՝ որպես Աստծո և մարդկանց միջև փոխադարձ կապ ու հաղորդակցություն ապահովողներ, նշում է. «...նոյնիսկ մեր նախնաների՝ նեանիներացինների և կրոնանյոնների մոտ, հավանաբար, լինում էին դեպքեր, երբ վայրենիների մի խումբը ցանկանում էր բանակցել մյուսի հետ՝ մարտի ժամանակավոր դադարեցման, վլրավորների և գերինների փոխանակման և այլի շորջ»²: ՈՒ. Ուրին, ավանդական հասարակություններում մարդկանց վարքագիծը կոնֆլիկտային իրավիճակներում հետազոտելով, գտնում է, որ «...այնտեղ պարտադիր չէ, որ բոլոր վեճերն ու կոնֆլիկտները լուծվեն բռնի կերպով: Գոյություն ունեն տարբեր մեխանիզմներ և ընթացակարգեր՝ դրանցից խուսափելու համար»³:

Սովում Խորենացին «Հայոց Պատմությունում», վկայակոչելով Մար Արա Կատինային, գրում է, որ Տիտանյան Բելն իր քաջավորաւթյունը ամենքի վրա հաստատելով, իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկում է հյուսիսի կողմը՝ Հայկի մոտ, որ նա հնազանդության գա և խաղաղությամբ ապահու: «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրու և մեղմացրու քո հպարտ բնա-

1 **Никольсон Г. Дипломатия. М. 1941г. с. 21.**

2 **Հղումն ըստ. Лебедева М.М. Вам предстоит переговоры. М. 1993. с. 9.**

3 **Սովում Խորենացի. Հայոց Պատմություն, Եր., 1981, էջ 41:**

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Վորության ցուրտ սառնությունը և ինձ հնագանդելով խաղաղ ապրիլ՝ որտեղ որ կհաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել»⁴: Հայկը Բելի պատգամավորներին ինտ է դարձնում, և ուղարկված պատգամավորները վերադառնում են Բաքելոն: Բանակցության ծախողումից ինտու միայն Տիտանյան Բելը զորք է ժողովում Հայկի դեմ և արշավում դեպի հյուսիս՝ Արարադի երկիրը: Հատկանշականն այն է, որ Խորենացու «Հայոց պատմության» արևմտահայերեն տարբերակում հանդիպում են երկու արտահայտություններ՝ «պատվիրակություն» և «Փրեշակապետություն», որի հաստատում է Հ. Նիկոլսոնի մեջ բերած՝ բանագնացներին տված միջնադարի տեսաբանների բնութագրումը:

Սովոր Խորենացու նկարագրած այս պատմությունը ևս վկայում է, որ ինն ժամանակներում, շատ հաճախ, մինչ պատերազմական գործողություններ սկսելը, հակառակորդ կողմերը բանակցել են միմյանց ինտ, ինչը հաստատում է բանակցությունների միջոցով իմանահարցերի լուծման եղանակի վաղեմի ծագումը:

Բանակցությանները, որպես քաղաքական գործունակյան իրականացման քաղաքակիրք ու արդյունավետ միջոցներից մեկը, քաղաքականության սուրյեկտաների շահերի արտահայտման ու պահանջմանների բավարարման համար առավել ընդունելին ու նպատակահարմարը լինելով, լայն կիրառում են գտնում ավելի ուշ: Անժխտելի է մարդու ինքնության բնութագրիների շարքում միմյանց ինտ հաղորդակցվելու, համատեղ գործունեություն իրականացնելու, դիմացինին ընկալելու և ընկալված լինելու և, ի վերջո, փոխադարձ համաձայնության գալու բնական պահանջի կարևորությունը, որը Արխստուելլ համարում է մարդկային էակների բարձրագույն բնական նպատակը, համարելով մարդուն իր բնույթով «քաղաքական էակ», որանով խսկ ընդգծելով մարդկանց հսմատեղ ապրելու, գործունեություն ծավալելու և ստեղծագործելու բնական պահանջի կարևորությունը անբրուպօքեն գործոնների շարքում: Քաղաքական բանակցությունների առաջացումը պայմանավորված է քաղաքականության՝ որպես յուրահատուկ հասարակական երևույթի հանդես գալու, հասարակական հարաբերությունների հետագա բարլացման, նոր սոցիալական ինստիտուտների՝ մասնավորապես պետությունների երևան գալու հետ:

Դեռևս Հին աշխարհի առաջին պետությունները միմյանց հետ ունեցել են որոշակի փոխհարաբերություններ, որոնք կարգավորվել են տար-

⁴ Նույն տեղում, էջ 42:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 43:

Քաղաքական քանակցությունների առաջացման նախադրյալները

բեր պայմանագրերի, համաձայնագրերի, պարտավորությունների միջոցներում: Եզիպտական պետությունն իր զոյլության տևական ժամանակի ընթացքում ձևափորել է քարդ պետական ապարատ՝ հարեւան պետությունների հետ հարաբերությունները կարգավորելու համար: “Պատահական չե, որ պատմությանը հայտնի առաջին միջազգային համաձայնագիրը գտնվել է Եզիպտոսում և Վերաբերում է մ.թ.ա. 1270 թվականին՝ կնքված Եզիպտական փարավոն Ռամզես 2-ի և խեթական թագավոր Հարուշիլի միջև”:

Եզիպտական քաղաքակրթության բնօրդանը համարվող Հին Հունաստանում մարդկանց գործունեությունը կազմակերպված էր քաղաք-պետություններում՝ «պոլիսներում», որոնք կոչված էին կարգավորելու քաղաքացիների համատեղ լյանքը, համապատասխանեցնելու միջանց շահերն ու պահանջմունքները: Ինչպես նշում է Է. Ֆրոլովը. «Հունական դեմոկրատիան համաշխարհային պատմության մեջ հանդիսանում է քաղաքական նմանօրինակ կառուցվածքի եզակի նմուշ, որի արժեքաբանական նշանակությունը կասկած չի հարուցում»⁶:

Հունական պոլիսները միջանց հետ ունեցել են քավականին զարգացած առևտության, քաղաքական և դիվանագիտական հարաբերություններ, որոնք իրականացել են նաև հատուկ քանակների միջոցով: Բացի այդ, քանակցությունների վարման, պատվիրակությունների ընդունման համար զոյլություն են ունեցել հատուկ ընթացակարգեր, որոնց մասին մանրամասն տեղեկություններ են հայտնում Հոմերոսը, Հերոդոտոսը և այլոր:

Մասնավորապես, Հոմերոսը «Իլիականի» իններրդ երգում քավականին մանրամասն նկարագրում է մի քանակցային դրվագ, որը վերնագրված է «Պատգամավորություն»: Հունական գործերի առաջնորդ Ազգամենոն Աստրիդներ, Տրոյայի անհաջող պաշարաւմից հուսալքված, գմտված լինելով Աստվածածին Արլիլեսի հետ՝ քանբերներին պատվիրում է ծածուկ իր մոտ ժողովի կանչել հունական ցեղերի բոլոր ավագներին⁷:

Ժողովում նա առաջարկում է.

«Ուստի և դուք, սիրելիներս, ինչ որ ասեմ՝

կատարեցեք այժմ հնազանդ.

6 Стю Тураев В. История Древнего Востока. т 1. Москва. 1936. с. 274.

7 Фролов Э. Политические лидеры афинской демократии. Ленинград. 1983. с. 6.

8 Стю Тураев, 1936, т. 1, с. 274.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Նստենք նավերն ու փախչենք դեպ մեր սիրելի հայրենիքը,
Քանզի, իրավ, մենք չենք կարող առնել Տրովն լայնափողոց»:

Այս ելույթին ի պատասխան՝ Դիմեղեն ծիավարը առարկում է.

«Նախ, Ատրիխես, ես պիտ կովեմ քո խելազորկ ճառերի դեմ,
Ինչպես վայել է ժողովին....

Բայց մյուս բոլոր գեղագանգուր աքայացիք դեռ կսպասեն,
Մինչ որ մենք աստ կործանենք քաղաքն Իլիոն»:

Ավագներից մեկ ուրիշը՝ Նեսրորը, առաջարկում է պատվիրակություն կազմել և լիազորել նրան բանակցելու Աքիլեսի հետ՝ վերադառնալու հունական բանակ:

«Գործն է բարի, քաջ ընկերներ, ընտրենք մարտիկն ուղարկվելիք,
Որ շուտ գնան դեպ վրանը Պելսածին Աքիլեսի»:

Նրա առաջարկությամբ դեսպաններ են ընտրվում Ֆենիքսը, Ոլիսևսը, Այաքսը ու ևս երկու բանքեր, որոնք նախօրաք ուղարկվում են տեղեկացնելու Աքիլեսին պատվիրակության ժամանման մասին»:

Հոմերոսի նկարագրած Տրոյական պատերազմից առաջ տեղի ունեցած դեպք է պատմում հույն պատմիչ Հերսոդոտոսը, երբ կոլիսերի արքան պատվիրակներ է ուղարկում Հելլադա՝ բանակցելու իր առևանգված աղջկան վերադարձնելու (խոսքն առասպելական արգոնավորդների արշավանքի մասին է)»⁹:

Հերոդոտոսը բերում է մեկ այլ օրինակ, որը վերաբերում է մ.թ.ա. 560-527թթ. Արենքի տիրակալ Պիսխատրատոսի իշխանության գալուն: Նա, օգտվելով երկու խմբակցությունների՝ դաշտավայրայինների և առափնյա շրջանների միջև առկա հակամարտությունից, ցանկանալով ձեռք բերել Արենքի իշխանությունը, իշխնում է երրարդ՝ լեռնականների խմբակցությունը՝ դառնալով նրանց առաջնորդ:¹⁰ Այսուհետև իշխանության գալու շուրջ նա բանակցություններ է վարում դաշտավայրայինների առաջնորդ Մեզակլեսի հետ: «Այս միջոցով,- գրում է Հերոդոտոսը,- Պիսխատրատոսը վերադարձավ իշխանության և Մեզակլեսի հետ կնքած պայմանի համաձայն ամուսնացավ նրա աղջկա հետ և ստացավ իշխանությունը»¹¹: Այս դեպքում արյեն խոսքը գնում է **քաղաքականության և իշխանության շուրջ մղվող պայքարի մասին, որտեղ, որպես քաղաքական պայքարի միջոց, կիրառվում են բանակցությունները:**

9 Տե՛ս նույն տեղում, էջ 178:

10 Տե՛ս Հերոդոտոս, Պատմություն ինը գրքերից, Եր., 1986, էջ 6:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 25:

12 Նույն տեղում, էջ 26:

Քաղաքական բանակցությունների առաջացման նախադրյալները

Արենական հանրապետությունը հարևանների հետ ուներ բավականին զարգացած դիվանագիտական հարաբերություններ, որոնք իրականանում էին դեսպանների միջոցով: Բանագնացները պետք է օժտված լինեին հոետորական ծիրքով, պերճախտությամբ, պատվիրակությունները կարող էին բազմաքանակ լինել, դեսպանները օժտված էին անձեռնմխելիությամբ: Սակայն հունական դեմոկրատիան, ըստ Հ. Նիկոլոսի, մեծ կասկածանքով էր վերաբերվում իր բանագնացներին. շատ հաճախ մի քանի բանի բանակցային խմբեր էին ուղարկվում միևնույն հանձնարարությամբ, պատվիրակությունները չունեին համապատասխան լիազորություններ և փոփոխված իրավիճակի սյայմաններում ստիպված էին լրացնուցիչ ցուցումներ ստանալ ժողովրդական ժողովից, որը երբեմն կարող էր ամիսներ տևել: *Միջկուսակցական և մերկուսակցական ծայրասահման հակասությունների բազմազանությունը խաջողութում էր որպատմների ընդունման գործընթացին, դանդաղեցներով իշխանության մեխանիզմի գործունեության արդյունավետությունը**: Օրինակ՝ Դեմուքենսը, հունական անտիկ քաղաքակրթության ժամանակակիցն ու ակտիվ քաղաքական գործիչներից մեկը, քննադատում էր հունական դեմոկրատիան դանդաղեցնության, իսկ ժողովրդական ժողովի ներկայացնուցիչներից՝ մեղադրում անիրազեկության մեջ¹³: Անարդյունավետ գործունեության մյուս նախապայմանը հունական դեմոկրատիայի թելադրած «քաց» բանակցությունների պրակտիկան էր, որը բանակցային գործընթացի յուրաքանչյուր փուլ ակտիվ հասարակական քննարկման առարկա էր դարձնում, իսկ քանի որ հունական հասարակությունը ներկայացնում էր իրար հետ անհաջոտ պայքար մղող, տարբեր քաղաքական շահեր ու նպատակներ հետապնդող կուսակցական խմբավորումների անբողոքություն, ապա այդ իրողությունը, իր հերթին, արգելակում էր վերջնական համաձայնագրերի վավերացումն անորոշ ժամանակով:

Քաղաքական բանակցությունների զարգացման առանձնահատկությունները պայմանավորված են քաղաքական համակարգերի կառուցվածքով և բնույթով: Հին հունական քաղաքական համակարգի կառուցվածքը պայմանավորում էր քաղաքական բանակցությունների ընդհատությունն ու անորոշությունը, քանի որ միևնույն հիմնահարցի լուծման համար երբեմն մի քանի պատվիրակություններ էին ուղարկվում, որոնք

* Հին հույններից առնվազն երեք հավարամյակ հետո էլ միջկուսակցական հսկասությունների և կոնֆիգուսների բազմազանությունը քաղաքական հսմակարգի կայուն գործառնությունը խարարող կարևոր գործուններից մեկն է, որն առավել ցայտուն դրսերվում է անցումային ժողովրդավարությունների պայմաններում, հատկապես՝ Հայաստանում:

13 Տե՛ս Նիկոլսոն Գ. Дипломатическое искусство. 1962 с. 37.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

շունեխն ներքին համերաշխություն, բանակցությունները պարբերական բնույթ չեն կրում, որոշումները ընդունվում են ոչ անմիջական բանակցողների կողմից, այլ ժողովրդական ժողովի, ուր հարցերի քննարկումը կարող է ճագագել անորոշ ժամանակով: Բանագնացների հաջողությունը որոշ շափով կախված էր նրանց պերճախոսությունից, իունտորական ձիրքից: Հունական դեմոկրատիայի ստեղծած արժանակիշատակ ինստիտուտներից կարելի է առանձնացնել **պրոկրսենների ինստիտուտը**: Հունական պրոկսենը սովորաբար այն քաղաքի բնակիչն էր, որը նշանակում էին նրան՝ որպես Աթենական հանրապետության շահերի պաշտպան:

Հոռոմեական քաղաքական համակարգը նպաստեց քաղաքական բանակցությունների իրավական իիմքերի, բանակցային փաստարդերի իրավական ծևակերպումների զարգացմանը, շրջանառության մեջ դրվեցին մի շարք դրույթներ՝ բարի կամքի դրսերման (prisca fides)¹⁴, միջազգային իրավունքի իիմքերի ամրագրման, քաղաքական բանակցությունների կանոնակարգման, բանակցությունների արդյունավետությունը բարձրացնելու համար ժամանակային սահմանափակումների ներմուծման և այլ սկզբունքներ:

Միջնադարում քաղաքական բանակցությունների հիմնական դերը պատերազմական արդյունքների ամփոփումն էր: Ի տարբերություն հունական «քա» բանակցությունների վարման սկզբունքի, միջնադարում տարածում է գտնում **«գաղտնի» բանակցությունների** պլակտիկան, ուր կիրառվում էին զանազան հնարներ ցանկալի արդյունքների հասնելու համար: Այդպիսիք էին հակառակորդին խարելլ, տարբեր կոռալիցիաների ստեղծումը, անվատահության մթնոլորտ սերմանելլ և այլն: Պատահական չե, որ քաղաքականության և բարոյականության փոխհարաբերության հիմնահարցերը առավել սուր կերպով առաջ են քաշվում հենց այդ ժամանակներում: Ավելի ուշ հոչակվեցին քաղաքական բանակցությունների վարման այլ սկզբունքներ, որոնց հիմքում ընկած էին կողմերի միջև վստահության առկայության սկզբունքը, քաղաքական բանակցությունների դիտարկումը որպես մշտական քաղաքական գործունեության բնագավառ, բանակցողների կողմից ընդունված **«միասնական խաղող» կանոնների** ընդունումը և այլն:

Միջնադարում, և դրանից հետո բավականին երկար ժամանակ (ընդհուած մինչև XIX դարի սկզբները), համաշխարհային քաղաքականության առանցքը համարվում էր Եվրոպան: Եվրոպական մի քանի պետու-

Քյուններ վերահսկում էին քաղաքականության ոլորտը, իիմնական քաղաքական պայքարը գնում էր նրանց միջև: Փոքր պետությունների ազդեցությունը քաղաքականության վրա կապվում էր նրանց ունեցած դերով մեծ պետությունների փոխհարաբերություններում, որն էլ իր հերթին, հանգեցնում էր այն բանին, որ մեծ տերություններն էին պատասխանատվություն կրում փոքր երկրների փոխհարաբերությունների կարգավորման և նրանց միջև խաղաղության հաստատման համար: Միջնադարում հեռահաղորդակցության, կապի և լրատվության ժամանակակից միջոցների բացակայության պարագայում, բանակցությունները կիրառվում էին իիմնականում հակառակորդից տեղեկատվություն ստանալու նպատակով: Առաջնային կարևոր նշանակություն ուներ արագ տեղեկատվության ստացումը: Այդ ժամանակի բանակցությունները աչքի էին ընկնում բանակցային փաստաթղթերի հարուստ բազմազանությամբ, վավերացման բարդ բնքացակարգերով և այլն: Մյուս առանձնահատկություններից մեկը կարելի է համարել բանակցությունների վարման միանական նմարտավարության կիրառումը, որը պայմանակիրված էր միանման օտարերկյա առաքելության դեսպանական ծառայությունների առկայությամբ: Դեսպանները տարիներ շարունակ շփվում էին միմյանց հետ, որը բայց էր տալիս որոշակիորեն կանխատեսելու յուրաքանչյուր իրավիճակում հակառակ կողմի վարքագիծը: Տիրապետում էր այն մոտեցումը, որ բանակցությունները գործնքաց են, և որ **բանակցությունների յուրաքանչյուր փուլ պետք է կռնիդիմենցիալ լինի**, քանի որ, եթե բանակցությունների փուլերը իրապարակային քննարկման առարկա են դառնում, ապա, հավանաբար, այն դատապարտված է ծալստդման: Բանակցությունները հաճախ կապված են լինում զիջումների և փոխզիջումների հետ: Եթե նախօրոք արկած զիջումների մասին հայտնի է լինում հասարակայնությանը, այն կարող է բանակցությունների դադարեցման պատճառ հանդիսանալ:

Ժամանակակից քաղաքական համակարգերամ բանակցությանների կիրառման ոլորտներն էլ ավելի են ընդլայնվում՝ ընդգրկելով ոչ միայն միջազգային հարաբերությունների, այլ նաև ներքաղաքական հարաբերությունների ոլորտն ամբողջությամբ: Պետք է նշել, որ քաղաքականության կառուցվածքի հետագա բարդացումը, քաղաքական համակարգերի ծևափորումը, իշխանության տարանջատման սկզբունքի կիրառումը, կուսակցական համակարգերի կայացումը, հաղորդակցության նոր ձևերի առաջացումը, զանգվածային լրատվության միջոցների առկայությունը, ժողովրդավարական արժեքների աստիճանական ներմուծումն

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ու տարածումը մեր օրերում բանակցությունների տեսության առջև նոր խնդիրներ և նոտեցումներ են առաջ քաշում:

Բանակցությունների հիմնահարցի տարրեր մակարդակներով ուսումնասիրությունները մեծ քափ ստացան հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ պարզ դարձավ, թե որքան ահավոր ու անդառնալի հետևանքներ կարստ են ունենալ քաղաքական և միջազգային հիմնախնդիրների կարգավորման ուժային, բռնի եղանակները, որոնք, ի թիվս մարդկային մեծ կորուստների, քարոյահոգեքանական հուսալքման, տնտեսության քայլայման, իդի են նաև համերկրային աղետներով և արիավիլքներով: Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված ԱԱԿ-ի կանոնադրության 33-րդ հոդվածը հստակ սահմանում է վիճակարույց հարցերի, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման կարգը, մատնանշում միջոցները, որոնցից առաջնային դերում հանդես են գալիս բանակցությունները:

Բանակցություններին վերաբերող առաջին տեսական աշխատությունները ստեղծվել են 50-60 ական թվականներին, առավել ինտենսիվ ԱԱԾ-ում, որտեղ հիմնահարցին նվիրված հետազոտությունները տարվում էին մի քանի ուղղություններով.

1. իսակերի տեսության և մաթեմատիկական որոշումների ուսումնասիրության,

2. բանակցությունների սոցիալ-հոգեքանական մոտիվացիայի հետազոտման,

3. հակամարտությունների կարգավորման,

4. բանակցությունների գործընթացային և ընթացակարգային կողմերի բացահայտման,

5. աշխատանքային վեճերի լուծման և այլն¹⁵:

Եվրոպական երկրներում տարբյող բանակցությունների վերաբերյալ ուսումնասիրություններում, բանակցային գործընթացների հետ մեկտեղ, ուշադրությունը կենտրոնացնում են եվրոպական քաղաքագիտական դպրոցին բնորոշ մշակութային, ազգային առանձնահատկությունների

15 See u. R. Luce, H. Raiffa. Games and Decisions: Introduction and Critical Survey. N.Y. 1957., A. Rapoport. Fights, Games and Debates. Ann Arbor. 1960., S. Siegel, L. Fouraker. Bargaining and Group Decision-Making. N. Y. 1960., R. Mc Kersie An Analysis of a Social Interaction System. N.Y. 1965., H. Kelman. International Behavior: A Social-Psychological Analysis. N.Y. 1965., T. Schelling. The Strategy of Conflict. Cambridge. 1960., M. Deutsch. The Resolution of Conflict. New Haven. 1973., Ch. Osgood. An Alternative to War or Surrender. Urbana. 1962., H. Raiffa. The Art and Science of Negotiation. Cambridge. 1982., R. Fisher, W. Ury. Getting to YES.. Boston. 1981., D. Lax, J. Sebenius. The Manager as Negotiator. N.Y. 1986., I. W. Zartman, M. Berman. The Practical Negotiator. New Haven. 1982.

Քաղաքական բանակցությունների Էական հատկանիշները

ուսումնասիրությանը:

ԽՍՀՄ-ում բանակցություններին վերաբերող նշանակալի աշխատությունների հիմնականում վերաբերում էին արտաքին քաղաքականության հարցերին: Ամբողջատիրական քաղաքական համակարգի պայմաններում վարչականացնելու ապարատի, հասարակության հստակ ընգծված հիերարխիկ կառուցվածքի, որոշումների ընդունման փակ նեխանիզմի առկայության դեպքում հասարակական կյանքի այլ ոլորտներում բանակցությունների մասին խոսք լինել չէր կարող: Խորհրդային հեղինակների ուշադրության կենտրոնում կիմնականում միջազնուական բանակցությունների ուսումնասիրությունն է ԽՍՀՄ - ԱՍԴ փոխհարաբերությունների համատեքստում¹⁶: Մ. Լեբեդյան խորհրդային ժամանակաշրջանի բանակցություններին վերաբերող հետազոտությունները բաժանում է, մի բանի շրջանի, կապելով այն աշխարհում սպառազինությունների մրցավագքի տեմպերի հետ¹⁷:

Բանակցություններին և բանակցային տեխնոլոգիաներին վերաբերող տեսության մի շաբթ կիմնական գծերին և առանձնահատկություններին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև:

1.1. ԶՍՊԸԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԿԱՆ ՀԱՏԿԱՆԻԾՆԵՐԸ

Ընդհանուր առմամբ, բանակցությունների սյատմական զարգացումն ընթացել է երեք հիմնական՝ առևտրային, քաղաքական-դլվանագիտական, աշխատանքային վեճերի ու կոնֆլիկտների կարգավորման ուղղություններով: Այս երեք ուղղություններից յուրաքանչյուրը հարստացրել է բանակցային պրակտիկան նորանոր մեթոդներով, բանակցային մարտավարությամբ և հնարներով, որոնք ել աստիճանաբար ձևավորել են բանակցությունների տեսության ընդհանուր դրույթներն ու օրինաշափությունները:

Առևտրային բանակցությունները հայտնի են վաղուց: Սակայն, ինչ-

16 Տե՛ս Կովալեվ Ան. Азбука дипломатии. М. 1977., Ладыженский А.М., Блищенко И.П. Мирные средства разрешения споров между государствами. М. 1963 Եօգданով Օ.Վ. Переговоры-основное средство урегулирования международных разногласий.// Советское государство и право.1957/7., Кременюк В.А. Проблемы переговоров в отношениях двух держав.// США: экономика, политика, идеология 1991/3. Израэллян В. В. Дипломаты лицом к лицу.М. 1991.

17 Տե՛ս Լեбедева Մ. Отечественные исследования процесса ведения переговоров..// ВМУ. Серия 18. Социология и Политология. 2000/1. с. 154.

պես նշում է Մ. Լեբեդևան, «...հաջողված տռևտրային բանակցությունների սկզբնական իմաստը կայանում էր հակառակորդին խարելու ունակության մեջ»¹⁸: Բոլորովին այլ պատկերացումներ են տիրապետում այժմ: Հաջողված բանակցություններն առաջին հերթին փոխահավետ համաձայնությունների են. այս պնդումը ճշմարիտ է բանակցությունների բոլոր տեսակների համար էլ, լինեն դրանք քաղաքական, դիվանագիտական, առևտրային թե այլ: Ի դեպ, բանակցությունների՝ իրք առևտուր, գործարք, լնկալումը առավել ուժեղ պահպանվել է անգլերենում, որտեղ բանակցություններին հոմանիշ կիրառվում են **negotiation** և **bargaining** բառերը: **Bargaining** բառն ավելի շատ սակարգության, գործարքի իմաստ ունի¹⁹: Նմանատիպ կապ է տեսնում նաև ֆրանսիացի հեղինակ Ռ. Բելլանժեն, որը գտնում է. «Բանակցությունների սկզբնական ստուգաբանությունը, ինչպես և այդ բառի ամենահին կիրառումները (**լատ. negotiatio**: **պէս, ու-«ց» և օտաստ-«հանգիստ»**) խոսում են առևտրի (negociatio) և կոմերսանտների գործունեության ազգակցության մասին»²⁰: Բանակցությունների որոշ էական հատկանիշներ բացահայտվում են «քանակցություն» հասկացության հայերեն ստուգաբանությունում: Հր. Աճառյանի մոտ հանդիպում ենք «քան» արմատին, որն, ի թիվս այլ իմաստային արտահայտությունների, ունի նաև «փոսք» և «գործ» նշանակությունները՝ համապատասխանաբար՝ «քալ» (խօսիլ, ասել)²¹ և «քանիլ» (գործել) բայածներով²²: «Կից» արմատը հանդես է գալիս «իրար մոտ», «միասին» նշանակություններով և «կցել» (միացնել) բայածներով²³, որը բույր է տալիս ընդգծելու բանակցությունների էական հատկանիշների՝ մարդկանց միմյանց հետ խոսակցելու, հաղորդակցվելու (կոմոնիկացիոն) և համատեղ գործելու, գործունեություն ծավալելու (գործնթացային) կողմերը:

Ի դեպ, խոսակցելու իմաստով է «բանակցել» հասկացությունը բացատրում նաև Է. Աղայանը, իսկ բանակցությունները՝ որպես «կարծիքների՝ առաջարկությունների և նրանց պաշտոնական փոխանակություն երկու կամ ավելի կողմերի միջև»²⁴: Սակայն այս դեսպրում դժվար է տարբերել բանակցությունը գործունեության այլ ձևերից: Հարց կարող է ծագել, թե արյո՞ք յուրաքանչյուր կարծիքների, առաջարկների և նրանց

18 Լեbedeva M. M. Ученые вести переговоры, М. 1991. с. 9.

19 Հայերեն-անգլերեն բառարան, Խմբ. Հ. Ամանգույշան/. Եր., 1984., էջ 78:

20 Բելլանժե Լ. Переговоры. Санкт-Петербург. 2002. с. 14.

21 Տե՛ս Աճառյան Հր., Արմատական հայերենի բառարան, հ1, Եր., 1975, էջ 383:

22 Նույն տեղում, էջ 453:

23 Նույն տեղում, հ 2, էջ 595:

24 Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976. էջ 167:

Քաղաքական բանակցությունների Էական հատկանիշները

պաշտոնական փոխանակությունը երկու և ավելի կողմերի միջև բանակցություն է: Բանակցությունների այս բնորոշումը ընդգծում է էական այլ գծերի առկայությունը, այն, որ բանակցությունները ենթադրում են առնվազն երկու կամ ավելի կողմեր, փոխադարձ հաղորդակցության առկայություն և այլն: Սակայն այս դեպքում բաց է բողնություն բանակցությունների մի կարևոր առանձնահատկություն, այն, որ **բանակցությունները ստղված են համատեղ որոշումների ընդունմանը**: «Համատեղ որոշումների ընդունման ուղղվածությունն է,- ըստ Մ. Լեբենկայի և Վ. Խորոստայովի,- որ իմք է տախս բանակցությունները գործունեության այլ ձևերից՝ մասնավորապես խորհրդատվություններից, քննարկումներից տարբերելու»²⁵:

Քովանդակային առումով, ըստ առարկայական եիմքի, բանակցությունները լինում են առևտրային, դիվանագիտական, քաղաքական և այլն: Վ. Նեխն այդ իմքի վրա քաղաքական բանակցություն է համարում իշխանական լիազորությունների հետ կապված փոխհարաբերությունները²⁶: Իրոք, քաղաքական բանակցությունների առանցքը իշխանական հարաբերություններն են, իշխանական լիազորությունների, ուսուրանությունների վերաբաշխման հետ կապված հարցերի քննարկումը (այդ մասին կիսումի հաջորդ բաժիններից մեկում):

Մ. Դոնալդսոնը բանակցություն է համարում «հաղորդակցման յուրաքանչյուր գործինքաց, որի ընթացքում կողմերից մեկը ջանում է հակառակորդից ստանալ համաձայնություն, կամ էլ դրա նրան որոշակի գործողությունների»²⁷: Նմանապես, միակողմանի կարգով, հարկադրանքի ուժով կամ ստիպմամբ կողմերի միջև որոշումների ընդունումը կարելի է համարել բանակցություն, մինչդեռ բանակցությունը ենթադրում է կողմերի կամովին և համեմատաբար ինքնուրույն գործունեություն:

Հիմնահարցի ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակներից շատերը բանակցությունները սահմանում են գործնքացային առումով՝ որպես կողմերի միջև համատեղ որոշումների ընդունման գործնքաց:

Ամերիկան հեղինակներ Ռուզեր Ֆիշերն ու Ուիլյամ Ուրին, ընդգծելով բանակցությունների հաղորդակցական կողմը, այն սահմանում են «կող-

25 **Лебедев М., Хрусталев В.** Основные тенденции в зарубежных исследованиях международных переговоров. // Мировая экономика и международные отношения. 1989. N 9. с. 109.

26 **Stev Hex В.Ф.** Политические переговоры: организаация и процедура проведения. // Вестн. Моск. Ун-та. 1995 / 4. с 60.

27 **Дональсон М.** Умение вести переговоры. М. 2000. с. 17.

Քաղաքական բանակցություններ (սետություն և պրակտիկա)

մերի միջև փոխադարձ հաղորդակցության գործընթաց, որի նպատակն է հասնել ի ամստեղ որոշումների ընդունման»²⁸: Ընդ որում, կողմերի միջև փոխադարձ կոմունիկացիայի հաստատման գործընթացում նրանք նշում են երեք՝ **1. համատեղ գործունեության իրականացման, 2. միմյանց լսելու կամ փոխանդուրժողականության և 3. անհամաձայնության հիմնախնդիրները**²⁹: Մեկ այլ ամերիկյան հեղինակ S. Սալիվանի կարծիքով, «միայն հաղորդակցության միջոցով բանակցուները կարող են հասնել համաձայնության»³⁰:

Քաղաքական բանակցությունները որպես գործընթաց սահմանելիս հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ քաղաքական համակարգերի ժողովրդավարեցման գործընթացներին զուգահեռ, գնալով նորանոր մարդիկ, սոցիալական խմբեր, քաղաքականության այլ սուբյեկտներ են մասնակցում բանակցային գործընթացներին, որոնք ակտիվութեն ներգրավված են ոչ միայն որոշումների անմիջական ընդունման, այլ նաև դրանց նախապատրաստման ոչ պակաս կարևոր և կառուցվածքային առումով բարդ գործընթացին: Որպես օրինակ կարելի է նշել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շրջանակներում 1999թ. - ից ընթացող Քոչարյան - Ալիև բանակցությունները, որոնք, փաստորեն, բանակցային կողմերի միջև վերջնական, համատեղ որոշումների նախապատրաստմանն ուղղված փոխհարաբերություններ են: Համարյելով բանակցությունների բովանդակային և գործընթացային կողմերի իմբրով տրված սահմանումները՝ **քաղաքական բանակցությունները կարելի են սահմանել որպես քաղաքականության սուբյեկտների միջև իշխանական լիազորությունների, ուստիսերի վերաբաշխման վերաբերյալ համատեղ որոշումների նախապատրաստման և/կամ դրանց ընդունմանն ուղղված փոխարարերություններ**: Քաղաքականության սուբյեկտները հանդիս են գալիս որպես սեփական շահեր հետապնդող, միմյանց վրա փոխադարձ ազդեցություն գործող, որոշակի կարգավիճակով, իրավասություններով, լիազորություններով օժտված բանակցային կողմեր, որոնց գործունեությունն ուղղված է բանակցության օբյեկտին: Տվյալ պարագայում ենթադրվում է **փոխարարերությունների սուբյեկտա - սուբյեկտ համակարգ**, ի տարբերություն, ասենք, ինժեներական կամ տեխնիկական գործունեության, որը կարող է դրստրվել նաև սուբյեկտ -

28 Fisher R., Ury W. Getting to Yes: Negotiating Agreement Without Giving In. Boston. 1991. p. 32.

29 Ibid. pp 32-34.

30 Sullivan T. Resolving Development Disputes Through Negotiations. N.Y. p 109.

օրեկտ փոխհարաբերությունների համակարգում:

Բանակցային գործունեության իրականացման մյուս կարևոր նախապայմաններից մեկը **քաղաքականության սուրյեկտաների միջև փոխադարձ շահերի առկայությունն է**, առանց որի անարդյունավետ է դիմել բանակցությունների միջոցով որոշումների ընդունման քայլի: Բանակցություններում շահերի հարաբերակցությանը անդրադառնում են շատ հեղինակներ: Մասնավորապես՝ Վ. Մաստենբրուկը, բանակցությունները սահմանում է որպես երկու գործոնների՝ սեփական շահերի և ընդլիմախոսուց կախվածության կոմբինացիա³¹: Ա. Սոլովյովը նույնպես, շահերի հիմքով, բանակցությունը սահմանում է որպես բանակցող կողմերի միջև անմիջական կամ միջնորդավորված շփում, որն ուղղված է փոխադարձ շահերի և նպատակների այնպիսի համաձայնության, որը կարող է բերել կոնֆլիկտի ինտենսիվության նվազեցման և նրա վերջնական հաղթահարման³²:

Վերը նշված բանակցությունների տարրեր մոտեցումներն ու սահմանումները թույլ են տալիս ընդգծել բանակցությունների մի շարք էական հատկանիշներ: Քաղաքական բանակցությունների էական հատկանիշները բացահայտելիս հարկ է նշել, որ այդ բնորոշչիններից շատերը ընդհանուր են բանակցությունների մյուս բոլոր տեսակների համար: Բայց կան նաև մի շարք այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են միայն քաղաքական բանակցություններին:

Բանակցությունները, նախ և առաջ, ենթադրում են **կողմերի համատեղ գործումների նախապատճառատամանը և կամ դրանց ընդունմանը**: Բանակցությունների նման ընկալումը թույլ է տալիս համատեղ որոշումների ընդունումը դիտարկել՝ որպես բանակցությունների կարևոր գործառույթ:

Բանակցությունների ժամանակ բանակցային սուրյեկտմերի համատեղ գործունեությունը իրականանում է որոշակի **սուրյեկտ-սուրյեկտ փոխհարաբերությունների համակարգում**, ի տարրերություն ինժեներական կամ տեխնիկական բնույթի հարաբերությունների, որոնք դրսելու վեց են նաև սուրյեկտ-օրյեկտ համակարգում: Սուրյեկտ-սուրյեկտ փոխհարաբերությունների համակարգը ենթադրում է բանակցային կողմերի միջև **հետադարձ հաղորդակցության հաստատում**: Չնայած նրան, որ կողմերից յուրաքանչյուրը բանակցություններում առաջնորդվում է սեփական շահերով, նպատակներով և գոտումներով, այնուամե-

31 Ст. Мастенброк В. Переговоры. Калуга. 1997. с. 75.

32 Ст. Соловьев А. Политология.: политическая теория и политические технологии. М., 2000. с. 478.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

նայնիվ, նրանց գործունեությունը համատեղ բնույթ է կրում: Բանակցային սուբյեկտները որոշակի շահերից ելնելով, իրենց կարգավիճակի, իրավասուրյունների և լիազորությունների շրջանակում, բանակցությունների հիմնական խնդիրներից ելնելով՝ փոխազդեցության մեջ են մտնում միմյանց հետ, որն էլ հենց նրանց միջև հետադարձ հաղորդակցության դրսելուում է հանդիսանում:

Բանակցությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ բանակցային սուբյեկտների շահերը կարող են մասամբ համընկնել: Չահերի հարաբերակցությանը բանակցություններում կանոլապառնանք հետագայում, նշենք միայն, որ շահերի մի որոշ ծավալ, այսպես թե այնպես պետք է ընդհանուր լինի բանակցային բոլոր կողմերի համար էլ, որի դեպքում է միայն հնարավոր դիմել բանակցային գործունեության:

Բանակցությունները նպատակամետ, բազմափոլ գործընթաց են, որոնք ուղղված են համատեղ որոշումների նախապատրաստմանը և կամ դրանց ընդունմանը: Գործընթացային նոտեցում կիրառելով բանակցությունների նկատմամբ, հնարավոր է բանակցությունները դիտարկել որպես քաղաքական գործընթացների կարելոր բարկացուցիչ տարր: Քաղաքական բանակցությունները, նախ և առաջ, բանակցությունների այլ տեսակներից առանձնանում են իրենց բովանդակությամբ: Քաղաքական բանակցությունների առարկան քաղաքական նշանակություն ունեցող հարցերն են, ինչպես նաև քաղաքականության սուբյեկտների միջև իշխանական լիազորությունների, ոեսուրաների վերաբաշխմանն ուղղված փոխհարաբերությունները: Քաղաքական բանակցությունները կարելի է առանձնացնել նաև **բանակցությանների մակարդակով և բանակցային սուբյեկտների կարգավիճակով**: Նույնիսկ տնտեսական բնույթի բանակցություններին պետության առաջին դեմքերի մասնակցությունը բանակցություններին քաղաքական բնույթ է հաղորդում՝ դրանց քաղաքական կշռի և նշանակության իմաստով:

Քաղաքական բանակցությունների էական հատկանիշների շարքում կարելի է առանձնացնել բանակցությունների **իմաստումնալ քննությունը**, որը բացահայտում է բանակցությունների նկատմամբ վերաբերմունքը՝ որպես քաղաքականության սուբյեկտների շահերի համաձայնեցման, վիճակարույց հարցերի և կոնֆլիկտների կարգավորման առավել արդյունավետ ու քաղաքակիրք եղանակ, որպես լավագույն այլլուտրանք ուժային հարկադրանքով, միակողմանի, բռնի կամ պատերազմական եղանակներով որոշումների ընդունման: Քաղաքական բանակցությունների էական այլ հատկանիշների և բնութագրիչների բացահայտման

Քաղաքական բանակցությունների հիմքերը և սկզբունքները

համար հարկ է ուսումնասիրել բանակցային գործունեության իրականացման հիմքերն ու շարժադրությունները:

2. Քսության բանակցությունների հիմքերը և սկզբունքները

Մարդկանց մասնակցությունը քաղաքական կյանքին տեղի է ունենում տարբեր հիմքերով: Հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող գործութացները ցույց են տալիս, որ թե ներպետական, և թե միջազգային հարաբերությունների բնագավառներում ծագած հիմնահարցերի լուծումը, հակասությունների ու կոնֆլիկտների հաղթահարումը, լրանց ժամանակին կանխումը կամ արդյունավետ կարգավորումը նույնպես տեղի են ունենում տարբեր հիմունքներով և եղանակներով:

Քաղաքական բանակցությունները որպես հակամարտությունների ու կոնֆլիկտների կարգավորման եղանակ, փաստորեն, այսօր դարձել են քաղաքական կյանքի բաղկացուցիչ մասը: Ամենուր՝ մամուլով, հեռուստատեսությամբ, զանգվածային լրատվության զանազան այլ միջոցներով նշվում է քաղաքականության տարբեր ոլորտներում տարկող բանակցությունների մասին, որոնք, բնականաբար, ունեն իրենց խորքային պատճառները, հիմքերը, գործուններն ու սկզբունքները:

Մասնագիտական գրականության մեջ քաղաքական բանակցությունների հիմքերի հետ կապված հարցերը շատ հաճախ դուրս են մնում հետազոտողների ուշադրությունից: Մինչեռ, այդ հիմքերի ուսումնասիրությունը, ինչպես նաև բանակցությունների հիմնարար սկզբունքների սահմանումն ու ձևակերպումը եականորեն կմեծացնելին բանակցությունների նախապատրաստման, վարման ընթացակարգերի մշակման, հիմնահարցերի համատեղ քննարկման և փոխահավետ համաձայնությունների ձեռք բերման քաղաքագիտական արմեքը:

Այդ իսկ պատճառով, ուսումնասիրության քաղաքական բանակցությունների հիմքերին և սկզբունքներին վերաբերող մասը նպատակ ունի ցույց տալ քաղաքական բանակցությունների խորքային պատճառները, հաճգամանորեն վերլուծել բանակցային գործընթացների էական գծերը, պարզաբանել այն հատկանիշները, որոնք հիմք են տալիս քաղաքական բանակցությունները որակելու որպես քաղաքական կյանքի առանձնահատուկ ոլորտ:

2.1. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԾԵԽՍՅԻՆ ՀԱՄԵՐԸ

Քաղաքական բանակցությունների հիմքերի շարքում, նախ և առաջ, կարևոր է առանձնացնել արժեքային հիմքերը:

Արժեքների աշխարհը բարդ ու բազմաբնույթ է, իսկ որոշ հեղինակների կարծիքով, լինդգրկում է մշակույթի աշխարհն ամբողջությամբ³³: Այդ աշխարհում է մարդը ձևափորփում, սոցիալապես հասունանում, զարգանում որպես անձ, անհատականություն, ոլոն էլ, բնականարար, իր խոր կնիքն է բողնում յուրաքանչյուր սուբյեկտի համոզմունքների ու պահպաժի, հասարակական տարբեր ոլորտներում մարդկային գործունեության վրա: *Արժեքները հանդիսանում են ինչպես մարդկային յուրաքանչյուր գործունեության, այնպես էլ քաղաքական գործունեության առաջնային հիմքերից ու նպատակներից մեկը:* Արժեքների բովանդակությունը պայմանավորված է մարդկային գործունեության տարբեր ոլորտների սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային ձեռքբերումներով:

Տարբեր հեղինակներ տարբեր կերպ և տարբեր տեսանկյուններով են մոտենում արժեքներին: Այս կապակցությամբ հ. Լեբենկը նշում է, որ դժբախտարար, մինչ օրս շատ առումներով դեռևս արդիական է հնչում արժեքների ուսումնասիրության վիճակի բնութագիրը, ըստ որի, որով հեղինակներ աշխարհի արժեքային ասպեկտները բխեցնում են անհատական, հոգեկան ապրումներից, մյուսները ուշադրությունը կենտրոնացնում են արժեքների սուբյեկտիվ կամ օբյեկտիվ բնույթի վրա, ուրիշները արժեքները համարում են հարաբերական, մյուսները՝ հավերժական, ոմանց համար արժեքները լինեալական են, մյուսների համար՝ իրական և այլն³⁴: Սակայն ինչպես նշում է Ն. Լոսակին, «...որքան էլ որ այդ տեսությունները տարբեր լինեն, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը հաշվի է առնում արժեքների այս կամ այն կողմը»³⁵:

Քաղաքական բանակցությունների արժեքային հիմնահարցերի հետազոտման դժվարությունը կապված է արժեքների հստակ ըմբռնման, դրանց առարկայական և հոգևոր կողմերի սահմանազատման ու փոխայնմանավորվածության առանձնահատկությունների իմաստը հասկա-

33 Տե՛ս Յձրամուսօվ Ա.Գ. Պոտրեբությունների արժեքային հիմնահարցերի հետազոտման դժվարությունների վեհականությունը. Երևան, 1986. ս. 87.

34 Տե՛ս Լեբեծ Ի.Ա. Политические ценности как сложный и многомерный объект. // Вестн. Моск. Ун-та. Сер. 12, Политические науки. 1999/2. с. 39.

35 Հղումն ըստ Լեբեծ Ի.Ա., նշվ. աշխ., էջ 39:

նալու, ինչպես նաև բաղաքական բանակցությունների կազմակերպման և վարման գործընթացների, բանակցային կողմերի վարքագծի և դիրքորոշումների ձևավորման մեխանիզմների որոշման հետ:

Նախ և առաջ, անդրադառնալով արժեքներին, հարկ է նշել, որ դրանք սերտորեն կապված են այնպիսի երևոյթների հետ, ինչպիսիք են պահանջմունքը, շահը, նպատակը, իդեալը և այլն:

Օրինակ, Մ. Լեբեդևան կարծում է, որ արժեքները այն չափանիշներն են, որոնց հիման վրա կոնկրետ որևէ կողմ, իր պահանջմունքներից ելնելով, ձևավորում է սեփական շահերը³⁶: Հաստ նրա, **արժեքները յագատեսկ արսիուններ են, որոնք ապացուցման ենթակա չեն**: Արժեքները նման արսիունատիկ կերպով ներկայացնենով՝ գուցեն, հեղինակը բացառում է արժեքների փոփոխման հնարավորությունը, դրանք հավերժական և անփոփոխ համարելով: Քաղաքական այլ իրողությունների հետ համեմատած՝ թեև դանդաղորեն, բայց անուամնենայնիվ արժեքները նույնպես ենթակա են փոփոխման: Այդ փոփոխականության մեջ է, թերևս, թաքնված արժեքների փոխակերպման և փոխլացման հնարավորությունը:

Ամենայն հիմքները, ինչպես նշում է Մ. Դոնալդսոնը, «այն հիմքներն են, որոնց հաշվառմամբ սահմանվում են մեր կյանքի սկզբունքներն ու կանոնները, որոնցով մենք ապրում ենք, և որոնք էլ հենց որոշում են, թե ինչպես ենք մենք վերաբերվում շրջապատին»³⁷: Հետաքրքրական է նաև Ա. Մասլուխի առաջ քաշած մարդկային պահանջմունքների աստիճանակարգության տեսությունը, որտեղ հեղինակը մարդկային պահանջմունքների ամրող քազմազանությունը ներկայացնում է հիերարխիկ մի քանի կառուցվածքային մակարդակներ ունեցող կազմակերպված համակարգի տեսքով այնպես, որ, որպակի՝ հիմնարար խմբի պահանջմունքների բավարարումը անհրաժեշտ նախապայման է հանդիսանում նոր մակարդակի պահանջմունքների բավարարման համար³⁸: Այս տեսության հիման վրա իրականացված սոցիալոգիական հետազոտությունները վկայում են, գրում է Ա. Վարդումացկին, որ «գլոբալ արժեքների դինամիկայի էռուժությունը կայանում է նրանում, որ տեղի է ունենում մարդկային արժեքների արմատական տեղաշարժ մատերիալիստական արժեքներից դեպի պատմատերիալիստական արժեքները»³⁹: Բայց նման տեղաշարժը, մեր կարծիքով, եթե հնարավոր է, ապա, համենայն դեպքում, միանշանակորեն

36 Sh'u Lebedeva M.M. Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 29.

37 Дональдсон М. Умение вести переговоры. М., 2000, с.32.

38 Sh'u Vardomatskij A.P. Сдвиг ценностном измерении? // СОЦИС, 1993/4, с.46.

39 Նույն տեղում, էջ 48:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

այն ընդունել մեր սոցիալ-քաղաքական իրողությունների պայմաններում, դժվար թե արդարացված լինի: Մեր հասարակության մի ստվար զանգվածի համար, թերևս, նյութական արժեքների գերակայությունը հոգևոր արժեքների նկատմամբ այսօր էլ շարունակում է մնալ նույնան արսիոնատիկ, որքան մարդկության զարգացման վաղնջական ժամանակներում էր:

Արժեքները, շահերը կամ պահանջմունքներն ունեն շատ սերտ առջևորություններ, պայմանավորված են մեկը մյուսով, թեն իրար մոտ, բայց նույնարովանդակ չեն: Այս երևույթների միմյանց հետ ունեցած զանազան առնչությունները բավականին ուսումնասիրված են փիլիսոփայական և մասնագիտական գրականության մեջ: Նշենք միայն, որ կարծիքներն ու տեսակետները բազմազան են: Օրինակ՝ Զ. Բերտոնի մոտ կենտրոնական տեղ են գրավում մարդկային հիմնական պահանջմունքները, ինչպիսին, օրինակ, անվտանգության պահանջմունքն է: Իսկ պահանջմունքների և շահերի տարրերությունը նա տեսնում է նրանում, որ, **ի տարրերություն շահերի, պահանջմունքները բանակցությունների առարկա չեն կարող դառնալ:** Այս իմաստով, պահանջմունքները մոտ են արժեք հասկացությանը: Արժեքները նույնպես, ըստ հեղինակների մեծամասնության, բանակցությունների ժամանակ քննարկման ենթակա չեն, իսկ արժեքների շուրջ փոխգիծում հնարավոր չեն⁴⁰: Նման փոխգիծման անհնարինության մասին էր խոսում ՀՀ առաջին նախագահի Լևոն Տեր-Պետրոսյանը սահմանադրական նախագծերի քննարկման ժամանակ: Մասնավորապես՝ նա նշում էր, որ «զաղափարախոսության և իրավագիտության ոլորտներում, որին էլ վերաբերում է Սահմանադրությունը, քաղաքական փոխգիծում հնարավոր չե»⁴¹: Սա այն ժամանակ բավականին կոչտ դիրքորոշում էր այն առողջությունը, որ բացառում էր քաղաքական երկխոսության և համաձայնության հիման վրա սահմանադրական շինարարության հնարավորությունը:

Քաղաքական բանակցությունների պարագայում նույնպես գործ ենք ունենում արժեքների ընկալման մի քանի մակարդակների հետ: Նախ, որ բանակցությունների հիմքում ընկած են լինում որոշակի արժեքներ, որոնք կարող են լինել և նյութական, և հոգևոր: Ըստ այդմ էլ, բանակցական տարրեր կողմեր կարող են ունենալ **տարրեր արժեքային կողմանոր-**

40 Տե՛ս Դոնալդսոն Մ. Սмысление вести переговоры. М., 2000, с. 35, Լինկոլն. Ս. Переговоры. С.П. 1998. с. 47., Լեбедева Մ.М. Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 32.

41 «Ազգ», N 46 (1238), 1994թ., էջ 2:

շումներ և նախապատվություններ: Քաղաքական բանակցությունները, ավելի ճիշտ՝ քանակացային փաստարդերը կարող են ունենալ որոշակի արժեք (իմաստի և նշանակության առում), և վերջապես, քաղաքական բանակցությունները հանդիսանում են քաղաքական արժեք, որպես ժողովրդավարական կառավարման ձեռքբերում, քաղաքականության սուբյեկտների միջև տարածայնությունների ու հակասությունների, հակամարտությունների ու կոնֆլիկտների կարգավորման քաղաքակիրք եղանակ (բանակցությունների ինստրումենտալ բնույթը):

Բանակցությունների հիմքում ընկած արժեքների, բանակցությունների մասնակիցների արժեքային կողմնորոշումների մասին պատկերացում կազմելու համար հարկավոր է ուշադրություն դարձնել հատկապես **արժեքային կոնֆլիկտներիմ:**

Իհարկե, արժեքային կոնֆլիկտները, որոնց ակունքները գնում են դեպի հասարակության մշակութային, կրոնական, գաղափարական ավանդույթներն ու նորմերը, շատ դժվար են կարգավորման ենթարկվում: Ավելին, խորը մշակութային առանձնահատկություններով պայմանագործած արժեքային կոնֆլիկտների մեջ է Ս. Հանտինգտոնը տեսնում մարդկության սպառնացող հիմնական վտանգներից մեկը, որը կարող է հանգեցնել «քաղաքակրթությունների բախման»⁴²: Սակայն, չնայած արժեքային կոնֆլիկտների բարդությանը, հարկ է նշել, որ ոչ միշտ է արժեքային կողմնորոշումների տարբերությունը անխաւափելիորեն հանգեցնում կոնֆլիկտի: Այս իր մեջ ուղղակի պարունակում է կոնֆլիկտային իրավիճակի ծագման և զարգացման ավելի մեծ հնարավորություն: Բացի այդ, եթե այնուամենայնիվ կոնֆլիկտը ծագել է, ապա դա չի կարող նշանակել, որ այն խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների և այլ միջոցների օգնությամբ անհնար է կարգավորել:

Արժեքների աշխարհը, ինչպես և ամեն բան աշխարհում, նույնապես ենթակա է փոփոխության. այն անընդհատ գտնվում է զարգացման մեջ: Պատմության մեջ քիչ չեն դեպքերը արժեքային համակարգերի նման փոփոխության կամ տրամսֆորմացիայի: Օրինակ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ միջև ծավալված սպառազինությունների մրցավագըքը ևս հենվում էր զաղափարական տարրեր արժեքային հիմքերի վրա, որոնք, մերժման մերք, կախված աշխարհաքաղաքական զարգացումներից և փոփոխություններից, ավել կամ պակաս չափով էին ակտիվանում: Մեկ այլ օրինակ է բերում Կ. Մյունիլը, որը հետազոտում է աֆրիկյան երկրների պայ-

Զարգարական բանակցություններ (տեսողական և պրակտիկա)

քարը գաղութատիրության դեմ: Այդ պայքարը հենվում էր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի վրա: Սակայն հետազայում, տարբեր մակարդակի բանակցություններում, նշում է հեղինակը, այն սկսեց օգտագործվել տարբեր անջատողական ուժերի կողմից աֆրիկյան երկրների ներսում: Իսկ եթե հաշվի առնենք աֆրիկյան երկրների երնիկ բազմազանությունը, ապա պարզ կլասսա այդ գաղափարի կիրառման վտանգավորությունը: Այդ իսկ պատճառով, Քենիան, օրինակ, հայտարարեց, որ ինքնորոշման սկզբունքը կիրառելի է միայն օտարերկրյա տիրապետության նկատմամբ և անընդունելի է ներքաղաքական պլանտիկայում: Այսպիսով, գոնե արտաքնապես, գտնում է Կ. Միտչելը, այդ հակասությունը հանվեց⁴³:

Հակամարտող կողմերի միջև արժեքային դիմակայությունը մեղմելու համար շատ հաճախ ակտիվացվում են այնպիսի արժեքներ, որոնք միտված են հնարավորինս փոքրացնելու նրանց միջև եղած տարբերություններն ու հակամարտությունները, փոխարենը փորձելով պահելի մերձեցնել հակամարտող կողմերի դիրքորոշումներն ու մոտեցումները:

Տակավին մեր օրերում ևս, նկատելի է հասարակության մեջ որոշակի արժեքների ակտիվացում, որոնք գուցեն, կարողանան ժամանակի ընթացքում մեղմել հակամարտող կողմերի միջև առաջացած խոր քննամանքն ու անհանդուրժողականությունը: Բոլոր ժամանակներում էլ, հակամարտող կողմերին ուղղված հաշտարար կոչերը հենվել են համամարդկային արժեքների՝ խաղաղության, համերաշխության, եղայրության, ազատության և այլ արժեքների վրա: Այսօր ևս նկատելի են հասարակության մեջ այնպիսի արժեքների ակտիվացում, ինչպիսիք են մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, «Նարաբայան հակամարտության սուբյեկտներին ուղղված «Կովկասյան ընդհանուր տան», «պատմական ընդհանության», «Եվրոպական նոր հարևանության» գաղափարները և այլն:

Բնական է, եթե արժեքային կոնֆլիկտները թևակոխում են կարգավորման փուլ, առաջնային է դառնում արդեն բանակցությունների արժեքային հիմքերի ուսումնասիրությունը, առանց որի հակամարտող կողմերի հաշտեցման հնարավորությունները անշափ նվազում են:

Զարգարական բանակցությունների պարագայում բանակցությունների արժեքային հիմքերին ուղղված ուսումնասիրությունը կարևորվում է նաև այլ տեսանկյունից: Նախ և առաջ, բանակցող կողմերի արժեքային կողմնորոշումների բացահայտումը թույլ է տալիս պատկերացում կազ-

43 See Mitchell C.R. The Structure of International Conflict. N.Y. 1991. p. 168.

Բանակցությունների արժեքային հիմքերը

մելու նրանց գործունեության ուղղվածության մասին: Այլ կերպ ասած, առկա արժեքների որոշակի համակարգը, ինչպես նշում է Մ. Դոնալդսոնը, ազդում է քաղաքականության սուբյեկտների վարքագծի վրա, ուղղորդելով նրանց գործունեությունը որոշակի ուղղությամբ⁴: Վերջին տարիներին, մանավանդ, Հայաստանի քաղաքական պրակտիկայում ըլլի շնորհանք քաղաքական տարբեր ուժերի միջև արիեատական դաշինքների, միավորումների ստեղծման դեպքեր: Ուշադրությամբ դիտարկելով այդպիսի դաշինքների մեջ մտնալու քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների արժեքային կողմնորոշումները, նկատում ենք տրամագծորեն հակառակ գաղափարական դիրքերում գտնվող քաղաքական ուժերի, ասենք՝ կոմունիստների և լիբերալ-դեմոկրատների, ազգայնականների ու սոցիալիստների միավորման և այլն:

Բացի այդ, բանակցությունների արժեքային հիմքերը կարող են ուրվագծել նաև ապագա հնարավոր բանակցային համաձայնության սահմանները: Խոսքն այստեղ զնում է բանակցող կողմերի **«արժեքային սահմանների»** մասին, որոնք նրանք երբեք և ոչ մի պայմանի դեպքում չեն պատրաստվում հատել: **«Արժեքային սահմանը» հանդիսանում է բանակցող կողմերի գործունեության, վարքագծի այն առավելագույն կամ նվազագույն շափք, որի շրջանակում է հնարավոր միայն հասնել կողմերի միջև փոխնդունելի որոշումների ընդունման:** Բանակցային կողմերի **«արժեքային սահմանների»** ճշգրտումը շատ կարևոր ուղղմանական նշանակություն կարող է ունենալ: Եթե բանակցային որևէ կողմի համար որպես է «արժեքային սահմանը», դրանով իսկ ավելի ազատ, խոհեմ ու շրջահայաց գործելու հնարավորություն է ստեղծվում: Բացի այդ, արժեքային սահմանների հստակեցումը օգնում է նաև ուրվագծել այն հնարավոր փոխազդումները, որոնք կողմերից որևէ մեկը կարող է զոհաբերել՝ իր նպատակին հասնելու համար: Միաժամանակ, ուրվագծվում են այն եզրերը, որից այն կադմ արդեն, բանակցային մեթոդներական համաձայնության գալու հնարավորությունները սպառված համարելով, բանակցության սուբյեկտները կարող են դիմել այլընտրանքային տարբերակների իրականացմանը: Այս առումով, որոշակի արժեքային հստակեցում է մտցված դարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի համատեքստում, բազմից տարբեր մակարդակներաւ և այստարարվել է հայկական կողմի համար իրապես արժեքային սահ-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ման հանդիսացող սկզբունքների մասին: Մասնավորապես՝ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Հայաստանի Եվրոխորհրդին անդամակցելուց հետո Աղրեջանի նախագահ Հ. Ալիևի հետ ունեցած քանակցությունների բնագրում խոսել էր այնպիսի սկզբունքների առաջնայնության մասին, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության ինքնորշման, անվտանգության երաշխիքների, հակամարտող բոլոր կողմերի իրավահավասարության սկզբունքները⁴⁵: Արժեքային սահմանների հստակեցումն, իր հերթին, վեր է հանում քանակցության սուբյեկտների սահմանային արժեքները: Դրանց տարբերակումը կապված է լուրջ դժվարությունների հետ, քանի որ անհրաժեշտ է լինում որոշակի հիմքերով սահմանագատել արժեքները, պահանջնունքները, շահերը կամ դիրքորոշումները: Բանն այն է, որ առաջին հայացքի իրար հակասող դիրքորոշումներ որդեգրած կողմերը իրականում կարող են նույն նպատակները կամ արժեքային համակարգն ունենալ: Այդ իսկ պատճառով կարևորվում է հատկապես շահերի ուսումնասիրությունը:

2.2. Ըստու գերսկսյոհայութեա բնակասյին գործութասցույն

Քաղաքականության սուբյեկտների միջև քաղաքական, մասնավորապես՝ քանակցային գործունեության իրականացման կարևոր նախապայմաններից են հանդիսանում քանակցության սուբյեկտների շահերը՝ իրենց քազմագան առնչություններով:

Շահերի աշխարհը սոցիալական ամենաբարդ երևույթներից է, որ գտնվում են հասարակական լյանքի երևույթների զարգացման ակտունքները: Ընդհանուր առմամբ, մարդկային գործունեությունը պայմանավորված է որոշակի պահանջնունքներով ու շահերով, ինչպես նաև նպատակաուղղված է դրանց քավարարմանը, որը նաև քաղաքականության սուբյեկտների գործունեության հիմքն է հանդիսանում:

Հասարակական տարրեր շահերի կարևորությունն ու ազդեցությունը, դեռ ու նշանակությունը քաղաքականության սուբյեկտների գործունեության ու վարքագծի, այդ թվում նաև քաղաքական քանակցությունների գործընթացի իրականացման վրա անժխտելի են, քանի որ քազմաբնույթ շահերի բարդ հարաբերակցության ու փոխազդեցության ամբողջությունն էլ կազմում է մարդկային նպատակաուղղված գործունեության իրականացման հիմքերից մեկը: Այդ իսկ պատճառով, շահերը, որպես

45 Տես «Հայաստանի Հանրապետություն», 26 հունվարի, 2000թ., էջ 1:

Հահերի գերակայությունը քանակցային գործընթացում

քանակցությունների հիմք դիտարկելիս, կանդրադառնանք ոչ թե նրանց լրացնորման առանձին ծևերին (տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն), այլ շահերին ընդիմանաբապես:

Պետք է նշել, որ շահերը նույնպես, արժեքների նման, միանշանակարեն չեն մեկնաբանվում: Այդ կապակցությամբ, ինչպես նշում է Մ. Խյինը, «Պարզ կերպով շահերի սահմանման անհնարինությունը նշանակում է, որ շահերը դասվում են ամենալայն, և որպես կանոն, վիճարկելի երևույթների թվին...»⁴⁶: Հեղինակը «շահ» հասկացությունը դիտարկում է բովանդակության պատմական զարգացման համատեքստում, որտեղ շահերը, ի թիվս այլ հասկացությունների (պահանջնունը, նպատակ, արժեք, սովորույթ և այլն) հանդիսանում են մարդկային նպատակությամբ գործունեության հիմքերից մեկը⁴⁷: Մյուս կողմից, շահերը նմանեցվում են պրագմատիկ նշանակության այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են «օգուտ», «քարիք», «քարեկեցություն» և այլն: Խսկ քաղաքական շահը, ինչպես նշում է հեղինակը, օրինակ՝ Ֆրանսիայում, նույնացվում էր պետական շահի հետ, որը, փաստորեն, հանգեցվում էր պետության ղեկավարի շահին: Այնուհետև նա մեջ է բերում Անրի դե Ռոգանի այն մտքերը, որ «Պետության ղեկավարները առաջնորդում են ժողովուրդներին. խսկ շահերը՝ պետության ղեկավարներին», և, որ «շահը յուրաքանչյուր քաղաքական գործունեության տնիվերսալ հիմքն է հանդիսանում», խսկ «այդ շահի խմացությունն է (զիտակցումը) որաշում ինչպես պետության ղեկավարների, այնպես էլ ժողովուրդների գործողությունները»⁴⁸: Մյունույն ժամանակ Անգլիայում քաղաքական լեկսիկոնում օգտագործվում էին այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «հասարակական շահ» (public interest), «ընդհանուր կամք» (common weal), «հասարակական քարիք» (common good) և այլն: Անգլիայում լայն տարածում է գտնում հատկապես «հասարակական շահի» (public interest) գաղափարը, որպես քաղաքացիական հասարակությունը կազմավարող անհատների շահերի ամրողությունը⁴⁹:

Սեր օրերում քաղաքական շահերի լրբունումը արևմտյան գրականության մեջ, լստ Մ. Խյինի, իրենից ներկայացնում է շահերի երեք տեսակների փոխազդումային համակցություն. 1. ազգային շահի (այսինքն ուշադրության կենտրոնացում սեփական հիմնախնդիրներին, առաջին

46 **Ильин М.В.** Слова и смыслы: интерес. // ПОЛИС. 1995/2. с. 100

47 **Տես նոյն տեղում, էջ 100:**

48 **Նոյն տեղում, էջ 103:**

49 **Տես նոյն տեղում, էջ 104:**

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հերթին անվտանգության և բարեկեցության ապահովում), 2. համակարգային շահի (սեփական ազգային շահերի համալրումը և հարաբերումը մյուս ազգային պետական կազմավորումների շահերի հետ), 3. եսահրական շահի (կայսերապաշտական նկրտումներ):⁵⁰

Վերլուծելով այս բնագավառում խորհրդային հետազոտողների կատարած աշխատանքները, Մ. Խյինը նշում է, որ շահերը մեկնաբանվում են միակողմանիորեն (մարքսիստական զաղափարական ժառանգության հենքի հիման վրա) և պարզեցված կերպով: Արդյունքում ստացվում են շահերի նատուրալիստական սահմանումներ և մեկնություններ, որոնք նույնացնում են շահերը պահանջմունքների հետ, օրինակ՝ շահերը պահանջմունքների դրսուրման պրակտիկ գործունեական ձևերն են, կամ՝ շահերը սոցիալական պահանջմունքներ են և այլն⁵¹: Սակայն պետք է նշել, որ այս սահմանումները իրենց միակողմանիորթյամբ հանդերձ, ցույց են տալիս այդ հասկացությունների սերտ կապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը: Կարելի է, թերևս, համաձայնվել Ա. Զդրավոմիլսովի հետ, եթե նա նշում է, որ «Պահանջմունքները սերտորեն կապված են շահերի հետ: Մենք ավելի հաճախ դիտարկում ենք այդ երևոյթները միասին, քան առանձին-առանձին, դրանով իսկ ընդունելով նրանց խորը կապակցվածությունն ու միակարգությունը»⁵²:

Բանակցությունների ընթացքում բանակցային կողմերը առաջնորդվում են զանազան բնույթի շահերով: Ինչպես նշում է Դ. Ֆելդմանը, «Այդ խնդիրը լուծելով (այսինքն՝ կոնկրետ շահերի փոխհարաբերությունը և նշանակությունը), շահերը տարրերակվում են ըստ կարևորագույն կապված են շահերի հետ: Մենք ավելի հաճախ դիտարկում ենք այդ երևոյթները միասին, քան առանձին-առանձին, դրանով իսկ ընդունելով նրանց խորը կապակցվածությունն ու միակարգությունը»⁵³:

Ինչեիցե, շահերի աշխարհը, իր բազմազանությամբ հանդերձ, ուղղակիորեն ազդում է քաղաքականության սուբյեկտների վարքագծի վրա, ինչպես նաև առանձնահատուկ ձևով է դրսարվում բանակցային գործունեության իրականացման ժամանակ:

50 Տե՛ս նոյն տեղում, էջ 105:

51Տե՛ս նոյն տեղում, էջ 109:

52 Здравомислов А.Г. Потребности. Интересы. Ценности.-М, 1986. с. 74.

53 Фельдман Д. М. Политология конфликта. М., 1998. с. 19.

Չահերի գերակայությունը բանակցային գործընթացում

Քաղաքականության սուբյեկտների շահերի որոշակի հարաբերակցությունը բանակցային գործունեության իրականացման կարևոր նախադրյալներից է, շահերի փոխազդեցությունը՝ քաղաքական բանակցությունների հիմքը, իսկ դրանց հիմքով՝ պահանջմանը բների բավարարությունը՝ բանակցությունների վերջնական նպատակը: Չէ որ, ի վերջո, բանակցություններն ուղղված են քաղաքականության սուբյեկտների շահերի հաշվառման:

Բանակցություններում շահերի հարաբերակցությունը դրսորվում է յուրովի: Բանն այն է, որ **բանակցությունները միշտ ենթապատճեն են երկու մասնակից, որոնց շահերը մասսամբ կարող են համընկնել, իսկ մասսամբ է՝ ոչ:** Այլապես, մենք գործ կունենանք փոխհարաբերությունների այլ ձևերի հետ: Օրինակ՝ տվյալ հանգամանքում, կոնկրետ հարցի վերաբերյալ շահերի լրիվ համրնկման դեպքում կողմերը դիմում են համագործակցության, իսկ հակառակ դեպքում նկատելի է մրցակցություն, հակամարտություն կամ պատերազմ: Չահերի փոխհարաբերությունը քաղաքական բանակցություններում միանշանակ կերպով չի լնքանում. այն, կախված բանակցության օբյեկտից, բանակցային սուբյեկտների որդեգրած արժեքներից, սկզբունքներից, նրանց հետապնդած նպատակներից, բանակցային ստրատեգիայից և տակտիկայից կարող է փոփոխվել՝ առավել մեծ կամ փոքր չափերով ընդգրկելով փոխադարձ հետաքրություն ներկայացնող հարցերի շրջանակն ամբողջությամբ: Սակայն ինչպես նշվել է, շահերի մի որոշ ծավալ մնում է հարաբերականորեն կայուն և ընդհանուր է բանակցային բոլոր սուբյեկտների համար, որի առկայության դեպքում է միայն, որ կողմերը կարող են դիմել փոխհարաբերությունների կարգավորման այնպիսի ձևի, ինչպիսին բանակցություններն են: Բնականարար, բանակցություններում շահերի նման հարաբերակցությունը հակասական բնույթ է հաղորդում բանակցային գործունեությանը, քանի որ, միաժամանակ, բանակցություններում դրսարվում են ինչպես համագործակցության (շահերի համապատասխանություն), այնպես էլ առնակատման (շահերի անհամապատասխանություն) տարրեր: Բանակցային գործընթացի նկատմամբ նման կարծիքներ են արտահայտում նաև շատ հեղինակներ, նշելով, որ բանակցություններում պահանջման կամբերի մոտ պետք է լինեն համատեղ շահեր և միաժամանակ շահերի հակամարտություն: Օրինակ՝ շվեդ հեղինակ Օ. Էլզարիմը, համաձայնվելով Չ. Իկենի հետ, գտնում է, որ բանակցություններում կամբերի շահերը դրսարվում են երկու՝ **նույնական և չնամընկնադիմաց շահերի տես-**

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

բռվ⁵⁴: Բանակցային կողմերի շահերի հարաբերակցությունն ընդգրկում է ոչ միայն նրանց տարրերությունն ու հակասականությունը: Ինչպես նշում է Վ. Ուդալովը, «Չահերի բարդ հարաբերակցությունից անհրաժեշտ է առանձնացնել **փոխրացառող և շեատվող շահերը**»⁵⁵: **Փոխրացառող շահերի** առկայությունը նշանակում է, ըստ հեղինակի, որ կողմերը ցանկանում են միևնույն բանը (օրինակ՝ հավակնում են նոյն տարածքին), իետևաբար, այն չի կարող երկուսի համար էլ լիովին բավարարվել, իսկ **շեատվող շահերը** ենթադրում են, որ կողմերից մեկի շահերի իրազործումը ոչ մի կերպ չի խանգարում մյուսին, այսինքն դրանք չեզոք շահեր են, և յուրաքանչյուր կողմ կարող է այն իրազործել ինքնուրույն⁵⁶:

Բանակցային կողմերի միջև շահերի բարդ հարաբերակցությունը ստեղծում է յուրատեսակ փոխադարձ կախվածության իրավիճակ, եթե կողմերի միակողմանի գործողությունների դիմելու հնարավորությունը կամ դրանց արդյունավետությունը քշանում է: Նմանատիպ իրավիճակում, որքան կողմերը կախված են մեկը մյուսից, այնքան սահմանափակված են իրենց գործողություններում և ստիպված են համատեղ լուծումներ փնտրել:

Բանակցությունների նախապատրաստման, արդյունավետ կազմակերպման, փոխահավետ որոշումների ընդունման համար կարևոր է նաև շահերի առանձնացումը բանակցային դիրքորոշումներից: Այս կապակցությամբ, Զ. Ռուբինն ու Զ. Սալակյանը նշում են, որ բանակցությունները համագործակցության տեսանկյունից դիտարկելիս, ամենին չի բացառվում, որ կողմերը գտնեն առավելագույն կերպով իրազործեն սեփական շահերը, միաժամանակ, մյուս բանակցային կողմին ընկալելով ոչ թե որպես հակառակորդի, այլ՝ հնարավոր գործակցի⁵⁷: Նպատակը կայանում է նրանում, որ սեփական շահերի բավարարման ուղիների որոնման հետ մեկտեղ, հնարավորություն տրվի դիմացինեն ստանալ խելամիտ օգուտներ: Տվյալ դեպքում, կարծում են հեղինակները, հաջողության հասնելու գրավականը կախված է նրանից, որ բանակցողները դիրքորոշումներից անցնեն շահերի վերլուծությանը⁵⁸:

Հատկապես շահերի ու դրանց հիման վրա ձևավորվող դիրքորոշում-

54 Տե՛ս Elggotom O. Foreign Aid Negotiations. Avebury. 1992. p. 5.

55 Հղումն ըստ Լեబեծե Մ.Մ. Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 185.

56 Տե՛ս նոյն տեղում:

57 Ռубин Ջ, Սալակյ Ջ. Фактор силы в международных переговорах. // Международная Жизнь. 1990/3. с 28.

58 Նոյն տեղում:

Ըստերի գերակայությունը բանակցային գործընթացում

Եթերի հարաբերակցության վրա են ուշադրություն դարձնում Ռոջեր Ֆիշերն ու Ուիլյամ Ուրիմ՝ բանակցային կողմերի շահերն առանձնացնելով դիրքորոշումներից և հիմնախնդիրներից: Նրանք օրինակ են քերում երկու քրոջ պատմությունը, որոնք վիճում էին նարինջը կիսելու հարցում: «Երկար վիճաբանությունից հետո,- գրում են հեղինակները,- քոյրերը համաձայնվում են հավասարապես կիսել նարինջը, դրանով իսկ, քոյւմ է, վարկելով արդարացի: Որից հետո քոյրերից մեկը մաքրում է նարինջը և ուտում միջուկը, իսկ մյուսը օգտագործում է միայն նարնջի կեղևը՝ դեմ զցելով միջուկը»⁵⁹: Առաջին հայացքից խելամիտ քվացող որոշումը, ըստ հեղինակների, փաստորեն, լավագույն ելքը չէր տվյալ իրավիճակում: «Եթե քոյրերից յուրաքանչյուրը ուշադրությունը կենտրոնացներ ոչ թե դիրքորոշման (նարնջի որ մասն է ցանկանում), այլ շահերի վրա (ինչպես է օգտագործելու նարինջը), ապա նրանք, ինարավոր է զային այնպիսի համաձայնության, որը կրավարարեր նրանց շահերն ամբողջությամբ,»- կարծում են հեղինակները⁶⁰: Այս օրինակը թեև պարզունակ, բայց շատ ուսանելի է՝ կոչտ դիրքորոշումից դեպի համագործակցության և գործլոնկերային փոխհարաբերությունների անցման համար:

Քաղաքականության սուրյեկտների միջև շահերի հարաբերակցության, նրանց հետապնդած իրական շահերի ու նպատակների բացահայտումը քաղաքականության, մասնավորապես՝ քաղաքական բանակցությունների կարևոր գործառույթներից մեկը պետք է լինի, որի իրագործումը քոյլ կտա առավել խորությամբ և հստակ պատկերացնել, թե ինչ շահերի հիմքով են ծևափրկում բանակցությունների սկզբունքները, առաջարկները, բանակցային դիրքորոշումները: Հետևաբար, բանակցությունների կարևոր նպատակներից մեկը բանակցությունների սուրյեկտների շահերի, դրանց հարաբերակցությունների ու իրական առջնայությունների բացահայտումն է, որը քոյլ է տալիս ավելի հստակ ծևափրել կողմերի դիրքորոշումները, ուրվագծել ապագա հնարավը համաձայնության եզրերը, մշակել բանակցային որոշումների ընդունելի և այլնտրանքային տարբերակները:

59 Fisher R, Ury W. Getting to Yes: Negotiating Agreement Without Giving in. Boston. 1991.
p.53.

60 Նոյն տեղում, էջ 54:

2.3. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանակցությունների տեսության նկատմամբ հետաքրքրության աճը՝ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, պայմանավորված էր մի շարք գործուներով և հանգամանքներով, որոնցից, թերևս, ամենաէկականը՝ հակամարտությունների, կոնֆլիկտային իրավիճակների, վիճահարույց հարցերի կարգավորման գործուն մեխանիզմների, ընթացակարգերի մշակման և կիրառման հրատապ անհրաժեշտությունն էր: Միջազգային հանրության հիշողության մեջ տակավին պահպանվում էին Երկրորդ աշխարհամարտի արհավիրքների, անդառնալի կորուստների, միջինավոր խեղված ճակատագրերի բողած հետևանքների պատկերացումները, որոնք ի ցույց դրեցին միջազգային հիմնախնդիրների, սոցիալական ու ներքաղաքական կոնֆլիկտների կարգավորման ուժային, բռնի եղանակների բոլոր բացասական հետևանքներն ու դրանց անընդունելիությունը քաղաքակրթական զարգացման արդի պայմաններում:

Պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհայինից հետո ձևավորված միջազգային այնպիսի կառույցների, ինչպիսին օրինակ՝ ՄԱԿ-ի, կամ ավելի ուշ ձևավորված՝ ԵԱՀԿ-ի գերխնդիրը դարձավ և այսօր էլ հանդիսանում է ազգերի խաղաղ գոյակցության ու համագործակցության ապահովումը: Մասնավորապես՝ զանազան կոնֆլիկտների, վեճերի կարգավորման և/կամ քաղաքականության տարրեր սուբյեկտների միջև համագործակցության ապահովման իրավական և ոչ իրավական զանազան մեխանիզմներ ունեն ինչպես ՄԱԿ-ը, այնպես էլ ԵԱՀԿ-ը, որոնց իրավասությունների շրջանակներում նախատեսված են հակամարտող կողմերի միջև բանակցությունների, խորհրդատվությունների անցկացման, միջնորդական գործունեության իրականացման, կողմերի հաշտեցման, արքիտրամաժային, դատական միջամտության տարրեր մեխանիզմներ և ընթացակարգեր: Դրանցից կարևորներն են Բեռլինյան, Վիեննական, Մոսկվյան և այլ մեխանիզմները⁶¹:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո, հետխորհրդային տարածաշրջանում հատկապես իր խաղաքարար գործունեությամբ առանձնանում է ԵԱՀԿ-ն, որն իր գործունեության վերջին տասնամյակի ընթացքում աշքի և ընկնում նախկին միութենական գրեթե բոլոր հանրա-

61 Ст. Яснокорский Ю.А. Политико-правовые механизмы предотвращения и урегулирования конфликтов в рамках ОБСЕ. // "ПОЛИС". 1999/5. с.164-168.

պետություններում և մասնավորապես Մերձնեստրյան, Միջին Ասխայի, Հարավային Կովկասի տարածաշրջաններում ծագած կամ հնարավոր հակամարտությունների կանխարգելման և խաղաղ կարգավորման գործընթացներում։ Իր աշխարհաքաղաքական ընդգրկման առողմով՝ ԵԱՀԿ-ն բացառիկ ինստիտուցիոնալ կառույց է, որի շրջանակներում ստեղծվել և զարգացել են եվրոպական անվտանգությանը սպառնացող կոնֆլիկտների կանխարգելման կամ էլ դրանք կառավարելի դարձնելու համար նախատեսված բազմաթիվ կառուցակարգեր։ Օրինակ՝ անվտանգության ոլորտում ԵԱՀԿ շրջանակներում գործող Վիեննայի մեխանիզմի (1990) հիմնական խնդիրն է հանդիսանում ԵԱՀԿ գոտում ոլսկի նվազեցումը, որը գործում է Հակամարտությունների կանխարգելման կենտրոնի միջացում⁶²։ Բեռլինյան մեխանիզմը կիրառվել է հարավսլավական և դարաբարյան հակամարտությունների ժամանակակից աշխատավորական վրա, պահանջեց գործի դնել արտակարգ իրավիճակներում խորիրդատվությունների և համագործակցության մեխանիզմը⁶³։ Մասկօվյան մեխանիզմը (1991) գործ է դրվում մարդու իրավունքների հետ կապված դեպքերում, որի կիրառումը դրված է ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների բյուրոյի վրա։

Նմանատիպ մեխանիզմների ստեղծումը իր մեջ ներառում է կոնֆլիկտների կարգավորման և/կամ քաղաքականության տարրեր առընթեկությունների միջև համագործակցության ապահովման ինչպես նորմատիվ-իրավական մեխանիզմների ու ընթացակարգերի մշակումը, այնպես էլ օրինականության շրջանակներում տցիլալական նորմերի կիրառումը։ Կոնֆլիկտների կարգավորման ոչ իրավական մեխանիզմների գոյության անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ոչ բոլոր կոնֆլիկտները կամ վեճերն են հնարավոր լածել գործող իրավական նորմերի և ընթացակարգերի շրջաններում։ Երբեմն հավասարություններ են առաջանում ենց իրավական նորմերի միջև։ Բացի այդ, դատական կարգով կոնֆլիկտների կարգավորման ժամանակ հնարավոր է, որ դատական որոշումը ամբողջությամբ բավարարի կողմերից որևէ մեկի շահերը միայն, իսկ մյուսինը՝ ոչ։ **Քանակցությունների ժամանակ պեսար է գոտեղ հնարավոր (և դա է, մեր կազմով, բանակցությունների կարևոր գործառության նպատակը) հակամարտող կամ վիճարանող կողմերի միջև շա-**

62 Տե՛ս Этнические и региональные конфликты в Евразии. / Под общ. ред. Коннитерс Б. и др. М., 1997. с. 99.

63 Տե՛ս նույն տեղում։

Քաղաքական բանակցություններ (տեսորյուն և պրակտիկա)

Խերի համաձայնեցման ու քավարարման ավելի ծկուն, փոխընդունելի լուծումներ: Դատական որոշումները պարտադիր են կատարման բոլոր կողմերի համար, որպես կանոն, նրանք չեն փոխում կողմերի միջև հարաբերությունների բնույթը. դրանք կարող են մնալ կոնֆլիկտային՝ պահպանելով նոր կոնֆլիկտի առաջացման մեծ հավանականությունը: Մասնավորապես, Արևմուտքի շատ երկրներում, քաղաքացիական իրավունքի հետ կապված հարցերը, չնայած այդ երկրների օրենսդրության քավարար մշակվածությանը, շատ հաճախ լուծվում են բանակցությունների ճանապարհով, և միայն այն դեպքում, եթե կողմերը չեն գալիս համաձայնության, նրանք դիմում են դատարան: ԱՍԴ - ում նման հայցերը կազմում են 90-95%-ը⁴: Սակայն կոնֆլիկտների կարգավորման իրավական մեխանիզմների որոշ սահմանափակվածությունը ամենակին չի փոքրացնում նրանց դերը բանակցային գործընթացներում: Մյաժամանակ, դա չի նշանակում, որ բանակցությունները՝ հատկապես քաղաքական բանակցությունները գուրկ են իրավական հիմքերից: Ի վերջո, քաղաքական բանակցությունների արդյունքում կնքված յուրաքանչյուր համաձայնագիր կամ պայմանագիր պետք է ունենա նաև իրավական ծևակերպում, հանդիսանա իրավաբանական փաստաթուղթ, որում ամրագրված լինեն հարցերի կարգավորման համար անհրաժեշտ իրավական նորմեր:

Քաղաքական բանակցությունների իրավական հիմքերը, բանակցային որոշումների՝ պայմանագրերի կամ համաձայնագրերի իրավական տեսքն ու ծևակերպումները իրավամբ շատ կարևոր են, հակառակ դեպքում ծեռք բերված պայմանավորվածությունների ու պարտավորությունների կատարումը կողմերի համար կարող է յուրովի մեկնաբանությունների տեղիք տալ՝ վտանգելով դրանց իրականացումը:

Կոնֆլիկտների՝ բանակցային եղանակներով կարգավորման ժամանակ, բանակցությունների իրավական հիմքերի, մոտեցումների, ծևակերպումների կարևորությունն ու առաջնայնությունը առավել ցայտուն է դրսելորփում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի համատեքստում: Բանն այն է, որ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղված ԵԱՀԿ Սրբութի խմբի շրջանակներում տարվադաշտային բանակցությունների առանցքային հարցերից մեկն է հանդիսանում խաղաղ կարգավորման իրավական հիմքերի ու շրջանակների ծզգութումը: Չնայած այն հայտարարություններին ու կարծիքներին, որ անընդհատ հնչում են ինչպես Սրբութի խմբի համանախազահների, այնպես էլ Հայաստանի և Աղբեջանի քաղաքական շրջա-

նակներում այն մասին, որ Ղարաբաղյան հակամարտությունը **պետք է կարգավորվի բացառապես քաղաքական ճանապարհով**, այն ամենելուն չի կարող անտեսել կամ հաշվի չառնել *Lեռնային Ղարաբաղի հակամարտության արժեքային, երևմշակութային, առջևական, իրավական, տաճախական, քաղաքական եկմբերն ու գործոնները*: Այս կապակցությամբ, Ա. Մանասյանը գտնում է, որ ԽՍՀՄ կազմալուծման գործընթացը տեղի ունեցավ գործող իրավական իրողությունների շրջանակներում, որի արդյունքում որոշակիացվեցին հետխորհրդային տարածաշրջանում կոնֆլիկտների կարգավորման ու լուծման իրավական մուտեցումներն ու շրջանակները⁶⁵: «Եվ, որքան էլ մեզ վստահեցնեն, թե դարաբաղյան կարգավորումը քաղաքական բնույթ է կրում, անհնար է չտեսնել ակնհայտը. ԵԱՀԿ «ատվերային իրավական փաքեթի» բոլոր իրավական սկզբունքները.... Վերցված են միևնույն «բանկից», որի անունն է՝ ԽՍՀՄ իրավաքաղաքական ժառանգություն»⁶⁶:

Կոնֆլիկտների քաղաքական կարգավորումը նշանակում է հակամարտող կողմների պատրաստակամությանը բացառապես խաղաղ ճանապարհով, քաղաքական երկխոսության, բանակցությունների միջոցով եխնահարցերի համատեղ քննարկում և ընդհանուր հայտարարի գալու, փոխսպառք ընդունելի գրաշամարտ ճանապարհով խմբիրների լուծում: Ինչպես նշում է Ս. Լեբեդյան, «Ի տարբերություն միակողմանի գործողությունների հակածության, այդ ճանապարհը (այսինքն քաղաքական կարգավորումը - Խ.Գ.) նշանակում է հետևյալը. մասնակիցները ելնում են նրանից, որ գոյաւթյուն ունեցած հակասությունները պետք է քննարկվեն, որի արդյունքում պետք է գտնվի հիմնախնդրի լուծումը: Այդպիսին է կոնֆլիկտների քաղաքական կարգավորման ճանապարհը, որը ենթադրում է հակամարտող կողմների միջև ուղղակի կամ միջնորդների մասնակցությամբ բանակցությունների վարման»⁶⁷: Այսինքն, Ղարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորումը որպես իրավական կարգավորման այլանորութանք ներկայացնելու փորձերը արդարացված չեն: Օրինակ, պյուֆենտը Վ. Թումանյանը առանձնացնում է նման հիմնահարցերի իրավական, իրավաքաղաքական և քաղաքական լուծման ձևերը, որոնք սակայն, պետք է լիստարկել ու գնահատել իրենց կոնկրետ կապակցության մեջ, խստորեն հաշվի առնելով իրա-

65 Տե՛ս **Манасян А.С.** Карабахский конфликт: ракурсы правового подхода. Еր., 1998, с. 36.

66 Նույն տեղում, էջ 36:

67 **Лебедева М.М.** Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 39.

Քաղաքական բանակցություններ (տեսարյան և պրակտիկա)

վունքի և քաղաքականության իրական առնչությունները՝ իրենց դրսնորման առանձնահատկություններով⁶⁸:

Նախ և առաջ, Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը պետք է իմանված լինի միջազգային իրավունքի գործող սկզբունքների ու նորմերի վրա: Քաղաքական կարգավորումից շի կարող դուրս մնալ բանակցությունների առանցքային՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական և քաղաքական կարգավիճակի ճշգրտման ու լուծման հարցը: Վերջապես, յուրաքանչյուր քաղաքական համաձայնագիր կամ պայմանագիր, որը կվերաբերի Ղարաբաղյան խնդրի կարգավորմանը, պետք է ամրագրվի իրավական փաստաթղթերում, ունենա հստակ իրավական ձևակերպումներ: Քաղաքական բանակցությունների գործընթացի նման պարամետրերի առկայությունն է հիմք տալիս հունգար դիվանագետ Յ. Ներգեշին բանակցությունները՝ որպես իրավական ակտեր դիտարկելու: «Փորձը ցույց է տալիս, - նշում է նա, - որ, նոյնիսկ իշխանության դրստրման ամենակոշտ ձևում՝ պատերազմում գործում է իրավունքն ու նրա կողմից որոշարկված մարմինները, իսկ ամենախսանագույն, մարդկային ըմբռնումով կազմված իրավական ակտերում առկա է ուժը, իշխանությունը, քաղաքականությունը: Դրանից հետևում է, որ բանակցությունները, իսկ առավել շափով բանակցային համաձայնագրերը իրավական ակտեր են»⁶⁹:

Թե որքանով են բանակցություններն իրավական ակտեր համարվում, միանշանակ ասել տեղին շի լինի, քանի որ, այնուամենայնիվ, մեծամասամբ, բանակցությունների անհրաժեշտությունը զգացվում է այն ժամանակ, երբ հասարակության մեջ չկան կամ չեն գործում վարքագծի հստակ կանոնակարգված մոդելները և օրենսդրությամբ նախատեսված իրավական նորմերն ու ընթացակարգերը:

Այնպես որ քաղաքական բանակցությունների իրավական հիմքերի անտեսումը կամ դրանց թերագնահատումը էապես ազդում են ինչպես բանակցային գործընթացների արդյունքում կողմերի ընդունած վերջնական որոշումների որակի վրա: Այդ իսկ պատճառով, քաղաքական գործընթացներին, հաստակապես բանակցային գործընթացներին ներդրավված քաղաքականության տարրեր սուրյեկտներին ներկայացվող առաջնային պահանջներից է մնում իրավական հիմքերով գործունեության իրականացումը:

68 Տե՛ս Թամանյան Վ.Ս., Իրավունքը և քաղաքականությունը, // Քաղաքականություն և իրավունք(Գիտաժողովի նյութեր 9-10 ապրիլ, 1999թ.) Եր., 2000թ, էջ 19:

69 Կերցեա Յ. Պոլե բնելու-ստուգային առաջնային պահանջներից է մնում իրավական հիմքերով գործունեության իրականացումը:

Քաղաքական բանակցությունների սկզբունքները

Ընդհանրապես, իրավական իիմքով պետության գործունեության և քաղաքակիրք իիմունքներով հասարակական կյանքի կազմակերպման, քաղաքական տարրեր սուբյեկտների շահերի ու պահանջմունքների համաձայնեցման խնդիրներն այսօր էլ մնում են նորանկախ երկրներում՝ մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության ստեղծման կարևոր նպատակներից մեկը:

2.4. Քսութեական բանակցությունների սկզբունքները

Քանակցային գործունեության իրականացման, դրանց վարման, ընդհատված բանակցությունների վերսկսման համար շատ հաճախ քանակցային սուբյեկտները առաջ են քանական սկզբունքներ, որոնց հիման վրա կողմերից յուրաքանչյուր փորձում է ձևավորել վիճահարույց խնդիրի նկատմամբ սեփական դիրքորոշումներն ու մոտեցումները: Քաղաքական բանակցությունների ժամանակ կողմերի ներկայացրած փաստարկներն ու տեսակետները, մոտեցումներն ու դիրքորոշումները, որպես կանոն, հիմնված են լինում որևէ սկզբունքի վրա: **Գրեթե յուրաքանչյուր բանակցություն, առաջին եերքին, բանակցության սուբյեկտների կողմից հոչակված սկզբունքների պայքար է:** Այս առումով, և բանակցությունների մասնակիցների, և բանակցային գործընթացները ուսումնասիրողների համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե որ սկզբունքները պետք է դրվեն բանակցությունների հիմքում և ում շահերն են դրանք արտահայտում: Պատահական չէ, որ Ռ. Ֆիշերն ու Ու. Ուրին բանակցությունների տեսակներից առանձնացնում են հատկապես «սկզբունքային բանակցություններ»:

Ժամանակակից միջազգային իրավունքը ճանաչում է մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք գերակայող են պետությունների հարաբերությունները կարգավորելու և նրանց միջև խաղաղ գործակցությունն ապահովելու ժամանակ: Դրանց մի մասը շարադրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ԵԱՀԿ ՀԵԼՍԻՒՆԿՅԱՆ վերջնական ակտի և այլ միջազգային իրավական փաստաթղթերում: Որպես բանակցությունների սկզբունքներ կարող են հանդես գալ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած և տարրեր միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված զանազան սկզբունքներ: Այս կապակցությամբ Վ. Թումանյանը միջազգային քաղաքականության սկզբունքները բաժանում է երկու խմբի՝ նկատի ունենալով դրանց բնույթը և ընդհանրու-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

բյան մակարդակը⁷⁰: Ըստ նրա, սկզբունքների մի մասը վերաբերում է միջազգային քաղաքականության սուբյեկտների կարգավիճակի և գործունեության տարբեր կողմերին, որի մեջ մտնում են պետությունների ինքնիշխանության, հաստատված հասարակական-քաղաքական կարգի ճանաչման, տարածքային ամբողջականության հարգման, սահմանների անձևունմիտելության, պետությունների ներքին գործերին շմիջամտելու, միջազգային իրավունքի նորմերն ու պարտավորությունները ինքնակամ կատարելու, այլ պետությունների և երկրների հետ փոխահավետ հիմունքներով համագործակցելու սկզբունքները և այլն:

Մյուս խմբի սկզբունքներն ավելի ընդհանրական են և հիմնականում վերաբերում են միջազգային քաղաքանության բնույթի, որոշումների կենսագործման հիմունքների և մեխանիզմների հարցերին: Այդպիսիններից են միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման, իրավահավասարության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, ժողովուրդների և ազգերի իրավահավասար և ազատ ինքնորշման, քաղաքականության սուբյեկտների միջև տարածայնությունները, հակասություններն ու կոնֆլիկտները խաղաղ ճանապարհներով լուծման, համաշխատ ջանքերով լուծման, միջազգային քաղաքականության մարդասիրացման սկզբունքները և այլն⁷¹: Եթե հետևելու լինենք միջազգային քաղաքականության և իրավունքի սկզբունքների նման դասակարգմանը, ապա ակներն եւ ընդիանության մակարդակով, և արժեքային առումով երկրորդ խմբի սկզբունքների գերակայությունն ու առաջնայնությունը առաջինների նկատմամբ: Սակայն առայժմ դեռևս չկա միջազգային այնպիսի փաստաթուղթ, որը սպառի կերպով շարադրեր միջազգային իրավունքի գլխավոր կամ հիմնարար սկզբունքները:

Առաջին կարգի սկզբունքներն, ինչ խոսք, ունեն իրենց որոշակի կարգավորիչ դերը միջազգային հարաբերությունների և միջազգային քաղաքականության կազմակերպման առումով: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ ժամանակակից տարածաշրջանային կոնֆլիկտների մեծ մասը տեղի է ունենում հենց այդ սկզբունքների գործառնության շրջանակներում: Սկզբունքները սահմանվում են մարդկանց կողմից՝ ելեւով պատմական այս կամ այն ժամանակաշրջանի կոնկրետ պահանջներից և հանգամանքներից, հետևաբար, կախված իրավիճակային

70 Տե՛ս Քաղաքականության ներածություն (Ի.Ս. Թալյամի խմբ), -Եր, 1996, էջ 241:

71 Տե՛ս նոյն տեղում:

Զաղարական բանակցությունների սկզբունքները

փոփոխություններից, նրանք նույնպես կարող են փոփոխվել: Չի՞ նշանակում դա, արդյոք, որ որոշ սկզբունքներ աստիճանաբար դադարում են կատարել իրենց հիմնական գործառույթները, որ աշխարհի գտնվում է փոխակերպման մի նոր փուլում, որտեղ քաղաքականության գլոբալացումը թելադրում է նոր իրողություններ և համարժեք արձագանքներ այդ իրողությունների նկատմամբ: Բացի այդ, համընդհանուր նշանակության սկզբունքների դերի ակտիվացման հետ մեկտեղ, կարելի է նկատել որոշ սկզբունքների արդիականության նվազում: Ինչ վերաբերում է այդ սկզբունքներից մի քանիսի նշանակությանը, ապա, այդ առումով, կրնկվետ տարածքային ամբողջականության պահպանման և ազգերի ազատ ինքնուրշման սկզբունքների վերաբերյալ, արժեքավոր են Ա. Մանայա-նի տեսակետները: Մասնավորապես, հեղինակը գտնում է, որ նախկին ԽՍՀՄ կազմալուծման* ընթացքում, միջուկային հզոր գերտերության առկայությունը, ինչպիսին ԽՍՀՄ-ն էր, միջազգային հանրության առջև ծառացած գերինդիր էր **դարձրել աշխարհում միջազգային անվտանգության ապահովումը**, որի իրականացմանն էլ ուղղված էին խոշոր տերությունների քաղաքական, դիվանագիտական, քարոզական ողջ կարողություններն ու հնարավորությունները²²: Այս հանգամանքով էր պայմանագրաված միջազգային հանրության կողմից **նորանկախ պետությունների՝ իրենց նախկին միութենական սահմաններում ճանաշման սկզբունքի ընտրությունը**: Իսկ որպես իրավական հիմք հանդիսացավ միջազգային իրավունքի նորմերից՝ տարածքային ամբողջականության պահպանման և սահմանների անխախտելիության սկզբունքը: Պետք է նշել, որ Ռուսաստանի համար ևս, այդ սկզբունքի հոչակումը և առաջնայությունը տվյալ սոցիալ-քաղաքական իրավիճակում նույնպես ճեղնտու էր, քանի որ այդ ժամանակ քավականին մեծ էր Ռուսաստանի դաշնային կառուցվածքի մասնատման վտանգը: Փաստորեն, տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը միակ իրավական հիմքն էր, որի շրջանակներում հնարավոր էր իրականացնել ԽՍՀՄ կազմալուծման համեմատարար խաղաղ և միջուկային սպառնալիքի տեսանկյունից անվտանգ գործընթացը: Դեռ ավելին, Ա. Մանայանը կարծում է, որ դարարադյան հակամարտության կարգավորման ժամանակ տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը ընդունելի լինելով

* Հեղինակը ԽՍՀՄ տրոհման գործերացը նկարագրելիս օգտագործում է «կազմալուծում» եզրը «փլուզման» փոխարեն, դրանով իսկ ընդգծելով, որ այդ գործընթացը կազմակերպված ընույթ է կրում, մինչդեռ փլուզումը ենթադրում է տարրերային գործընթաց:

72 Տե՛ս Մանասյ Ա. Կարաբախский конфликт: ракурсы правового подхода., Ереван, 1998. с 35.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հանդերձ, կիրառելի չէ Ալրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հակամարտության լաւման համար, քանի որ, երբ 1992 թ. կայացավ Ալրբեջանի նորանկախ Հանրապետությունը, Լեռնային Ղարաբաղը օրինական կերպով և այն ժամանակ գործող բոլոր իրավական նորմերին համապատասխան դրւում էր եկել Ալրբեջանական ԽՍՀ կազմից⁷³: Բացի այդ, եթե հարցին մոտենանք արթերային առումով, ապա պարզ է, որ միջազգային իրավունքի ոչ բալոր սկզբունքներն են գոնվում արժեքային միևնույն հարրության վրա. անվիճելի է մարդու իրավունքների հարգման, իրավահավասարության, ժողովուրդների ազատ կամքի արտահայտման և ինքնորոշման սկզբունքների առաջնայնությունը վերջինիս նկատմամբ և համամարդկային արժեքների, և դեմոկրատական արժեքների տեսանկյունից: Ինքնորոշման իրավունքի առաջնայնության մասին է խոսունակ Յու. Բարսեղովի, նշելով, որ, «...փոխվիզողական լուծումը հնարավոր է միայն ինքնորոշման սկզբունքի հիմնան վրա և, հետևաբար, ենթադրում է խորհրդային սահմանադրության երկու հոդվածների միջև այնպիսի հարաբերակցության ճանաչման անհրաժեշտությունը, որն սկզբունքուն այլ բան լինել չի կարող, քան միջազգային իրավունքով սահմանված ինքնորոշման սկզբունքի առաջնայնություն»⁷⁴:

Բացի վերը նշված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից, բանակցությունների հիմքում կարող են ընկած լինել այլ սկզբունքներ ևս: Ամերիկան հեղինակներ Զ. Ռուբինն ու Զ. Սալակյանը նշում են, որ գրեթե յուրաքանչյուր բանակցություններում կողմերի դիրքորոշումները հիմնվում են այս կամ այն սկզբունքի վրա, որոնք շատ հաճախ չեն համընկնում իրար՝: Մասնակորապես, ֆինանսական պարտավորությունների մարմանն ուղարկած Հարավային և Հյուսիսային երկրների միջև տարկող բանակցությունների ժամանակ, ինչպես նշում են նրանք, հայուստ երկրները իրենց դիրքորոշումները կառուցում են երկու սկզբունքների՝ պայմանգրերի անվերապահ կառարման (pacta sunt servanda) և միջազգային բանկային համակարգի առողջ հիմքերի վրա: Հարավի երկրները, դրա փոխարեն առաջ են քաշում փոփոխված հանգամանքների (rebus sic stantibus) և միջազգային տնտեսական հավասար հարաբերությունների հաստատման սկզբունքները⁷⁵:

Գրեթե բոլոր բանակցությունների համար հատկանշական է այս կամ

73 Տե՛ս նոյն տեղում, էջ 37:

74 Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Եր., 1990թ., էջ 57:

75 Տե՛ս Ռубин Ջ., Սալակյան Ջ.. Фактор силы в международных переговорах.// Международная Жизнь. 1990/3. с31.

Քաղաքական բանակցությունների սուբյեկտները

այն սկզբունքների առաջքաշումը և դրանց հիման վրա սեփական դիրքությունների ձևակերպումը: Չատ հաճախ բանակցային դիրքորոշումները ձևակերպվում են ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունքների հիման վրա, դրանով իսկ առավել չափով հիմնավոր դարձնելով բանակցային դիրքությունները՝ անմիջական, ուղղակի բանակցություններից առաջ:

Ընդհանրապես, բանակցություններում կողմերից որևէ մեկի հաջողությունը մեծապես կախված է հենց այն հանգամանքից, թե որքան խոր ու մանրակրկիտ են վերլուծության ենթարկված բանակցությունների հիմքերը, կողմերի բանակցային գործունեության դիմելու իրական շարժադրիթներն ու դրդապատճառները, բանակցությունների սկզբունքները: Դրանց համարի ուսումնասիրումն ու վերլուծությունը յուրաքանչյուր կոնկրետ բանակցություններից առաջ, մեծապես կօգնի բացահայտել բանակցային կողմերի հետապնդած իրական շահերն ու նպատակները, մերձեցնել հակամարտող կողմերի դիրքորոշումներն ու մոտեցումները, քարծրացնել հնարավոր բանակցային որոշումների ընդունման որակն ու արդյունավետությունը:

3. Ըստաբական բանակցությունների սուբյեկտները

Զաղաքական բանակցությունների տեսական կարևոր նշանակության հիմնահարցերից մեկը քաղաքական բանակցությունների սուբյեկտների գործունեության առանձնահատկությունների, նրանց կարգավիճակի և լիազորությունների հետ կապված հարցերի ուսումնասիրումն է:

Ինչպես արդեն նշվել է, բանակցությունները որպես քաղաքական գործունեության տարատեսակ, դրսևորվում են սուբյեկտ սուբյեկտ փոխհարաբերությունների համակարգում, որտեղ **բանակցությունների սուբյեկտները ենթենք են գալիս որպես որոշակի շահեր հետապնդող, միմյանց վրա փոխադարձ ազդեցություն գործող, հստակ սահմանված կարգավիճակով, լիազորություններով և իրավասություններով օժակած բանակցային կողմեր, որոնց գործունեաւությունն ուղղված է բանակցության օրյեկտին:**

Բանակցությունների սուբյեկտների կարգավիճակի, լիազորությունների և իրավասությունների շրջանակի ճշգրտումը բանակցային գործընթացների կազմակերպման, վերջնական որոշումների ընդունման

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

արդյունավետությունը բարձրացնող կարևորագույն գործուներից է:

Այդ հիմնահարցերին անդադառնալու համար, նախ և առաջ, անհրաժեշտություն է առաջանում կանգ առնել բանակցությունների տեսության հասկացութային ապարատի վերանայման վրա՝ կապված «քանակցությունների սուբյեկտ» հասկացության իմաստի հետ: Այդ առումով կարևորվում է «քանակցությունների կողմ», «քանակցությունների սուբյեկտ», «քանակցությունների մասնակից» հասկացությունների փոխհարթերությունների և առնչությունների հստակեցումը:

«Բանակցությունների կողմ» հասկացությունն իր բովանդակությամբ ավելի լայն է և իր ծավալի մեջ ընգրկում է ինչպես «քանակցությունների սուբյեկտ», այնպես էլ «քանակցությունների մասնակից» հասկացությունները: Սակայն նման լայն ծավալն, իր հերթին, պարունակում է նաև որոշակի անորոշություն՝ կապված բանակցային կողմերի կարգավիճակի, լիազորությունների և իրավասուրյունների, նրանց պատասխանատվության շափի ճշգրտման ու հստակեցման հետ: Այս դեպքում նպատակահարմար է կիրառել «քանակցությունների սուբյեկտ» հասկացությունը, որը ենթադրում է ինչպես որոշակի կարգավիճակ, լիազորություններ և իրավասուրյուններ, այնպես էլ որոշակի պատասխանատվություն բանակցություններում ծեռք բերված պարտավորությունների հետագա կատարման համար: Այս պարագայում, բանակցությունների սուբյեկտները, իրենց սեփական շահերից ենելով, ակտիվորեն փոխազդում են միմյանց վրա, որպես քաղաքականության սուբյեկտներ, ունենալով բանակցային փոխհարաբերականության սուբյեկտների համար անհրաժեշտ կարգավիճակ: **Բանակցությունների սուբյեկտի կարգավիճակով հանդես գալը նշանակում է նաև կողմերի իրավահակասարություն:** Այլ իսկ պատճառով էլ, Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում աղյօթքանական կողմը միշտ բացասականորեն է վերաբերվել ԼՂՀ -ի՝ բանակցությունների սուբյեկտի կարգավիճակով հանդես գալու դեմ: Հակամարտող կողմերի խորհրդարանների մակարդակով, երբ նախապատրաստվությունը էր Բիշքեքյան հանդիպումը, որին պետք է մասնակցեին նաև ԼՂՀ խորհրդարանականները, Աղյօթքանի նախագահ Հ. Ավելը տարակուանք էր հայտնել, թե ինչու պետք է Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները մասնակցեն Բիշքեքյան բանակցություններին: Ըստ նրա, «Բանակցությունների սուբյեկտ կարող են լինել միայն Աղյօթքանի և Հայաստանի պատվիրակությունները»:⁷⁷

Բանակցությունների սուբյեկտների գործունեության առանձնահատ-

77 «Ազգ», 5 ապրիլ, 1994թ, էջ 2:

Քաղաքական բանակցությունների սուբյեկտները

Կուրյունների, բանակցություններին նրանց ներկայացման կարգի, մասնակցության աստիճանի հետ կապված հարցերը պարզելու համար, անհրաժեշտ է ներկայացնել բանակցությունների սուբյեկտների որոշակի դասակարգում, որը հնարավորինս կհստակեցներ այդ հարցերը: Պետք է նշել, որ նման դասակարգում տալը դժվար է, քանի որ ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Մոկշանցը, բանակցություններին սուբյեկտների ներկայացվածությունը կարող է լինել բավականին բարդ և բազմակարդակ: Մասնակորապես՝ նա տարբերակում է **բանակցությունների բացահայտ և ոչ բացահայտ սուբյեկտները**⁷⁷: Ըստ նրա, «բանակցությունների բացահայտ սուբյեկտներն անձինք են, որոնք իրականացնում են բանակցային գործընթացը: Դրանք, նախ և առաջ, այն մարդիկ են, որոնք ներկայացնում են տվյալ կողմի շահերը բանակցություններում և օժտված են որոշակի լիազորություններով»⁷⁸: «Նրանց հետևում, որպես կանոն, երևում է բանակցության մասնակցի հեղինակությունը, որի հարաբերությամբ իրենք՝ գործընկերները հանդես են գալիս որպես լիազոր ներկայացուցիչներ: Այդպիսի հեղինակություն կարող է լինել կառավարությունը, խորհրդարանը և այլն», - նշում է հեղինակը⁷⁹: Ըստ Էության, այստեղ խոսքը մի դեպքում գնում է «բանակցային սուբյեկտների» (որպես բանակցությունների մասնակիցների), մեկ այլ պարագայում՝ (եթե հեղինակը խոսում է «հեղինակություն» սուբյեկտի մասին) «բանակցությունների սուբյեկտի» մասին: «Հեղինակություն» սուբյեկտներն, ըստ Էության, որպես բանակցությունների սուբյեկտներ, այն քաղաքական ինստիտուտները կամ հաստատություններն են, որոնց շահերը բանակցություններում պաշտպանում են կոնկրետ «բանակցային սուբյեկտները»: Ավելի պարզ՝ կարելի է ասել, որ քաղաքական բանակցությունների սուբյեկտները կարող են լինել պետությունը, կառավարությունը, խորհրդարանը, կուսակցությունը և նման այլ կառույցներ, իսկ բանակցային սուբյեկտներ՝ այն անձինք, որոնք լիազորված են տվյալ ինստիտուտների կողմից՝ բանակցություններ կարելու համար:

Ըստ Ռ. Մոկշանցի դասակարգման, ոչ բացահայտ սուբյեկտների դերում կարող են լինել փորձագետները, որոնց փորձագիտական գնահատականների հիման վրա բացահայտ սուբյեկտները կարող են որոշումներ ընդունել: Բանակցությունների սուբյեկտների նման դասակար-

77 «Ազգ», 5 ապրիլ, 1994թ, էջ 2:

78 Տես Մոկշանց Բ. Ի. Փսիկոլոգия переговоров, Մ., 2002, с. 19.

79 Նույն տեղում:

80 Նույն տեղում, էջ 20:

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պահանջման)

գումից դրւս կարող են մնալ քանակցությունների գործընթացի այնպիսի կարևոր դերակատարներ, ինչպիսիք են միջնորդական կազմակերպությունները, խաղարարար կառույցները, դիտորդական առաքելություններ իրականացնող հաստատությունները: Այդ իսկ պատճառով, նպատակահարմար է ներկայացնել քանակցությունների սուբյեկտների նոր դասակարգում՝ իիմք ընդունելով քանակցությունների գործընթացի կարևոր տարրերից մեկի՝ քանակցությունների սուբյեկտների շահերի հարաբերակցության աստիճանը: Քանակցությունների սուբյեկտների գործունեության կարևոր նախապայման է հանդիսանում փոխադարձ շահերի առկայությունը, որոնց հարաբերակցության աստիճանով են դասակարգվում նաև քաղաքականության սուբյեկտները⁸¹: Մասնավորապես՝ Վ. Թումանյանը քաղաքականության սուբյեկտները դասակարգում է **հիմնականի, հարակիցի և օժանդակի**⁸²: Նման դասակարգումը կիրառելի է նաև քանակցությունների սուբյեկտների նկատմամբ: Այն պայմանավորված է ևս մեկ կարևոր հանգամանքով. զնալով նորանոր մարդիկ, սոցիալական խմբեր, քաղաքականության այլ սուբյեկտներ են ներգրավվում քանակցային գործընթացներում և, ըստ այդմ էլ, քաղաքական քանակցությունների սուբյեկտների դերում կարող են հանդես գալ ինչպես պետությունները, այնպես էլ իշխանության տարրեր ճյուղերը, նախարարությունները, քաղաքական կուսակցությունները, խորհրդարանական խմբակցությունները և այլն: Քանակցային գործընթացներին քաղաքականության սուբյեկտների մասնակցության ընդլայնումը անհրաժեշտություն է առաջանալու տակ այնպիսի դասակարգում, որը հնարավորություն կտար ավելի հստակ որոշելու և գնահատելու քանակցությունների հետ առնչվող քազմապիսի սուբյեկտների տեղն ու դերը, նրանց գործունեության առանձնահատկությունները, մասնակցության և պատասխանատվության շափու: Այդ սուբյեկտներից ոմանց շահերը քանակցության առարկան կարող է շոշափել մասնակիորեն, հետևաբար, նրանք կարող են հանդես գալ **քանակցությունների հարակից սուբյեկտների** դերում: Այդ դեպքում քաղաքական **քանակցությունների հիմնական սուբյեկտներ** են այն կողմերը, որոնց շահերը առավելագույն հարաբերվում, առնչվում են քանակցությունների ընթացքում և ընդգրկում են քանակցության առարկան ամբողջությամբ: Քանակցությունների հիմնական սուբյեկտների դերում քաղաքական կոնֆլիկտների ժամանակ կարող են հանդես գալ հակամարտող հիմնական կողմերը: Օ. Արշրան «հա-

81 Տե՛ս Քաղաքագիտության ներածություն (Դ.Ս. Քայլամի իմք.), Եր., 1996, էջ 75:

82 Տե՛ս նոյն տեղում, էջ 75:

Քաղաքական բանակցությունների սուբյեկտաները

կամարտության կողմ՝ ընդհանուր հասկացության փոխարեն, նպատակահարմար է գտնում «մասնակից», «սուբյեկտ», «միջնորդ» հասկացությունների կիրառում⁸³: Ըստ այդմ էլ, «Նրանք, ովքեր իրենց անձնական կամ խմբային շահերին համապատասխան, ազդում են հակամարտության լնթացքի և զանգվածի վարքագծի վրա, հանդես են զալիս հակամարտության սուբյեկտի դերում»⁸⁴: Այս կապակցությամբ, անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին, հարկ է նշել, որ, իբրև հակամարտող կողմ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ բանակցությունների հիմնական սուբյեկտի կարգավիճակով հանդես գալը էապես բարձրացնում է բանակցային գործընթացի արդյունավետությունը: Մասնավորապես, կան մի շարք բանակցային փաստարդեր, ուր դրված է նաև ԼՂՀ ներկայացուցչի ստորագրությունը: Այդպիսի բանակցային փաստարդերից են «Ժելեզնովովսկյան հայտարարագիրը» (25 սեպտեմբեր, 1991թ.), նախաձեռնված Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների կողմից, «Անհետածգելի միջոցառումների գրաֆիկը» (14 հունիս, 1993թ.), ներկայացված ԵՎՀԿ Մինսկի խմբի նախագահի կողմից, «Մոսկվյան արձանագրությունը» (18 փետրվար, 1994թ.), ստորագրված Աղրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ պաշտպանության նախարարների կողմից, «Բիշքեքյան արձանագրությունը» (6 մայիս, 1994թ.), մշակված հակամարտող երեք սուբյեկտների խորհրդարանական պատվիրակությունների կողմից, «Հրադադարի մասին համաձայնագիրը» (12 մայիս, 1994թ), ընդունված Աղրբեջանի, Հայաստանի և ԼՂՀ պաշտպանության նախարարների կողմից՝ Ռուսաստանի միջնորդությամբ և այլն⁸⁵: Դժվար չեն կատել, որ բանակցությունների հիմնական սուբյեկտի հստակեցումը և բանակցային գործընթացին ներառնվածությունը էապես մեծացնում են բանակցությունների արդյունավետությունը: Բացի հիմնական սուբյեկտներից, բանակցային գործընթացներում կարող են ներգրավված լինել զանազան հաշտարար կառույցներ, միջնորդական կամ խաղարարար կազմակերպություններ, դիտորդական առաքելություններ, ինչպես նաև, բանակցությունների ընթացքում, բանակցային գործընթացին ներգրավված կազմակերպություններ, որոնց շահերը այս կամ այն կերպ շոշափվում են բանակցությունների լնթացքում, որոնք ել հանդես են զալիս **քաղաքական բանակցությունների հարակից սուբյեկտաների** դերում: Ընդհան

83 Տե՛ս **Արաբա Օ.** Современные концепции "управления" этнополитическим конфликтам. // Вестн. Моск. Ун-та. Сер. 18. Социология и Политология. 2000/1. с 79.

84 Նոյն տեղում, էջ 79:

85 Տե՛ս **Саркисян М.** Политические проблемы Кавказа и Армении. Еր., 1998. с. 22.

Քաղաքական բանակցություններ (սեսություն և պրակտիկա)

բապես, կա տեսակետ, որ, բացի հակամարտության հիմնական կողմերից, հակամարտությունների կարգավորման գործընթացներին ներգրավված բոլոր սուբյեկտները, ընդհանուր առմամբ, հանդես են գալիս որպես «երրորդ կողմ»⁸⁶: Բայց այս դեպքում հարց կարող է առաջանալ, թե արդյոք «երրորդ կողմին» կարելի է համարել բանակցությունների հարակից սուբյեկտ: «Երրորդ կողմը» այս առումով, բավական լայն հասկացություն է, որն իր մեջ ընդգրկում է միջնորդներին, հաշտարարներին, դիտորդներին, ինչպես նաև դատավորներին, որոնք կարող են հանդես գալ որպես երրորդ կողմ: Նրանց տարրեմությունն իիմնականում որոշվում է բանակցային գործընթացին ներառնվածության աստիճանով: Այսպես, օրինակ, եթե դիտորդները անմիջականորեն չեն մասնակցում բանակցություններին և միայն հետևում են բանակցությունների ընթացքին, ապա միջնորդները ավելի ակտիվորեն են ներգրավված բանակցային գործընթացներին, երբեմն կարող են ուղղակի մասնակցել բանակցություններին, ինչպես նաև հանդես գալ հակամարտության կարգավորման նոր առաջարկներով և նույնացներով: Արդիտրաժային մասնակցությունն առանձնանում է նրանով, որ իրքն երրորդ կողմ ընտրված դատական ատյանի որոշումը (ի դեպ, շատ հաճախ, դատական միջամտության համար պահանջվում է հակամարտությունը բոլոր կողմերի համաձայնությունը) պարտադիր է կատարման բոլոր կողմերի համար և քննարկման ենթակա չէ: Ինչպես նշում են Վ. Ազբուկինն ու Ս. Տերեխտվը, «Երավական պարտադիրությունը այն գլխավոր առանձնահատկությունն է, որով արբիտրաժը տարրերվում է հակամարտությունների և վեճերի խաղաղ կարգավորման այլ եղանակներից»⁸⁷:

Քաղաքական բանակցությունների հարակից սուբյեկտներից հատկապես ուշադրության արժանին միջնորդական կազմակերպությունների գործունեությունն է: Բանն այն է, որ ժամանակակից քաղաքական կոնֆլիկտների մեծ մասի կարգավորման գործընթացները տեղի են ունենում միջնորդների մասնակցությամբ: Միջնորդի կարգավիճակով հարակից սուբյեկտների հանդես գալը ենթադրում է որոշակի առանձնահատկություններ: Նախ և առաջ, միջնորդությամբ հանդես գալու համար անհրաժեշտ է բոլոր կողմերի համաձայնությունը: Միջնորդությունը ենթադրում է նաև հարակից սուբյեկտների ակտիվ մասնակցությունը ինչպես բանակցությունների կազմակերպման, այնպես էլ բանակցային որոշում-

86 Տե՛ս Լեbedeva M.M. Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 104.

87 Ազբուկին Վ., Տերեխով Ս. Проблема разрешения конфликтных ситуаций. // Международная Жизнь. 1999/8. с. 46.

Քաղաքական բանակցությունների սուբյեկտաները

Ների մշակման գործընթացին: Միջնորդներից շատ հաճախ պահանջվում է ոչ միայն կազմակերպել բանակցություններ, այլ նաև ակտիվորեն մասնակցել բանակցություններին՝ օգնելով հակամարտության հիմնական սուբյեկտներին գտնելու փոխանակունելի լուծումներ: Քաղաքական բանակցությունների հարակից սուբյեկտների միջնորդական գործունեությունը մնձապես նպաստում է հակամարտուղ կողմերի մոտ բանակցությունները որպես լավագույն այլընտրանք լնդունելու համոզման ձևավորմանը և ամրապնդմանը: Միջնորդներն օգնում են կողմերին մշակել համաձայնության տարրերակներ, ինարավոր լավագույն բանակցային որոշումներ, ինչպես նաև, բանակցությունների լնթացքում առաջ են քաշում նոր գաղափարներ: Որոշակի առումով, կարգավորում և վերահսկելի են դարձնում հակամարտող կողմերի գործությունները, նրանց կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը և այլն: Ռուս հետինակներ L. Գոզմանն ու Ե. Շետովալը միջնորդների կողմից իրականացվող վերոհիշյալ գործառույթներից բացի, նշում են նաև մի շարք այլ գործառույթներ՝ 1. հակառակորյալն հանողել գործել բացառապես խաղաղ միջոցներով և մերոդներով, 2. բացահայտել հակամարտության եռությունը, 3. բացահայտել կողմերի լոնդիանոր շահերը, 4. փոխադարձ հաղորդակցության ուղիներ հաստատել հակամարտող կողմերի միջև, 5. համաձայնության եզրերի հստակեցում, նոր առաջարկների ներկայացում և այլն⁸⁸: Այս խնդիրների լուծման և գործառույթների իրականացման համար հարակից սուբյեկտներին ներկայացվում են նաև որոշակի պահանջներ, որոնք ներառում են **իրատասարթյունը, չեղորությունը, իրագելությունը, հեղինակությունը, ազեղիկությունը, ճկունությունը** և այլն:

Միջնորդական գործունեության իրականացումը կարող է առաջ բերել մի շարք դժվարություններ: Բանն այն է, որ միջնորդական գործունեությամբ զբաղվելով, որոշակի հանգամանքներում, հակամարտության կարգավորմամբ տարվելով, նրանք կարող են ներքաշվել կոնֆլիկտի մեջ, լնդիայնելով հակամարտության հիմնական սուբյեկտների բանակը: Բացի այդ, սուբյեկտները կարող են իրենց սեփական և կողմնակալ շահերից ելնելով, ցանկություն հայտնել հանդես գալ որպես միջնորդ (օրինակ՝ Թուրքիան, որը բազմիցս ցանկություն է հայտնել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հանդես գալ որպես միջնորդ, միաժամանակ, բացահայտ կերպով ցուցադրելով իր կողմնակալ վերաբերմունքը հակամարտության հիմնական միայն մեկ սուբ-

88 Տե՛ս Գոզման Լ., Շեստովալ Ե. Политическая Психология. Ростов-на Дону. 1996. с. 265.

յեկտի նկատմամբ): Այս առումով, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացն ուղղակիորեն ցույց է տալիս, որ իրքի միջնորդ հանդես եկող սուբյեկտների շահերը բարդ փոխազդեցության մեջ են գտնվում: Այդ փոխազդեցությունը, համագործակցության հետ մեկտեղ, հաճախ պարունակում է բանակցությունների հարակից սուբյեկտների շահերի բախման, մրցակցության, հակասականության տարրեր, որն էլ, բնականաբար, համապատասխան կերպով ազդում է բանակցային գործընթացի դիմամիկայի վրա: Այս կապակցությամբ, Վ. Կազմիրովը նշում է, որ հետխարիդրային տարածաշրջանում բռնկված հակամարտությունների կարգավորման գործընթացներին ներգրավված միջնորդ-սուբյեկտների հետապնդած շահերի բախաւմը, մրցակցությունն ու հակասություններն իրենց հերթին, հանգեցրին որպես միջնորդ հանդես եկող Ռուսաստանի և ԵԱՀՆ փոխհարաբերությունների սրման, որն էլ Բուհապետույան Վեհաժողովից հետո հանգեցրեց ԵԱՀՆ կառուցվածքային – իրավական ծևափոխմանը (ԵԱՀԿ), ինչպես նաև հավասար իրավունքներով հանդես եկող համանախազահների ինստիտուտի առաջացմանը⁸⁹:

Միջնորդների միջև շահերի հակասությունները ուղղակիորեն գումարին նաև բանակցային իմնական սուբյեկտները: Օրինակ՝ ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Փափազյանը հարցազրույցներից մեկում նշել էր. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում լավագույն տարբերակը կլիներ Ռուսաստանի և ԵԱՀՆ ջանքերի միավորումը, և երկու առանձին տարբերակների (Ռուսաստան և ԵԱՀՆ) գոյությունը հակամարտության մասնակիցներին, առաջին հերթին՝ Ալբրեժանին հնարավորություն է տալիս խուսանավել երկու կողմերի միջև, և շրջություններ ոչ այս, և ոչ էլ մյուս առաջարկները»⁹⁰: Միջնորդների շահերի հակասությունը ուղղակիորեն ազդում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վրա, արագացնելով կամ դանադեղներով այն:

Զարաքաղաքան բանակցությունների օժանդակ սուբյեկտներ կարող են լինել անկախ փորձագիտական խմբերը, խորհրդատվական ծառայությունները, զանգվածային լրատվության միջոցները, սպասարկող անձնակազմերը և այլն: Փորձագետների և խորհրդատվական ծառայությունների դերը մեծ է հատկապես բանակցությունների նախապատ-

89 **Տնտեսական կատաstrofa v zone Karabaxa** была, может быть, больше, чем наше вокруг Косово. //Международная Жизнь. 1999/5. с 64.

90 «Հայաստանի Հանրապետություն», 6 մայիսի, 1994թ., էջ1:

Քաղաքական բանակցությունների սուբյեկտները

բաստման, բանակցային սուբյեկտների դիրքորոշումների մերձեցման, համատեղ որոշումների տարրերակների մշակման ժամանակ, իսկ զանգվածային լրատվամիջոցներինը՝ բանակցությունների ընթացքի լուսաբանման և հասարակական կարծիքի ծևափորման գործում։ Ըստ Էության, «բանակցությունների օժանդակ սուբյեկտների» տարրերակումը մոտ է Ռ. Մոկշանցի առաջարկած «բանակցությունների ոչ բացահայտ սուբյեկտ» ծևակերպմանը։

Ինչ վերաբերում է բանակցային սուբյեկտների մասնակցությունը բանակցային գործնքացներին, ապա այն տեղի է ունենում անմիջական և ներկայացուցչական կարգով։ Ռուս հեղինակ Վ. Նեխը քաղաքական բանակցությունների համար հատկանշական է համարում այն, որ, սովորաբար, քաղաքական բանակցությունների սուբյեկտները բանակցություններին մասնակցում են ներկայացուցչական կարգով, այսինքն հանդես են զայխ ոչ թե իրենց, այլ որևէ կազմակերպության անունից և ներկայացնում են տվյալ կազմակերպության շահերը։ Քաղաքական բանակցությունների մասնակիցների ներկայացուցչությունը կարող է իրականանալ ուղղակի և միջնորդավորված ձևով։ Ուղղակի ներկայացուցչությունը ենթադրում է պետության կամ որևէ կազմակերպության ղեկավարների մասնակցությամբ բանակցություններ, իսկ միջնորդավորված ներկայացուցչության ղեպքում բանակցությունները վարվում են պատվիրակություններով։ Քաղաքական բանակցությունների սուբյեկտների մասնակցության ձևը բանակցային գործնքացներին (ուղղակի կամ միջնորդավորված) որոշակի ազդեցություն է քողոնում ինչպես բանակցությունների վարման գործնքացի, այնպես էլ բանակցություններում ընդունվող որոշումների որակի վրա։ Խոսքն այս ղեպքում վերաբերում է բանակցությունների սուբյեկտների կարգավիճակին և վարվող բանակցությունների մակարդակին։

Բանակցությունների հիմնահարցով գրադադար հետազոտողների մոտ միասնական կարծիք չկա բանակցային գործնքացի վրա բանակցային սուբյեկտների կարգավիճակից և բանակցությունների մակարդակից բխող ազդեցության հարցի շուրջ։ Այսպես, օրինակ, ամերիկյան հեղինակ Վ. Սիտչելը գտնում է, որ **կարգավիճակով բարձր քաղաքական լիդերների մասնակցությունը բանակցություններին՝ ի տարրերություն պատվիրակ մասնակիցների, էական ազդեցություն է ունենալ ինչպես բանակցությունների կուրսի, այնպես էլ վերջնական արդյունքների վրա⁹։ Նա այս հարցի կապակցությամբ առաջ է քաշում մի բանի տեսա-**

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

կետներ՝ 1. որոշակի հանգամանքներում, միայն կարգավիճակով բարձր սուբյեկտների մասնակցությունը բանակցություններին, կիավաստիացնի մյուս կողմին, որ դիմացինը բանակցություններին լուրջ է մոտենում⁹²: Այս կապակցությամբ, հունգար դլվանագետ Յ. Ներգեշը նկարագրում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների բանակցային մի դրվագ, որը տեղի էր ունենում Խորհրդային Միության և դաշնակից երկրների միջև: Հակագերմանական կոալիցիայի ստեղծման համար տարվող բանակցություններում խորհրդային կողմը ներկայացված էր բանակի բարձրաստիճան գեներալների մակարդակով, որոնք օժտված էին վերջնական որոշումներ կայացնելու լիազորությամբ: Դրան ի պատասխան, դաշնակից երկրները ներկայացված էին բանակի շտաբի սպաների մակարդակով, որոնք վերջնական որոշումներ կայացնելու համապատասխան լիազորություններ չունեին: «Խորհրդային կողմը այդ քայլը դիտեց որպես լուրջ բանակցություններ վարելու չկամություն և հետ կանչեց իր ներկայացուցիչներին», - եզրակացնում է Յ. Ներգեշը⁹³: Կ. Միտչելի առաջ քաշած երկրորդ տեսակետն այն է, որ կարգավիճակով բարձր սուբյեկտների մասնակցությունը բանակցություններին, որոշակի երաշխիքներ է տալիս ծեռոք բերված համաձայնությունների հետագա կատարման համար, քանի որ, հեղինակությունը և վարկանշը, որոնք ծեռոք են բերվում տարիների ընթացքում, բավական քանի արժեն և փոխադարձ վստահության հաստատման և ամրապնդման կարևորագույն բաղկացուցիչներից են⁹⁴: Բացի այդ, բարձր կարգավիճակ ունեցող քաղաքական գործիչները, առանց կողմնակիցների հետ սրաշակի համաձայնության, իրենց անձնական հեղինակությունը հարվածի տակ չեն դնի և քննարկման առարկա չեն դարձնի: Մյուս կողմից, ինչպես նշում է Կ. Միտչելը, պատվիրակ մասմակիցները դանդաղեցմաս են բանակցությունների ընթացքը, լիդեր-քանակցողների համեմատ՝ ավելի քիչ Ժկում են, հաճախ չեն ունենում համապատասխան լիազորություններ և իրավաստիքուններ վերջնական որոշումների կայացման համար և յուրաքանչյուր փոփոխված իրավիճակի դեպքում ստիպված են լինում լրացուցիչ իրահանգների համար դիմել դեկավարությանը և այլն⁹⁵: Անգլիացի հեղինակ Հ. Նիկոլսոնը, ուսումնասիրելով բանակցությունները պատմական զարգացման համատեքստում, անդրադառնալով կունական դեմոկրատիային, որպես բերություն նշում էր, որ «Հունական դեմոկրատիան

92 Ibid, p 243.

93 Հերցեշ Յ. Պոле նիւթե-ստոլ ներշնչության մասին. 1989. ս. 198.

94 Տե՛ս Mitchell C. R., նշան էջ 243:

95 Տե՛ս նոյն տեղում:

Քաղաքական բանակցությունների տորյեկտունը

մեծ կասկածանքով էր վերաբերվում իր պատվիրակ - բանակցողներին. Երեմն միևնույն հնաձնարարությամբ մի քանի պատվիրակություններ էին ուղարկվում, որոնք չունեին համապատասխան լիազորություններ և փոփոխված իրավիճակի պայմաններում ստիպված էին լրացուցիչ ցուցումների համար դիմել Ժողովրդական Ժողովին, որը կարող էր ամխաներ տևել»⁹⁶:

Այս տեսակետներին հակառակ, Յ. Ներգեշը գտնում է, որ «...որքան քաղաքական գործի հիերարխիկ կարգավիճակը բարձր է, այնքան քիչ նա պետք է մասնակցի և վարի բանակցություններ: Այն հանգամանքը, որ բարձր ծառայողական կարգավիճակով օժտված անձի ծեռում է կենտրոնացած վերջնական ոլորչում կայացնելու իրավունքը, պարագրսալ կերպով նրան անընդունակ է դարձնում բանակցություններ վարելու գործընթացում»⁹⁷: Այստեղ, թերևս, Յ. Ներգեշը, լինելով արիեստավարժ դիվանագետ, բացարձակեցնում է դիվանագիտական ծառայությունների դերը: Ինչկից է, քաղաքական բանակցությունների մասնակիցների կարգավիճակը և բանակցությունների մակարդակը կախված են բանակցությունների կարևորությունից, բանակցային սուբյեկտների հետապնդած նպատակներից, բանակցությունների կշռից և այլն: Բանակցությունների նախապատրաստման, դրանց կազմակերպման համար պետք է հաշվի առնել մեկ կարևոր հանգամանք ևս, այն, որ բանակցության սուբյեկտները ներկայացված լինեն միևնույն մակարդակով: Բանակցությունների մակարդակի, համապատասխան պաշտոնական հիերարխիայի շխաչվառման դեպքում բանակցությունների առաջխաղացումը բավականին դժվարանում է: Թերևս, դա էր պատճառներից մեկը, որ, եթե Ղրղզստանի մայրաքաղաք Ֆիշբերում ընթացող բանակցություններում նախապատրաստվում էր «Ֆիշբերյան արձանագրությունն», բանակցային բոլոր կողմերը, բացի Ալյրեթանից, ներկայացված էին խորիդարանների նախագահների մակարդակով: Ալյրեթանը այդ բանակցություններում ներկայացնում էր Միլի Մեջլիսի փոխնախագահ Ա. Զալիլովը, որն էլ, երևի, վերջնական որոշում ընդունելու համապատասխան լիազորություն չուներ: Այդ մասին հայտնել էր նաև Ա. Զալիլովը, եթե արդեն փաստաբուղը պատրաստվում էր ստորագրման, վերջին պահին հայտնելով, որ ինքը համապատասխան լիազորություն չունի որևէ փաստաբղի տակ ստորագրելու: Այդ իսկ պատճառով, քաղաքական բանակցությունների սուբյեկտների հետ կապված կարևոր հիմնա-

96 Никольсон Г. Дипломатическое искусство. М., 1962. с. 37.

97 Нергеш Я. Поле битвы-стол переговоров. М., 1989. с 198.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հարցերից է բանակցային սուբյեկտների լիազորությունների հարցը: Քաղաքական բանակցությունների որոշ սուբյեկտներ, իրենց կարգավիճակից ելնելով, կարող են օժտված լինել իմքային կամ անփոխանցելի լիազորություններով: Այդ լիազորությունները որպես, կանոն, ամրագրված են լինում Սահմանադրության մեջ և այլ իրավական ակտերում: Օրինակ՝ երկրի նախագահի լիազորությունները որոշված են սահմանադրության մեջ, որի շրջանակներում էլ միայն նա կարող է բանակցություններ վարել: Հիմքային լիազորություններով օժտված են լինում հիմնականում բանակցային գործընթացին ուղղակի ներկայացված սուբյեկտները: Հիմքային լիազորությունները անփոխանցելի են, այսինքն սուբյեկտները իրենց հիմքային լիազորությունները իրավասու չեն փոխանցելու մեկ այլ սուբյեկտի: Միջնորդավորված ձևով քաղաքական բանակցություններում ներկայացված լինելով, բանակցային սուբյեկտները, կարգավիճակով բարձր սուբյեկտի կամ որևէ խմբի կողմից կարող են օժտվել փոխանցելի լիազորություններով, տվյալ բանակցություններին (ad hoc) մասնակցելու համար: Նրանց լիազորությունները կարող են ուժի մեջ լինել միայն տվյալ կոնկրետ բանակցությունների շրջանակներում, որոշակի նպատակների և արդյունքների ծեռք բերման համար, որոնց իրագործումից հետո նրանք կարող են վայր դնել իրենց լիազորությունները: Այսպիսով, քաղաքական բանակցությունների սուբյեկտների դասակարգումը, նրանց կարգավիճակով պայմանավորված՝ բանակցությունների մակարդակը, ներկայացուցչության ձևը, լիազորությունների և իրավասությունների շրջանակի ճշգրտումը, բանակցային սուբյեկտների մասնակցության չափն ու պատասխանատվության աստիճանը այն էական գործոններն են հանդիսանում, որոնք օգնում են բանակցային գործընթացների կազմակերպիչներին էական առաջընթացներ արձանագրել և հաջողությունների հասնել՝ բանակցային որոշումներ ընդունելիս:

Քաղաքական բանակցությունների սուբյեկտների գործունեության առանձնահատկությունների հետ կապված հարցերը կքննարկվեն հաջորդ բաժնում՝ կապված բանակցային գործընթացներին իշխանության սուբյեկտների մասնակցության, իշխանական հարաբերություններից բանակցային հարաբերություններին անցման առանձնահատկությունների ուսումնասիրության հետ:

4. ԻՇԽԱՆՄԱԿԱՆ ԲՍԽՎԿՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքական բանակցությունները, որպես քաղաքական գործունեության իրականացման եղանակ, իրենց կիրառումն են գտնում քաղաքական համակարգի՝ միմյանց հետ սերտորեն փոխազդող և փոխայայմանավորված երկու մակարդակներում՝ արտաքին և ներքաղաքական հարաբերությունների ոլորտներում։ Այս երկու ոլորտների փոխազդագործությունն այսօր բավականին մեծացել է. պետությունների վարած արտաքին և ներքին քաղաքականության փոխայմանավորվածությունը բանակցային գործընթացների մասնակիցներին անմիջականորեն պատասխանատու է դարձնում ոչ միայն տարածաշրջանում խաղաղության պահպանման ու համագործակցության ապահովման, այյ նաև սեփական ժողովրդի բարեկեցության, կենսամակարդակի բարձրացման համար։ Քաղաքականության տարբեր մակարդակներում տարբիո բանակցություններում ծեղոք բերված հաջողությունները բավականին արագ ու դրականորեն են ազդում մարդկանց ապրելակերպի վրա, և ընդհակառակը, ոչ շահավետ, անարդյունավետ բանակցությունները կարող են ներքաղաքական կայունության ու քաղաքացիական համերաշխության խաթարման պատճառ հանդիսանալ:

Քաղաքական բանակցությունների երևոյթի նման լայն լունգը կումը, բնականարար, ընդլայնում է նաև բանակցային գործընթացներին քաղաքականության սուբյեկտների ներառնավածության շրջանակները։ Եթե նախկինում քաղաքական բանակցությունները տարբիում էին իխմնականում արտաքին քաղաքականության ոլորտում, որտեղ, որպես բանակցությունների սուբյեկտներ հանդիսանուի գալիս պետությունները և նրանց դիվանագիտական գերատեսչությունները, ապա այժմ քաղաքական բանակցությունների կիրառման ոլորտն ընդգրկում է նաև ներքաղաքական հարաբերությունների շրջանակը, և լսու այլմ է, քաղաքական բանակցությունների սուբյեկտների դերում կարող են հանդիսանուած գալ իշխանության տարրեր ճյուղերը, կուսակցություններն ու նրանց միավորումները, հասարակական - քաղաքական կազմակերպությունները, խորհրդարանական խմբակցությունները, պատգամանավորական խմբերը, արհմտությունները և այլն։

Դժվար է շիամաճայնել այն մտքի հետ, որ քաղաքական համակարգերի ժողովրդավարեցումը և դրանց հետագա բնականու գործառնության ընդլայնումը նախադրյալներ են ստեղծում և մեծացնում բանակցությունների միջոցով քաղաքականության սուբյեկտների շահերի հա-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

մածայնեցման հիման վրա քաղաքական երկխոսության հաստատման, հսմատել որոշումների նախապատրաստման, դրանց ընդունման և հետագա իրականացման հնարավորությունների համար, որը, ուստի հեղինակ Վ. Նեխիսի կարծիքով, «...արևմտյան հասարակություններում տարածված է վաղուց և արդեն թափանցել է հասարակության նախկինում ավտորիտար համարվող այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ընտանիքը, դպրոցը, առողջապահությունը և նույնիսկ բանակը»⁹⁸:

Քանակցությունների դերի օրեցօր աճող կարևորությունն է, թերևս, ստիպել ֆրանսիացի քաղաքագետ Միշել Կրավյեին արտահայտելու այն միտքը, որ «...վերջին հարյուրամյակի էվոլյուցիայի եռյամբ կայանում է ... դեպի քանակցությունների դարաշրջան անցման մեջ, որը, հասարակության մասշտաբով, իրենից ներկայացնում է անցում ավելի հասուն վիճակի»⁹⁹:

Նման պարագայում, արտաքին և ներքին քաղաքականության ոլորտում քաղաքականության սուբյեկտների՝ պետությունների, հասարակական - քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների, պետական իշխանության տարբեր օղակների գործունեության իրականացման համար քանակցությունների հաճախակի կիրառումը, ամերիկյան հեղինակ Դ. Հելիի կարծիքով, «քանակցությունները վերածում է քաղաքականության իրականացման եխմական միջոցի», որն իր հերթին ստիպում է ուշադրությունը կենտրոնացնել քանակցությունների և բովանդակային, և գործընթացային կողմերի վրա էական ազդեցություն գործող, քաղաքականության առանցքը հանդիսացող այնպիսի երևույթների ուսումնասիրության վրա, ինչպիսին են իշխանությունը և իշխանական հարաբերությունները քաղաքական քանակցություններում, իրենց քազմական դրսարաւումներով:

Իշխանության երևույթի և քաղաքական քանակցությունների կապն ու ընդլանարկությունը արտահայտվում է նաև այս երկու հասկացությունների սահմանումներում:

Օրինակ, Վ. Նեխիսը քաղաքական քանակցությունների համար բնութագրական է համարում այն, որ «...դրանց (այսինքն քաղաքական քանակցությունների -Խ.Գ) առարկան իշխանական վագորությունների իրականացման հետ կապված հարցերն են»¹⁰⁰:

98 Нех В.Ф. Политические переговоры: организация и процедура проведения.// Вест. Моск. Ун-та, Сер. 12. 1995/4. с. 59.

99 Հղումն ըստ Մավենիերաձե Բ.В և դր. Власть: Очерки современной политической философии Запада. М., 1989. с.85.

100 Нех В.Ф., նշվ. աշխ., էջ 60:

Իշխանական քանակցություններ

Միշել Կրոպեն, Իշխանության երևոյթի մեկնաբանման ռելյաժին տեսության դիրքերից իշխանությունը համարում է միջանձնային հարաբերություն, որը թույլ է տալիս մի անհատի ազդելու մեկ ուրիշի կամքի և վարքագծի վրա՝ բացահայտելով բանակցությունների երևոյթը, որը, նրա կարծիքով, «...փոխակերպում է այդ հարաբերությունների իմաստն ամբողջությամբ»: «Եթե մենք իշխանությունը դիտարկում ենք ոչ թե Ա-ի և Բ-ի միմյանց վրա ազդելու անհատական կարողություն, այլ որպես Ա և Բ կողմերի միջև զարգացում ապրող հարաբերություն, ապա բացահայտում ենք բանակցությունների երևոյթը:... Իշխանության յուրաքանչյուր երևոյթ, ինչպիսին ել լինեն նրա ակունքները, օրինականության աստիճանը, իրականացման մեխանիզմները, նպատակներն ու մեթոդները, նշանակում է որևէ անհատի կամ խմբի ազդեցության հնարավորություն մեկ այլ անհատի կամ խմբի վրա», - կարծում է հեղինակը¹⁰¹:

Իրոք, դժվար է ժխտել այն փաստը, որ մարդկային յուրաքանչյուր քիչ թե շատ կայուն, շարունակական հարաբերություն ենթադրում է փոխադարձ շփոմների և աղապտացիայի բարդ համակարգ: Իրոք, իշխանությունն ինքնին գոյություն ունենալ չի կարող: Ինչպես նշում է Մ. Կրոպյեն, «Իշխանական հարաբերությունները հաստատվում են միայն այն ժամանակ, եթե կողմերը ինտեգրված են, թեկուզ ժամանակավորապես, կազմակերպված ամբողջության մեջ»¹⁰²: Ըստ նրա, մարդիկ կարող են հասնել կոլեկտիվ նպատակներին միայն իշխանական հարաբերությունների իրականացման շնորհիվ, և ընդհակառակը, որևէ մեկի իշխանությունը մյուսի նկատմամբ հնարավոր է միայն նոյն կոլեկտիվ նպատակների իրագործման գործընթացում, որն էլ ուղղակիորեն պայմանավորում է բանակցությունների անհրաժեշտությունը¹⁰³: Նոյնը նկատում ենք իշխանական հարաբերություններում, որտեղ իրենց արտահայտությունն են գտնում քաղաքականության տարրեր սուբյեկտների, անձանց, հասարակական - քաղաքական կազմակերպությունների, կուսակցությունների, պետությունների փոխհարաբերություններում իշխանության կիրառման կապերը¹⁰⁴:

Ըստ Մ. Կրոպյենի, « Իշխանական հարաբերությունները փոխադարձ են. եթե իշխանության սուբյեկտը՝ Ա-ն, կարող է հասնել նրան, որ օրիեկտը՝ Բ-ն, անի այն, ինչը նա չէր անի առանց Ա-ի ազդեցության, ապա,

101 Հուման ըստ Կոմոցկի Բ. Օ., Օ. Միշել Կրօզե ու պոլիտոլոգ. // Социально-политические науки. М. 1990/9. с. 94.

102 Նոյն տեղում, էջ 95:

103 Տես նոյն տեղում, էջ 96:

104 Տես Խалипов В.Ф. Власть: Основы кратологии. М. 1995. с. 123.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հավանական է, որ Բ-ն նույնպես, իր հերթին հնարավորություն ունի ազդելու վերջինիս վրա»¹⁰⁵: Ըստ այլմ էլ, նա, ամերիկյան քաղաքագետ Ռոբերտ Դավիթ Դավիթի կամաց աշխատավոր տվյալներում է այսպես: «Ա-ի իշխանությունը Բ-ի նկատմամբ եամապատավախանում է Ա-ի ենարավորությանը Բ-ի եետ բանակցություններում եասնելու իր եամար լավագույն պայմանների»¹⁰⁶:

Սակայն, իշխանական հարաբերությունների փոխադարձությունը, որը նշում է Մ. Կրողյեն, ամեննեն չի կարող նշանակել դրանց համարժեքություն: Իշխանության սուրբեկտի և օքյեկտի միջև ծևակորված իշխանական հարաբերությունների համաշափության դեպքում, ըստ Պ. Բլաուի, «հավասար ուժերի փոխակապակցվածությունն ու փոխազդեցությունը ցույց են տալիս իշխանության բացակայությունը», իսկ ըստ Հ. Գերտի և Կ. Միլսի, «...երբ բոլորը հավասար են, ապա չկա քաղաքականություն, քանի որ քաղաքականությունը պահանջում է ենթականներ և դեկավար»: Այստեղ բացահայտվում է իշխանության կարևոր առանձնահատկություններից մեկը՝ անհամաշափությունը, որը, Ա. Սոլովյովի բնորչմամբ, «ոչ միայն բնութագրում է իշխողների կամքի տիրապետումը և նրանց կարգավիճակների անհամապատասխանությունը, այլ նաև արտացոլում է նրանց հնարավորությունների, ուսուրսների, լիազորությունների, իրավասությունների և մարդկային կենսագործունեության այլ չափորոշիչների որակական տարրելությունը»¹⁰⁷:

Իշխանության սուրբեկտ - օքյեկտ փոխհարաբերությունների համակարգը, որտեղ իշխանության սուրբեկտը իշխանության օքյեկտի նկատմամբ իրականացնում է ավելի մեծ վերահսկողություն, քան վերջինս, ենթադրում է նաև հակադարձ ազդեցություն այն դեպքերում, երբ իշխանության օքյեկտը նույնպես կարող է առանձին իրավիճակներում վերահսկել որաշակի ոլորտներ և ուսուրսները¹⁰⁸: Այդ պարագայում իշխանական հարաբերությունները կարող են դիտարկվել նաև ոչ միշտ վառ արտահայտված տիրապետության և ենթակայության հարաբերություններ, այլև որպես իշխանության սուրբեկտի և օքյեկտի միջև ուսուրսների փոխանակման հարաբերություններ: «Ազդեցության ոլորտների նման բաժանումը ինչպես իշխանության սուրբեկտների այնպես էլ սուրբեկտի և

105 Комоцкий Б. О., նշվ. աշխ, էջ 95:

106 Мшвениерадзе В.В и др. Власть: Очерки современной политической философии Запада. М. 1989. с. 84.

107 Соловьев А.И. Политология: политическая теория и политические технологии. М., 2000. с. 91.

108 Տես նոյն տեղում, էջ 78:

օրյեկտի միջև հաճախ նրանց բանակցային գործընթացի արդյունք է, որը կարող է հանգեցնել իշխանության համար բացահայտ պայքարի», - նշում է «իշխանական ազդեցության բաժանման» տեսության հեղինակ-ներից մեկը՝ Դ. Ռոնգը¹⁰⁹: Այս դեպքում արդեն ի հայտ է զայլս քաղաքական իշխանության ինվերսիոն (փոխակերպական) բնույթը: Բանն այն է, որ իշխանության սուրյեկտի և օրյեկտի փոխարարելությունները անընդհատ շարժուն և փոփոխուն են. իշխանության օրյեկտի ակտիվությունը (մանավանդ՝ իշխանության սուրյեկտի լեզվություն կորստից հետո) կարող է հանգեցնել նրան, որ, արդյունքում, նրանց կարգավիճակները փոփոխվեն, որն էլ, բայց էության, իշխանության սուրյեկտի՝ օրյեկտի հետ բանակցային հարաբերությունների մեջ մտնելու հիմնական պատճառներից մեկը կարող է հանդիսանալ:

Սկզբունքորեն համամիտ լինելով Դ. Ռոնգի առաջ քաշած տեսության այս դրույթի հետ, կցանկանայինք անդրադառնալ նաև մի շատ՝ կառուցվածքային և զործառնական առումով կարևոր հանգամանքի, որն առավել ցայտուն է դրսարպիս, եթե իշխանության սուրյեկտը և օրյեկտը միմյանց հետ մտնում են բանակցային հարաբերությունների մեջ*: Բանն այն է, որ իշխանական հարաբերությունների սուրյեկտ - օրյեկտ փոխարարելությունների համակարգը որոշակի փոխակերպման է ենթարկվում բանակցային հարաբերությունների դիմելիս՝ վերածվելով բանակցությունների սուրյեկտ-սուրյեկտ համակարգի: Այդ դեպքում իշխանության օրյեկտը, բանակցային հարաբերությունների մեջ մտնելիս իշխանության սուրյեկտի հետ, փոխակերպվում է բանակցությունների սուրյեկտի, իսկ բանակցության օրյեկտ կարող են դառնալ իշխանական լիազորությունների, ռեսուրսների վերաբաշխման հետ կապված հարցերը:

Բնական հարց կարող է առաջանալ, թե ի՞նչն է ստիպում իշխանության սուրյեկտին, որն ունի և հարկադրանքի, և ուժի կիրառման հնարավորություն, բանակցային հարաբերությունների մեջ մտնել մեկ այլ սուրյեկտի կամ էլ օրյեկտի հետ: Բանն այն է, որ իշխանական լծակները, իրավական նորմերը, հնարավոր է, որոշ դեպքերում չլուծեն առաջացած վիճակարույց հարցերը, իսկ իշխանության ուժային ռեսուրսների կիրա-

109 Նոյն տեղում, էջ 77:

* բանակցային հարաբերությունը հասկացվում է իշխանության սուրյեկտների և կամ իշխանության սուրյեկտի և օրյեկտի միջև փոխարաբերությունների այնպիսի համակարգ, որն արտացոլում է նրանց ծգտումը իրենց հետապնդած շահերն ու նպատակները բավարել համատեղ գործունեության՝ բանակցությունների միջոցով, ոչ միակողմանի, հարակադրանքի, բռնուրյան, ուժի կիրառման կամ այլ մեթոդով:

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ուսմբ կարող է լոյլ լինել իշխանության հիմքերի խարիսման, լեզիտիմության և հեղինակության անկման վտանգով, ինչն էլ իշխանության սուբյեկտին մղում է իշխանության օրյեկտ ներկայացող սուբյեկտի հետ մտնել բանակցային հարաբերությունների մեջ, վերաբաշխել ռեսուրսները, փոխարևոր սուբյեկտիվացված օրյեկտից ակնկալելով համապատասխան սոցիալական վարքագիծ: Այլ դեպքում արդեն, ենթադրվում է բանակցությունների սուբյեկտների իրավահավասար, ինքնուրույն, կամային գործունեություն: **Քանակցային հարաբերությունների ժամանակ իշխանական հարաբերությունների անհամաշակությունը (ասիմետրիկ) որոշակի առումով վեր և ածվում համաշափ (սիմետրիկ) քանակցային հարաբերությունների:**

Իշխանական հարաբերությունների դրսևութանը քաղաքական քանակցություններում տեղի է ունենալ երկու՝ իշխանության կառուցվածքի հորիզոնական և ուղղահայց հարաբերություններում:

Առաջինի դեպքում որպես քանակցությունների սուբյեկտներ կարող են հանդես գալ իշխանության առանձնահատուկ այնպիսի կառուցվածք, ինչպիսիք են պետությունները, որոնք, անկախ նրանց միջև ուժերի հարաբերակցության աստիճանից (իշխանության կարևոր քաղադրատարրերից մեջը), բանակցություններում հանդես են գալիս որպես իրավահավասար սուբյեկտներ, պահպանելով գործողությունների հարաբերական ազատությունը: Ընդհանրապես, **քանակցությունների սուբյեկտների իրավահավասարության սկզբանը՝** որպես քանակցությունների հաջողության գրավական, նշում են շատ հեղինակներ: .

Ինչ վերաբերամ է իշխանության տարբեր մակարդակների սուբյեկտների միջև քանակցային հարաբերությունների հնարավորությանը, ապա այս դեպքում առաջնային է դառնում քաղաքական այս կամ այն համակարգին բնորոշ իշխանության կառուցվածքը: Այսպես, օրինակ, տասնամյակներ շարունակ յորիրդային կայսրության տարածքում ձևավորված ամբողջատիրական, վարչական պայմաններում, իշխանության ուղղահայց, խիստ ընդգծված ենթակարգության առկայությունը անհնար էր դարձնում յուրաքանչյուր քանակցային հարաբերություն դեկավարի և ստորադաս պաշտոնյայի, իշխանության սուբյեկտի և օրյեկտի միջև, քանի որ իշխանության վերին օդակների ձեռքում կենտրոնացած անսահմանափակ և անվերահսկելի իշխանությունը հնարավորություն էր տախս ճնշել յուրաքանչյուր անհամածայնության ու անհանդողականության փորձ ոչ միայն ենթակաների, այլ նաև իշխանության օրյեկտի կողմից: «Հետևաբար,- ինչպես կարծում են Լ.

Իշխանական բանակցություններ

Գողմանն ու Ե. Շեստոպալը,- ամբողջատիրական իշխանությունը խառնվում և քանդում է մարդկանց շփման գրեթե բայոր հորիզոնական ձևերը»¹¹⁰:

Իշխանության սուբյեկտների միջև հորիզոնական հարաբերություններ կարող են հաստատվել իշխանության ապակենտրոնացված, բազմակենտրոն համակարգի պայմաններում, որտեղ բանակցությունների կիրառումը իշխանության տարբեր սուբյեկտների միջև քաղաքական երկխոսության հաստատման, համատեղ գործունեության իրականացման և համատեղ որոշումների ընդունման կարևոր ձևերից է:

Ինչ վերաբերում է իշխանության հիերարխիայի տարբեր աստիճաններում գտնվող սուբյեկտների միջև բանակցային հարաբերությունների հաստատմանը, ապա այս պարագայում, մենք իշխանությունը դիտարկում ենք որպես կառուցվածքային մեկ միասնական ամբողջություն, իսկ իշխանության՝ կարգավիճակով տարբեր սուբյեկտների (օրինակ՝ դեկավարի և ստորադաս պաշտոնյայի) միջև բանակցությունները, որպես միևնույն կառույցի՝ կարգավիճակով տարբեր օդակների միջև փոխհարաբերություն: Ամերիկյան հեղինակ Ու. Լինկոլնը նման տիպի փոխհարաբերությունները դասում է հորիզոնական բանակցությունների շարքը՝ դիտարկելով այն որպես ներքիմային բանակցություններ, ուր կարևորվում է ներքիմային համերաշխության գործոնը¹¹¹:

Կարելի է ներկայացնել իշխանական քաղաքական բանակցությունների դասակարգման հետևյալ փորձը: Նախ և առաջ, իշխանությունը հանդիս է գալիս որպես մեկ միասնական համակարգ: Այդ համակարգի ներսում, ինչպես արդեն նշվել է, կարող են հաստատվել ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց փոխհարաբերություններ: Պետության ներսում իշխանությունը իրենից ներկայացնում է ներկամակարգային ամբողջություն: Այդ ներկամակարգային ամբողջության մեջ կարող են դրսելորպել հետևյալ բանակցային հարաբերությունները: Առաջին երրորդ բանակցությունների մեջ են մտնում իշխանության տարբեր ճյուղերի ներկայացուցիչները (օրենսդիր կամ գործադիր): Այս դեպքում խոսքը գնում է **ներքամակարգային համադաստիքյան եխմքով քաղաքական բանակցությունների մասին**: Ներկամակարգային համադաստիքյան իմքով բանակցային հարաբերությունների մեջ կարող են մտնել իշխանության տարբեր ճյուղերի կամ միևնույն ճյուղի կարգավիճակով իրավականական բանակցությունների մասին:

110 Գօման Լ.Я., Շեստոպալ Ե.Բ. Политическая психология. Ростов-на-Дону, 1996, с. 200.

111 Տես Լինկոլն Ս. Փ. և արքայի առաջնորդ Ա. Վ. Պերեցովը. Հայոց պատմություններ. Երևան, 1998. ս. 58.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

սար սուբյեկտները՝ գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների ներկայացուցիչները, կառավարության տարրեր նախարարությունները կամ գերատեսչությունները միջյանց հետ և այլն: Իսկ իշխանության համակարգի կարգավիճակով տարրեր սուբյեկտների կամ էլ նրանց և որպես օրյեկտ հանդիսացող սուբյեկտի միջև բանակցությունները (որը Ու. Լինկոլնը համարում է հորիզոնական բանակցություններ) կարել է դիտարկել որպես **ներեամակարգային ենթակարգության հիմքով քաղաքական բանակցություններ**:

Քացի պետության ներսում իշխանության տարրեր ճյուղերի միջև բանակցություններից, արտաքին քաղաքականության ոլորտում իրար հետ սերտորեն համագործակցում են նաև տարրեր պետությունների իշխանություններ, մասնավորապես՝ գոյուրյուն ունեն մշտապես գործող բանակցային ֆունդումներ, օրինակ՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի ամենամյա վեհաժողովները: Այդ դեպքում քաղաքական բանակցությունները տարվում են **միջեամակարգային համադաշտության հիման վրա**:

Քաղաքականության գործալացումը թելադրում է նոր քաղաքական իրողություններ, որոնց պայմաններում, շատ հաճախ, տվյալ երկրի իշխանությունները, նույնիսկ իրենց երկրի ներսում, օժտված չեն բացարձակ ինքնիշխանությամբ և գտնվում են տարրեր միջազգային կազմակերպությունների անմիջական ուշադրության և վերահսկողության ներքո: Ասվածի ապացույց կարող է հանդիսանալ թեկուզ տարրեր բնապահանական կամ էլ մարդու իրավունքների հարցերով գրադադարյան ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը երկրագնդի տարրեր մասներում: Վերջին տարիներին, մանավանդ, միջազգային հանրության կողմից խրախուսվող մոտեցումներից մեկը դարձավ «հումանիտար պատճառներով միջամտության» սկզբունքը, որը, մասնավորապես՝ կիրառվեց հարավսլավական հակամարտության ժամանակ ՆԱՏՕ-ի գլխաված ներխուժումը երրորդ ինքնիշխան պետության տարածք ինմնավորելու համար: Պետական իշխանության մարմինների և միջազգային ոչ պետական կազմակերպությունների միջև բանակցությունները կարելի է դիտարկել որպես **միջեամակարգային ենթակարգության հիմքով քաղաքական բանակցություններ**: Այս դեպքում միջիամակարգային ենթակարգությունը կարելի է հասկանալ որպես բանակցային սուբյեկտների կարգավիճակների տարրերություն, այլ ոչ ենթակարգություն բառացի իմաստով:

Այսպիսով, իշխանական քաղաքական բանակցությունները կարելի է ներկայացնել հետևյալ դասակարգմամբ. 1. **ներեամակարգային համա-**

դասության եիմքով քաղաքական բանակցություններ, 2. ներհամակարգային ենթակարգության եիմքով քաղաքական բանակցություններ, 3. միջիամակարգային համադասության եիմքով քաղաքական բանակցություններ, 4. միջիամակարգային ենթակարգության եիմքով քաղաքական բանակցություններ: Այս դասակարգումը, մեր կարծիքով, ավելի լավ է ցույց տալիս քաղաքականության սուբյեկտների նիշն բանակցային բոլոր հնարավոր իրավիճակները՝ կախված իշխանության հիերարխիայում նրանց գրադեցրած դիրքից և կարգավիճակից:

Քաղաքական բանակցությունների էության, հիմքերի և սկզբունքների, բանակցային սուբյեկտների և իշխանական բանակցությունների վերլուծությունից հետո, քաղաքական բանակցությունների ուսումնասիրության տրամաբանական շարտնակությունը, թերևս, կարող է հանդիսանալ քաղաքական բանակցությունների կառուցվածքին և գործընթացին առնչվող հարցերի ուսումնասիրումը, որին էլ կանդրադառնանք հաջորդ գլխում:

Գլուխ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՆԹԱՅՅԸ

Քաղաքական բանակցությունները քաղաքական գործունեության առանձնահատուկ ոլորտ լինելով, ոչ միայն ունեն իրենց էական հատկանիշները, որոնցով, ինչպես արդեն նշվել է, տարրերվում են մարդկանց կենսագործունեության մյուս ձևերից, այև առանձնահատուկ կառուցվածքն ու մեխանիզմը: Այլ կերպ ասած, **քաղաքական բանակցությունները համեմ են զայխ որպես յուրօրինակ համակարգ՝** իրենց որոշակի կառուցվածքային տարրերով, կայացման ու դրսերման օրինաչափություններով, կառուցվածքային տարրերի բնույթով ու փոխապայմանավորվածությամբ: Այնպես որ, թերևս, օբյեկտիվ անհրաժեշտություն է զգացվում քաղաքական բանակցությունները քննարկել և արժևորել համակարգային վերլուծության սկզբունքի կիրառմամբ ևս, որը հնարավորություն կտա բացահայտել քաղաքական բանակցությունների մեխանիզմը, ինչպես նաև դրանց տեղն ու դերը այդ կարգի քաղաքական գործընթացներում:

Քաղաքական բանակցությունների համակարգային վերլուծության կարևոր խնդիրներից է նաև տեսական և գործառնական նշանակություն ունեցող մի շարք հիմնահարցերի պարզաբանումը՝ կապված քաղաքական բանակցությունների գործընթացի, դրա էական օղակներ հանդիսացող այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են քաղաքական բանակցությունների փուլերը, բանակցային ռազմավարությունը, մարտավարական քայլերն ու հնարները, որշումների ընդունման մեխանիզմը, բանակցային մշակույթը և այլն: Քաղաքական բանակցությունների կառուցվածքային տարրերի նման խմբի վերլուծությանն էլ կանդրադառնաճ ստորև:

Քաղաքական բանակցությունները դրսերման են իրենց բովանդակային և գործընթացային կողմերի ամբողջության մեջ: Բանակցությունների բովանդակային կողմն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք պայմանավորված տարրեր հանգանաճներով, կարող են հաճախակի փոփոխվել, իսկ քաղաքական բանակցությունների գործընթացային կողմը հարաբերականորեն կայուն, օրինաչափ կապերով օժտված կառուցվածքային տարրերի ամբողջություն է:

Քաղաքագիտության տեսանկյունից քաղաքական բանակցությունների հետ կապված հարցերի ուսումնասիրումը կարևորվում է հատկապես

Քաղաքական բանակցությունների գործընթացը

բանակցությունների գործընթացի հետազոտումով, որը բույլ է տալիս ընդգծել հիմնահարցի քաղաքագիտական կողմը: Զնայած այն հանգամանքին, որ բանակցությունները՝ որպես սոցիալական երևույթ, իրենց ծագման և կիրառման վաղեմությամբ շատ հին են, այնուամենայնիվ, բանակցությունների գործընթացային կողմերի հետ կապված հարցերը, հատկապես այն, թե ինչպես են բանակցությունները լնթանում, ինչպիսի փուլեր, կառուցվածքային տարրեր ունեն, ուզմավարական և մարտավարական ինչպիսի քայլեր, որոշումների ընդունման ինչպիսի եղանակներ են կիրառվում, ընդհանրապես բանակցությունների տեխնոլոգիան ամբողջությամբ, բոլորովին վերջերս են հայտնվել բանակցությունների տեսությամբ զբաղվող մտածողների ուշադրության կենտրոնում: Այս հանգամանքը կիմնականում պայմանավորված է բանակցությունների օրեցօր աճող դերով: Այսի ժամանակաշրջանում, առավել քան երբեք, և միջազգային հակամարտությունների, և ներքաղաքական հարաբերությունների կարգավորման համար, զնալով ավելի հաճախակի են կիրառվում բանակցությունները: Բացի այդ, ժողովային վարչությունները՝ բաղաքական համակարգերում բանակցությունները՝ քաղաքական գործընթացների անքակտելի մասը կազմելով, քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից մեկն են հանդիսանում:

Դեռևս ֆրանսիացի հայտնի քաղաքական գործիչ կալոյնալ Ռիշելյյոն գտնում էր, որ բանակցությունները ոչ թե անցողիկ ու հատկածական, այլ մշտական գործունեության բնագավառ են, որոշակի օրինաչափություններ, փուլեր և կայում կառուցվածքային տարրեր պարունակող գործընթաց են: Բանակցությունների նման լնթանումը շատ ճիշտ է, քանի որ, որքան էլ յուրաքանչյուր բանակցության օբյեկտն ու բովանդակությունը տարրեր լինեն, այնուամենայնիվ, բանակցությունները որպես երևույթ բնութագրող կարևոր հատկանիշներից մեկը դրանց գործընթացային կողմն է: Բանակցությունների նկատմամբ կիրառելով գործընթացային մուտքումը, հնարավոր է բացահայտել բանակցությունների տեխնոլոգիան, բանակցային ուզմավարության, մարտավարական քայլերի ու հնարների հետ կապված հարցերը, վարման լնթացակարգերը, բանակցային որոշումների լնդրուման եղանակները և այլն:

Բանակցությունները միասնական ու ամբողջական գործընթացի տեսքով դիտարկելու դեպքում, բացահայտվում է նաև բանակցությունների էական բնութագրիչներից մեկը, այն, որ բանակցությունները բարդ և բազմաչափ գործընթաց են և, որպես այդպիսին, անցնում են մի շալք փուլերով:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Քաղաքական բանակցությունների փուլերի ուսումնասիրությունը կարևորվում է բանակցությունների գործընթացի վերլուծության համատեքստում, որ յուրաքանչյուր փուլում բանակցության սուրյեկտները ձգտում են տարրեր ռազմավարությունների, մարտավարական քայլերի և հնարների օգնությամբ իրականացնել լիրենց առջև դրված խնդիրներն ու նպատակները:

1. Քսուցածն ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱՄԱԴԱՅՆ ՓՈԽԵՐԾՈՒՅԹ

Քաղաքական բանակցությունների գործընթացի փուլերի դասակարգման տարրեր նույնացնեն կան: Օրինակ՝ ամերիկյան հեղինակներ հ. Յարտմանը և Ֆ. Էկլեն բանակցությունները դիտարկում են որպես **երկվաղային գործընթաց**, որտեղ առաջին փուլում կողմերի միջև համաձայնեցվում են ապագա համաձայնագրի ընդհանուր դրույթներն ու սկզբունքները, իսկ այնուհետև միայն՝ համաձայնագրին վերաբերող մանրամասները: Նման նույնացնելու մեջ, ինչպես գտնում են նրանք, հնարավոր է միայն փոխադարձ վստահություն տածող կողմերի միջև և հատկանիշական է փոխադարձ համագործակցության ուղղված քաղաքական բանակցություններին, եթե կողմերը բավականին արագ համաձայնության են գալիս ընդհանուր հարցերի շուրջ, իսկ հետո արդեն, տարրեր մակարդակներում բանակցություններ են վարում դրանցից բխող մասնավոր հարցերի և խնդիրների շուրջ: Բանակցային նման գործընթացի օրինակ կարելի է նշել 1997թ. օգոստոսի 29-ին Սոսկվայում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ստորագրված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը (Տե՛ս հավելված 1): Սասնավորապես՝ պայմանագրում նշվում է, որ «Բարձր պայմանավորվող կողմերը ամեն կերպ կամրապնդեն երկու երկրների միջև ավանդական բարեկամական հարաբերություններն ու համակողմանի համագործակցությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, գիտական, մշակութային և այլ բնագավառներում» (հոդված 1): Այդ պայմանագրում կան նաև նմանօրինակ այլ կետեր ևս, որոնք ամրագրում են համագործակցության ընդհանուր եղբերը, որոնց հրագործումը հետազայում հանձնարարակիւմ է կոնկրետ հարցերով գրադարձ տարրեր գերատեսչություններին: Օրինակ՝ այդ պայմանագրի դրույթների իրականացման ուղղությամբ տարվող գործունեության համակարգման նպատակով «Բարձր Պայմանավորվող Կողմերը

Զաղաքական բանակցությունների գործընթացի փուզերը

անհրաժեշտության դեպքում կստեղծեն համատեղ խորհրդատվական մարմինների հատուկ համաձայնագրերի կնքման միջոցով» (Խոյված 20): Բնական է, որ նման բանակցային փաստաթրերի առկայությունը եապես հեշտացնում է հետագա համագործակցությունը, որի վառ ապացուցքը կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև խորացող համագործակցությունը քաղաքական, ռազմական, գիտամշակութային, իսկ վերջերս նաև տնտեսության ոլորտներում:

Բանակցությունների անցկացումը տարբեր փուլերով, ըստ էության, բոլոր է տալիս ավելի լավ կազմակերպել բանակցությունների սուբյեկտների գործունեությունը, արդյունավետ դարձնել քննարկումները օրակարգային հարցերի շուրջ և ապահովել վերջնական համաձայնության գալը: Այս տեսակետից S. Դրուկմանն առանձնացնում է բանակցությունների վեցփուլային մոդել. 1. համաձայնություն բանակցությունների անհրաժեշտության հարցում, 2. իմնական նպատակների և սկզբունքների համաձայնեցում, 3. բանակցությունների վարման իմնական կանոնների համաձայնեցում, 4. բանակցությունների օբյեկտի և օրակարգի քննարկում, 5. որևէ բանաձևի և սկզբունքի կամ սկզբունքների շուրջ համաձայնեցում, 6. մանրամասների շուրջ համաձայնեցում¹: Վեցփուլային մոդելի կիրառումը, թերևս, արդարացված է բայու, բազմառարկա, բազմակողմ քաղաքական բանակցությունների ժամանակ, երբ մասնակիցները համաձայնեցնում են ապագա համաձայնագրի իմնական դրույթներն ու սկզբունքները, իսկ այնուհետև բանակցությունների են տարգում առանձին խմբերով՝ այս կամ այն կողմին առավել հետաքրքրադի հարցերի շուրջ: Նման կարգով է ընթանում միջազգային բանակցային ֆորումների մեծ մասը: Օրինակ՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ շրջանակներում տարգում բանակցություններին, սովորաբար, ներգրավված են լինում մեծ քվով բանակցային առյելկտներ, որոնց շահերի համաձայնեցումը, ընդիանուր դիրքորոշումների ձևավորումն ու համատեղ որոշումների ընդունումը բավական բարդ գործընթաց է, որն, ըստ էության, հնարավոր է իրագործել միայն վերը նշված մոդելի կիրառման շնորհիվ: Այս մոդելը հազվադեպ է կիրառվում ներքաղաքական բանակցությունների ժամանակ, քանի որ, որպես կանոն, ներքաղաքական բանակցությունների սուբյեկտների քանակը մեծ չի լինում և սահմանափակվում է երկողմ կամ եռակողմ հանդիպումներով: Սակայն, եթե այդ բանակցությունները բազ-

¹Տե՛ս Խեչ Վ. Փ. Политические переговоры: организация и процедура проведения. // Вестн. Моск.-го Ун.- та. 1995/4. с. 64.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

մակողմ էլ են լինում (օրինակ՝ նախընտրական դաշինքների ձևավորումը), ապա այդ դեպքում, բանակցության առարկան հիմնականում մեկ հիմնախնդիր է ընդգրկում:

Հետազոտողների մեծ մասը բանակցությունները ներկայացնում է եռափակ գործընթացի տեսքով: Յ. Ներգեշը, բանակցությունները համեմատելով բատերական ներկայացման հետ, նշում է. «Երբ խոսքը գնում է բանակցությունների կամ էլ բատերական ներկայացման մասին, ապա, որպես կանոն, նրանք երկուսն էլ բաժանվում են երեք փուլ՝ առաջինը՝ «**էքսպլիցիան**» է, երբ ընթերցողին կամ համոլիսատեսին ներկայանում է գործողության էությունը, երկրորդ փուլը՝ **հակամարտությունն է**, որտեղ ի հայտ են զայիս պրոբլեմները, և երրորդը՝ **հանգուցազուծումն է**²: Ուստի հեղինակ Օ. Միտրոչենկովը, բանակցությունների գործընթացի նկատմամբ կիրառելով համակարգային մոտեցում, նշում է երեք՝ 1. կողմերի շահերի, տեսակետների, դիրքորոշումների փոխադարձ ճշգրտման, 2. դրանց բննարկման (փաստարկում, առաջարկների ներկայացում և հիմնավորում), 3. դիրքորոշումների համաձայնեցման և համաձայնագրերի մշակման փուլերը³: Բանակցությունների գործընթացի նկատմամբ համակարգային մոտեցումը կիրառելով, քում է, թե բանակցությունների գործընթացը ավելի համընդգրկուն բնույթ կատանա: Սակայն հեղինակը նեղացնում է բանակցային գործընթացի ծավալը: Ինչպես հետազայում կպարզվի, այս դասակարգումը ավելի շատ բնորոշ է բուն բանակցությունների վարման գործընթացին: Օրինակ՝ Վ. Խորայելյանը՝ վերլուծելով բազմաթիվ երկուդմ և եռակողմ բանակցությունների ընթացքը, առանձնացնում է երեք հիմնական՝ 1. սկզբնական կամ հետազոտական, 2. հնարավոր համաձայնագրի ընդիւնուր շրջանակների ճշգրտման, 3. համաձայնագրի կոնկրետ դրույթների մշակման փուլերը⁴: Այս մոտեցումը լավագույնս բնորոշում է բանակցությունների գործընթացային կողմը: Մ. Լերեղևան նշում է, որ նույնիսկ ամենապարզեցված բանակցությունները ենթադրում են դրանց իրականացման երեք փուլ. 1. բանակցությունների նախապատրաստման, 2. բանակցությունների անմիջական վարման, 3. բանակցությունների արդյունքների վերլուծության և ձեռքբերման պարագաների կատարման փուլեր⁵:

Բանակցությունների գործընթացի նման մոտեցումը իր ծավալով բա-

² Հերգեշ Յ. Поле битвы-стол переговоров. М., 1989. с. 66.

³ Տիւ Միտրոշենկո Օ.Ա. Эффективные переговоры. М., 2000. с 202.

⁴ Տիւ Իսրայել Վ. Дипломаты лицом к лицу. М., 1990. с. 301.

⁵ Տիւ Լեбедева Մ. Մ. Вам предстоят переговоры. М., 1993. с. 31.

Բանակցությունների նախապատրաստման փուլը

Վականին ընդգրկուն է և, երբեմն, կարող է բանակցությունների բուն նպատակներից դրւու գտնվել: Ինչ խոսք, վերջնական արդյունքների վերլուծության և ստանձնած պարտավորությունների հետագա կատարման փուլը իր կարևորությամբ ամենին էլ չի զիջում մնացած երկուսին, քանի որ քաղաքական հեղինակությունն ու վստահությունը, որոնք ծևափորվուն են բանակցային պարտավորությունների կատարման ընթացքում, բավականին կայուն հատկանիշներ են և կողմերի քաղաքական վարկանիշի վրա ազդրող էական գործոններից մեկն են հանդիսանում: Ստուածնած պարտավորությունների կատարման փուլի ուսումնասիրաթյունը մեզ տանում է դեպի բուն քաղաքականության դաշտ, ներառելով բանակցային կողմերի ոչ միայն բանակցային՝ այլ նաև քաղաքական գործունեությունն ամբողջությամբ: Իսկ քաղաքական բանակցությունների նախապատրաստման և դրանց անմիջական վարման փուլերը, մեր կարծիքով, քաղաքական բանակցությունների՝ գործընթացային առումով առավել բնորոշ կողմերն են, որոնց վերլուծությանն էլ կանորադառնանք ստորև:

11. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈՒԼԸ.

Բանակցային գործընթացի առաջին փուլը, իրավամբ, կապվում է բանակցությունների նախապատրաստման հետ: Բանակցությունները սկսվում են կողմերի բանակցությունների սեղանի շուրջ նատելուց շատ առաջ, այն պահից սկսած, եթե կողմերից որևէ մեկը կամ երրուս անձը հանդես է գալիս բանակցություններ վարելու կամ (երրորդ անձը) կողմերին բանակցություն վարելուն տրամադրելու նախաձեռնությամբ, և մասնակիցները սկսում են զբաղվել դրանց նախապատրաստմամբ: Բանակցությունների նախապատրաստումը կարեոր նշանակություն ունի ինչպես բանակցությունների հետագա ընթացքի, այնպես էլ որոշումների ընդունման գործընթացի համար, կինեն արդյո՞ք բանակցությունները երկարատև ու անպտուղ, թե՞ կընթանան արագ և արդյունավետ:

Բանակցությունների նախապատրաստումը ենթադրում է երկու փոխկապակցված՝ **կազմակերպական և ռովանդակային հարցերի բճարելում:** Իհարկե, նախապատրաստական փուլի նման տարանջատումը պայմանական է, քանի որ կազմակերպական և ռովանդակային կողմերը միշտ էլ փոխկապակցված են: Բանակցությունների արդյունավետությունը առաջին հերթին կախված է նրանց կազմակերպումից: Բանակցությունների նախապատրաստումը կազմակերպումը կազմակերպումից:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

բյունների կազմակերպական կողմն իր մեջ ներառում է բանակցությունների սուբյեկտների թվաքանակի ճշգրտումը, պատվիրակությունների ձևափորումը, նրանց կարգավիճակի, իրավասությունների և լիազորությունների սահմանումը, բանակցությունների տեղի և ժամանակի նշանակումը, բանակցությունների օրակարգի քննարկումն ու ընդունումը և այլն:

Բանակցությունների սուբյեկտները բաղաքական բանակցություններում ներկայացված են լինում պատվիրակությունների կամ դեկավար անձանց մասնակցության տեսքով, որն իր հերթին, որոշակիորեն ազդում է բանակցությունների կազմակերպման գործընթացի վրա: Մասնավորապես, եթե բանակցությունները վարչում են պատվիրակություններով, կողմերին նախորդը պետք է ծանուցվի պատվիրակության թվի և կազմի, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների մասին անհրաժեշտ տեղեկություն: Սովորաբար բանակցությունների նախապատրաստման փուլում պատվիրակությունների ձևափորումը կատարվում է իրավահավասարության սկզբունքով, որը վերաբերում է ինչպես պատվիրակության թվաքանակին, այնպես էլ ներկայացուցության մակարդակին:

Բանակցությունների **տեղի և ժամանակի ճշգրտումը** նույնականացնելու համապատական փուլի կարևոր կազմակերպական կողմերից է: Բանակցային կողմերի միջև կոմիֆիկատորի կամ այլ հարցում, թե որտեղ անցկացնել բանակցություններ, բաղաքական, հոգեբանական, խորհրդանշական առումներով կարևոր նշանակություն ունի: Որպես կանոն, բանակցությունները նշանակվում են չեզոք վայրում, որպես միջնորդ հանդես եկող երկրների տարածքում, կամ էլ այնպիսի վայրում, որն ունեցել է որևէ խորհրդանշական իմաստ: Օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շրջանակներում 2001թ. փարիզյան բանակցություններից հետո հաջորդ փուլը կազմակերպվեց ամերիկյան Ըի Ունար (քարգմանաբար՝ Արևմուտքի բանալի) քաղաքում: Դրանով իսկ, գուցե, որպես բանակցությունների կազմակերպիչ հանդես եկող ամերիկյան կողմը ցանկանում էր ընդգծել Արևմուտքի բացառիկ դերն ու շահագրգուվածությունը՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում:

Երբեմն, հատկապես բազմակողմ քաղաքական բանակցություններում նպատակահարմար է կիրառել բանակցությունների ընթացքի **ժամանակային սահմանափակումներ**, որը կարող է նպաստել բանակցությունների արդյունավետությանը: Նման մոտեցում է կիրառվում ժամանակակից բանակցային ֆորումների մեջ մասում, ուր մասնակից սուբյեկտները փորձում են որոշակի ժամանակահատվածում գտնել փոխա-

դարձ ընդունելի լուծումներ: Մյուս կողմից, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորմանն ուղղված քաղաքական բանակցություններում ժամանակային սահմանափակման կիրառումը նպատակահարմար չէ: Նախկին Խորհրդային Սլույքան տարածքում բռնկված տարածաշրջանային հակամարտությունների վերաբերյալ Վ. Լ. Լիսենկոն գրում է. «...որքան երկար և արյունահետ է ընթացել հակամարտությունը, այնքան կարգավորման գործընթացն աստիճանական պետք է լինի. առանց ժամանակային որևէ սահմանափակման: Այդ դեպքում վիճելի տարածքին նպատակահարմար չէ առաջարկել մի կարգավիճակ, որը ցածր կլիներ նախորդից»⁶:

Բանակցությունների կազմակերպչական գործառույթներից են նաև բանակցությունների **օրակարգիք** նվիրված հարցերի քննարկումը, դրանց ճշգրտումը և կողմերի միջև համաձայնեցումը: Օրակարգային հարցերի քննարկման ժամանակ առանձնակի կարևորվում է օրակարգի կետերի ձևակերպման խնդիրը: Չնայած նրան, որ ձևակերպումների յուրաքանչյուր խումբ ընդգրկում է նոտավորապես միևնույն ծավալի հարցեր, սակայն ձևակերպումների շարադրման այս կամ այն ձեզ որոշակիորեն կանխարգություն է, թե ինչի մասին և ինչ ուղղությամբ կրնթանան բանակցությունները: Օրինակ՝ բանակցությունների ժամանակ էական նշանակություն ունի, թե ինչպես են օրակարգային հարցերը ձևակերպված: Ենթադրենք, եթե օրակարգային հարցը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «ընտրություններում տեղ գտած խախտումների մասին», ապա դա նշանակում է, որ բանակցությունների առանցքային հարցը հենց ընտրախախտումներին է վերաբերված, իսկ եթե լիներ «ընտրախախտումների ընթացքի մասին» ձևակերպմամբ, ապա այս դեպքում, ընտրախախտումների հարցը, բնական է, առանցքային չէր լինի, և բանակցային կողմերից որևէ մեկը կարող էր և շանդրադառնալ՝ կախված իր առջև դրված նպատակներից և խնդիրներից:

Բանակցությունների նախապատրաստման մյուս՝ կազմակերպականից ոչ պակաս կարևոր կողմը հիմնական բանակցությունների նախապատրաստման բովանդակային հարցերի քննարկումն է, որը ներառում է բանակցությունների սուբյեկտների շահերի և նրանց միջև առկա պրոբլեմների վերլուծությունը, իրավիճակի գնահատումը, բանակցությունների ընդհանուր մոտեցումների, խնդիրների, նպատակների ձևավորումն ու սեփական դիրքորոշումների ձևակերպումը, հնարավոր որոշումների

6 Лысенко В. Н. Региональные конфликты в странах СНГ: опыт урегулирования. // ПОЛИС. 1998/2. с. 154.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

տարբերակների մշակումը, անհրաժեշտ նյութերի և փաստաթղթերի նախապատրաստումը և կազմումը, ապագա համաձայնազգի իրականացման հնարավորությունների վերլուծությունն ու հնարավոր արդյունքների կանխատեսումը:

Հիմնահարցի վերլուծության ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել բանակցող սուբյեկտների շահերի վրա, փորձել պարզաբանել և բացահայտել կողմների իրական նկատառումներն ու սպասելիքները: Քաղաքական բանակցություններում շահերի փոխհարաբերության հարցին մասնամասն անդրադարձել ենք, նշենք միայն, որ շահերի բացահայտումը նախապատրաստական փուլում կարևոր տեղ է գրադեցնում մյուս կողմի տեսակետների և դիրքորոշումների իրական շարժառիթներն ու դրդապատճառները ճիշտ հասկանալու և դրանք առավելագույնս սեփական նպատակների իրականացմանը ուղղորդելու համար:

Ըննարկման առաջին՝ շահերի և հիմնահարցերի վերլուծությունից հետո, սովորաբար, ձևափորվում է **«Քանակցությունների հայեցակարգ»**: «Քանակցությունների հայեցակարգի» մեջ, ըստ էության, արտացոլվում են բանակցությունների սուբյեկտների նպատակները, կողմնորոշումները, հիմնարար սկզբունքները, միասնական խաղի կանոնները, որոնց պետք է հետևեն բանակցող կողմները: «Քանակցությունների հայեցակարգն» ունի բարդ կազմակորում, որն իր մեջ ներառում է բանակցային սուբյեկտների հիմնական նպատակները, նախապատվությունների սանդղակը և այլ ուրիշ բաղկացուցիչներ, այսինքն բանակցությունների ընդհանուր մոտեցումը: Բանակցությունների կոնցեպցիան բանակցությունների գործընթացի համեմատաբար կայուն, հաստատուն տարրերից է, որը, սակայն, չի բացառում, որ բանակցությունների ընթացքում փոփոխություններ մտցվեն նաև ընդհանուր հայեցակարգի մեջ: Այդ փոփոխությունները մեծամասամբ պայմանավորված են համերկրային քաղաքական գործընթացներով և կախված են հասարակության մեջ առկա հիմնական արժեքների համակարգի փոփոխությունից, որն էլ իր հերթին, ազդում է բանակցությունների հայեցակարգի վրա: Նման երևոյթ հնարավոր է հիմնականում երկարատև քաղաքական բանակցությունների ժամանակ, որի ընթացքում կատարվում են ուժերի հարաբերակցության տեղաշարժ, աշխարհաքաղաքական փոփոխություններ և այլն:

Քանակցությունների նախապատրաստման փուլում, սովորաբար, մշակվում են հնարավոր որոշումների մի քանի տարրերակներ, ինչպես նաև ոչ բանակցային մեթոդներով որոշումների ընդունման եղանակներ: Հնարավոր է, որ բանակցությունների նախապատրաստման ընթացքում

գտնվեն «քանակցային որոշման լավագույն այլընտրանքներ (ԲՈԼԱ)» (*BATNA - Best Alternative To a Negotiation Agreement*): Այս հասկացությունը շրջանառության մեջ են դրել ամերիկյան հեղինակներ Ռոչեր Ֆիշերն ու Ուիլյամ Ուրին, համարելով այն բանակցությունների վերլուծության կարևոր տարրերից մեկը: Մասնավորապես նրանք նշում են, թե որքան կարևոր է զարգացնել սեփական ԲՈԼԱ-ն այն դեպքերի համար, եթե բանակցությունները խսկապես չհամարվեն որպես համատեղ ոյտշումների լընդունման լավագույն եղանակը: «Եթե դուք լրջորեն չեք մտածել, թե ինչ կանեք այն դեպքում, եթե բանակցային համաձայնությունը չստացվի, ուրեմն դուք բանակցում եք կուրորեն», - նշում են հեղինակները⁷: Նրանք խարեւորդ են տալիս նաև բանակցությունների նախապատրաստական փուլի ժամանակ զարգացնել սեփական ԲՈԼԱ-ն, ինչպես նաև փորձել կազմել նաև ընդլայնախոսի ԲՈԼԱ-ն՝ դիմացինի գործողությունները կանխատեսելի և վերահսկելի դարձնելու համար: Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններում նույնպես կարելի է նկատել բանակցող կալմերի ԲՈԼԱ-ի տարրեր: Այսպես, աղբբեջանական կողմը որպես ԲՈԼԱ առաջ է քաշում ռազմական ճանապարհով հիմնահարցի լուծման հնարավորաթյունը, դրանով իսկ, կարծես թե, իր համար «լեզվույն հոդ» նախապատրաստելով պատերազմի վերսկսման համար: Հայաստանի Հանրապետությունն, իր հերթին, որպես ԲՈԼԱ հայտատարում է, որ բանակցությունները փակույի մտնելու դեպքում կճանաչի* Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և ատցացված, կոնֆեղերատիվ հարաբերություններ կստեղծի ԼՂՀ հետ:

Ընդհանրապես, պետք է փաստել, որ քաղաքական տարրեր հիմնահարցերի նկատմամբ այլընտրանքային մոտեցումների կիրառումը, քաղաքական հնարավոր զարգացումների հաշվարկումն ու կանխատեսումը այն լուրջ գլխավրակտիկ խնդիրներից են, որոնց մշակումը ու իրականացումը պետք է գտնվեն հայ քաղաքագիտական մտքի և պետության գործնական քաղաքականության ուշադրության կենտրոնում: Այլապես, ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ներքաղաքական գործնականությունը տարաբնույթ զարգացումների դեպքում, այլընտրանք չունենալը, բոլոր դեպքերում սահմանափակում է հնարավոր ոչ բարեն-

⁷ Stein Fisher R., Ury W. Getting to Yes: Negotiating Agreement Without Giving In. Boston. 1991. p. 101.

⁸ Ibid, p. 100.

* Սեր կարծիքով, իրականում ՀՀ-ն ԼՂՀ ճանաչումը պետք է ոչ թե որպես ԲՈԼԱ դիտարկի, այլ որպես բանակցային նպատակ և իր քաղաքականությունը կառուցի ԼՂՀ միջազգային ճանաշմանը հասնելու ուղղությամբ:

Քաղաքական բանակցություններ (տեսոքյուն և պրակտիկա)

պաստ բանակցային իրավիճակներից դուրս գալու ելքերը: Իսկ պարտադրված համաձայնությունները նույնքան Վտանգավոր են, որքան ուղղակի բախումներն ու առճակատումը:

Բանակցությունների նախապատրաստման այս փուլը Ենթադրում է հնարավոր որոշումների մի քանի տարրերակներ, որոնք պետք է ենթարկվեն մանրակրկիտ վերլուծության, զնահատվեն յուրաքանչյուր կողմի հետապնդած շահերի ու նպատակների տեսանկյունից, ճշգրտվեն, թե որքանով է որոշման այս կամ այն տարրերակը, արժեքային առումով, համապատասխանում սեփական արժեքների համակարգին, պետք է քննարկվեն, որոշումների հնարավորին շատ տարրերակներ, որոնք կարող են բավարարել կողմերի շահերի և պահանջմունքների այս կամ այն կողմը: Չի բացառվում նաև, որոշակի լրացուցիչ նախապայմանների առաջարկման դեպքում հնարավոր որոշումների հիերարխիայում որոշման տարրերակների տեղափոխություն լինի: Որոշումների տարրերակներով գրաղվելիս միաժամանակ նախապատրաստվում են համապատասխան առաջարկություններ իրենց փաստարկումներով, որոնց ձևակերպմանը նույնանուանի անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել, քանի որ, նույնիսկ լավագույն առաջարկը, եթե հստակ ձևակերպված չէ, կարող է ցանկալի արդյունք չտալ:

Բանակցությունների նախապատրաստման ավարտական փուլում սովորաբար կազմվում են նախապատրաստական նյութեր և փաստաքրեր, ինչպես նաև ապագա համաձայնագրի նախնական տարրերակներ, որոնք իրենց մեջ ներառում են բանակցությունների նախապատրաստական փուլի արդյունքները:

Նախնական նյութերը և փաստաքրերը իրական բանակցությունների ընթացքում ծառայում են որպես յուրօրինակ կողմնորոշչիներ և ընդգրկում են բանակցություններին վերաբերող փաստական նյութեր՝ զանազան տեղեկանքներ, օրենքների հողվածներ և այնպիսի նյութեր, որոնք առնչություն ունեն բանակցությունների առարկայի հետ:

Վերջնական համաձայնագրի տարրերակը կազմելիս ոչ պակաս ուշադրություն պետք է դարձվի նաև ապագա համաձայնագրի իրականացման հնարավորությունների վերլուծությանն ու հնարավոր արդյունքների կանխատեսմանը, որը թույլ կտա ավելի իրատեսորեն մոտենալ և՛ սեփական և՛ մյուս կողմի հնարավորություններին:

Այսպիսով, բանակցությունների նախապատրաստումը՝ որպես բանակցությունների գործընթացի փուլ հանդիս է զայիս իրական բանակցությունների փորձնական տարրերակի դերում:

12. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱԾԱՌ.

Քաղաքական բանակցությունների առանցքն այն գործընթացներն են, որոնք ապահովում են կողմերի հիմնական նպատակների իրականացման համար անհրաժեշտ որոշումների ընդունումը: Նախապատրաստական փուլում կազմակերպչական և բովանդակային հարցերի ընտարկումը, հնարավոր որոշումների տարրերակների մշակումը դեռևս շեն նշանակում դրանց լրացնում: **Բանակցությունների յուրաքանչյուր առյօնականում է վերջնական որոշման ընդունման հարաբերական ազատությունը**, և բանակցությունների վարման ընթացքում է իրականանում այն, ինչ նախապատրաստվում է նախօրոք:

Քաղաքական բանակցությունների վարման գործընթացը բաղկացած է որոշակի տարրերից, որոնք դրսեորվում են այդ գործընթացի տարրեր փուլերում: Բանակցությունների վարումը կարելի է դիտարկել որպես բազմափուլ գործընթաց, և այդ տեսանկյունից անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել բանակցությունների վարման մի քանի բաղկացուցիչ մասերի վերլուծության վրա, որոնց մեջ, մասնավորապես, կարելի է ներառել՝ **1. բանակցությունների վարման փուլերը, 2. բանակցությունների ուղղմավարությունը, 3. մարտավարական քայլերն ու հնարները, 4. բանակցային որոշումների ընդունման գործընթացը:**

Ընականաբար, բանակցությունների վարման գործընթացը վերը նշվածով չի սահմանափակվում, այն ուղղակի որոշակի ուղեցույց է հանդիսանում հիմնահարցի ուսումնասիրման համար:

Բանակցությունների անմիջական վարման գործընթացը նույնական բազմափուլ է, որտեղից, մասնավորապես՝ կարելի է առանձնացնել՝ **1. բանակցող առյօնականների շահերի, նպատակների, տեսակների, դիրքորոշումների փոխադարձ ճշգրտման, 2. սեփական առաջարկների, դիրքորոշումների քննարկման, փաստարկման և դրանց հիմնավորման, 3. դիրքորոշումների համաձայնեցման և համաձայնագրերի մշակման փուլերը:**

Նախքան վերջնական համաձայնագրի կնքումը, բանակցությունների սուբյեկտներին անհրաժեշտ է ճշգրտել միմյանց տեսակետները, դիրքորոշումները և քննարկել դրանք: Բանակցությունների նախապատրաստումը որքան էլ որ լավ կազմակերպված լինի, գլուխ որոշ հարցեր անորոշ են մնում, որոնց հստակեցումն իրականացվում է առաջին փուլում, որտեղ կարևոր է առավելագույն չափով հասնել ձևակերպումների

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հստակության, որը պետք է բացառի հասկացությունների երկիմաստ մեկնաբանությունը, քանի որ «անկախ այն հանգամանքից, թե բանակցությունները վարփում են ուժեղ կամ թույլ դիրքերից, բանակցային պարտավորությունների իրականացման առավելագույն հուսալիություն ձեռք է բերփում հստակ ծևակերպումների շնորհիվ (*Clara racta, bona amici - Հստակ պայմանագիր - լավ բարեկամներ*)», - նշում է Յ. Ներգեշը⁹:

Քաղաքական բանակցությունների վարման պրակտիկայում, **փաստարկման** կամ փոխադարձ տեսակետների և դիրքորոշումների քննարկման փուլը, որպես կանոն, ուղղված է սեփական դիրքորոշումները, որքան հնարավոր է, առավելագույն կերպով և լրիվ ծավալով իրագործելու և ամրապնդելու նպատակին: Փաստարկման դերը բաղաքական բանակցություններում բավականին մեծ է: Հիմնավորված և կուր տրամաբանությամբ կառուցված փաստարկները կարող են ամբողջությամբ, կամ մասամբ փոխել հակառակ կողմից դիրքորոշումները և ստիպել կամ համոզել նրան վերանայելու դրանք: Պետք է նշել, որ փաստարկման հիմնախնդրի ուսումնասիրման գործում մեծ ավանդ ունեն փաստարկման երևանյան դպրոցի ներկայացուցիչները, որոնց աշխատություններում շոշափվում են փաստարկման տարրեր տեսանկյունները, այդ թվում՝ փիլիսոփայական, իրավական, քաղաքական փաստարկման, բաղաքական որոշումների ընդունման հիմնավորման և այլ հիմնահարցեր¹⁰:

Փաստարկման փուլը Պրեդրագ Միցիչը համեմատում է բանակային գորամիավորումների կողմից գործողությունների պլանավորման և մարտական դիրքերի գրավման գործընթացի հետ, «... որի դեպքում համապատասխան կերպով կոորդինացվում է գորքերի (այսինքն փաստարկների-Խ.Գ.) բոլոր տեսակների գործունեությունը, առաջադրանքի առավելագույն կատարման համար՝ մարտական գործողությունների իրականացման նպատակով. այդ դեպքում ակնհայտ է, որ փաստարկումն ազդում է մեր գործընկերոց դիրքորոշման փոփոխման վրա»¹¹:

9 **Ներգեշ Յ.** Поле битвы - стол переговоров . М., 1989. с. 63.

10 **Տես Բրյույն Գ.Ա.** Очерк теории аргументации. Ер., 1992., **Брюян Г. А.** Актуальные проблемы теории аргументации. // Философские науки. 1991. N 5. сс. 17-29., **Налчаджян А.А.** Конфликт, аргументация и адаптация.-В сб. **Брюян Г.А., Нарсий И.С.** (авт. ред.) Философские проблемы аргументации. 1986, **Արլշապյան Ս.**, Հոեսորական արվեստի հիմնություն, Եր., 1961թ., **Բրտավան Գ. Ա.**, Փաստարկման էլերյուն ու բաղկացատարերը, Եր., 1997թ., **Բրտավան Ա.**, **Բրտավան Գ.**, Քաղաքական փաստարկման 101 կանոն, Եր., 2002թ., **Հռվիաններյան Հ.**, Վիճականության իմացարանական և մերուարանական տեսանկյունները, Եր., 1996թ., **Կրայան Է.Ռ.**, Փաստարկման լեզուն, Եր., 1998թ.:

11 **Мицич П.** Как проводить деловые беседы . М., 1987. с . 78.

Փաստարկման փուլում կարելի է փորձել փոխել հակառակ կողմի մոտ արդեն ձևավորված կարծիքը կամ դիրքորոշումը, ամրապնդել նախկին կամ նոր ձևավորված դիրքորոշումը, մեղմացնել կամ ընդհանրապես հանել բանակցությունների վարման ընթացքում առաջացած լարվածությունը և հաղթահարել դրանց հիմքերով առաջացած հակասությունները: Այս փուլում են ձևավորվում մասնակի կամ ընդհանուր, պարզ և հստակ համաձայնագրերի մշակման ուղիները և ստեղծվում ընդհանուր հիմքեր՝ վերջնական որոշումների ընդունման համար: Այս առումով, ճիշտ է նկատում Մ. Լեբեդևան, որ «**եթե բանակցություններն ուղղված են համատեղ որոշումների ընդունմանը, ապա փաստարկման փուլի հիմնական արդյունքը պետք է լինի հնարավոր համաձայնագրի սահմանների որակումը», - գտնում է Մ. Լեբեդևան¹²:**

Փաստարկման փուլի կարևոր առանձնահատկություններից մեկը, ինչպես նշում է Ա. Կովալյովի, գործընկերոջ հետ շփման կետերի բացահայտումն է: «Անհնար է վեճի բռնվել, համոզել և կամ հակառակն ապացուցել, չունենալով ընդդիմախասի հետ որոշակի շփման կետեր. այլապես կստացվի համբերի երկխոսություն», - կարծում է հեղինակը¹³: Առավել մանրամասն բանակցությունների և գործարար խոսակցությունների վարման գործընթացում փաստարկման փուլի առանձնահատկությունները վերլուծված են Պ. Միցիչի մոտ: Հեղինակը նշում է, որ բանակցություններաւմ լայնորեն կիրառվում են ինչպես **ապացուցողական** փաստարկները, այնպես էլ **ժմոռողական** կամ հակաֆաստարկները¹⁴: Փաստարկման երկու տեսակների համար էլ կիրառվում են միևնույն մերողները, որոնց եռթյունը կայանում է՝ փաստարկման ժամանակ օգտագործվող բոլոր փաստերի ու տեսակետների մանրակրկիտ վերլուծման. հնարավոր հակասությունների և ոչ տրամաբանական մոտեցումների բացառման, հստակ և տրամաբանական եզրահաճարմանների ձևակերպման մեջ: Ըստ այդմ էլ, բանակցություններում կիրառվող փաստարկների ձևակերպման համար նա առանձնացնում է 12 հետորական և 12 «սպեկուլյատիվ» մերողներ, որոնցից առաջինները օգտագործվում են դիրքորոշումների հիմնավորման ծշմարտացիության տեսանկյունից, իսկ վերջիններս՝ դիմացինին մոլորության մեջ զցելու համար¹⁵: Այս մերողները լայնորեն կիրառվում են բանակցությունների վարման փաստարկման

12 Տե՛ս **Լեբեծեա Մ. Մ.** Վամ պредстојат переговоры. Մ., 1993. с . 31.

13 **Կովալյուս Ան.** Ազբука дипломатии. Մ., 1988. с. 116.

14 Տե՛ս **Միցիչ Պ.**, նշվ. աշխ., էջ 79:

15 Տե՛ս նոյն տեղում, էջ 79-82:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

փուլում, որտեսցից յուրաքանչյուրի՝ լստ նշանակության, տեղին և ժամանակին, դիպուկ կիրառումը մեծապես կախված է բանակցային սուբյեկտների անհատական կարողություններից և պատրաստվածության աստիճանից: Հռետորական մեթոդներից զատ Պ. Միջիշը առանձնացնում է նաև «սպեկուլյատիվ» մեթոդներ, որոնց օգտագործումը հեղինակը միշտ չէ նպատակահարմար համարում:

Փաստարկման փուլի ավարտից հետո քաղաքական բանակցությունների վարածմը մտնում է դիրքորոշումների համաձայնեցման փուլ: Այս փուլը, հետևելով Զարտմանի և Քերմանի դասակարգմանը, կարելի է ներկայացնել երկու ենթափուլերի տեսքով, ուր սկզբում համաձայնեցվում են դիրքորոշումների հիման վրա ծևավորված ընդհանուր բանաձևը, իսկ այնուհետև դրան վերաբերող մանրամասները¹⁰: Նման մոտեցումն արդարացված է հատկապես բազմակողմ քաղաքական բանակցությունների վարման ժամանակ, երբ քննարկվող հարցերի և մասնակիցների բանակը մեծ է լինում:

Բնականաբար, բանակցությունների վարման գործընթացի նման հերթականությունը՝ կախված բանակցությունների գործառույթների բնույթից և բանակցային սուբյեկտների հետապնդած նպատակներից, կարող է փոփոխվել կամ ընդհանրապես բացակայել: Օրինակ, եթե բանակցությունների նպատակը հակառակ կողմի տեսակետների բացահայտումն է, ապա առաջնային է դառնում առաջին փուլ՝ դիրքորոշումների ճշգրտումը, կամ էլ, եթե բանակցությունների գործառույթային նպատակը սեփական տեսակետների քարոզչությունն է, իրականանում է միայն քննարկման կամ փաստարկման փուլը, որում, որպես կանոն, գործը լուրջ համաձայնությունների կնքման չի հասնում:

2. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՄՈՒՄՎՐՈՒԹՅՈՒՆ .

Նախքան բանակցությունների ռազմավարությանն անցնելը հարկ է նշել, որ «ռազմավարություն» հասկացությունը լայնորեն օգտագործվում է տարրեր մոլորտներում և տարրեր իմաստներով: «Ռազմավարություն» հասկացությունը վերցված է ռազմագիտությունից, որտեղ այն նշանակում է պետությունների կամ ռազմաքաղաքական միությունների քաղաքականության պլանավորում և այն բոլոր հասանելի միջոցների կիրառմամբ կամ էլ ռազմական իրավիճակի պայմաններում՝ որպես հակառա-

Կորլին Վերջնական պարտության մատնելուն ուղղված միջոցների և մեթոդների ամբողջություն: Ավելի լայն յմաստով «ռազմավարություն» հասկացությունը նշանակում է երկարաժամկետ միջոցառումների և մուտքումների ընդունում¹⁷: Ինչպես նշում է Բ. Կառլոֆը, «Այս հասկացությունը վաղաց մուտք է գործել գործարար կառավարման ոլորտ, որը և օգտագործվում է նախկին գործարար քաղաքանակության փոխարեն»¹⁸: Տնտեսագիտության մեջ ռազմավարության էությունը ձեռնարկությունների գարգացման տարբերակների մշակումն ու ընտրությունն է: Այս առումով Բ. Կառլովի առանձնացնում է «պրոտֆելային», «գործարար» և «գործառնական» ռազմավարություններ հասկացությունները¹⁹: Ռազմավարության իմնախնդիրների ուսումնասիրումը հաճախ բարդանում է այն պատճառով, որ, այն, յնչը կառավարման ավելի բարձր մակարդակներում համարվում է որոշակի նպատակների հասնելու միջոց, ավելի ցածր մակարդակներում հանդիս է գալիս որպես նպատակ: Այս երևոյթը հեղինակը համարում է ռազմավարությունների հիերարխիկ կառուցվածք, որից հետևում է եթե ձեռնարկության «պրոտֆելի» մակարդակում հստակեցված են նպատակները և մշակված են ռազմավարությունները, ապա այն ստորաբաժանումների համար, որոնք մտնում են «պրոտֆելի» մեջ, այդ ռազմավարությունները հանդիս են գալիս որպես նպատակ²⁰:

Բանակցությունների տեսարժան մեջ ռազմավարությունը օգսագործվում է որպես բանակցությունների սուրյեկտամերի առջև դրված նպատակների իրականացման ուղիների և գործառությունների մշակման ամրադրություն²¹: Այդ ուղիների և բանակցային սուրյեկտների գործողությունների համայիրն իր մեջ ներառում է բանակցությունների մարտավարությունը՝ մարտավարական քայլերն ու հնարները, որոշումների ընդունման գործընթացը և, ընդհանրապես, բոլոր այն մեթոդների և միջոցների ամբողջությունը, որ պատրաստվում են օգտագործել բանակցության կողմերը: Դրանց ավելի մասնամասն կանդրադառնանք հետագայում:

Բանակցությունների ռազմավարությունն ունի իր որաշակի բնույթն ու տրամաբանությունը: Զաղաքական բանակցությունների ընթացքում կոլմերը պահպանում են գործողությունների և որոշումների ընդունման

17 **Կարլօֆ Բ.** *Деловая стратегия*. М., 1991. с. 147.

18 Նոյյն տեղում, էջ 147:

19 Տես նոյյն տեղում, էջ 147-149:

20 Տես նոյյն տեղում, էջ 149:

21 Տես **Лукашук И.** *Искусство деловых переговоров*. М., 2002. с. 36.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ազատության հնարավորությունը: Ըստ որում, որպես կանոն, կողմերը հետապնդում են ոչ թե մեկ, այլ մի քանի նպատակներ, որոնցից մի քանի կարող են դրւու գալ տվյալ կոնկրետ պահի բանակցությունների շրջանակներից՝ հանդես գալով որպես հետազա հնարավոր բանակցությունների ռազմավարական նպատակ:

Քաղաքական բանակցությունների վարման գործընթացում հնարավոր են տարբեր ռազմավարությունների կիրառում:

Ընդհանուր առմամբ, առանձնացվում են բանակցությունների վարման երկու հնարավոր ռազմավարություններ՝ մրցակցային (*comparative*) և *համագործակցային* (*operative*): Առաջինի դեպքում բանակցությունները վարվում են «**զիրքային առևտություն**» ուղղությամբ, որի դեպքում կողմերը սկզբունքորեն պնդում են իրենց դիրքորաշումները՝ օգտագործելով ճնշման մարտավարություն (սպառնալիքների կիրառում, միակողմանի զիջումների պարտադրություն): Ռազմավարության մրցակցային տարբերակի ընտրությունը միշտ բանակցությունների դադարեցման վտանգ է պարունակում, քանի որ այդ դեպքում բանակցողները ի սկզբանե ներկայացնում են իրենց առավելագույն պահանջները: Սկզբնական փուլում առավելագույն պահանջների բավարարման պնդումը կարող է ստիպել մյուս կողմին զիջումների գնալ, բայց, որպես կանոն, նման դեպքում բանակցությունները դադարում են: Մրցակցային ռազմավարության դեպքում կողմերից յուրաքանչյուրը մեծ մասմար ինքնուրույն է փորձում փնտրել հիմնահարցի լուծումը և պարտադրել այն մյուս կողմին: Մրցակցային ռազմավարությանը բնորոշ «կոչտ առևտություն», ըստ եռթյան, միակողմանի կարգով գործողությունների կամ հակամարտության շարունակումն է, բայց արդեն բանակցությունների սեղանի շուրջ: Այսպիսի ռազմավարության դեպքում սպասվող հնարավոր արդյունքները նման են գրոյական գումարով խաղերի տեսությանը, եթե կողմերից որևէ մեկի հաղթանակը նշանակում է մյուսի պարտություն, իսկ սեփական շահերն ու պահանջմունքները կարող են բավարարվել միայն ուրիշի հաշվին:


«**Համագործակցային**» ռազմավարությունը ենթայրում է կողմերի միջև բաց երկխոսության առկայություն, հիմնահարցերի համատեղ քննարկում (*joint problem-solving*) և այդ հիմքի վրա գործընկերոց հետ համատեղ և փոխադարձ ընդունելի որոշումների և զիջումների ընդունում, որը շատ դեպքերում, հնարավոր է բանակցությունների վերջնական փուլում:

Բանակցությունների վարման միջազգային պրակտիկայում լայն տարածում է գտել նաև բանակցությունների վարման ամերիկյան դպրո-

Բանակցությունների ռազմավարությունը

ցի ներկայացուցիչներ Կ. Թոմասի և Ռ. Կոռլիմնենի բանակցային ռազմավարությունների դասակարգումը, որի հիմքում հեղինակներն առանձնացնում են մեկ շափանիշ՝ **բանակցային կռողմերի շահերի բավարարման մակարդակը**.²² Ըստ այդ հիմքի տարբերակում են 5 բանակցային ռազմավարություններ. **ա) մրցակցային**, որը աչքի է ընկնում սեփական շահերի բավարարման բարձր ու դիմացինի շահերի իրականացման ցածր մակարդակով: Այս ռազմավարությանը բնորոշ է բանակցային կողմերի միջև առկա հակասությունների խորացումն ու մրցակցային ոգլին: Ըստ Էլոբյան, բանակցությունների մեծ մասը վարվում է այս ռազմավարության հիման վրա, երբ կողմերը հիմնականում միտված են միայն սեփական շահերի բավարարմանը **բ) խուսանավման ռազմավարություն**, որի դեպքում նկատվում է բանակցային կողմերի շահերի բավարարման ցածր աստիճան, **գ) միակողմանի** գիշումների ռազմավարություն, որին բնորոշ է սեփական շահերի բավարարման ցածր, իսկ դիմացինի շահերի բավարարման բարձր մակարդակ. **դ) փոխզիջումային ռազմավարություն**, որն աչքի է ընկնում բանակցային կողմերի շահերի բավարարման միջին մակարդակով, **ե) համագործակցային ռազմավարություն**, որին բնորոշ է բանակցային կողմերի շահերի փոխադարձ բավարարման բարձր մակարդակը:

Բանակցային ռազմավարությունները ըստ Կ. Թոմասի և Ռ. Կոռլիմնենի



Ամերիկան հեղինակներ Ս. Սիլինը և Լ. Ֆուրեները բանակցություններում առավելագույն արդյունքների ծեռք բերման համար առաջարկում են բանակցությունների վարման «կոշտ» ռազմավարությունը, որի

կիրառումը, որոշ առումով կախված է բանակցության օբյեկտից և բանակցային իրավիճակի տրամաբանությունից²³: Ըստ այդ հեղինակների, «կոչտ» ռազմավարության դեպքում բանակցություններում կողմերից որևէ մեկի արված գլխունները բերում են մյուս կողմի դիրքորոշման կարծրեցման: Այդ իսկ պատճառով, եզրակացնում են նրանք, բանակցությունների հաջողության համար (առավելագույն օգուտներ) անհրաժեշտ է հետևել «կոչտ» ռազմավարության. սկսել բանակցությունները շափազնցված պահանջներ առաջ քաշելով, լուղանոր առմամբ, լինելով անօիջում: Մեկ այլ հեղինակ Չ. Օսգուտը բանակցությունների հաջողության համար առաջ է քաշում «փափոկ» ռազմավարության կիրառման գաղափարը²⁴: «Փափուկ» ռազմավարության դեպքում ենթադրվում է, որ կողմերը առավելագույն արդյունքների կարող են հասնել միայն փոխգիջումների օգնությամբ: Սկզբունքը են, «փափուկ» և «կոչտ» ռազմավարությունները նման են «մրցակցային» և «համագործակցության» ռազմավարություններին:

Ռոջեր Ֆիշերն ու Ուիլյամ Ուրին որպես այլբնտրանք «փափուկ» և «կոչտ» ռազմավարության, ավելացնում են նաև «սկզբունքային» ռազմավարությունը²⁵: Նրանց կարծիքով, վերջինս կիրառելի է գրեթե բոլոր բանակցությունների համար: Այս ռազմավարությունը հենվում է չորս հիմնայլույթների վրա՝ 1. տարածատել մարդկանց հիմնախնդիրներից, 2. ուշադրությունը կենորոնացնել շահերի, այլ ոչ թե դիրքորոշումների վրա, 3. մշակել համատեղ որոշումների քայլոր հնարավոր տարրերակները, 4. վերջնական համաձայնագրի գնահատման համար մշակել օրյեկտիվ չափանիշներ:

Հարվարդի համալսարանի պլոտֆեսուրներ Չ. Ռուբինն ու Չ. Սալակյանը ներկայացնում են բանակցությունների վարման երկու՝ «պողլիտիվ» ռազմավարություն, որը ենթադրում է առավելագույն օգուտներ կամ որքան հնարավոր է՝ թիզ վնասներ, և «մեծասահման» ռազմավարություն, որի կիրառումը պակասեցնում է մի կողմի հաջողությունների ձեռք բերումը, միաժամանակ ավելացնելով մյուս կողմին հասցրած վնասները²⁶:

«Հաղթանակ-պարտություն» ռազմավարությունը բանակցային կոչտ

23 Հղումն ստու Լեբեծևա Մ. Խրուստալև Մ. Основные тенденции в зарубежных исследований международных переговоров. // Международная Жизнь.. 1989/2. с. 107.

24 Տես նոյն տեղում, էջ 108:

25 Fisher R., Ury W. Getting to Yes: Negotiating Agreement Without Giving In.' Boston. 1991. р. 10.

26 Տես նոյն տեղում, էջ 11-34:

27 Տես Ռубин Ջ., Սալակյան Ջ. Փակտ սիլ և մеждународных переговорах. // Международная жизнь. 1991/8. с. 30.

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական բանակցորդություններում

ուազմավարություններից մեկն է, որը կիրառվում է «**Պաժային ասիմետրիայի»** պայմաններում, երբ կողմերի միջև գոյություն ունի ուժային անհավասարակշռություն: Այս դեպքում բանակցությունների նպատակը ոչ միայն սեփական շահերի իրազործումն է, այլ նաև հակառակ կողմի պարտությունը: **«Պարտություն-հաղթանակ»** ուազմավարության դեպքում նկատվում է բանակցային կողմերից մեկի պարտփողական տրամադրությունը, որի դեպքում վարփում է միակողմանի զիջումների քաղաքականություն, նպատակ ունենալով պահպանել մյուս կողմի հետ հարաբերությունները: Այս ուազմավարությունը երբեմն կիրառվում է նաև այլ նպատակներով. թվացյալ միակողմանի զիջումների գնալով բանակցային առարկայի շուրջ (որն այնքան էլ կարևոր չէ տվյալ բանակցային կողմի համար), այլ հարցերում ունենում է լորջ ձեռքբերությունների ակնկալիքներ: **«Պարտություն-պարտություն»** ուազմավարության դեպքում ենթադրվում է, որ կողմերից մեկը գիտակցարար գնում է պարտության, բայց միաժամանակ նաև մյուս բանակցային կողմին է դնում պարտփողի վիճակում: Այս ուազմավարությունը կիրառվում է կողմերի միջև չափազանց լարված և անհանդուրժողական վերաբերմունքի պայմաններում: **«Հաղթանակ-հաղթանակ»** ուազմավարությունը բանակցությունների կառուցողական մոտեցումներից մեկն է, որի դեպքում բանակցային կողմերը ընկալում են միմյանց որպես գործընկերներ, որոնց նպատակն է հասնել փոխադարձ ընլունելի որոշումների լրացնման: Այս ուազմավարությամբ ձեռք բերված համաձայնությունները, որպես կանոն, ամուր են լինում, և բանակցային կողմերը, ընդհանուր առմամբ, գոհ են մնում բանակցությունների վերջնական արդյունքից:

Զաղաքական բանակցությունների ուազմավարությունները վերը շարադրվածով չեն կարող սահմանափակվել, քանի որ բանակցությունների օբյեկտից, սուրյեկտներից, սոցիալ - քաղաքական իրավիճակներից կախված, հնարավոր են այս կամ այն ուազմավարության կիրառումը կամ նորերի մշակումն ու իրականացումը:

3. Մարտավարություն քայլերը

Եւ ՀԱՅՐԵՆՔ ԸՆՊԱՇԿԱՆ ԲԽԱԿԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Քաղաքական բանակցությունների վարման գործընթացի կառուցվածքային կարևոր բաղադրատարրերից են նաև մարտավարական բայլերն ու մարտավարական հնարները: Բանակցային սուրյեկտների ընտրած այս կամ այն ուազմավարության իրականացումը, նրանց առջև դր-

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Ված նպատակներին հասնելու մեթոդների և միջոցների արդյունավետ կիրառումը հնարավոր են իրագործել բանակցությունների ընթացքում զանազան մարտավարական քայլերի և հնարների կիրառման օգնությամբ:

Քաղաքական բանակցությունների վարման փուլերում բանակցությունների առյօնականությունը ներկայացնում են զանազան հարցերի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ, փորձում են կենտրոնացնել ուշադրությունը իրենց համար առաջնահերթ հարցերի քննարկմանը, զգուշակ ազգեկան կամ կողմնական դիրքորոշումների և տեսակետների վրա: Չափանիշը հարաբերակցությունից, իրավիճակի սեփական ընկալումից ելնելով, բանակցությունների տարբեր փուլերում կիրառվում են զանազան մարտավարական քայլեր: Ընդհանրապես, մարտավարական այս կամ այն քայլը կիրառումը կախված է կոնկրետ բանակցությունների բովանդակությունից: Օրինակ՝ եթե կողմները համագործակցության բանակցություններ են վարում, նրանք իրենց դիրքորոշումների ներկայացման ժամանակ որպես կանոն, շեշտում են նրանց դիրքորոշումներում առկա շահերի ընդհանրությունը:

Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում, հատկապես՝ միջկուսակցական, նախընտրական զանազան դաշինքների և միավորումների ստեղծման ժամանակ, բանակցային կողմերը ավելի հաճախ շեշտում են նրանց միջև գոյություն ունեցող զաղափարական կամ ծրագրային ընդհանրաթյունները, քան թե առկա տարբերությունները: Սասնավորապես՝ 1999թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին ձևափորված «Միասնություն» դաշինքի երկու իիմնական՝ Հայաստանի հանրապետական (ՀՀԿ) և Հայաստանի ժողովրդական (ՀԺԿ) կուսակցությունները, չնայած իրենց զաղափարական տարբերություններին (առաջինը՝ աջ կենտրոնամետ, իսկ երկրորդը՝ ընգծված ձախ կողմնորոշում ունեցող), բնական է, որ իրենց միավորման հիմնավորումներում ներկայացնում էին «հայոց պետականության միասնական կերտման», «հասարակական իիմնախնդիրների համատեղ ջանքերով հաղթահարման» և այլ նման բնույթի փաստարկներ, որոնք ավելի շատ շեշտում էին դիրքորոշումներում առկա նմանությունները և շահերի ընդհանրաթյունը: Դիրքորոշումների նմանության կամ տարբերությունների ընդգծման վրա կառուցված մարտավարական քայլերի ցայտուն օրինակ կարելի է համարել 2003թ. ՀՀ նախազահական ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների՝ ԱՊՀ միջխորհրդարանական, ԵԱՀԿ ժողովրդական հաստատու-

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական քանակցորդություններում

թյունների ու մարդու իրավունքների գրասենյակի և ԵԽ խորհրդարանական վեհաժողովի պատվիրակությունների՝ ընտրությունների արդյունքների վերաբերյալ արված հայտարությունները։ Օրինակ՝ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի պատվիրակության տփած գնահատականում ավելի շեշտադրվում էր դիրքորոշումների նմանությունը, մինչդեռ եվրոպական դիտորդական կառույցների ներկայացրած հայտարարության մեջ գերակշռում էին այնպիսի որակումներ, ինչպիսիք էին «ընտրությունների անհամապատասխանությունը միջազգային չափանիշներին», «քվեարերթիկների լցոնման դեպքերը», «քոնության դեպքերը», «զինվորականության անհամապատասխան քվեարկությունը», իսկ դրական կողմերից՝ նշվել էր «հասարակական բարձր ակտիվության», «տեղական դիտորդների մեծ ներգրավվածության», «Հայաստանի պատմության մեջ նախադեպը չունեցել հեռուստաբանավեճի» մասին։ Ինչպես երևում է, այս դեպքում մարտավարությունը կառուցված է դիրքորոշումների տարբերության լնդգծման վրա։

Ի տարբերություն համագործակցային քաղաքական քանակությունների, մրցակցային քանակցությունների ժամանակ, կողմերը, ընդհակառակը, որդեգրուում են կոչտ դիրքորոշումներ, որոնց ներկայացման ընթացքում լնդգծվում են տեսակետների, հայացքների, ծրագրերի կամ ըննարկվող առարկայի շուրջ եղած կարծիքների և մոտեցումների տարբերությունները։ Նման մարտավարական քայլերի կիրառումը բնորոշ է հիմնականում իշխանություն-ընդդիմություն քանակցություններում, որտեղ քանակցությունների սուրբեկտները ծգտում են ավելի շեշտադրել իրենց տեսակետների և դիրքորոշումների տարբերությունները, քան թե ընդհանրությունները։ Այս դեպքում, քանակցային կողմերը որդեգրուում են կոչտ դիրքորոշումներ, միմյանց ներկայացնում են ծայրահեղ մոտեցումներ՝ առաջնորդվելով ավելի շուտ վերջնազրերի ոգով, քան թե բուն հիմնահարցերին լուծում տալու մտահոգությամբ։ Հայաստանի քաղաքական կառանքների բնորոշ է նման քանակցությունների պրակտիկան, սկսած 1996թ.-ից մինչև 2003թ. նախագահական ընտրությունները։ Սովորաբար, նման քանակցությունների ընթացքում կողմերի մարտավարությունը կառուցվում է կոչտ և ծայրահեղ դիրքորոշումների վրա, ինչպիսիք են, օրինակ, «մենք կրանակենք հանցավոր իշխանությունների հետ միայն այն դեպքում...», «ոչ մի ընդհանուր քան չունենք մենք ձեզ հետ քննարկելու» կամ «մենք պահանջում ենք արտահերթ նոր նախագահական ընտրություններ» և այլն։

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Կարելի է առանձնացնել, այս առամով, մարտավարական քայլերի հետևյալ ձևերը. **1. դիրքորոշման քացում**, որի կիրառման ժամանակ բանակցային մյուս կողմին ներկայացվում է հիմնահարցի լուծման սեփական տեսակետը, առանց այն հակառակ կողմի դիրքորոշման հետ համեմատելու: Այս մարտավարական քայլը կարելի է իրականացնել ուղղակի իրազեկման, հետագա դիրքորոշման բացահայտման, փաստարկման, ինչպես նաև հետագա մանրամասն սեփական դիրքորոշման կետերը ներկայացնելու ճանապարհով. **2. դիրքորոշման փակում**, քննարկման փուլի ժամանակ ոչ ամբողջությամբ են բացահայտվում դիրքորոշման բոլոր կետերը. նկատվում է կարծի, չոր դիրքորոշման դրսարակմ, **3. դիրքորոշումների ընդհանրության ընդգծում**, այս դեպքում բանակցային սուրբեկտները ավելի հաճախակի մատնանշում են դիրքորոշումներում առկա ընդհանրությունները, որը բավականին հեշտացնում է բանակցությունների լնթացքը: Դա, սովորաբար կիրառվում է այն ժամանակ, երբ կողմերը իսկապես ծգություն են զալ փոխահավետ համաձայնության, **4. դիրքորոշումների տարրերության ընդգծում**, որի ժամանակ կողմերը շեշտող դնում են դիրքորոշումների տարրերության լնդգման վրա, մարտավարական այս քայլը կիրառվում է մրցակցային ռազմավարության պարագայում, ինչպես նաև, երբ կողմերից որևէ մեկը փորձում է հարմար պահն օգտագործել բանակցությունները դադարեցնելու համար:

Նշված մարտավարական քայլերը կարող են իրականացվել առանձին փուլերում, ինչպես նաև մի քանի մարտավարական քայլեր միաժամանակ կարող են կիրառվել բանակցությունների վարման որևէ փուլում, ինչպես, օրինակ՝ դիրքորոշումների ճշգրտման փուլում հնարավոր է դիրքորոշման բացահայտման և դրանց ընդհանրության կամ տարրերության լնդգման մարտավարական քայլերի կիրառում, որն էլ կարելի է դիտել համապատասխանաբար որպես «փափուկ» կամ «կոշտ» ռազմավարության նախապատվություն: Կողմերից որևէ մեկի ներկայացրած երրություն հնարավոր է, որ շարադրված լինի միայն սեփական դիրքորոշումը, առանց մյուս կողմի կամ կողմերի դիրքորոշումների հետ համեմատության, որը փաստորեն, հանդես է գալիս որպես սեփական դիրքորոշման բացահայտում, իսկ երբ դիրքորոշումների համեմատություն է կատարվում, կախված նրանից, թե որ կողմն է լնդգձվում, կարելի է այն դիտարկել որպես լնդիանը դրությունների կամ տարրերությունների լնդգծում:

Մարտավարական քայլերի կիրառումը և հերթականությունը՝ կախված բանակցությունների գործառույթային նպատակներից, կարող են

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական բանակցություններում

փոփոխվել, օրինակ՝ փոխահավետ համաձայնագրերի կնքման, բանակցությունների սուբյեկտների փոխարարելություններում բարեկամական մթնոլորտի ստեղծման ու նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորման նպատակների հետապնդող քաղաքական բանակցություններում նպատակահարմար է կիրառել դիրքորոշումների փոխադարձ բացահայտման և դրանց լնդիանրությունների լնդգծման մարտավարական քայլեր: Հակառակ պարագայում, հնարավոր է իրավիճակի կտրուկ լարվածության առաջացում, որը հետազայտմ բավականին դժվարեցնում է փոխընդունելի սրբազնությունների լնդունման գործընթացը: Բացի այդ, բանակցությունների տարբեր փուլերում մարտավարական քայլերի վերլուծությունը օգնում է պարզաբանելու դրանց իրականացման հիմքում ընկած խորքային շարժադրիքներն ու դրապատճառները, ինչպես նաև արձանագրելու սոցիալ-քաղաքական իրավիճակի փոփոխությունները և կապը դիրքորոշումների դրսորման փոփոխությունների հետ: Այսպես, օրինակ, բանակցություններում նկատվող առաջընթացի ժամանակ կողմերը նշում են դիրքորոշումների լնդիանրությունը, իսկ լարվածության ժամանակ շեշտը դնում են դիրքորոշումների տարբերության վրա:

Մարտավարական հնարներ

Քաղաքական բանակցությունների վարման գործընթացի կառուցվածքային բաղկացուցիչ մասն են կազմում զանազան մարտավարական հնարները: Ռուս հեղինակ Օ. Միտրոշենկովը մարտավարական հնար է համարում բանակցության սուբյեկտների միմյանց մտածելակերպի կամ վարքագծի վրա ազդելու գործնական փորձը²⁹:

Պետք է նշել, որ բանակցությունների երևոյթի ծագման և զարգացման բազմադարյա պատմության լնքացքում մարտավարական հնարները անընդհատ փոփոխվել, զարգացել ու հարստացել են նորանոր մեթոդներով, և այդ գործընթացը, ըստ ամենայնի, կշարունակվի նաև ապագայում:

Բանակցություններում կիրառվող մարտավարական հնարները կարելի է դասակարգել ըստ մի շարք շափանիշների՝ **եխմք ընդունելովք բանակցային ուազմավարության եղանակը, մարտավարական հնարների գործածության պահը (որ փուլում է կիրառվում), մարտավարական հնարների կառուցողական կամ ապակառուցողական բնույթը** և այլն:

Բանակցային ուազմավարության բնույթից ելնելով (մրցակցային

29 Ст. Митрошенков О.А. Эффективные переговоры. М., 2000. с 212.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

կամ համագործակցության), բանակցություններում կարող են կիրառվել տարրեր մարտավարական հնարներ:

Մրցակցային ուսումնակարության դեպքում, «սկզբունքային առևտուր» եղանակի ընտրության ժամանակ հաճախ կիրառվող մարտավարական հնարներից է «**հակառակորդի վրա ճնշման մեծացումը**»: Այն կարող է իրականանալ սպառնալիքի, հարկադրանքի և այլ եղանակներով: Այս հնարին նպատակն է համոզել հակառակ կողմին համաձայնվել առաջարկությունը հետո: Նման դեպքերում վերջնագրերի, պատժամիջոցների կիրառման սպառնալիքի տակ կճրված համաձայնագրերը ամուր հիմք չեն ունենում, քանի որ, բանակցային կողմերից գոնե մեկի համար այն հարկադրական, պարտադրված բնույթ է կրում: Փաստորեն, այդպիսի իրավիճակում հայտնիքոց Հայաստանի պատվիրակությունը Լիսարոնի գազարամուղղվում, երբ միջազգային հանրությունը, մեծացնելով ճնշումը ՀՀ-ի վրա, փորձում էր պարտադրել Ղարաբաղական հակամարտության կարգավորման այնպիսի իրավական իիմքեր, որոնք բխում էին հակամարտության միայն մեկ կողմի՝ Աղբեջանի շահերից: Այս մարտավարական հնարին կիրառման պատճառով, ինչպես հայտնի է, Ղարաբաղական կարգավորման բանակցային գործընթացը փակուիլի մտավ: Նման կարգով հակամարտությունների կարգավորման արդյունավետությունը կասկածի տակ էին դնում նույնիսկ դրա անմիջական կիրառողները: Օրինակ՝ 1999թ. Հարավսլավիայի դեմ իրականացված լայնամաշտար պատերազմական գործողություններից հետո ՆԱՏՕ-ի անդամ Երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ նրանցից շատերը նշել էին, որ «Կոսովոն ամենելին էլ հակամարտությունների կարգավորման օրինակ չե....և Կովկասը չպետք է այդ ճանապարհով գնա»³⁰:

Մրցակացային ուսումնակարության դեպքում հաճախ կիրառվողներից է նաև «**շափազանցված պահանջներ**» մարտավարական հնարը: Այս դեպքում կողմերը՝ որպես բանակցությունների սկսման նախապայման, կամ էլ բանակցությունների ընթացքում առաջ են քաշում շափազանցված պահանջներ, իուս ունենալով ստանալ ավելին, քան իրականում սպասում են: Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական կապերի հաստատման համար նման «շափազանցված պահանջներ» է առաջ քաշում թուրքիան, այս հարցը կապելով ցեղասպանության ճանաչման փաստի ժխտման, հայկական գործերի Լեռնային Ղարաբաղից դուրս բերման խնդիրների հետ, դրանով իսկ մերժելով երկխոսության

30 «Ազգ», 19 մայիսի, 1999թ., էջ 2:

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական քանակցություններում

հնարավորտությունը երկու երկրների միջև: Հայաստանի ներքաղաքական պրակտիկայում նույնպես «չափազանցված պահանջների» առաջադրությունը հաճախ է քանակցությունների հիմքում դրվում, ինչպես, օրինակ, 1996թ. նախագահական ընտրություններից հետո, երբ ընդլիմությունը պահանջում էր քանակցել իրենց կողմից առաջարկված այնպիսի հարցերի շուրջ, որոնք խսկապես կարելի էր որակել որպես չափազանցված պահանջներ (նոր նախագահական, խորհրդարանական, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, նոր սահմանադրության լներունում): Ընդհանուրապես, չափազանցված պահանջներ առաջ քաշելով, կողմերը կարտ են կորցնել վերահսկողությունը քանակցությունների լնքացքի նկատմամբ, դրւում գալ քանակցային դաշտից, հիմնահարցի լուծման համար իրագործելով իրենց ԲՈԼԱ-ն (քանակցային որոշման լավագույն այլընտրանքը), ինչը տեղի ունեցավ վերը հիշատակված իրադարձության պարագայում, մղելով երկու կողմերին էլ՝ և լնդրիմությանը և իշխանություններին՝ որպես քանակցությունների այլնորոշում՝ ընտրելով քաղաքական պայքարի բանի մեթոդները:

«Առևտրին» բնորոշ մարտավարական հնարներից կարելի է նշել **«վերջին պահեճ պահանջների առաջ քաշումը»:** Այն սովորաբար կիրառվում է քանակցությունների վերջում, երբ քվում է, թե կողմերը եկել են փոխադարձ համաձայնության, և այդ պահին քանակցող կողմերից որևէ մեկի կողմից առաջ են քաշվում նոր պահանջներ, հույս ունենալով քանակցությունների վերջնամասում ճեղք բերել ավելին: Նման մարտավարություն կիրառեց աղքեցանական պատվիրակությունը Լիսարոնյան գագաթաժողովի ընթացքում: Վերջին նիստում, երբ արդեն համաձայնեցված էին վերջնական տեքստի կետերը, Հ. Ալիևը, վերջին պահին սպառնաց վետո դնել անբողջ տեքստի վրա, եթե այդտեղ չամրագրվեն Ալյութքանի տարածքային ամբողջականության, «Լարաբաղի ինքնավարության ամենաբարձր աստիճանի և անվտանգության երաշխիքների ասպահովման սկզբունքները»: Հայկական պատվիրակությունը, դրան ի պատասխան, ընդունելով ԵԱՀԿ ընդունած փաստաթղթի ողջ տեքստը, վետո դրեց միայն 20-րդ կետի վրա, որում ամրագրված էին վերտիշյալ սկզբունքները: Փակուղային իրավիճակից դրւում գալու համար ԱՍՍ պատվիրակության ղեկավարի առաջարկությամբ այդ կետը հանվեց հայտարարագրից և իրապարակվեց իրեն ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարություն (այդ հայտարարությունը իրավաբանորեն պարտա-

31 **Տիգրան Գուլզադե Վ. Лиссабонский саммит ОБСЕ - миф или реальность.** // Центральная Азия и Кавказ. 1999. N 2. с. 93.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

վորեցնող բնույթ չեր կրում), որը ալրբեջանական կողմը ներկայացրեց որպես «աղբբեջանական դիվանագիտության փայլուն հաղթանակ»¹²: Այս մարտավարական հնարին բավական նման է նաև **«աստիճանական պահանջների առաջ քաշումը»**: Այս դեպքում, տեսնելով, որ հակառակ կողմը համաձայնվում է նոր պահանջների հետ, մյուս կողմը ներկայացնում է նորանոր պահանջներ: Աստիճանական պահանջների առաջ քաշման դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պահանջների չափից դուրս բարձր մակարդակի դեպքում դրանց բավարարման հավանականությունը փարզանում է:

«Առևտրին» բնորոշ է նաև **«երկակի մեկնարանման»** մարտավարական հնարյ, եթե կողմերը ծգում են բանակցային փաստաթղթերում ամրագրել այնպիսի ծևակերպումներ, որոնք հետագայում հնարավոր կլիներ տարբեր կերպ մեկնարանել, դրանով խսկ խուսափելով իրական պարտավորությունների կատարումից: Նման մարտավարությունը բավական հաճախ է կիրառվում հատկապես խորհրդարանական պրակտիկայում՝ օրենքների նախագծերի քննարկումների ժամանակ, որոնց արդյունքում նման անորոշ և երկակի մեկնարանվող արտահայտությունները հետազայում խանգարում են դրանց հստակ իրագործմանը: Դրս հետ կապված, եթե մշակվում էր «Երիտասարդության մասին օրենքի» նախագիծը, օրենքի նպատակային հիմնադրությներից ելնելով (հոդված 4. կետ 2, որում ամրագրված էր երիտասարդության գրաղվածության և աշխատանքի ապահովման ոլորտում երաշխիքների տրամադրությունը ու պետական քաղաքականության իրականացումը), նախնական տարբերակի համաձայն (հոդված 16. կետ 2) առաջարկվում էր նաև հստակ նախագիծ այդ նպատակների իրականացման առնչությամբ: Սակայն կառավարության հետ բանակցությունների արդյունքում ձեռք բերված համաձայնությամբ կոնկրետ մեխանիզմը փոխարինվել էր «երիտասարդներին աշխատանքով ապահովման պետական աջակցության, այդ թվում՝ երիտասարդ մասնագետների աշխատանքի տեղափոխման համար իրականացվող միջոցառումներ» արտահայտությամբ (հոդված 17. կետ 1.9), որն իր անորոշությամբ հարմար առիթ կարող էր ծառայել երկակի մեկնարանման և արյունքում, կառավարության՝ ստանձնած պարտավորություններից խուսափելու համար:

Մարտավարական հնարիների մյուս խումբը հիմնված է «համագործակցության» ռազմավարության վրա: Այս խմբի մարտավարական հնարմերից կարելի է համարել **«գննարկվող հարցերի աստիճանական ստանձնած պարտավորություններից խուսափելու համար»**

32 Նոյն տեղում, էջ 91:

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական քանակցորդուններում

բարդացման» մերությունը: Այն ենթադրում է, որ քանակցությունները սկսվում են համեմատաբար թերև հարցերի քննարկումից, աստիճանաբար բարդացնելով քննարկումների լինքացքը, այն ուղղելով առանցքային հիմնախնդիրների կարգավորմանը: Նման մարտավարության լինտրության դեպքում աստիճանաբար արմատավորվում է միմյանց նկատմամբ վստահությունը, ստեղծվում է համապատասխան հոգեբանական մընլորտ համաձայնությունների հետագա առաջխաղացման համար, մեծանում է քանակցությունների մասնակից սուբյեկտների պատրաստակամությունը փոխադարձ համաձայնության գալու և այլն:

Համագործակցության ռազմավարության ժամանակ կիրառվող մարտավարական հնարներից է **«Փլիքը»**: Այն նպատակահարմար է կիրառել այնպիսի իրավիճակներում, երբ քննարկվում են քանակցության սուբյեկտների գործառությունների, լիազորությունների, տարածքների հավասար բաժանման հարցեր: Բանակցությունների մասնակիցներից մեկին առաջարկվում է կատարել բաժանումը, ընտրության իրավունքը վերապահելով մյուս կողմին: Նմանատիպ պարագայում յուրաքանչյուրի կծգոտի որքան հնարավոր է հավասարաշափ բաժանում կատարել, որպեսզի, դիմացինի ընտրությունից հետո էլ ինքը կարողանա հավասար կերպով իր շահերը արտահայտված տեսնել:

Համագործակցությանն ուղղված քաղաքական քանակցությունների ժամանակ շատ հաճախ է կիրառվում **«համագործակցության ընդհանուր շրջանակների ծցզրուման»** հնարքը, որի դեպքում կողմները համաձայնության են գալիս փաստաթյու ընդհանուր բովանդակության հարցի շուրջ, որից հետո միայն մշակվում են մանրամասները: Օրինակ, երբ պետության դեկապարները բարձր մակարդակի քանակցություններում որոշում են ընդունում տարբեր ոլորտներում համագործակցություն սկսելու շուրջ, իսկ այնուհետև տարբեր նախարարությունները, գերատեսչությունները և այլ մասնագիտական խմբեր մշակում են դրանց իրականացման կոնկրետ ուղիներն ու եղանակները:

Մարտավարական հնարների մյուս խմբի կիրառման առանձնահատկությունները կախված են այն քանից, **թե քանակցային որ փուլերում են դրանք օգտագործվում**: Այս առումով մարտավարական հնարները պայմանականորեն կարելի է բաժանել **երկու խմբի՝ ընդհանուր քնոյթի մարտավարական հնարներ, որոնք կարող են կիրառվել քանակցությունների բայոր փուլերում, և առանձնակի մարտավարական հնարներ (յուրահատուկ են քանակցությունների վարման որաշակի փուլերին)**:

Ընդհանուր բնույթի մարտավարական հնար է հանդիսանում «խու-

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

սահմանական» մեթոդը. այն օգտագործվում է բանակցությունների լնթացքում շոշափվող այնպիսի հարցերի ժամանակ, որոնք կողմերից մեկի համար ցանկալի չեն, այդ դեպքում հնարավոր է հարցի տեղափոխումը մեկ այլ հարբություն՝ կոնկրետ պատասխանից խուսափում և այլն:

Բանակցությունների վարման առաջին փուլում դիրքորոշումների հստակեցման ժամանակ, այս մարտավարական հնարք կարող է կիրառվել ինֆորմացիայի տրամադրումից խուսափելու համար, փաստարկման փուլում կարող է օգտագործվել՝ քննարկումից հրաժարվելով, իսկ դիրքորոշումների համաձայնեցման փուլում՝ եղած առաջարկություններին միանշանակ պատասխան տալուց խուսափելու համար: «Խուսանավման» հնարք կիրառող կողմը իիմնականում նպատակ է հետապնդում երկարածզել բանակցությունները, ստիպելով դիմացինին առաջինը տեղեկություններ հաղորդել, սակայն այս դեպքում նախաձեռնությունը, որպես կանոն, գտնվում է բանակցային մյուս կողմի ծեռքում, որի ճիշտ օգտագործման դեպքում բանակցությունների լնթացքը կայսու է լնթանալ իր առաջարկած սցենարով: Պետք է ուշադրություն դարձնել, որ «Խուսանավման» մեթոդը միշտ չէ, որ կարելի է դիտարկել որպես մարտավարական հնարք: Բանն այն է, որ երբեմն բանակցող կողմերից որևէ մեկի ներկայացուցիչը կարող է ուղղակի չունենալ համապատասխան լիազորություններ և անընդհատ ցուցումներ ստանալ վերադաս մարմիններից: «Խուսանավումը» կարող է դրսորվել տարբեր ձևերով՝ պատասխանից խուսափելով, հարցի շորջ ոչ ըստ էության պատասխան տալով, հարցանոյումը անտեսելով և այլն: Ըստ էության, խուսանավման տիպիկ օրինակ է բերում Վ. Կազմիրովը, որը նշում է. «Ամեն անգամ հաստատելով իր պատրաստականությունը բանակցել Ստեփանակերտի հետ՝ Ալյոքեզանի նախագահ Հ. Ալիկը բազմիցս հետաձգում էր այդ հանդիպումները տարբեր պատճառաբանություններով: Ընդհանուր առնամբ, Ալյոքեզանի նախագահը 8 անգամ խոստացել էր վերսկսել այդ բանակցությունները, սակայն միշտ գտնում էր որևէ պատճառ դրանցից խուսափելու համար»¹⁴:

Մարտավարական ընդիանուր բնույթի հնարներից կարելի է համարել «սպասարկ», որը իիմնականում կիրառվում է բազմակողմ քաղաքական բանակցություններում, երբ կողմերից որևէ մեկը ձգտում է լսել բոլոր առաջարկները և տեսակետները՝ դրանց հիման վրա սեփական դիրքորոշումը ձևակերպելու համար: «Սպասարկ» հնարք կիրառելով, կարելի է

33 Казимиров В. Гуманитарная катастрофа в зоне Карабаха была, может быть, больше, чем ныне вокруг Косово. // Международная Жизнь. 1999/5. с. 14.

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական քանակցորդություններում

առաջինը տեղեկություն ստանալ հակառակ կողմի դիրքորոշումների և տեսակետների վերաբերյալ, դրանով իսկ վերաթերավորելով. վերածնակերպելով սեփական դիրքորոշումը:

Մյուս մարտավարական հնարք կոչվում է «ապյամբ», որն լստ էության, սեփական դիրքորոշման արտահայտման աստիճանական տարբերակ է. և կարող է օգտագործվել բանակցությունների երկարածզման նպատակով՝ անհրաժեշտ տեղեկություն ստանալու համար: «Ապյամբ» կիրառելով, կարելի է հետապնդել մի քանի նպատակներ՝ գործընկերոցից փորձել ստանալ առավելագույն լրիվ տեղեկություն, ձևակերպել առավել հարմար առաջարկ, երկարածզել բանակցությունները և այլն:

Բանակցությունների վարման ընդհանուր բնույթի մարտավարական հնարներից է «**փարեթային եամածայնությունը**», որն առաջարկվում է բանակցությունների տարբեր փուլերում՝ որպես մի քանի վիճակարույց հարցերի միավորում և դրանց լուծում վերջնական համածայնագրի մեջ¹⁴: Բանակցությունների վարման առաջին փուլում՝ տեսակետների, դիրքորոշումների ճշգրտման ժամանակ, «փարեթի» տեսքով լուծնան տարբերակի ներկայացումը նպատակ ունի բացահայտել հակառակ կողմի վերաբերմունքը ներկայացվող հարցերի նկատմամբ, ստուգել դրանց իրականացման հնարավորությունները, երկրորդ փուլում՝ հիմնահարցի քննարկման ժամանակ, կարելի է հակառակ կողմին փորձել համոզել «փարեթի» մեջ մտնող հարցերի նման խմբավորման և փոխկապակցման արդյունավետության մեջ, հենց այն տեսքով, որը ներկայացվում է, իսկ երրորդ փուլում՝ «փարեթի» հիման վրա մշակել վերջնական, փոխադարձ ընդունելի լուծնան տարբերակներ: «Փարեթի» կիրառումը՝ կախված բանակցային ռազմավարության եղանակից, կարող է տարբեր կերպ դրսնորվել. մրցակցային կամ համագործակցության ռազմավարությունների ժամանակ «փարեթի» կիրառումը տարբեր կերպ է. իրականացվում, առաջինի դեպքում գրավիչ և կողմերից որևէ մեկին շահագրոռ հարցերը կապակցվում են ոչ գրավիչների հետ, իսկ երկրորդի դեպքում «փարեթը» կարող է հենց բանակցությունների սկզբում դրվել սեղանին՝ որպես աշխատանքային նախագիծ: Նմանատիպ մարտավարական հնարքի միջոցով հիմնահարցի լուծնան տարբերակ շրջանառության մեջ դրվեց նաև դարարայան հակամարտության կարգավորմանն ուղղված քաղաքական բանակցություններում, որտեղ փորձ էր արվում աղբբեջանական կողմի ոչ էական գիշումների դիմաց՝ հասնել սկզբունքային հարցերի շուրջ մեր կողմի գիշումներին, այդ ամենը մատուցելով

34 Տե՛ս Mitchell Ch. The Structure of International Conflict. N.Y. 1980. p. 218.

հայ հասարակությանը քաջ հայտնի «համաձայնագրի փաթեթի» տեսքով:

«Փաթեթային համաձայնություն» մարտավարական հնարի տրամադրեն հակառակ մոտեցում է «մասնատված տարածայնություն» մարտավարական հնարը, որն, ի տարբերություն «փաթեթային համաձայնության», ուղղված է բանակցության առարկայի մասնատմանը մի քանի բաղկացուցիչ ենթահարցերի, ինչպես նաև դրանց առանձին քննարկմանը և համաձայնության հաստատմանը: Այս դեպքում կողմերը չեն փորձում լուծել իմբնահարցն ամբողջությամբ, այլ լնդգում են կոնֆլիկտի առանձին բաղադրատարրեր, որից հետո փորձում են հասնել համաձայնության յուրաքանչյուր բաղադրատարրի վերաբերյալ: Բնականաբար, նման հնարի կիրառման միջոցով դժվար է հասնել կոնֆլիկտի համապարփակ կարգավորման, սակայն, երբեմն, ինչպես ժողովուրդն է ասում՝ «փիխրուն խաղաղությունը պատերազմից լավ է»: Հաճախ մասնակի լուծումները շատ էական դեր կարող են խաղալ, հատկապես զինված ընդհարումների, լայնածավալ պատերազմական գործողությունների դադարեցման համար: Մարտավարական այս հնարի կիրառման ժամանակ հնարավոր է հասնել հարցերի սահմանափակ կարգավորման, քանի որ այդ դեպքում սկզբունքային և իմբնական տարածայնությունները կարող են մնալ չլուծված, սակայն, որոշ դեպքերում, մասնակի համաձայնության առկայությունը «ստատուս քվոյից» ավելի լավ է, որը հաճախ կիրառվում է հակամարտությունների կարգավորման ժամանակ: «Մասնատված տարածայնություններ» մարտավարական հնարը այլ կերպ անվանվում է նաև հայ հասարակությանը քաջ հայտնի «փուլային տարբերակ»:

Ընդհանուր բնույթի և հաճախ կիրառվող հնարներից է **«Խմբավորումների»** ձևագրությունը: Այս հնարը բնորոշ է բազմակողմ քաղաքական բանակցություններին, երբ միևնույն տեսակետը պաշտպանող սուբյեկտները միավորվում են, խմբավորվում են որևէ հարցի շուրջ՝ հանդես գալով միասնական դիրքորոշումով: Իմաստն այն է, որ սկզբում գտնվեն որոշումներ, որոնք կրավարարեն մասնակիցների որոշակի խմբի, որն իր հերթին, կիեշտացնի բոլորի համար ընդհանուր, վերջնական որոշումների ընդունումը: Այս մարտավարական հնարը որոշ նմանություն ունի «հիմնահարցի մասնատման» հետ. երկու դեպքում էլ սկզբում տրվում են մասնակի լուծումներ: «Խմբավորումների ձևագրման» մարտավարությունը, թերևս, Հայաստանի քաղաքական կյանքում ամենատարածվածներից մեկն է: Բավական է իշխատակել վերջին տարիներին Հայա-

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական բանակցորդական նորմերում

տանում տեղի ունեցած նախագահական և խորհրդարանական լինտրուրյուններից առաջ ձևավորված զանազան նախարնտրական դաշինքներն ու միավորումները, որոնցից շատերը իրենց մեջ ընդգրկում էին քաղաքական դաշտի ողջ ներկապնակը՝ դրանով խսկ կասկածի տակ դնելով դրանց երկարատևությունն ու արդյունավետությունը։ Նշենք միայն նման «խմբավորումներից» մի քանիքը. 1994թ. սահմանադրական ըննարկումների կապակցությամբ ձևավորված «Քաղաքացիական համաձայնության» դաշինքը, 1995թ. խորհրդարանական լինտրուրյուններում միասնական ընդդիմադիր թեկնածուով հանդես եկած «Ազգային համաձայնության» դաշինքը, 1999թ. խորհրդարանական լինտրուրյուններում հաղթանակած «Սլրասնություն» դաշինքը, 2003թ. նախագահական լինտրուրյունների հետ կապված՝ «Ժողովրդահայրենասիրական ուժերի» դաշինքը (ՀՀՈՒԴ) և այլն։ Ինչպես արդեն նշվել է, նման «խմբավորումները» երկար կյանք չեն ունենում։ Որոշակի նպատակների հասնելուց կամ չհասնելուց հետո դրանք դադարում են։ Քանակցային պրակտիկայում լայնորեն կիրառվող մարտավարական հնարների խումբ է առաջարկում ամերիկյան հեղինակ Չեստեր Կառասի, որն այն անվանում է՝ **փողոցակերպ մարտավարության հնարներ**³⁵. Ըստ Չ. Կառասի, տարբեր բնույթի բանակցությունների ժամանակ կիրառվող ամենահայտնի հնարներից են հանդիսանում **«սահմանադրումը», «սակարգումը» և «կրծուածումը»**: «*Սահմանադրումը*» (The Boegey), հելինակի կարծիքով, ամենապարզ, արդյունավետ ու բարոյական մեթոդներից մեկն է բանակցություններում հաջորդության հասնելու համար։ «Դուք վաճառողին համոզում եք, որ հավանում եք իր ապրանքը, բայց ձեր բյուջեն սահմանափակ է, ուստի այն վաճառելու համար պետք է զինն իշեցվի», -կարծում է Չ. Կառասի³⁶: Այս հնարի կիրառմամբ զնորով ստուգում է ապրանքների գների հիմնավորվածությունը, խսկ վաճառողի ստիպված է լինում հաշվի առնել զնորիի իրական կարիքները։ **«Սակարգումը»** (The Knunch) նույնպես հիմնականում բնորոշ է առևտրային բանակցություններին, բայց այն երբեմն օգտագործվում է նաև քաղաքական բանակցությունների ժամանակ՝ **քաղաքական գործադրներ** կարելիս։ **«Կրծուածումը»** (The Nibble) մի մարտավարական հնար է, որի բավանդակությունը կարելի է հանգեցնել հետևյալին. «Եթե չես կալու ճաշ ստա-

35 Այդ մասին տես Գ. Թեմելի, Ինչպես բանակցել ձեր ուգածը ստանալու համար, - Եր., 2002թ., էջ6-9:

36 Նոյս տեղում, էջ 7:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

նաև, բավարարվիր հաց ու պանրով»: Ըստ Էության, կրծուտողի նպատակը հենց հաց ու պանիր ստունան է: «Միգուցե այս հնարյ այնքան էլ հաճելի չէ սեփական «ես»-ին, սակայն օգտակար է զրայանին», - եզրակացնում է Կառասը¹⁷:

Մարտավարական հնարների մյուս խումբը առավել ցայտուն դրսեռքում է բանակցությունների վարման տարբեր փուլերում: Դիրքորոշումների ճշգրտման փուլում լայնորեն կիրառվող մարտավարական հնարներից է՝ **«փորձնական գնդակի»** կիրառումը: Այս դեպքում առաջարկությունը մատուցվում է գաղափարի տեսքով, որը պարտադրությունը չի կրում. սկսվում է ակտիվ քննարկում զաղափարի շուրջ, յուրաքանչյուրը արտահայտում է իր դիրքորոշումը հարցի նկատմամբ, ընդհանուր առմամբ երեան հնանելով իրենց վերաբերմունքը տվյալ զաղափարի վերաբերյալ: Հիշենք թեկուզ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի մեծ աղմուկ հանած «օկուպացված տարածքներ» արտահայտության օգտագործումը դարձարայան հականարտության կարգավորման եղանակների քննարկման ժամանակ:

Դիրքորոշման փակման մարտավարական քայլի ժամանակ օգտագործվում է՝ **«զափազանցված խոսառումների»** մարտավարական հնարի: Այն կիրառվում է, իհմնականում բանակցությունների մասնակիցների ուշադրությունը գրավելու համար, և արդյունքում, հնարավոր է, որ սկզբնական ոչ մի խոստում չկատարվի, որն էլ հանգեցնում է վստահության կորստի և հեղինակության անկման:

Հատկանշական է նաև այնպիսի մարտավարական հնարի քննարկումը, ինչպիսին հանդիսանում է՝ **«քրեֆը»**, որի կիրառման ժամանակ կողմերից որևէ մեկը ցուցադրում է որոշակի հարցերի լուծման նկատմամբ շինծու հետաքրություն: Իրականում դա կարող է երկրորդական դեր խաղալ կողմի շահերի իիերաբխիսխյում: Նման մոտեցման շարժառիթները տարբեր կարող են լինել. այն կիրառվում է՝ **«առևտուր»** անելու համար, որպեսզի դրա փոխարեն, ցանկախ արդյունք ստացվի մեկ ուրիշ կարևոր հարցի լուծման ժամանակ, կամ օգտագործում է բաղաքական բանակցությունների լայն լուսաբանման ժամանակ՝ հասարակական նպաստավոր կարծիքի ծևափորման համար: Մարտավարական հնարներից է՝ **«անակնկալը»**: Յ. Ներգեշը նշում է, որ «...նա, ով պատրաստվում է այն (այսինքն՝ անակնկալը - Խ. Գ.) օգտագործել, պետք է հատկապես զգույշ լինի, քանի որ «անակնկալը» իիմնված է հակառակ կողմի պատասխան ռեակցիայի վրա, որն, ինչ խոսք, հնարավոր

37 Նույն տեղում:

Մարտավարական քայլերը և հնարները քաղաքական քանակցություններում

չէ ամբողջությամբ վերահսկել»³⁸: Օրինակ՝ ՀՀ վերջին նախագահական ընտրությունների կապակցությամբ, ելք քննարկվում էր «16-ի շրջանակ-ներում» բնիքիմուրյան միասնական թեկնածուի հարցը և ինտենսիվ բանակցություններ էին գնում այդ թեմայի շորությունում, բնիքիմադիր թեկնածուներից Ա. Գեղամյանը առաջինը իրապարակավ հայտնեց, որ միասնական թեկնածուն ինքն է: Այդ հայտարարությունը անակնկալ էր մնացածների համար, որոնք շտապեցին հերթել այդ լուրը: Այս մարտավարական հնարի է ուրբյունը կայանում է նրանում, որ կողմերից որևէ մեկը հանկարծակի, նախօրոք շրնջարկված առաջարկություն է մտցնում:

Առանձնակի բնույթի մարտավարական հնարներից Օ. Միտրոշենկովը առանձնացնում է նաև «**արցանը**» և «**քանակցային գամքիտը**»³⁹: Հրետանիում «արցան» են անվանում այն հնարքը, որի ժամանակ, առաջին ականն ուղարկվում է նշանակետից առաջ կամ ձախ, երկրորդ՝ ետ կամ աջ, իսկ երրորդը, որպես կանոն, դիպչում է ուղիղ նշանակետին: «Օրինակ՝ երես պարտքատերը չի վճարում, կարելի է նրան ներկայացնել իրական գումարը գերազանցող թիվ, և շատ հավանական է, որ նա սկսի վիճարկել այդ գումարը, դրանով իսկ ընդունելով իրական գումարի շափոք»⁴⁰: Այս մարտավարական հնարքը լայնորեն կիրառվում է հիմնականում նախրնտրական քաղոզգության ժամանակ: Օրինակ՝ 2002թ. նախագահական ընտրություններից առաջ, «Օրակարգից լուրս» հաղորդման ընթացքում տեղեկատվություն տարածվեց «Մարք» գործարանը (որի գլխավոր տնօրենն էր նախագահի թեկնածու Ս. Դեմիրճյանը) Ռուսաստանին ունեցած Հայաստանի արտաքին պարտքի դիմաց հանձնելու վերաբերյալ: Ընդ որում, նշվեց, որ «Մարք» գործարանը հանձնվել է ռուսաստանյան կողմին 58 միլիոն դրամու պարտքի դիմաց, մինչդեռ Ս. Դեմիրճյանը գործարանի սեփականաշնորհման համար ներկայացրել էր 1,5 միլիոն դրամի ներդրումային ծրագիր: Ընական է, այդ տեղեկատվությունը քենարկության նախօրյակին ղմփար էր ճշգրտել, քանի որ առաջին հայացքից, ներկայացված գների անհամապատասխանությունն ակնհայտ էր: Մական, եքեն միայն մեկ գործարանը գնահատվել էր բնդիսանուր պարտքի կեսից ավելին, ապա, այս դեպքում, ցածր կարող էին զնահատված լինել մնացած (թվով 4) ոչ պակաս խոշոր տնտեսական և ուսումնական նշանակություն ունեցող օբյեկտները:

Հախմատային պրակտիկայում «գամքիտը» (Փր. *gambit-ուր զել*)

38 Ներշեա Յ. Պոле նիւթե - ստոլ պերեցորով. Մ. 1989. ս 187.

39 Տես Միտրոշենկօ Օ.Ա. Էֆֆեկտիվնե պերեցորով. Մ., 2000. ս 234.

40 Նոյյն տեղում, էջ 231:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

սկզբնախաղ է, որի ժամանակ գոհաբերելով խաղաքար, կարելի ստանալ դիրքային առավելություն: Նմանապես էլ բանակցություններում, որոշակի գիշումների գնալով, կողմերը փորձում են ստանալ նոր որակ կամ ակտիվ դիրքորոշում: Նման մարտավարություն կիրառման օրինակ է բանակցությունների սկզբում պատաճղների կամ գերիների արծակում, որը կողմերից մեջին կարող է տալ ակտիվ դիրքորոշում, մասնավորապես՝ բարի կամքի և հակամարտության վերջնական կարգավորման պատրաստակամության դրսարման միջոցով:

Ըստ Էության, «Հայաստանի քաղաքական կյանքում «քանակցային գամբիտի» մարտավարական հնարք լայնորեն կիրառվում է նախազահական ընտրությունների ընթացքում՝ նախազական տարբեր թեկնածուների առաջադրումով: Այդ քայլով, նախազական թեկնածուներից շատերը ոչ թե իրականում հավակնում են այդ պաշտոնին, այլ ուղղակի ծգում են քաղաքական դաշտում ակտիվ դիրքեր գրավել կամ հաջող քաղաքական գործարքներ կնքել, կամ էլ խորհրդարանական ընտրություններում հաղթելու հայտ ներկայացնել: Մասնավորապես Հայաստանի 2003թ. նախազահական ընտրությունները ցույց տվեցին, որ առաջադրված թեկնածուներից շատերը իրատեսական հնարավորություններ չունեին հաղթելու. սակայն ընտրապայքարի մեջ էին ներգրավվել միայն նրա համար, որպեսզի հետո իրենց թեկնածությունը հանեն նախազական պաշտոնին հավակնող այլ թեկնածուների օգտին: Մասնավորապես՝ ՀԿԿ-ից առանձնացված Հայաստանի նորացված կոմունիստական կուսակցության (ՀՆԿԿ) ներկայացուցիչ Հ. Ոսկանյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Վ. Դարբինյանի նախազահական ընտրությունների մասնակցությունը բացատրում էր նրանով, որ «ՀԿԿ առաջնորդ Վ. Դարբինյանը նախազական թեկնածու է, առաջադրվել երկու նկատառումով. նախ՝ որ շատեն, թե կոմունիստաները թեկանածու չունեն, և ապա, որպեսզի հետազոտում առևտրի մեջ մտնելու հնարավորություն լինի»⁴¹: Նախընտրական պայքարի հետագա ընթացքը՝ ՀԿԿ դեկապարի իր թեկնածությունը հանելը ի օգուտ Ա. Գեղամյանի, իսկ այնուհետև, խորհրդարանական ընտրաթյունների համամասնական ցուցակների հետ կապված իին կոմունիստների դժգոհությունը, թերևս, վկայում են իննոց այդ մարտավարության մասին:

Մարտավարական առանձին հնարներ կարող են դրսարվել ոնային ների, զանազան հարցերի և միջամտությունների ձևով: Օրինակ՝ 1998թ. Մասկովյան բանակցությունների ընթացքում Ռ. Քոչարյանը Հ. Ալիևի

41 «Իրավունք. հարց ու պատասխան», N 3 (722), 2003թ., էջ 2:

Քանակցային որոշումների բնույթը և ընդունման մեխանիզմը

Իետ հանդիպման ժամանակ ուսպիլկի կարգով նկատել էր, որ քանակցությունների սեղանին իրենց միջն հեռավորաթյունն ավելի մեծ է, քան Երևանից Բաքրու դնկած հեռավորությունը⁴²:

Ընդհանուր առմամբ, մարտավարական հնարները ավելի բարդ կազմավորումներ են, քան մարտավարական քայլերը: Դրանց ամբողջությունն էլ կազմում է քանակցությունների մարտավարությունը, որն ուղղված է լինում քանակցությունների ուղղմավարության իրազորմանը և քանակցող կողմերի առջև դրված նպատակների և խնդիրների իրականացմանը:

4. ՔԱՆԱԿԿԵՐԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՒ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԵԽՍՆԻՉՄԸ

Համատեղ որոշումների ընդունման գործընթացը, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է քաղաքական քանակցությունների կարեւոր բնույթիներից մեկը: XX դարում՝ մասնավորապես նրա երկրորդ կեսում տեղի ունեցած և այժմ էլ լճարացող սոցիալ - քաղաքական փոփոխություններն ու զարգացումները, համերկրային հիմնահարցերի առաջացումը, ահարենքության օրեցօր ահազնացող ալիքը, շրջակա միջավայրի և բնապահպանական աղետների վտանգը, **քաղաքական քանակցությունների հիմնական նպատակն են դարձնում համատեղ որոշումների ընդունումը**: Ահա թե ինչո՞ւ է կարեւորվում որոշումների ընդունման եղանակների, տեսակների քննարկումն ու դրանց վերլուծությունը քաղաքական քանակցությունների գործընթացի համատեքստում: Այն, թե քանակցություններում ինչպես և ինչ մերողներով են մշակվում համատեղ որոշումները, որոշումների ինչպիսի տեսակներ և ինչ եղանակներ գոյարձյուն ունեն այդ գործընթացի արյունավետությունը քարձրացնելու համար, բանակցությունների տեսության համար առանցքային նշանակություն ունեն: Նման մոտեցումը պայմանավորված է նաև քաղաքական գիտության արյունավազներով և քաղաքական որոշումների ընդունման գործընթացի նկատմամբ առող հետաքրքրությամբ:

Քաղաքական քանակցություններում որոշումների ընդունման գործընթացը լրացնորդվում է յուրավի: Նախ, պետք է նշել, որ քաղաքական քանակցությունները հանդիսանում են համատեղ որոշումների նախապատրաստման և/կամ լրացնման եղանակներից մեկը: Քաղաքական քանակցություններում կարսղ են ընդունվել ոլոշումների տարրեր տեսակ-

42 «Իրավունք», N 17, 1998թ., էջ 2:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Աեր: Սա թույլ է տալիս կարծելու, որ **որոշումների ընդունման գործընթացում քաղաքական բանակցությունները կարող են լինել այդ գործընթացի իրականացման եղանակներից մեկը, իսկ քաղաքական բանակցությունների գործընթացում հնարավոր են որոշումների ընդունման տարրեր ձևեր**, որն իր հերթին ընդգծում է քաղաքական բանակցությունների և որոշումների բնույթնան գործընթացի փոխադարձ կապն ու ընդհանուրությունը:

Ընդհանուր առմամբ, քաղաքական բանակցություններում ընդունված որոշումները կարող են ինձվել երկու կիմնական մոտեցումների վրա, որոնք հատկապես ցայտուն ի հայտ են զայխ հակամարտությունների կարգավորմանն ուղղված քաղաքական բանակցություններում:

Դրանցից առաջինն ուղղված է գոյություն ունեցող հակամարտության կամ հակասության բուլացմանը, հարթեցմանը և մարմանը, ըստ այլմ էլ, այդ դեպքում խոսքը զնում է. **հակասության կարգավորման մասին (settlement)**, իսկ երկրորդ մոտեցումը վերաբերում է հակամարտության կամ հակասության հաղթահարմանը և **հակասության աղբյուրի վերացմանը (resolution)**:

Հանակցությունների օգնությամբ հակասության հաղթահարումը և լուծումը գերադասելի է, քանի որ այն, որոշ առումով վերացնում է լարվածության աղբյուրը: Ընական է, քաղաքական բանակցություններում ոչ միշտ է հնարավոր լինում ամբողջովին վերացնել կողմերի միջև առկա տարածայնություններն ու հակասությունները, որոնց կարգավորումն այդ դեպքում թույլ է տալիս խոսափել բռնության կիրառումից և հանդիսանում է տվյալ իրավիճակի հալթահարման առաջին քայլը:

Որոշումների ընդունման տարրեր եղանակները, որոնք իրազործվում են քաղաքական բանակցությունների ընթացքում, պայմանավորված են մի շարք գործուներով՝ շահերի հարաբերակցությամբ, բանակցությունների նկատմամբ կողմերի մոտեցումներով, նրանց ընտրած ռազմավարությամբ, բանակցությունների օրինակով և այլն: Որոշումների ընդունման այս կամ այն եղանակի կիրառումը քաղաքական բանակցություններում կախված է նաև բանակցությունների կիմքում ընկած մոտեցումներից, որոնք կարող են ձևավորվել կամ մրցակցային, կամ էլ հիմնահարցի համատեղ վերլուծության, այսինքն, համատեղ որոշումների ընդունման հիմքի վրա:

Միջակցային վարքագիծն իր հերթին ենթայրում է որոշումների ընդունման «առևտությի» եղանակի կիրառում: Որոշումների ընդունման «առևտությային» տարբերակը բանակցություններում ենթայրում է նվազա-

գույն զիջումների լիմաց՝ որքան հնարավոր է շատ օգուտներ: Շատ հաճախ կողմերը առաջ են քաշում առավելագույն պահանջների և յիշենց դիրքորոշումը ծևակերպում այդ իմբրի վրա, բանակցությունների ընթացքում, «առևտրի» միջոցով որոշ ոչ էական հարցերից իրաժարպելով՝ որպես զիջումներ անելու պատյաստակամություն: Այն պնդումը, որ բանակցությունները առևտուր են, բոլորովին նոր չէ. դարձնի շարունակ, հատկապես միջազգային հարաբերությունների ասպարեզում, բանակցությունների՝ որպես առևտրի ըմբռնումը տիրապետող է եղել: «Դուք առաջարկում եք ինչ-որ բան, ձեզ առաջարկում են ուրիշը. և դոք, վերջին հաշվով, համաձայնության եք գալիս: Ահա և ամբողջ իմաստությունը⁴³»: Բանակցությունների վերաբերյալ, ժամանակին, նման կարծիք է արտահայտել ֆրանսիացի քաղաքական գործիչ Լավալլի 1935թ. գեներալ Սուստինիի հետ բանակցությունների ընթացքում:

Առևտուրը նույնպես համատեղ որոշումների ընդունման եղանակներից է, որի օգնությամբ երկու կամ ավելի մասնակիցներ համաձայնության են գալիս՝ փոխարացնելով միմյանց: Դատական գործրնբացը, արբիտրաժը կամ էլ պատահականության վրա հիմնված որոշումները առևտուր չեն: Առևտուրը հենվում է փոխադարձության սկզբունքի վրա՝ **«որութիւններից են բեղած, եւ քեզ» (quid pro quo)**:

Քաղաքական առևտուրը նույնպես Հայաստանի քաղաքական կյանքում լայնորեն կիրառվող համատեղ որոշումների ընդունման եղանակներից է, սակայն միանշանակ չէ վերաբերմունքը այդ եղանակի կիրառման վերաբերյալ: Օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ակտիվ մասնակցություն ունեցած Ռուսաստանի նախագահի անձնական ներկայացուցիչ Վլ. Կազիմիրովն իր հարցադրույթներից մեկում նշել էր, որ բանակցություններում ավելի լուրջ առաջընթաց կարելի էր գրանցել, եթե բանակցության սուբյեկտները կարողանային առևտուր անել: «Սակայն կողմերը առաջմ չեն սովորել առևտուր անել և մնում են իրենց ծայրահեղական դիրքերում», - նշել էր նա⁴⁴: Վլ. Կազիմիրովն այն կարծիքին էր, որ «Ալյոբեջանը, Հայաստանը և ԼՂՀ-ն փորձում են գործերն այնպես առաջ տանել, ասես հնարավոր լինի արդեն այդ առաջին քաղաքական համաձայնագրի իմբան վրա (ինդինակը նկատի ունի «Քիշքերյան արձանագրության կնքումից հետո համապարփակ քաղաքական հմասայնագրի շուրջ տարբող բանակցությունները-Խ.Գ.) լուծել հակամարտության բոլոր հարցերը: Դա խե-

43 Կովալև Ան. Ազбука дипломатии. М., 1988. с. 240.

44 «Ազգ», N 106 (608), 1994թ., էջ 2:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պյառականական)

ալական կլիներ. եթե իրատեսական լիներ», կարծում է հեղինակը և նշում, որ «կողմերն առաջժմ չեն հասել այն մակարդակին, որ կարողանան խսկալեն փոխզիջումային բանակցություններ վարել և սկսել առևտուր»⁴⁵: Ակնհայտ է, որ հեղինակը նախապատվությունը տալիս է առևտրի եղանակով համատեղ որոշումների ընդունմանը, երբեմն, նոյնացնելով այն փոխզիջումային որոշումների հետ: Հայաստանի ներքաղաքական կյանքից բերվող այս օրինակում, բնդիակառակը, մերժվում է առևտրի եղանակով որոշումների ընդունումը: Ինչպես գիտենք, 1998թ. ընտրական օրենսգրքի ընդունման նախագծի շուրջ ծավալված խորհրդարանական քննարկումները մտան փակուղի: Միասնական նախագիծը պաշտպանող 11 կուսակցությունների և «Երկրապահ» խմբակցության միջն ընթացող բանակցությունները, որին նախաձեռնողն էր ԱԺ նախագահ Խ. Հարությունյանը, անարդյունք էին, քանի որ, ինչպես նշում էր «Երկրապահի» անդամներից մեկը. «Ընդդիմադիմները մեզ առաջարկում են ուղղակի շուկայական առևտուր՝ դուք այս կետում զիջեք, մենք էլ այս կետում կզիջենք: Մինչդեռ նման «առևտուր անելը» բարյական չեն»⁴⁶:

Այսպիսով, բանակցություններում որոշումների ընդունումը «առևտրի» եղանակով հնարավոր է տարբեր կերպ. իրականացնել լրիվ ծավալով սեփական դիրքորոշման կետերը, միաժամանակ, խանգարել հակառակ կողմին՝ իրականացնելու իր դիրքորոշումը: Նման մոտեցման դեպքում կողմերը բանակցություններին մոտենում են ծայրահեղ դիրքերից՝ իաղերի տեսությունում հայտնի՝ «զրոյական գումարով» մերոդի համաճայն:

«Առևտրի» եղանակի դրսնորման երկրորդ ձևը հենվում է խաղերի տեսության «կիռփախական գումարով» մերոդի վրա, որտեղ կողմերից մեկի դիրքորոշումները և դրանց ենող քայլերը կախված են հակառակորդի քայլերից. այս դեպքում բանակցությունների յուրաքանչյուր սուրյեկտ կրում է կորուստներ, միաժամանակ ստանալով նաև որոշակի օգուտներ:

Վերը նշված եղանակից սկզբունքորեն տարբերվում է որոշումների ընդունման «հիմնահարցի համառեղ վերլուծության» եղանակը, որն աղյուսակ է ոչ թե դիրքորոշումների, այլ շահերի վերլուծությանը: Այն ենթադրում է դիրքորոշումների քննարկումից անցում դրանց հիմքում ընկած շահերի վերլուծությանը, որը ենթադրում է նաև քննարկումների բա-

45 «Ազգ», N 74 (827), 1995թ., էջ 1:

46 «Հայաստանի Հանրապետություն», N 221 (1648), 1998թ., էջ 1:

Քանակցային որոշումների բնույթը և ընդունման մեխանիզմը

փանցիկություն և իրապարակայնություն: Այս դեպքում արդեն մասնակիցները փորձում են մանրակրկիտ վերլուծել միմյանց շահերը՝ այդ գործընթացին ներգրավելով անկախ փորձագետների, միջնորդների և այլն: Համատեղ վերլուծության եղանակով ընդունված որոշումն ավելի ամուր է, քանի որ կողմերի միջև կարող է հաստատվել փոխադարձ վստահություն, որի արդյունքում բացառվում է միմյանց խարելու հնարավորությունը: Հիմնահարցի համատեղ վերլուծության եղանակով որոշումների ընդունումն իր առավելությունով հանդերձ, պարունակում է որաշակի բարության ներք հատկապես ազգամիջյան, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման ժամանակ, որտեղ հակամարտությունների կողմէն գործողությունները պայմանավորված են հիմնականում մրցակցային վարքագծով, որի պարագայում բանակցությունները շարունակվում են հակամարտության պահպանման պայմաններում:

Որոշումների ընդունման եղանակներից բացի բանակցությունների նախապատրաստական փուլում կիրառվում են նաև հնարավոր որոշումների նախապատրաստման տարբեր մեթոդներ:

Զաղացական բանակցություններում որոշումների ընդունման մեխանիզմը ավելի հստակ պատկերացնելու համար, նախ և առաջ, կարելի է վերլուծել որոշումների նախապատրաստման մի քանի մեթոդներ, որոնք կիրառվում են հիմնականում բանակցությունների նախապատրաստման փուլում, նպատակ ունենալով օգնել վերջնական որոշումների ընդունման գործընթացին:

Դրանցից մեկը նկարագրում են ամերիկյան հետազոտողներ Ռ. Ֆիշերն ու Ու. Ուրիմ՝ անվանելով այն «քալանսային թերթիկներ»: Այս մեթոդի կիրառման ժամանակ թերթիկի վրա առաջարկվում են որոշումների հնարավոր տարբերակներ, իսկ դրանց դիմաց՝ կողմերի համար հնարավոր դրական և բացասական հետևանքները, որոնք կարսդ են դրսեարգել որևէ տարբերակի ընդունման ժամանակ: Փաստորեն, «քալանսային թերթիկը» օգնում է որոշակի պատկերացում կազմել այս կամ այն որոշման նկատմամբ կողմերի ունեցած վերաբերմունքի, ինչպես նաև դրանց ընդունման հետ կապված՝ հնարավոր հետևանքների մասին:

Որոշումների ընդունման նախապատրաստման մեթոդներից է «առղեղնային գրանք», որն ուղղված է լինում, ի տարբերություն «քալանսային թերթիկի», ոչ թե որոշումների գնահատմանը, այլ ավելի շատ նոր հնարավոր որոշումների տարբերակների առաջարկմանը: Այն ենթադրում է

47 Fisher R., Ury W. Getting to Yes: Negotiating Agreement Without Giving In. Boston. 1991. p. 104.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

որոշումների կոլեկտիվ նախապատրաստում, որի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվում առաջարկելու առավելագույն քվով որոշումների տարբերակներ, ընդ որում, բոլոր առաջարկները ցանկալի է գրառվեն, իսկ դրանց անմիջական քննարկումը նպատակահարմար չէ, քանի որ, քննադատությանը հոգեբանական անպատրաստակամուրյունը կարող է բույլ չտալ, որ քննարկվեն բավականին հեռանկարային առաջարկներ: «Ուղեղային գրոհը» կարելի է կիրառել նաև որոշումների տարբերակների գնահատման ժամանակ՝ համանման կարգով: Հնարավոր են նաև որոշումների գնահատման այլ մեթոդներ, մասնավորապես՝ գանգվածային, փորձագիտական հարցումները և այլն:

Վերը նշված մեթոդներն օգտագործվում են հիմնականում բանակցությունների նախապատրաստական փուլում՝ հնարավոր որոշումների տարբերակի մշակման և դրանց քննարկման ժամանակ: Համատեղ որոշումների մշակման մեթոդներից բացի, բանակցություններում ընդունված որաշումները, ըստ բովանդակության կարող են լինել տարբեր տեսակի: Բանակցությունների սուբյեկտների շահերի ընդհանրությունն ու տարբերությունը, նախ և առաջ, ենթադրում են փոխզիջման հնարավորություն, երբ կողմերը գնում են երկկողմանի գիշումների: Ըստ այդմ էլ, **«փոխզիջումը»** կարելի է համարել բանակցային որոշման առաջին տեսակը: Մ. Մեսկոնի կարծիքով, «փոխզիջումը» արժեքային, նպատակային տեսանկյուններից այնպես պետք է հավասարակշոր բանակցային կողմերի հնարավորությունները, որ յուրաքանչյուրին այն քվա առավելագույն սպասվելիք որոշումից վատը⁴⁸: Ամերիկան հեղինակ Ու. Լինկոլնը գտնում է, որ «Փոխզիջումը ենթադրում է, որ կողմերը մինչև որոշակի աստիճան գնում են դեպի փոխադարձ զիշումներ»⁴⁹: Նրա համար փոխզիջման բանաձևը հետևյալն է: «Որպեսզի մեզնից յուրաքանչյուրը ինչոր բան ստանա, պետք է համապատասխանաբար ինչ-որ բան տա»⁵⁰: Չնայած նրան, որ փոխզիջման արդյունքը գրեթե միշտ կողմերի մոտ որոշակի անբավարարվածություն կարող է բողնել, այնուամենայնիվ, բանակցային որոշման այս տեսակին շատ հաճախ են դիմում: Հակամարտությունների կարգավորմանն ուղղված բանակցությունների մեծ մասում ընդունվում են հենց փոխզիջումային որոշումներ, այդ իսկ պատճառով բանակցային որոշման այս տեսակի մասին շատ են հետազոտու-

48 Տես Մесկոն Մ. և արք. Основы менеджмента. Մ., 1992. с 198.

49 Լինկոլն Ս. Переговоры. С. П. 1998. с. 28.

50 Նույն տեղում, էջ 29:

Բանակցային որոշումների բնույթը և ընդունման մեխանիզմը

քյունները, և այն համեմատաբար լավ է մշակված մասնագիտական գրականության մեջ։ Մասնավորապես, բավականին տարածված են փոխազդումային որոշումների նախապատրաստման և/կամ ընդունման մաքեմատիկական մեթոդները (օրինակ՝ Պարբեռույի սկզբունքը⁵¹)։ Փոխազդումային որոշման հեշտ է հասնել հատկապես այն ժամանակ, երբ առկա են փոխազդուման համարժեքությունն արտահայտող օբյեկտիվ չափանիշներ։ այդ դեպքում երկկողմանի արված զիջումները ներկայացնելով քանակական չափանիշներով, կարելի է որոշել դրանց համարժեքությունն ու այդ իմքքի վրա՝ «միջին» որոշման լնդրունումը։ Օրինակ՝ առևտրական քանակցություններում նման քանակական չափանիշ կախող է լինել տվյալ պահին շուկայում հաստատված գների մակարդակը, որի շուրջ կարելի է նման քանակական առումով հավասար գլուխուններ անել առավելագույն և նվազագույն գների միջև՝ լնտրելով գների միջևն սանդղակը։ Սակայն, քաղաքական քանակցություններում նման «միջին» մակարդակի որոշման լնդրունումը բարդ է, որտեղակի պայմաններում նույնիսկ անհնար, քանի որ, ինչպես հայտնի է, քաղաքականությունը և դրա հետ կապված՝ քաղաքական քանակցությունների օբյեկտը չափումների դժվար ենթարկվող երևոյթներ են։ Պրակտիկայում նման իրավիճակներ են առաջ գալիս, իմնականում, քանակցային սուբյեկտների փոխհարաբերաւթյուններում, երբ տարբեր հարցերի նկատմամբ տարբեր շահագրգովածություններ հնարավորություն է տալիս այս պարագայում գտնելու շահերի արտահայտման և պահանջմունքների բավարարման փոխազդումային որոշում, որը սակայն, չլի նշանակում, որ «միջին» որոշումը վերաբերում է մասնակիցների սկզբնական լիրքորություններին։ Այս կապակցությամբ Ու. Լինկոլնը նշում է, որ, ընդհակառակը, «...չնայած քանակցաղ կողմերի լիրքորոշումները կարող են փոխազդման առարկա դառնալ, ապա այդ անհնար է սկզբունքների դեպքում, ինչպես նաև սխալ է այն պնդումը, որ քանակցությունների արվեստը կայանում է փոխազդման հասնելու մեջ»⁵²։ Մի դեպքում խոսքը գնում է այն մասին, որ լիրքորոշումները չեն, որ պետք է փոխազդման առարկա լինեն, քանի որ քանակցային պյակտիկան ունի հարուստ մարտավարական հնարների փարձ, որտեղ կարող են կիրառվել նման մոտեցման դեպքում (այդ մասին մանրամասն նկարագրված է նախորդ քաժնում), մյուս դեպքում նշվում է, որ եթե փոխազդում հնարավոր է, ապա միայն դիրքութ-

51 Այդ մասին տես՝ **Լեbedeva M.M.** Политическое урегулирование конфликтов. М., 1999. сс. 56-93.

52 **Линкольн У.** Переговоры. СПб. 1998. с. 34.

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ումների հարցում, այլ ոչ թե սկզբունքների: Այս դիխոտոմիան որոշակի առումով, վերաբերում է նաև բանակցության սուբյեկտների արժեքներին: «*Սահմանային արժեքների*» շուրջ, բնականաբար, փոխազդում հնարավոր չէ. այդ արժեքները կամ գերակայում են կողմերի դիրքորոշումներում և պաշտպանվում կամ էլ հակառակ դեպքում նրանց մրցում են զարգացնելու իրենց ԲՈԼԱ-ն: Խոսքը վերաբերում է հատկապես երկարատև հակամարտությունների կարգավորման գործընթացներին, մասնավանդ, երբ բախման առարկան է բնիկական, ազգային հիմքեր ունի: Հակամարտող սուբյեկտների համար այս դեպքում, որպես փոխազդման առարկա կարող է ընկալվել իրենց սեփական կամ խմբային ինքնության զգացումը: Նման դեպքերում, որպես կանոն, փոխազդման «զիջման» մասը ավելի լրջորեն և ցավագին է ընդունվում, քան «ձեռք բերված» կողմը: Երբ վեճի առարկան այդպիսի արժեքներ են լինում, հակառակորդի լեզիտիմության ընդունման փաստը հաճախ ընկալվում է որպես սեփական շահերի դավաճանություն կամ լավագույն դեպքում անտեսում: Դրանով, թերևս, կարելի բացատրել աղյօնքանական իշխանությունների դժկամությունը ՀՀ-ի հետ ուղղակի բանակցային հարաբերությունների մեջ մտնելու առիվի:

Փոխազդման միջոցով «միջին» որոշման ընդունումը և դրամով իսկ, դիրքորոշումների մերձեցումը բանակցությունների ընթացքում ընդունվող որոշումների միակ տեսակը չէ: Որոշումների ընդունման մյուս տեսակը քաղաքական բանակցություններում կարող է լինել **«Ակզրություններ»** կամ **ինովացիոն-նորարարակական** որոշման ընդունումը, որը հնարավոր է տվյալ հիմնահարցի շրջանակներից դուրս գալով՝ ներառելով այն ավելի գլոբալ հիմնահարցերի մեջ, կամ էլ շահերի վերլուծության օգնությամբ կողմերից որևէ մեկի հայացքների, տեսակետների, դիրքորոշման վերանայման միջոցով: Այս դեպքում հնարավոր է հիմնախնդրի տեղափոխում մի նոր հարթություն, որն էականորեն կարող է ազդել հակամարտության հիմքում ընկած հակասության նկատմամբ բանակցային սուբյեկտների վերաբերմունքի և դիրքորոշման վրա: Նման փոխակերպում կարելի է նկատել նաև Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի հետագա զարգացման համատեքստում՝ կապված Հայաստանի և Աղյօնքանի Եվրոխորհրդին միաժամանակյա անդամակցության փաստի հետ (ավելի մանրամասն տես՝ Գլուխ 3):

«Ակզրություններ» որոշման ընդունումը ենթադրում է նաև բանակցությունների օբյեկտի նկատմամբ հաշվենկատ մոտեցում, երբ կողմերի սկզբնական դիրքորոշումները սկսում են ոչ համարժեք կերպով արտա-

Քանակցային որոշումների բնույթը և ընդունման մեխանիզմը

ցուել իրական նոր շահերը, իմնահարցի լնկալումն ու նոր արժեքները, ինչպես, օրինակ՝ համերկրային հիմնահարցերի առաջացումը ստիպեց համաշխարհային հանրությանը, միջազգային քաղաքականության սուբյեկտներին հիմնախնդիրների կարգավորման նոր մոտեցումներ մշակել՝ եներով ընդիանուր ուժերով համերկրային հիմնախնդիրներին դիմակայելու սկզբունքից:

Որոշումների մյուս տեսակը, որ կարող է կիրառվել քաղաքական քանակցություններաւմ, «անհամաշափ» որոշումն է: Վերը նշված նախորդ որոշման տեսակները հիմնվում են գլխումների համաշափության և շահերի հավասարաշափ բավարարման սկզբունքներից վրա, սակայն, եթե կողմերի միջև հնարավոր չի լինում նման որոշումներ ընդունել, կիրառվում է «անհամաշափ» որոշման տեսակը: Այս դեպքում կողմերից մեկի արված գլխումները զգալիորեն գերազանցում են մյուսի գլխումներին:

Որոշումների «անհամաշափություն» նկատվում է կապիտուլյացիայի ստորագրմանն ուղղված քաղաքական քանակցությաններաւմ: Նման որոշում կարող է ընդունվել մրցակցային նոտեցման առկայության դեպքում, կիրառելով «սկզբունքային առևտորի» եղանակը: «Անհամաշափ» որոշման ընդունումը, եթե նույնիսկ հակառակորդի վլիքերը թույլ են, հիլի է համաձայնագրի հետագա իրականացման խօման վտանգով, քանի որ կարող է դիտվել որպես հարկադրված քայլ: Նման «անհամաշափ» քանակցային որոշման տարբերակ առաջարկվեց նաև Ռամբուեյում ընթացող քաղաքական քանակցությունների ժամանակ հարավսլավական կողմին՝ Կոստոյի ճգնաժամի կարգավորման վերաբերյալ: Այդ որոշման նախագիծը մշակվել էր առանց հակամարտող մյուս կողմի (տվյալ դեպքում առանց սերբական կողմի) մասնակցության, որն էլ ավելի յուրացրեց հակասությունները և, ի վերջո, հանգեցրեց ՆԱՏՕ-ի կողմից Հարավսլավիայի դեմ լայնածավալ ուազմական գործադրությունները:

Քանակցային որոշումները կարող են դասակարգվել նաև ըստ իրենց փաստարիքային ծևակերպման: Այդ իմքով, ընդիանուր առմամբ, առանձնացվում են քանակցային հետևյալ որոշումների տեսակները⁵¹:

1. պայմանագիրը քանակցային որոշման տեսակ է, որում հիմնականում ամրագրվում են քանակող կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված քանակցության առարկայի հետ: Պայմանագրերը մեծամասամբ իրենցից ներկայացնում են իրավական փաստարիքեր:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

2. **Պակտը** բանակցային պրակտիկայում, հատկապես միջազգային բանակցությունների համատեքստում հաճախ հանդիպող փաստաթղթերից է, որի հիմնական նպատակը փոխադարձ երաշխիքների ապահովումն ու համաձայնեցված գործողությունների իրականացումն է (օրինակ՝ Ռիբենտրոպ-Մոլոտով պակտը, Հարավային Կովկասի կայունության պակտը և այլն):

3. **Կռնչենցիան** իրենից ներկայացնում է իրավունքի, տնտեսության կամ վարչարարության առանձին հարցերին նվիրված պայմանագիր: Այդպիսին են, օրինակ՝ Դիվանագիտական ծառայության Վիեննայի Կոնվենցիան, մաքսային, փոստային կոնվենցիաները և այլն:

4. **Հոչակագիրն**, ըստ էության, այնպիսի բանակցային փաստաթուղթ է, որտեղ, որպես կանոն, ամրագրված են լինում բանակցային կողմերի հոչակած հիմնական սկզբունքները, հայտարարություններն ու մտադրությունները:

5. **Հուշագիրը** պատկանում է դիվանագիտական փաստաթղթերի շարքին, որում մանրամասն ներկայացված է լինում դիվանագիտական թրամադրության առարկա հանդիսացող հարցը: Հուշագրում նշվում է նաև բանակցություններում կողմերի միասնական վարքագծի որդեգրման, բանակցության առարկայի նկատմամբ ընդհանուր մոտեցումների մասին:

6. **Արժանագրությունը** բանակցային այնպիսի փաստաթուղթ է, որը կարծ ու կոնկրետ ծևակերպմամբ ամրագրում է այն համաձայնությունը, որը ծեռք է բերվել բանակցային կողմերի միջև առանձին հարցի վերաբերյալ, կամ էլ լրացուցիչ մեկնաբանություն ու բացատրություն է պարունակում տվյալ խնդիր շուրջ:

7. **Համաձայնագիրը** որոշակի ժամանակային կտրվածքով կամ էլ փոքրաթիվ հարցերի շուրջ ծեռք բերված պայմանավորվածության արդյունք է, որը կնքվում է ոչ երկար ժամանակով (օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում ստորագրված Հրադադարի համաձայնագիրը): (Բանակցային փաստաթղթերի նմուշները տես՝ Հավելված 1):

Ընդհանրացնելով որոշումների ընդունման մեխանիզմի դրսևորման առանձնահատկությունները քաղաքական բանակցությունների ընթացքում, ընդհանուր առմամբ, կարելի է նշել բանակցություններում կիրառվող որաշումների հետևյալ տեսակները. 1. «**Ամփոփին**» կամ փոխազդումային

որոշում, 2.«սկզբունքորեն նոր» կամ ինովացիոն-նորարարական որոշում, 3.«անհամաշափ» կամ ասխմատիկ որոշում: Որոշումների լնդունան եղանակներից կարևոր է առանձնացնել «սկզբունքային առևտություն» և «հիմնահարցի համատեղ վերլուծության» եղանակները, որոշումների նախապատրաստման մեթոդներից՝ «բազանային թերթիկները», «ուղեղային գրուիր», փորձագիտական հարցումները և այլն: Փաստաբարային ծևակերպման առումով առանձնացվում են պայմանագիրը, պակտը, կրնվենցիան, հոչակագիրը, հուշագիրը, արձանագրությունը, համաձայնագիրը և այլն: Վերը նշվածի ամբողջությունն է, բայց էության, կազմում է որոշումների ընդունման մեխանիզմը քաղաքական բանակցություններում:

5. Բանակցության մշակույթը ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ՔՍՊԸՆԿՍՆ ԿԵՍԱՔՈՒՄ

Բանակցությունների լայն կիրառումը քաղաքական բնույթի հակսությունների հաղթահարման և հակամարտությունների կարգավորման, քաղաքականության սուբյեկտների միջև երկխոսության և համագործակցության իրականացման լավագույն ուղիներից է, որը մեծապես պայմանավորված է հասարակության քաղաքական համակարգի բնույթով, քաղաքական մշակութով, քաղաքակրթվածության մակարդակով և քաղաքական հասունությամբ ընդիմանրապես:

Նախակին Խորհրդային Մլության ամբողջատիրական վարչակարգի պայմաններում քաղաքական բանակցությունների կիրառման ոլորտը սահմանափակված էր միայն միջազգային, միջազնութական փոխհարաբերությունների շրջանակներով, իսկ ներպետական հարաբերություններում բանակցությունների կիրառումը բացառվում էր: Այլ բնույթի բանակցություններ, բնական է, այսպես քեզ այնպես, տեղի էին ունենում, այն էլ խիստ սահմանափակ շրջանակներում: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ վարչական համակարգի առկայության պայմաններում նվազագույնի էր հասցված ինչպես իշխանության տարբեր սուբյեկտների, այնպես էլ հասարակական-քաղաքական ուժերի կամ էլ տնտեսավարող սուբյեկտների միջև բանակցությունների հնարավությունը: Իշխանության համակարգում հստակ գործող «հրաման-ենթարկում» կառուցակարգը գործնականում չէր նախատեսում քաղաքականության սուբյեկտների միջև շահերի համաձայնեցման այլ եղանակներ: Իշխանության չափից դուրս կենտրոնացված և հիերարխիկ կառուցվածքը

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

անհնար էր դարձնում որևէ հորիզոնական փոխհարաբերություն ինչպես իշխանական կառույցների, այնպես էլ իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի միջև:

Խորիրարարության Միուրյան փլուզումից հետո Հայաստանը նույնպես, նախկին սոցիալիստական ճամբարի շատ երկրների նման, բռնեց անկախ պետականության և ժողովրդավարական հասարակության կերտման քայլ ու դժվարին ուղին: Նոր պայմաններում արդեն, ժողովրդավարական գործընթացներին զուգահեռ, էապես մեծանում են քաղաքական բանակցությունների կիրառման հնարավորությունները՝ ընդգրկելով և արտաքին քաղաքականության և ներքաղաքական հարաբերությունների ոլորտն ամբողջությամբ: Բանակցություններն այսօր հանդիսանում են ժողովրդավարական ինստիտուտների ծևավորման և դրանց բնականոն գործառնության, պառլամենտարիզմի ամրապնդման, իշխանության տարրեր ճյուղերի միջև համագործակցության ապահովման, իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի միջև քաղաքական երկխոսության հաստատման կարևոր մեխանիզմներից նեկոր: Դա հիմք է տալիս հավաստելու, որ զանազան իշմանհարցերի լուծման նպատակով քաղաքական բանակցությունների լայն կիրառումը Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքի ժողովրդավարեցման գործընթացներին նպաստող կարևոր գործուներից մեկը կարող է հանդիսանալ, քանի որ, անժխտելի է, թերևս, բանակցությունների դերի աճող նշանակությունը մեր հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում:

Հայաստանի նոր քաղաքական համակարգի ծևավորման գործընթացին զուգահեռ, քաղաքական բանակցությունները՝ որպես քաղաքականության սուրյեկտների միջև համատեղ որոշումների մշակման և/կամ դրանց ընդունման եղանակ, իրենց կիրառումն են գտնում քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: Այս անվերապահ փաստի կարևորությունը ցույց տալու համար ուշադրություն դարձնենք Հայաստանի քաղաքական կյանքում բանակցությունների կիրառման կամ չկիրառման դեպքերի, հանրապետության քաղաքական համակարգի ժողովրդավարեցման կամ «կոնսոլիդար դեմոկրատիայի» հաստատման գործընթացների վրա դրանց ունեցած ազդեցության վերաբերյալ հարցերին: Այս տեսակետից քաղաքական բանակցությունների տեղն ու դերը Հայաստանի քաղաքական կյանքում որոշելու համար ուսումնասիրման առավել նպատակահարմար եղանակ է ընտրվել փորձագիտական հարցման մերողը, քանզի այս իհմնահարցի վերաբերյալ համակռողմանի տեղե-

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

Կատվության ստացման և վերլուծության առումով բանակցային գործընթացների անմիջական մասնակիցների և այդ իշխանակարգով գրադպուտ տեսարանների կարծիքները շատ կարևոր ու արժեքավոր կարող են լինել: Փորձագետների շրջանակն ընտրվել է ճնակույտի մերություն: Հարցմանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության վերջին տասը տարիներին քաղաքական բանակցություններին ներգրավված մայլիկ, քաղաքական և կուսակցական գործիչներ, պետական և դիվանագիտական գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև այս ոլորտում գրադպուտ տեսարաններ: Փորձագիտական հարցումն անց է կացվել երկու տեխնիկաների կիրառմամբ, մի դեպքում՝ հարցարերթիկային հարցման (տես հավելված 2), մյուս դեպքում՝ որակական (խորացված հարցազրոյցի օգնությամբ մեկնարանվել են կոնկրետ պատասխանները) վերլուծությունների օգնությամբ*:

Այսպիսով, փորձագետների մեծամասնությունը այն կարծիքին է, որ Հայաստանի Հանրապետության վերջին տասնամյա պատմոթյան լնքացրում քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերություններում դեռևս գերիշխաղ է մնում նրանց միջև առնակառումը և պրոլեմների անտեսումը (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ-ում քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերություններում գերիշխաղ մոտեցումները.

Քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերությունները

1. առնակառում

2. պրոբլեմների անտեսում

3. պրոբլեմների համատեղ վերլուծություն

4. քաղաքական համաձայնություն

5. կոմպրոմիսներ

Պատասխանների տոկոսային հարաբերությունները

45%

40%

--

5%

10%

* Փորձագիտական հարցման արդյունքները վերլուծվում և ներկայացվում են հարցարերթիկում դրված հարցերի հաջորդականությամբ:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Դա բացատրվում է մի շարք պատճառներով: Նախ և առաջ, այն կապվում է հետխորհրդային ժառանգության հետ: Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ մեր հասարակությունը և քաղաքական համակարգի ձևափորվել և գործառնել են այլ սկզբունքների հիման վրա: Վարչակարգային համակարգն ու իշխանության հիերարխիկ կառուցվացքը, քաղաքական բազմակարծության, ինչպես նաև բազմակուսակցականության բացակայությունը այն հիմնական գործոններն են հանդիսացել, որոնց պայմաններում բացառվում էին քաղաքականության սուրյեկտների միջև այլ տիպի փոխարարերությունները, որոնք հիմնված լինելին հիմնահարցերի համատեղ վերլուծության, քաղաքական համաձայնությունների կամ էլ փոխզիջումների վրա: Իշխանության սուրյեկտների միանձնյա, անսահմանափակ և վերջնական որաշումների ընդունման իրավունքը բույլ էր տալիս կիրառելու «հրաման-ենթարկում» կառուցակարգը, որի պարագայում բացառվում էր որևէ շեղում «որոշում-հրամանից» կամ էլ այլն տրանքային մոտեցում: Քաղաքական ընդդիմության պաշտոնական բացակայությունը, իր հերթին, խոչընդունում էր քաղաքականության սուրյեկտների միջև հաղորդակցական խողովակների հաստատմանը, քանի որ ինքնակալական քաղաքական համակարգում չկային այնպիսի սուրյեկտներ, որոնք կարող էին հանդիս գալ ընդդիմության կարգավիճակով: Մինչդեռ ժամանակակից ժողովրդավարական համակարգերն անհնար է պատկերացնել առանց քաղաքական ընդդիմության ինստիտուտի: Այդ է վկայում նաև արևմտյան ժողովրդավարական ինստիտուտների գարգացման երկարամյա փորձը: Այս կապակցությամբ, ինչպես նշում է Ա. Գլուխովան, «Արևմտյան ժողովրդավարությունները ահավոր գին են վճարել՝ ի դեմս հեղափոխությունների, սոցիալական ցնցումների, պետական հեղաշրջումների, քաղաքացիական պատերազմների, ընդդիմության կարգավիճակի և նրա ազատ ըննադատության, այլն տրանքային քաղաքական կուրսի մշակման իրավունքի համար»⁵⁴: Մյուս կողմից, հեղինակի կարծիքով, այդ իրավունքի ընդունումը հասարակական-քաղաքական լյանքի կայունացման, նրանում սահմանադրական-իրավական հիմքերի ամրագրման կարևոր գործոններից մեկը հանդիսացավ: Այս առումով դրական փոփոխություններ նկատելի են նաև մեզ մոտ, հատկապես՝ Հայաստանի անկախացումից հետո: Նոր պետականության կայացման ժողովրդավարական սկզբունքների հոչակումն ու դրանց հիմքով Հայաստանի քաղաքական

54 Глухова А. В. Политические конфликты: основания, типология, динамика. М., 2000. с. 208.

Քանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

կյանքի կազմակերպումը, բնականաբար, փոխում են իրավիճակը դրական ուղղությամբ, այն առողջով, որ լայն հնարավորություններ են ստեղծվում հասարակական-քաղաքական կազմակերպությունների ձևափորման և նրանց ինստիտուցիոնալացման, իշխանությունների տարանջատման և առանձին ճյուղերի գործունեության օրենսդրական և նորմատիվային այլ իմքերի ամրագրման համար: Հայոց պետականության նորորյա կերտման գործընթացը պատմականորեն դիտարկած, տակավին նոր է սկսվել: Դրա օրգանական մասն է կազմում ազգային օրենսդրության ստեղծումը: Անկախության ճեղքերումից հետո, սահմանադրական բարեփոխումների առաջին փուլը իշխանականում էլեկցիոն էր ոչ էական տեղաշարժերով, որոնք իրականանում էին ԽՍՀՄ իրավաքաղաքական ինստիտուտների և նորմերի շրջանակներում: Սահմանադրապես՝ 1990 թ. հունվարի 11-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդարանը որոշում ընդունեց «ՀԽՍՀ Սահմանադրության 75 հոդվածի փոփոխության մասին», որի համաձայն հանրապետության շահերին վերաբերող խորիրապես՝ 1990 թ. հունվարի 11-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդարանը որոշում ընդունեց «ՀԽՍՀ Սահմանադրության 75 հոդվածի փոփոխության մասին», որի համաձայն հանրապետության շահերին վերաբերող խորիրապես՝ 1990 թ. փետրվարի 13-ին Գերագույն Խորհրդարանը ընդունեց «ՀԽՍՀ Ժողովրդական պատգամավորների լնտրության մասին» օրենքը: Գերագույն Խորիրապես՝ նոր լնտրություններից հետո ծևափորված խորիրապետում ներկայացված հիմնական քաղաքական ուժը դարձավ Հայոց Համագային Շարժումը, որի որբեգործ քաղաքականության հիմնական ուղղությունիշը հանդիսացավ 1990 թ. օգոստոսի 23-ին լնդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: Այդ փաստաբուղը ամրագրում է ազգային պետական շինարարության և հասարակության զարգացման հիմնական սկզբունքների՝ իշխանությունների բաժանման, սեփականության ձևերի հավասարության, խոսքի, խոճի և մամուլի ազատության, քաղաքական բազմակարծության, բազմակուսակցականության հիման վրա նոր հասարակական-քաղաքական կացութածելի կառուցման հայ ժաղավարի հաստատուն կամքը: Այս բոլորը լայն հնարավորություններ ստեղծեց նոր ժողովրդավարական ինստիտուտների ներդրման, համապատասխան օրենսդրական բարեփոխումների համար, որը, ցավոք, ինչպես ԱՊՀ այլ երկրներում, մեզ մոտ նույնպես իրականացավ ոչ այն մակարդակով ու խարությամբ:

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ԱՊՀ երկրների քաղաքական համակարգերի զարգացման հարցերով գրադադարձ նախագահ Ա. Կուրոբովը նշում է. «Երբեմն այդ գծումը (հեղինակը նկատի ունի տեղական էլիտաների կողմից նոր իշխանական կառույցների ձևավորման գործընթացը- Խ.Գ.) ծնում էր չարդարացված իրավական նորարարություններ, այլ երկրների փորձից վերցրած առանձին ինստիտուտների պարզ վերարտադրություններ, զարգացած ժողովրդավարական պետություններին բնորոշ իրավաքաղաքական համակարգի առանձին տարրերի պատճենահանումներ, և այդ բոլոր անցումային հասարակությունների պայմաններում, ինչպիսին հանդիսանում են ԱՊՀ երկրները»⁵⁶:

Այդ առումով, քացառություն չի կազմում նաև Հայաստանի նոր քաղաքական համակարգի կայացման գործընթացը, որը նույնական աշքի է ընկնում անցումային հասարակական-քաղաքական համակարգերին բնորոշ միտումներով: Ինչպես նշում է Մ. Շահգելյյանը, «քազմաքիվ դեալքերային քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային լատենտ մեխանիզմները չեն համապատասխանում ժողովրդավարական այն ինստիտուտներին, որոնք հաճախ ստեղծվում են արևմտութիւն կրկնօրինակով»⁵⁷: Ի մի բերենով Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքական հակամարտությունները, Է. Հարությունյանը նշում է, որ «հայ ժողովրդի գոյության երկատվատության չափը, անցյալի շմարող ցավը և ներկայի առընթեր նատուրալիզմը՝ մեկը պատմական հայրենիքի հիշողությամբ, մյուսը՝ նորաստեղծ պետականության գեր-գործնապաշտ քաղաքականությամբ, իրար դեմ են ելել՝ ազգին տանելով փորձության անհայտները»⁵⁸: Ըստ հեղինակի, երրորդ հանրապետության ստեղծումից հետո, Հայաստանի քաղաքական կյանքում իշխում են գաղափարախոսական քավականին իրարամերթ ու ծայրահեղ մոտեցումներ, որոնք որդեգրվում են մի դեպքում իշխանության, մյուս դեպքում՝ ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից, ընդ որում, նրանց միջև փոխհարաբերությունները աշքի են ընկնում սուր հակադրությամբ: Պետք է նշել, որ իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերությունները ընդհանուր առմամբ, նոր

56 Կործօվ Ա. Նезависимая Армения: взгляд российских аналитиков. // Центральная Азия и Кавказ. 1999/2. с. 98.

57 Շահգելյյան Մ. Իրական և ձևական ժողովրդավարությունը անցումային ժամանակաշրջանի հասարակություններում, // Խաղաղության մշակույթ...միջազգային խորհրդադրության նյութը, Եր., 1999թ., էջ 178:

58 Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., 2000, էջ 171:

Են Հայաստանի քաղաքական պրակտիկայի համար: Այն առաջ եկավ երրորդ հանրապետության անկախության վերականգնման ժամանակաշրջանում և դարձավ անկախ պետականության, ժողովրդավարական հասարակության կառուցմանը նպաստող կարևոր գործոններից և անհրաժեշտ հատկանիշներից մեկը:

Հայաստանի քաղաքական համակարգի ձևավորման գործընթացի առաջին փուլն ընթացավ համապատասխան քաղաքական և իրավական ինստիտուտների ներդրմամբ: Այդ գործընթացը, որը մասնագետները անվանում են նաև քաղաքական ինստիտուցիոնալացում, լայն իմաստով, իրենից ներկայացնում է հասարակության մեջ ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների, սկզբունքների, նորմերի կայուն համակարգի ձևավորման գործընթաց, որը կարգավորում է հասարակության քաղաքական կենսագործունեության ոլորտը: Քաղաքական ինստիտուցիոնալացման առաջին փուլում մեր հանրապետությունում ներդրվեցին այնպիսի կարևոր ինստիտուտներ, ինչպիսիք են նախագահի (1991թ.), պառլամենտի (1995թ.) սահմանադրական օրինականության, բազմակուսակցականության և այլ ինստիտուտները:

Քաղաքական կոնֆիլկտների քաղաքակիրք և խաղաղ եղանակներով կարգավորման կարևոր նախադրյալներից է հանդիսանում հենց նման ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունը քաղաքական համակարգում, որը ապահովում է հակամարտող կողմերի միջև բանակցությունների, խորհրդատվությունների և այլ կարգի ընթացակարգերի կիրառումը: Սակայն այս ամենով հանդերձ, դեռևս, Հայաստանում, փորձագետների կարծիքով, տիրապետող են քաղաքական կոնֆլիկտների կարգավորման ուժային եղանակները, երբ փորձ է արվում հիմնահարցերը կարգավորել ոչ թե բանակցությունների միջոցով կամ էլ իրավական հարթության վրա, այլ ուժի դիրքերից (տես աղյուսակ 2):

Քաղաքական բանակցություններ (տեսաբյուն և պրակտիկա)

Աղյուսակ 2.

ՀՀ-ում քաղաքական հակամարտությունների կարգավորման հաճախ հանդիպող նղանակները

Քաղաքական հակամարտությունների կարգավորման նղանակները	Պատասխանները տոկոսային հարաբերությամբ
1. ուժային եղանակ	55%
2. իրավական-դատական	20%
3. բանակցություններ	15%
4. միջնորդություններ	10%

Ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Հովհաննիսյանը, «Ինչպես քաղաքանության բնագավառում, այնպես էլ հասարակական տարրեր խնդիրների շարք ծավալված երկխոսությունների ու բանակցությունների լրճացրում բավական հաճախ է գործում այսպես կոչված ուժի փաստարկը: Դրա դրսերման սպեկտրը լայն է, սկսած ուղղակի սպառնալիքներից, վերջացրած անցանկալի, տիած հետևանքների մասին նույր ու անուղղակի ակնարկներով»⁵⁹: Մինչդեռ, ինչպես նշում են Ա. Բրուտյանն ու Գ. Բրուտյանը, քաղաքական փաստարկման կանոնների շարքում, հատկապես՝ քաղաքական գործիչներին ներկայացվող առաջնային պահանջներից մեկը պետք է լինի հետևյալ դրույթը: «Ոչ թե ուժի փաստարկմամբ, այլ փաստարկման ուժով» (կանոն 36)⁶⁰: Տիրապետողը, փաստորեն, անհանդուրժողականությունն է քաղաքական ընդդիմության նկատմամբ, երբ ծագած հակասության կամ հակամարտության լուծման միակ եղանակ է ընդունվում բոլոր հնարավոր միջոցներով հակառակորդին ասպարեզից հեռացնելու մարտավարությունը: Այդ մասին, ել ավելի խիստ է արտահայտվում Հ. Շաքարյանը՝ վերլուծելով իայ դեմոկրատական ավանդույթների և Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդարանի գործունեությունը: Ըստ նրա, «Խորհրդարանում հայտնվեց շարքային մահկանացուն՝ իր նույնքան առօրեական պատկերացումներով և սովորույթներով հանդերձ: Գիտական մտածությամբ

59 Հովհաննիսյան Հ., Քաղաքացիական և քաղաքական երկխոսության մշակույթ. համաձայնողական տեխնոլոգիաներ, // Խաղաղության մշակույթ, գիտաժողովի նյութեր, Եր., 1999թ., էջ 199:

60 Բրուտյան Ա., Բրուտյան Գ., Քաղաքական փաստարկման 101 կանոն, Եր., 2003թ., էջ 62:

հայտնի հանդուժականության սկզբունքը իր տեղը զիջեց անհանդուժող, բայց արդեն իրավաստեղ իշխանությամբ օժտված ինքնազո՞ղ ու ինքնարավ ողջախռությանը»⁶¹:

Քանակցությունների ինստիտուտի ներյրումը Հայաստանի քաղաքական կյանքում իրականանում է ժողովրդավարական մյուս ինստիտուտների և լնեացակարգերի հետ գուգահեռ, որի ամրակայման ու քաղաքական կյանքում դերի բարձրացման առունով դեռևս շատ անելիքներ կան: Փորձագետները նշում են, որ մեր երկրում քաղաքական հակամարտությունների բանակցային եղանակներով կարգավորման տեսանկյունից կարևորվում է մի շարք նախադրյալների առկայությունը: Նախ և առաջ, մեր մենքայիտապատճեն կոնֆիկար պետք է ընկալվի որպես նորմայ, այլ ոչ թե բացասական երևոյթ, իսկ հասարակական գիտակցությունը՝ ընդունի նրա լեզվակիմությունը (այսինքն՝ կոնֆիկաների գոյության իրավունք-Խ. Գ.): Երկրույթ կարևոր նախադրյալներից մեկը, որ նշում են փորձագետները, վերաբերում է քաղաքական դիրքորոշումների, եեւ տևարար, նաև ընդդիմության այլնարանքային լինելու փաստի ընդունմանը: Հայաստանում իշխանություն-լնդիլիմություն փոխհարաբերություններում երկու կողմերն էլ առավելագույն կերպով գնում են դեպի հարաբերությունների սրման, փորձերով մյուսին բացառելու սկզբունքի կիրառմանը հասնելու սեփական դիրքորոշումների առավելագույն կերպով իրականացման: Այս կապակցությանը ճիշտ է նկատում Դ. Զերկինը, որ «Ընդդիմությանը բուլացնելու գգտումը ծնում է առճակատման սուր ձևեր, լնդիլուած մինչև բռնություն: Իսկ վերաբերմունքը նրա նկատմամբ որպես համակարգի լեզվակիմ բաղադրատարը, ստեղծում է նախադրյալների ժողովրդավարական կանոնների համաձայն մրցակցային պայքարի համար»⁶²: Այսպես, օրինակ՝ իշխանության գաղուց հետո ՀՀ-ն իիմնականում նման քաղաքական վարքագիծ որպես քաղաքական գործունեության մեջ առաջնորդվելով «ով մեզ հետ չէ, մեր դեմ է» հայտնի սկզբունքով: Չնայած այն հանգամանքին, որ 1990թ.-ից ձևավորված ՀՀ Գերագույն Խորհրդությի ճնշող մեծամասնությունը ՀՀ ներկայացուցակությունն էր (որը, մեր կարծիքով, այն հիմնավոր պատճառներից մեկն էր, որի համար նոր խորհրդարանի ձևավորումը հետաձգվեց մինչև 1995թ.-ը), այնուամենայնիվ, նոր սահմանադրության ընդունման նա-

61 Շաքարյան Հր. Պառլամենտարիզմն իրը մշակութարանական երևոյթ, Եր, 1995թ. էջ 9:

62 Զերկին Դ. Политический конфликт и оппозиция. // Социально политический журнал (социально-гуманитарные знания), 1998., N 6. с. 95.

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

խագծի շուրջ ծավալված խորհրդարանական քննարկումներից սկսած, խորհրդարանում և հասարակական-քաղաքական ուժերի շրջանում ծավալված թե՛ս քննարկումները առիթ հանդիսացան իշխանության դիրքորոշման կոչտացման համար: Նախագահի ներկայացրած սահմանադրական նախագծի կողմնակիցների և ընդդիմադիր թեկի (որը միավորվել էր «Քաղաքացիական համաձայնության» խորհրդում) միջև ծավալված քննարկումները վերաբերում էին երկու կարևոր հարցերի՝ Հայաստանի կառավարման համակարգի ընտրությանը (նախագահական թե պառամենտական) և նրա ընդունման կարգին: Նախագահը առաջարկում էր հանրաքենով ընդունել սահմանադրությունը, մինչդեռ ընդդիմությունը առաջարկում էր այն ընդունել սահմանադիր ժողովում: «Քաղաքացիական համաձայնության» փորձագետներից մեկի՝ Վլ. Նազարյանի դիպուկ քննորոշմամբ, նրանք դեմ էին, որ «վլիրահատությունը կատարեն ոչ թե քիչկները, այլ ժողովուրդն ամբողջությամբ»⁶³:

1994թ.-ի դեկտեմբերին նախագահի հրամանագրով կասեցվեց ընդդիմադիր խոշոր քաղաքական ուժերից մեկի՝ ՀՅԴ գործունեությունը, որից հետո նախագահը պնդեց սահմանադրությունը հանրաքենով ընդունելու հարցը: Իշխանության անզիջում դիրքորոշման մասին է Վկայում նաև նախագահ I.. Տեր-Պետրոսյանի այն հայտարարությունը, որ սահմանադրության հարցում քաղաքական կոմայդումիսների հնարավորությունը և նպատակահարմարությունը բացառված պետք է լինեն:⁶⁴

Հայաստանում քաղաքական քահանաները հատկապես խորանում են ընտրական գործընթացների ժամանակահատվածում: Ընդհանրապես, յուրաքանչյուր երկրում ընտրություններն իրենց մեջ պատենցիալ կոնֆլիկտ են պարունակում: Սակայն, եթե ժողովրդավարական համակարգերում նման կոնֆլիկտները վեր են հանում հասարակության մեջ ծառացած հիմնախնդիրները, իսկ այլընտրանքային ծրագրերի մշակումը նպաստում է առողջ քննադատության և կառավարության կողմից քաղաքական ճիշտ կուրսի իրականացմանը, ապա անցումային փուլ ապրու երկրներում, ինչպիսին հանդիսանում է Հայաստանը, որպես կանոն, ձևավորված ավտորիտար իշխանությունները ցավազին են արձագանքում իրենց հասցեին ուղղված յուրաքանչյուր քննադատության: Հայաստանում իշխանությունների և ընդդիմության միջև փոխհարաբերությունների լարման գագաթնակենտր հանդիսացան 1996թ.-ի նախագահական ընտրաւթյունները, որոնք վերստին հավաստեցին, որ երկրում կառավա-

63 Կործօս Ա. նշվ. աշխ., էջ 99:

64 «Ազգ», 14 հունիսի, 1994թ., էջ 1:

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

լոդ էլիտայի այլընտրանք՝ հանձինս ընդդիմության, ստեղծելու փորձերը կրկին անգամ ենթակա են ճախողման:

Զաղաքականության ոլորտում հակամարտությունների խաղաղ կարգավորման տեսանկյունից, փորձագետների առանձնացրած մյուս կարևոր նախադիմության մեջ մեկը **քաղաքական համակարգի, պետության ներառման** կամ կամքի վարչագործի համընդիմության մասին գործ կամ կամքի վարչագործի գործության, ինչպես նաև քաղաքական կամքի կամքի կարգավորման համար նախատեսված համապատասխան ինստիտուտների և ընթացակարգերի առկայությունն է: Ֆորմալ կանոնների և ընթացակարգերի ստեղծումը, ընդհանուր առմամբ, կարելի է համարել քաղաքական ինստիտուցիոնալացման կարևոր բաղադրատարրերից մեկը, որը օգնում է կարգավորելու հակամարտող սուբյեկտների փոխարքերությունները: Այլ կերպ ասած, խոսքը գնում է «խաղի որոշակի կանոնների մասին», որին հետևում են կոնֆիդենտերում ընգրկված բոլոր կողմերը, և որը բնորոշ է ժողովրդավարական համակարգերին: Ինչպես նշում է Ա. Գլուխովան, «Ժողովրդավարությունը հաստատվում է, եթե հակամարտող քաղաքական ուժերը համաձայնվում են ինստիտուցիոնալ կառույցների շուրջ, որը բույալարում է բաց մրցակցություն և ի զորու տապահովել երկարաժամկետ համաձայնություն»⁶⁵:

Սեր հանրապետության քաղաքական պրակտիկայում իշխանությունների և հասարակական-քաղաքական ուժերի միջև համաձայնեցված նման ինստիտուցիոնալ կառույցակարգերի ստեղծման նախադեպը կարելի է համարել 1998թ. հունիսի 18-ին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված նախագահին առընթեր քաղաքական խորհությունը: Գնահատելով նորաստեղծ քաղաքական խորհրդի և նախագահի խորհրդականների նոր ինստիտուտների դերը Հայաստանի քաղաքական կյանքում, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը նշել էր, որ դրանք ներքաղաքական կայունության ապահովման կարևոր ուղղություններից մեկն են, քանի որ, «երբ ընդդմությունը լրիվ օտարված է իշխանությունից, շատերին բվում է՝ իշխանությունը փակ համակարգ է»⁶⁶: Զաղաքական խորհրդի կազմը քավական ընգրկուն էր և իր մեջ ներառում էր ԱԻՄ, ԵԿՄ, ՀԴԿ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ՀՁԴ, ՀՀԸ, ՍԻՄ, ՀԵԱԽ, ՀՍՈՒՄ, ԳԻԱՔԸ, «Չամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Այդ խորհրդի քարտուղար Հ. Խաչատրյանը նկատել էր, որ «Քաղաքական խորհրդի ստեղծումը Հայաստանում նախադեպ չի ունեցել, ու այն մարդիկ, որոնք վերջին

65 Գլուխօս Ա. նշվ. աշխ., էջ 210:

66 «Հայաստանի Հանրապետություն», 23 հունիսի, 1998թ., էջ 2:

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

տաս տարիներին եղել են քաղաքական ասպարեզում և միմյանց հետ ունեցել են սուր հակադրություններ, ունեցել են նույնիսկ թշնամական վերաբերությունը միմյանց նկատմամբ, այսօր օբյեկտիվորեն պարտադրված են նստելու սեղանի շուրջ և քննարկելու ազգային համաձայնության խնդիրներ: <Հ-ում գործող քաղաքական ուժերը պետք է ի վիճակի լինեն երկրում ստեղծել առանց քացառության բոլոր հոգող հարցերի քաղաքակիր քննարկման մքնուրուտ>⁶⁷

Յափոք, այդ կառույցը ընդամենը մեկամյա կյանք ունեցավ (որն ավելի շուտ մարտավարական խնդիրներ էր լուծում, մինչդեռ կարող էր նաև պետության ներքաղաքական կյանքի առողջացման ուղղավարության մասը կազմել) և լուծարվեց 1999թ. հունիսի 19-ին: Սակայն իր գոյարթյան քեկուզն կարծ ժամանակահատվածում քաղաքական խորհուրդը որոշակի հաջողության հասավ երկրի ներսում միջկուսակցական հարաբերությունների առողջացման և համագործակցության, ինտեգրացման գործընթացների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներուժի օգտագործման և նրանց միջև երկխոսության հաստատման, ընտրություններից առաջ հանդուրժողականության մքնուրուտի ծևավորման առումով:

Իշխանությունների և տարրեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների միջև մշտական կապ ապահովող նման ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունը այսու և քավականին արդյական ու հրատապ է հնչում: **Քաղաքական ինստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետ իրականացման կարևոր կառուցակարգերից մեկն է համայնառում են քանակցությունները:** Մեր հանրապետությունում նույնական քանակցությունները քաղաքական կյանքի տարրեր ոլորտներում իրենց կիրառումն են գտնում: Այն հարցին, թե քանակցությունները որքան հաճախ են կիրառվում քաղաքականության տարրեր ոլորտներում, փորձագետները միահամուն նշում են, որ առավել հաճախ բանակցությունները կիրառվում են արտաքին քաղաքականության ոլորտում՝ որպես միջամտական հարաբերությունների հաստատման և պետությունների միջև համագործակցության ապահովման առավել ընդունելի եղանակ: Այս ոլորտում քանակցությունների արդյունավետությունը գնահատվում է քավարար: Ներքին քաղաքականության ոլորտում քանակցությունների կիրառման հաճախականության վերաբերյալ նշում է, որ իշխանության տարրեր ճյուղերի միջև քանակցություններ հաճախ են տեղի ունենում, իիմնականում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են

67 «Ազգ», 2 հունիսի, 1998թ., էջ 2:

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

խորհրդարանական մեծամասնության կամ կառավարության կազմավորման, պետական բյուջեի ընդունման, տարբեր օրենսդրական նախագծերի համաձայնեցման և դրանց ընդունման հետ կապված հարցերը: Սակայն այս դեպքում բանակցությունները վարփում են ոչ թե հիմնախնդիրների համատեղ և համակողմանի վերլուծության հիման վրա, այլ ուղղակի իրենցից ներկայացնում են ավելի շուտ քաղաքական գործարքներ, որոնց ժամանակ առավել հաճախ կիրառվում է «սկզբունքային առևտորի» մարտավարությունը: Ինչ վերաբերում է ներկայական համարդասության (հասարակական-քաղաքական ուժերի միջև) կամ ենթակարգության հիմքով վարփող քաղաքական բանակցություններին (իշխանություն-ընդդիմություն), ապա այդ տիպի բանակցություններ հազվադեպ են վարփում:

Հասարակական-քաղաքական ուժերի միջև բանակցությունները, զանազան դաշինքների և միարյունների ստեղծումը, որպես կանոն, երկար չեն տևում, իսկ արդյունավետությամբ, առավել ևս, աշքի չեն ընկնում: Ի տարբերություն միջավանդական ոլորտում տարփող բանակցությունների, այդ տիպի բանակցություններն, ըստ փորձագետների, հիմնականում վարփում են ստվերային հիմքով (տես այսուակ 3):

Աղյուսակ 3.

Բանակցությունների վարման հիմքերը.

Բանակցությունների կիրառման ոլորտները			
Միջավանդական բանակցություններ		Ներքաղաքական	
1. իրավական հիմքով	65%	1. իրավական հիմքով	15%
2. ոչ իրավական հիմքով	5%	2. ոչ իրավական հիմքով	20%
3. իրավարակային	20%	3. իրավարակային	5%
4. ստվերային	10%	4. ստվերային	60%

Կանխատեսվում է, որ ապագա խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ «ստվերային բանակցությունները» մեծ թիվ կկազմեն, քանի որ հնարավոր իրավիճակում տարբեր քաղաքական ուժերի՝ հատկապես իշխանամետ քաղաքական կուսակցությունների միջև պայ-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

տաս տարիներին եղել են քաղաքական ասպարեզում և միմյանց հետ ունեցել են սուր հակադրություններ, ունեցել են նույնիսկ թշնամական վերաբերությունը միմյանց նկատմամբ, այսօր օբյեկտիվորեն պարտադրված են նստելու սեղանի շուրջ և քննարկելու ազգային համաձայնության խնդիրներ: ՀՀ-ում գործող քաղաքական ուժերը պետք է ի վիճակի լինեն երկրում ստեղծել առանց քացառության բոլոր հոգող հարցերի քաղաքակիրք քննարկման մքնուրուտ»⁶⁷

Յավոր, այդ կառույցը ընդամենը մեկամյա կյանք ունեցավ (որն ավելի շուտ մարտավարական խնդիրներ էր լուծում, մինչդեռ կարող էր նաև պետության ներքաղաքական կյանքի առողջացման ռազմավարության մասը կազմել) և լուծարվեց 1999թ. հունիսի 19-ին: Սակայն իր գոյարթյան քեկուզն կարծ ժամանակահատվածում քաղաքական խորհուրդը որոշակի հաջողության հասավ երկրի ներսում միջկուսակցական հարաբերությունների առողջացման և համագործակցության, ինտեգրացման գործընթացների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներուժի օգտագործման և նրանց միջև երկխոսության հաստատման, ընտրություններից առաջ հանդուրժողականության մքնուրուտի ծևափորման առումով:

Իշխանությունների և տարբեր հասարակական-քաղաքական կազմակերպությունների միջև մշտական կապ ապահովող նման ինստիտուցիոնալ մեխանիզմների առկայությունը այսու և բավականին արդիական ու իրատապ է հնչում: **Քաղաքական ինստիտուցիոնալացման գործընթացի արդյունավետ իրականացման կարևոր կառուցակարգերից մեկն է համայնքային և քանակցությունները:** Մեր հանրապետությունում նույնական քանակցությունները քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում իրենց կիրառում են գտնում: Այն հարցին, թե քանակցությունները որքան հաճախ են կիրառվում քաղաքականության տարբեր ոլորտներում, փորձագետները միահամուռ նշում են, որ առավել հաճախ բանակցությունները կիրառվում են արտաքին քաղաքականության ոլորտում՝ որպես միջամտական հարաբերությունների հաստատման և պետությունների միջև համագործակցության ապահովման առավել ընդունելի եղանակ: Այս ոլորտում քանակցությունների արդյունավետությունը գնահատվում է քավարար: Ներքին քաղաքականության ոլորտում քանակցությունների կիրառման հաճախականության վերաբերյալ նշում է, որ իշխանության տարբեր ճյուղերի միջև քանակցություններ հաճախ են տեղի ունենում, հիմնականում այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են

67 «Ազգ», 2 հունիսի, 1998թ., էջ 2:

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

խորհրդարանական մեծամասնության կամ կառավարության կազմավորման, պետական բյուջեի ընդունման, տարբեր օրենսդրական նախագծերի համաձայնեցման և դրանց ընդունման հետ կապված հարցերը: Սակայն այս դեպքում բանակցությունները վարփում են ոչ թե հիմնախնդիրների համատեղ և համակողմանի վերլուծության հիման վրա, այլ ուղղակի իրենցից ներկայացնում են ավելի շուտ քաղաքական գործարքներ, որոնց ժամանակ առավել հաճախ կիրառվում է «սկզբունքային առևտորի» մարտավարությունը: Ինչ վերաբերում է ներկայական համադրային համարատության (հասարակական-քաղաքական ուժերի միջև) կամ ենթակարգության հիմքով վարփող քաղաքական բանակցություններին (իշխանություն-ընդդիմություն), ապա այդ տիպի բանակցություններ հազարեալ են վարփում:

Հասարակական-քաղաքական ուժերի միջև բանակցությունները, զանազան դաշինքների և մխարյունների ստեղծումը, որպես կանոն, երկար չեն տևում, իսկ արդյունավետությամբ, առավել ևս, աշքի չեն ընկնում: Ի տարբերություն միջավետական ոլորտում տարփող բանակցությունների, այդ տիպի բանակցություններն, ըստ փորձագետների, հիմնականում վարփում են ստվերային հիմքով (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Բանակցությունների վարման հիմքերը.

Բանակցությունների կիրառման ոլորտները			
Միջավետական բանակցություններ		Ներքաղաքական	
1. իրավական հիմքով	65%	1. իրավական հիմքով	15%
2. ոչ իրավական հիմքով	5%	2. ոչ իրավական հիմքով	20%
3. իրապարակային	20%	3. իրապարակային	5%
4. ստվերային	10%	4. ստվերային	60%

Կանխատեսվում է, որ ապագա խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ «ստվերային բանակցությունները» մեծ թիվ կկազմեն, քանի որ հնարավոր իրավիճակում տարբեր քաղաքական ուժերի՝ հատկապես իշխանամետ քաղաքական կուսակցությունների միջև պայ-

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

քարի սրումը և մեծամասնական տեղերի կրծատումը ստիպելու են շահերը համաձայնեցնել և փոխզիջումների գնալ տարբեր ընտրատեղամասերում:

Իշխանության տարբեր ճյուղերի կամ հասարակական-քաղաքական ուժերի միջև բանակցային համաձայնությունների մասին, որպես կանոն, հասարակությանը տեսյակ չի պահպամ, որն էլ իր հերթին, անհնար է դարձնում հասարակական վերահսկողության իրականացումը նման կարգի պայմանավորվածությունների կատարման նկատմամբ:

Հայաստանում նկատվող անհանդուրժողականությունը իշխանությունների և ընդդիմադիր հասարակական-քաղաքական ուժերի միջև և նրանց ուղղակի առանձինամասն գնալու երկուամսեր նախապատճենը, բերևս, այսօր առավել բնորոշ է մեր քաղաքական կյանքին: Ասվածի վկայությունն են հանդիսանում ինչպես 1996թ., այնպես էլ 2003թ. նախագահական ընտրությունները, որոնք փաստեցին, որ այս առումով ոչ իշխանությունը, ոչ էլ ընդդիմությունը պատրաստ չեն բանակցությունների սեղանի շուրջ նստել և քաղաքակիրք երկխոսություն վարել: 1996թ. սեպտեմբերի 22-ին անցկացված նախագահական ընտրություններից հետո, երբ առաջին փուլում, ծայների նվազագույն առավելությամբ հայրանակ տարավ Լ. Տեր-Պետրոսյանը (51,75%), ընդդիմության կողմից ընտրությունների արդյունքը միանշանակ չընդունվեցին: Արդեն ընտրությունների արդյունքը ամփոփման նախնական տվյալները սրեցին քաղաքական իրավիճակը Հայաստանում: Տեղի ունեցան ընդդիմության և կառավարական ուժերի միջև ընդլարաւոններ, հարձակման ենթարկվեց Ազգային Ժողովի շենքը, որից հետո սեպտեմբերի 26-ին մայրաքաղաք մտցվեցին զինված ուժեր՝ ընդդիմության բարձրացրած քաղաքացիական անհնազանդության ալիքը ճնշելու համար:

Այդ ընտրություններին նախագահի լեզվիմության և Հայաստանի հետագա քաղաքական իրավիճակի հարցերին բազմիցս անդրադարձ է կատարվել մամուլում, սակայն, ընտրություններից հետո ստեղծված իրավիճակի ուսումնասիրումը կարևորվում է իշխանության և ընդդիմության միջև քաղաքական հակամարտության հետագա զարգացման առումով: Բանն այն է, որ իշխանությունների կողմից ուժի գործադրումը, ինչպես նաև ընդդիմադիր մի քանի քաղաքական գործիչների ձերքակալումը կամ նրանցից մի քանիսի նկատմամբ հետախուզման հայտարարումը ստիպեցին ընդդիմությանը (առք միավորվել էր Ազգային համաձայնության դաշինքի (ԱՀԴ) մեջ) փոխել քաղաքական պայքարի մերոդները, ՀՅԴ ներկայացուցիչ Վ. Հովհաննիսյանի բնորոշմամբ, «ասֆալ-

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

տից դեպի պարկետ», այսինքն՝ դեպի Սահմանադրական դատարան, որտեղ իշխանությունն ուներ բոլոր առավելությունները, իսկ ընդիմությունն ընդհակառակը՝ կորցրեց իր միակ առավելությունը՝ ժողովրդի աջակցությունը⁶⁸:

Հարցը սահմանադրական դատարանի հարթություն տեղափոխելը, հնարավոր է, որ ստեղծված իրավիճակից դրւու գալու լավագույն ելքը չեր, քանի որ, ինչպես բազմիցս նշվել է, իրավական կարգով վիճահարուց հարցերի լուծումը հիմնականում բավարարում է հակամարտու միայն մի կողմին, այն դեպքում, եթե բանակցությունների միջոցով հնարավոր է հասնել երկուստեք ընդունելի շահերի բավարարման: Այս կապակցությամբ Վ. Հովհաննիսյանը ճիշտ է նկատում, որ «Եթե դատարան դիմելը իշխանության հետ քաղաքակիրք հարաբերությունների վերականգնման ձև էր, ապա ինչո՞ւ՝ ճեզ իսրտնեցրեց մեկ այլ ձև՝ ուղղակի բանակցությունները: Այո, ես կարծում եմ, ընդդիմության նեկավարների ազատ արձակելուց հետո ավելի օգուտ կտային անմիջական բանակցությունները իշխանության և ընդդիմության միջև»⁶⁹:

Սակայն պետք է նշել, որ իշխանության կոշտ դիրքորոշումից բացի, ընդդիմությունը նույնպես որդեգրել էր բավական կոշտ կեցվածք: Ազգային համաձայնության դաշինքի շրջանակներում, եթե քննարկվում էր իշխանությունների հետ բանակցելու հնարավորությունը, առաջ էին քաշվում որոշակի նախապայմաններ: Մասնավորապես՝ նշվում էր, որ ընդդիմությունը իշխանությունների հետ կրանակցի միայն 4 առանցքային հարցերի՝ << նախազահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների և նոր սահմանադրության ընդունման հարցերի շուրջ: 1997թ. մարտի 29-ին հրավիրված ԱՀԴ համաժողովում, որի նախաձեռնողներն էին ԱԺՄ, ԱԻՄ, ՍԻՄ, ՀՀԿ և ՀՅԴ՝ կուսակցությունները, հնչած մտքերից մեկում ասվում է. «Իշխանությունները կրանակցեն մեզ հետ ներկայացված 4 առանցքային խնդիրների շուրջ, լավ: Հակառակ դեպքում, եթե ժողովուրդն ընդունի այդ գաղափարները, օր կնշանակենք և ոտքի կկանգնենք ամբողջ ժողովրդուվ»⁷⁰: Սա ևս, մեր կարծիքով, բավական կոշտ և առավելապաշտական դիրքորոշում էր և դրւու էր գալիս բուն նախագահական ընտրությունների հետ կապված հարցերի շրջանակներից: Նման մոտեցումների որդեգրումը և իշխանությունների և ընդդիմության կտմմից «Արժանապատիվ ապագա» կուսակցության նախազահ Լ.

68 Տն։ «Դրօշակ», 1997թ., N 20 , էջ 5:

69 Նույն տեղում:

70 «Ազգ», 1 ապրիլ, 1997թ., էջ 3:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Հարգությունյանը բացատրում էր հետևյալ հանգամանքով. «ՀՀ -ում ձևավորված է մի այնպիսի կառավարման համակարգ, որը աչքի է ընկերում որևէ թևով շփառակարգված հզոր նախագահով և վերջինիս ուժեղացմանը հավատարմագրված բույլ խորհրդարանով։ Եթե ժողովրդավարական հասարակություններում ժողովուրդն է ծնում իշխանությունը, ապա մեզ մոտ իշխանությունն է ծնում իշխանություն, որը նույնպես հասարակության բուլության արդյունք է։ Ձևավորված կուսակցությունները, քաղաքական խաղի մասնակից լինելով, կտրված են հասարակական շահերից։ Վերջին տարիների ընթացքում Հայաստանում ատեղծվել է «քախումնային մշակույթ», որը ձևավորվել է միանձնյա իշխանություն հաստատելու ցանկության պատճառով, որը պետք է փոխարինվի «երկխոսության և կոնսենսուսային մշակույթով»⁷¹։

Ինչ վերաբերում է 2003թ. նախագահական ընտրություններին, ապա իրավիճակի՝ իշխանություն-ընդիմություն քաղաքական հակամարտության առումով, բավականին նման էր նախկին ընտրաթյուններին, այն եական տարբերությամբ միայն, որ այս անգամ, փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների առաջին փուլի արյունքները դեռ չիրապարակած, ընդդիմադիր քաղաքական գործիչների կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ ուղղակի բանակցություններից հետո, քաղաքական որոշում ընդունվեց ընտրությունների երկրորդ փուլ անցկացնելու վերաբերյալ։ Այս քայլը, ընդհանուր առմամբ, նպաստեց հասարակության մեջ լարվածության մեղմացմանն ու կրթերի հանդարտեցմանը, չնայած որոշ բացասական միտումներին։

Ներքադարձական բանակցությունների անարդյունավետության պատճառների քվում փորձագետները նշում են **ձևավորված իմքնակալական ռեժիմի և բանակցային ցածր մշակույթի առկայությունը**, մինչդեռ դրանց արդյունավետության բարձրացմանը նպաստող կարևոր գործուները կարող են լինել **ժողովրդավարության և բանակցային մշակույթի համապատասխան մակարդակը**։ Արդեն նշվել է, որ հատկապես ժողովրդավարական համակարգերին է բնորոշ քաղաքականության սուբյեկտների միջև բանակցությունների միջոցով համատեղ որոշումների ընդունման պրակտիկան։ Քաղաքական բանակցությունների միջոցով համաձայնությունների ձեռքբերումը և հասարակական-քաղաքական ուժերի միջև առողջ երկխոսության ապահովումն ու այդ հիմքով գործընկերային հարաբերությունների հաստատումը կարևորվում են հատկապես

71 «Ազգ», 27 փետրվարի, 1998թ., էջ 3:

անցումային փուլում գտնվող երկրների, մասնավորապես Հայաստանի Հանրապետության համար: Գաղտնիք չէ, որ ժողովրդավարացման գործընթացները մեր երկրում դեռ չեն ավարտվել: Հայաստանի Հանրապետությունը դեռևս երկար ճանապարհ ունի անցնելու իրական ժողովրդավարական հասարակության ստեղծման գործում: Ժողովրդավարակությունը մեր հանրապետությունում, թերևս, գտնվում է իր կայացման և կայունացման (կոնսոլիդացիայի) փուլում: Այդ գործընթացը ինքնակալական կառավարման համակարգից ժողովրդավարականին անցնան առանցքային փուլերից մեկն է: Այն սկզբում է նախկին վարչակարգից վճռական խզումից հետո և վերջանում է այն ժամանակ, երբ կարելի է արձանագրել, որ ժողովրդավարությունը զարգանում է իր սեփական հիմքի վրա՝ ապահովելով կայուն հասարակական զարգացում⁷²: Ամերիկյան հայտնի քաղաքագետներից մեկը՝ Ս. Հանտինզունը առանձնացնում է մի շարք վտանգներ, որոնք սպառնում են ժողովրդավարության կոնսոլիդացիայի փուլում գտնվող երկրներին: Դրանցից առաջինը վերաբերում է «կարմիր շրջադարձին», այսինքն՝ նախկին կոմունիստական ուժիմների վերականգնմանը, որին ինքը՝ Ս. Հանտինզունը քիչ է հավատում⁷³: Երկրորդ պատեհնեցիալ վտանգը նոր ժողովրդավարական ուժիմների համար կարող է գալ այն կուսակցություններից և շարժումներից, որոնք դավանում են ծայրահեղ հակաժողովրդավարական զաղափարներ (հատկապես՝ կրոնական արմատականություն): Սակայն առավել լուրջ վտանգի հիմք է հանդիսանում իշխանության չափից դուրս կենտրոնացումը ընտրված գործադիր կառույցի դեռքում: Իշխանության նման կենտրոնացումը կարող է հանգեցնել կառավարման ինքնակալական մերուների կիրառման, ի հաշիվ ժողովրդավարական հիմունքներով քաղաքական նաև ակցության, շահերի ներդաշնակ հաշվառման և դրանց ներկայացուցության, մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման:

Թե ինչքա՞ն երկար կարող են տևել քաղաքական համակարգերի փոխակերպումները, ե՞րբ կկոնսոլիդացվեն ժողովրդավարական ինստիտուտները, հարցեր են, որոնց լուծումը կախված է մի շարք գործոններից: Նպատակ չունենալով անդրադառնալ ժողովրդավարության կոնսոլիդացիային նպաստող բոլոր հանգամանքներին, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել նրանցից մեկի վրա միայն, որն իր զարգացումն է ստացել Գ. Ալմոնդի, Ս. Վերբայի, Զ. Կոռլմենի, Է. Մարգարյանի, Հ. Գևորգյանի

72 Сбо́н Смогру́нов Л. Современная сравнительная политология. М., 2002. с. 225.

73 Сбо́н Ото́н տեղում, էջ 224:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

և այլոց աշխատություններում⁷⁴: Խոսքը գնում է քաղաքականության վրա մշակութային գործոնի ազլեցության, կամ ավելի ճիշտ՝ քաղաքական մշակույթի տեսության մասին: Այստեղ ընդգծվում է, որ, ի տարրերություն ժողովրդավարեցման տնտեսագիտական տեսությունների (որոնք փորձում են ժաղովրդավարական գործընթացների արդյունավետությունը բացատրել տնտեսական գործունելուվ), ժողովրդավարական անցումների հիմքում ընկած են հասարակության մեծամասնության կողմից ընդունվող քաղաքական նորմերը, վարքագծի կանոնները, «մշակույթի քաղաքակրթական շերտը»⁷⁵, կամ էլ «քաղաքացիական մշակույթը», որը բնութագրվում է այն կրտսերի մոտ առկա փոխադարձ վատահության բարձր մակարդակով, փոխվիզումների պատրաստականությամբ, ինչպես նաև հանդուրժողականությամբ՝ իրարից տարբերվող, կամ նույնիսկ հակասական շահերի և դիրքորոշումների նկատմամբ⁷⁶: Այդ առումով, «**Քաղաքացիական մշակույթի**» դրսորման մասնակորդեաց կարելի է դիտարկել հասարակության մեջ «քանակցային մշակույթի» ձևավորումը՝ որպես կռնաւիդար դեմոկրատիայի հաստատման նախապայման:

Ինչպես արդեն նշվել է, քաղաքական բանակցությունների արդյունավետությանը նպաստող հիմքերի շարքում փորձագետները միանշանակորեն առանձնացնում են բանակցային **բարձր մշակույթի առկայությունը**՝ որպես բանակցությունների արյունավետության կարևոր նախապայման: Պետք է նշել, որ բացի բանակցությունների արյունավետությանը նպաստելուց, հասարակության մեջ բանակցային մշակույթի ձևավորումը հակամարտությունների կանխարգելման կամ դրանց խաղաղ կարգավորման կարևոր հիմքերից մեկն է: Աշխարհում կան մշա-

74 Steu Almond , Gabriel A., and Sidney Verba. The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton. 1963., Գևօրգի Գ. Ա. Նациональная культура с точки зрения философии истории. Ер., 1992., Գևորգյան Հ.Ա., Ազգ. ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997ր., Մարկարյան Է.Ս. Качество культуры мира. Ер., 2002.

75 Մասնավորապես՝ այս հասկացությունը օգտագործում է ակադեմիկոս Հ. Գևորգյանը և գտնում է, որ հասարակության պետականական (քաղաքական) կազմակերպման համբանարական ձևերի շնորհիվ կազմավորվում է մշակույթի վերին՝ քաղաքակրթական շերտը: Հեղինակը կարծում է, որ եթե չեն լինում պատմականորեն գոյացում՝ մշակույթի քաղաքակրթական ձևերը և էլիտար մշակույթը, ապա այդպիսի երկրներում գոյանում են պետություններ՝ հենված ուժի վրա, որոնց ընորդ են անվերջ միջերնիկական, միջցեղային կամ կանային անվերջ հակամարտություններն ու կոհկները: Steu Գևորգյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 55-56:

76 Цыганков А. Современные политические режимы: структура, типология, динамика. М., 1995. с. 212.

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

կույքներ, որոնք աշքի են լնկնում հասարակական համաձայնության բարձր աստիճանով, որտեղ կոնֆլիկտային իրավիճակները, եթե առաջանում են, ապա հիմնականում կարգավորվում են բանակցային մերությերով և այնպիսի մշակույթներ, որոնցում կոնֆլիկտայնության աստիճանը բավականին բարձր է, և տիրապետող են կոնֆլիկտային իրավիճակների լուծման ոչ բանակցային մեթոդները: **Հայաստանի քաղաքական մշակույթն, ընդհանուր առմամբ, բնորոշվում է նման կոնֆլիկտայնության բարձր մակարդակով, իսկ կոնֆլիկտաների կարգավորման եղանակների ընտրության հարցում բանակցությունները ամենիմ էլ առաջններից չեն:** Սակայն քաղաքական հանրապետյան ծգոտումը հասնելու այն բանին, որ քաղաքականության մեջ ծագած (որը, թերևս, ամենակոնֆլիկտային ոլորտներից մեզն է մեր հանրապետությունում) հակամարտություններն ու հակասությունները լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով, կարող է իրականանալ միայն այն դեպքում, եթե լուրջ միջոցներ կծեռնարկվեն նաև բանակցային մշակույթի ձևափորման ուղղությամբ:

Բանակցային մշակույթը կարելի է հասկանալ լայն և նեղ առումներով: Լայն առումով բանակցային մշակույթ ասելով, հասկանում ենք հասարակության մեջ բանակցային ավանդույթների, խաղաղ ճանապարհով հակասությունների լուծման մեխանիզմների առկայությունը, իսկ նեղ առումով, բանակցային մշակույթը բովանդակում է բանակցությունների վարման արդյունավետ միջոցների և հնարների կիրառման ունակությունը:

Այսպիսով, ի մի թերելով մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքները, կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում քաղաքականության սուրյեկտների փոխհարաբերություններում տիրապետող են առճակատման և անհանդուրժողականության տարրերը: Այն իր հերթին, հանգեցնում է նրան, որ քաղաքական կոնֆլիկտների կարգավորման եղանակներից հակամարտող կողմերը նախապատվությունը տալիս են ուժային եղանակներին կամ միակողմանի կարգով գործողություններին: Հաջորդ կարևոր եղանակացությունն այն է, որ բանակցությունները դեռևս լիովին չեն դարձել քաղաքական պրակտիկայի անբաժանելի մասը, հատկապես ներքաղաքական հարաբերությունների ոլորտում, որը բանակցությունները հազվադեպ են կիրառվում: Ցածր է համարվում նաև բանակցությունների արդյունավետությունը՝ հատկապես իշխանություն-ընդդիմություն փոխհարաբերություններում: Անարդյունավետության պատճառների թվում առաջնային են համարվում ժո-

դուրսագալության և բանակցային մշակույթների ցածր մակարդակը: Ներքաղաքական պրակտիկայում բանակցությունները վարդում են ստվերային հիմքով, որը խանգարում է բանակցային պարտավորությունների նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացմանը՝ նվազեցնելով դրանց արդյունավետությունը: Բանակցությունների արդյունավետության, ինչպես նաև բանակցային սուբյեկտների անձնական հատկանիշների բարու տեղ են գրադեցնում բանակցային մշակույթն ու տեսական-մասնագիտական գլուխիքների բարձր մակարդակը:

Ինչ վերաբերում է բանակցային մշակույթի ձևավորմանը նպաստող գործուններին, ապա դրանցից կարելի է առանձնացնել՝ 1. **հասարակության մեջ հակամարտությունների քաղաքակիրք եղանակներով կարգավորման համապատասխան նորմատիվային եիմբերի առկայությունը**, 2. **քաղաքականության հիմնական սուբյեկտների, բնակչության լայն շերտերի մաս բանակցությունների վարման գործընթացի նկատմամբ որոշակի սպասկերացումների և համապատասխան փորձի առկայությունը**, 3. **որակյալ մասնագետների, արհեստավարժ բանակցողների պատրաստումն ու բանակցությունների տեսության համակաղմանի ուսումնաշրությունները**, 4. **բանակցային պրակտիկայի գարգացումը և այլն**: Վերը նշված գործունները մեծ ազդեցություն ունեն բանակցային մշակույթի ձևավորման վրա: Այս, անկասկած է, որ համապատասխան իրավական, քաղաքական, քարոյական և այլ նորմերը, հակամարտությունների կարգավորման, բանակցությունների վարման որոշակի ավանդույթներն ու սովորությունները բանակցային մշակույթի ձևավորման կարևոր տարրերից են հանդիսանում: Բանակցային մշակույթն էլ, իր հերթին, օգնում է ծագած հակասություններն ու վիճակարույց հարցերը կարգավորել բանակցությունների, միջնորդությունների կամ էլ համանման լնքացակարգերի միջոցով:

Ժամանակակից աշխարհում, հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում զնալով մեծ դեր են խաղում բանակցությունների կոնկրետ մասնակիցների փորձն ու հմտությունները: Դրանք ձեռք են բերվում երկու ճանապարհով: Խորիրդային դիվանագիտական դպրոցի ներկայացուցիչներից՝ Վ. ԽարաԵլյանի կարծիքով, «Առաջին ճանապարհը հիմնվում է կոնկրետ բանակցությունների մասնակցի անձնական փորձի վրա, իսկ երկրորդը՝ ենթադրում է հատուկ կազմակերպչական ուսուցում մինչ իրական բանակցությունների սկսվելը»: Ինչպես գտնում է հեղինակը, ժամանակակից պայմաններում, անկասկած, երկրորդ եղա-

Բանակցային մշակույթը հասարակության քաղաքական կյանքում

նակը ոչ միայն նախապատվելի է, այլև միակ ինարավորը, քանի որ շատ բանն կարող է արթենալ «փորձի և սխալների» մեքողով բանակցությունների վարման գործընթացին բանակցողների ուսուցումը⁷⁷: Այդպիսի կարծիքի են նաև մեր փորձագետները, որոնք, միանշանակորեն, բանակցողի հատկանիշների շարքում նախապատվությունը տալիս են տեսական-մասնագիտական պատրաստվածությանը: Այդ բացը՝ մասնագիտական պատրաստվածության պակասը, հատկապես կարևոր է շատ արագ լրացնել մեր հանրապետության պարագայում:

Աշխարհի շատ տերություններ՝ ԱՄՆ-ը, Եվրոպական Երկրները, վերջին ժամանակներս՝ նաև Ռուսաստանը, բավական լուրջ են մոտենում բանակցությունների տեսության հիմնահարցերին, գրեթե բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում կարդացվում են բանակցությունների տեսության վերաբերյալ հատուկ դասընթացներ, կան խոշոր գիտահետազոտական ինստիտուտներ, որոնք հատուկ գրադարան են այդ հիմնահարցերով: Մեր հանրապետությունում, թերևս, բանակցային պրակտիկան նոր է արմատափորվում, քիչ են նաև գիտական լուրջ ուսումնասիրություններն այս ոլորտում: Քաղաքական բանակցությունների ուսումնասիրմանը նվիրված տվյալ աշխատանքը Հայաստանում առաջին փորձերից մեկն է, որը, բնականաբար, չի կարող իմանավոր լուծումներ առաջարկել այս ոլորտի բոլոր հարցերի վերաբերյալ: Սակայն բանակցությունների տեսության հետագա և շարունակական ուսումնասիրությունների կարգավորման համեմատական վերլուծությունների կիրառումը, մեր կարծիքով, մեծապես կնպաստեն ապագայում ավելի լուրջ տեսական ուսումնասիրություններով հանդես գալու, ինչպես նաև ծևափորել բանակցությունների վարման հայկական դպրոց: Այսպիսի դպրոցն աշքի կրնկնի իր արիեստավարժ կադրերի իրազեկությամբ, մասնագիտական համապատասխան պատրաստվածությամբ, բանակցային բարձր մշակույթով, որն էլ, իր հերթին, կօգնի մեզ թե՛ միջազգային հարաբերությունների ասպարեզում, թե՛ ներքաղաքական կյանքում արձանագրելու լուրջ հաջողաբարություններ՝ նպաստելով մեր երկրի բարգավաճմանն ու ժողովրդավարության ամրապնդմանը:

77 Исаэлян В., Лебедева М. Переговоры-искусство для всех. // Международная Жизнь. 1991/11. с. 50.

ԳԼՈՒԽ 3.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԵՆԹԱՖԸ

Մարդկային հասարակության զարգացման բոլոր պատմական ժամանակաշրջաններում էլ քաղաքական միտքն ուղղված է եղել տվյալ հասարակության և տվյալ դարաշրջանի առավել երատապ ու արդիական իշխանակարգերի լուծմանը: Այդ օրինաչափությունից չլ կարող դուրս մնալ նաև հայ քաղաքական միտքը, որի առջև ծառացած և հայ ժողովրդի կենսական շահերի քավարարման տեսանկյունից ամենակարևոր իշխանակարգերից է մնում Արցախյան իշխանակարը: Այդ խկ պատճառով էլ, բանակցությունների տեսական և գործնական նշանակություն ունեցող իշխանակարգերի քննարկումից հետո, թերևս, հարկ է անդրադառնալ նաև Ղարաբաղյան հակամարտության վերլուծությանը, փորձ անելով այդ վերլուծության ընթացքում կիրառել ժամանակակից քաղաքական գիտության՝ հատկապես կոնֆլիկտաբանության և բանակցությունների տեսության ձեռքբերումները:

Ինչպես ապդեն նշել է, Ղարաբաղյան հակամարտությունն ունի վաղեմի պատմություն, իր ծագումն ու զարգացման ներքին դինամիկան, որը ժամանակակից Կոնֆլիկտաբանությանը նվիրված շատ դասագրքերում և հրապարակումներում ներկայանում է որպես էքնոքաղաքական հակամարտության ծագման և զարգացման դասական օրինակ: Նման բնորոշումը ամենին էլ դյուրին չի դարձնում, այլ, ընդհակառակը, բարդացնում է դարաբաղյան հակամարտությանը նվիրված ուսումնավիճության յուրաքանչյուր փորձ, քանզի այն պահանջում է համակողմանի և խորքային վերլուծություն: Իսկ այդպիսի կտրվածքով իշխանակարը վերլուծությունը, իր հերթին, կարելի է իրականացնել հակամարտությունների ուսումնասիրման մի շարք դասական մողելների կիրառման կամ լրանց համադրման օգնությամբ, որոնցից, մասնավորապես, կոնֆլիկտաբանության մեջ բավական տարածված են «ախտարաշում-կանխատեսում-բուժում (Յ. Գալքունզ)՝» եռանկյունին, «գիտակցում-լարում-ճնշում-ուժային որոշում» (Կ. Ռայք), «հակասություն-բյուրեղացում-

1 Գալքունզ Յ. Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր., 2005թ, էջ 10:

Ղարաբաղյան հակամարտության սռաջացման գործոնները

նույնականացում» (Ռ. Դարենդօրֆ)² և այլ մոդելները: Սակայն, մեր կարծիքով, ղարաբաղյան հիմնահարցի խորքային վերլուծության և հակամարտության «կենսացիկլն» ամբողջությամբ բացահայտող մոդելներից մեկը կարող է լինել «**ժագում-դինամիկա-կարգավորում**» եռանկյունու կիրառումը, որը հնարավորություն կտա վեր հանել Ղարաբաղյան հակամարտության պատճառական հիմքերը, դինամիկայի հիմնական փուլերն ու կարգավորման միտումները: Այսպիսի տրամաբանությամբ հարցի վերլուծման համար կարելի է առանձնացնել քննարկման հետևյալ հաջորդականությունը. 1. Ղարաբաղյան հակամարտության առաջացման հիմքում ընկած գործոնների ուսումնասիրումը, 2. Հակամարտության աստիճանական զարգացման փուլերի վերլուծությունը, 3. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական բաղադրատարրերի և հեռանկարների վերլուծությունը:

3.1 Ղարաբաղյան ՀԿՄՄՌՏՈՒԹՅԱՆ ՍՊԱԳԱՎԱՐՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԸ


Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունն անհնար է լրականացնել, առանց հաշվի առնելու հակամարտության հիմքում ընկած բազմազան ու տարարժեք պատճառներն ու գործոնները: Ընդհանուր առմամբ, Ղարաբաղյան հակամարտության առաջացման և զարգացման դինամիկայի համար կարելի է առանձնացնել մի քանի հիմք-գործոններ, որոնք սխեմատիկորեն կարելի է պատկերել հետևյալ կերպ.

2 Син Лебедева М.М., Политическое урегулирование конфликтов. М., 1999. с. 59.

3 Дарендорф Р. Элементы теории социального конфликта.// Социологические исследования. 1994. N 5. сс. 236-242.

Աղյուսակ 1.

**Ղարաբաղյան հակամարտության առաջացման
և դիմամիկայի գործոնները**



Դրանք, իրենց հերթին, հարաբերականորեն կարելի է բաժանել՝ 1. ներծին (Ենդագեն) գործոնների, որոնց ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել հակամարտության պատճառներն ու բնույթը և 2. արտածին (Էկզագեն) գործոնների, որոնք իրենցից ներկայացնում են աշխարհաքաղաքական բնույթի փոփոխությունների ազդեցությունը հակամարտության ընթացքի վրա:

Բնականաբար, Ղարաբաղյան հակամարտության նման բարդ կոնֆլիկտների առաջացման վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ գործոններ, և միայն դրանց համալիր ուսումնասիրությունն է, ունակ բացահայտելու հակամարտության առաջացման իրական պատճառները։ Պատճառանձային գործոններն, իրենց հերթին, ներկայացնում են հակամարտության այն հիմքերը, որոնք առավել հաճախ պատճառ են դառնում հակամարտության ծագման համար։ Այդ պատճառանձային հիմքերը ծագման առումով, կարող են լինել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի, որոնք մենք հարաբերականորեն կարող ենք բաժանել 1. իրավաքաղաքական, 2. էրնումշակութային, 3. տնտեսական 4. աշխարհաքաղաքական գործոնների։ Պատճառանձային գործոնների այս շարքը, բնականաբար, կարելի է շարունակել և ավելացնել այլ գործոններ ևս։

3.1.1 Հսկմութության իրսկըսության գործուները

Ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական գործոնները դիտարկելիս շափազանց կարևոր է ուսումնասիրել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակն ու այն իրավական փաստարդերը, որոնք ընկած են հակամարտության ծագման և հետագա զարգացման հիմքում: Այդ առումով, միջազգային քաղաքական գործոնքացներում Ղարաբաղյան հակամարտությունը շրջանառվում է 1918թ-ից սկսած, եթե՛ Ռուսական կայսրության քայլայման արդյունքում Անդրկովկասում ձևավորվում են երեք պետական կազմավորություններ՝ Աղրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունները: Այս երեք պետությունների կազմավորման գործընթացն ուղեկցվում էր նրանց միջև օրենքոր լայն քափ ստացող սահմանային վեճերով և քախումներով: Մասնավորապես, նորահայտ Աղրբեջանի Հանրապետությունը, որն ի տարբերություն Հայաստանի և Վրաստանի, այս տարածաշրջանում երեք ազգային պետականություն չէր ունեցել, 1918թ-ի մայիսի 27-ին հոչակելով իր անկախությունը, սկսում է հավակնություններ ներկայացնել հայկական տարածքների նկատմամբ: Այդ տարածքային նկրտումներն ընգրկում էին ինչպես հայկական՝ Զանգեզուրի, Նախիջևանի և Ղարաբաղի տարածքները, այնպես էլ Վրացական Բարումի շրջանը: Այդպիսի գծագրված սահմաններով էլ Աղրբեջանը 1919 թ-ին ներկայանում է Ազգերի Լիգա՝ միջազգային այդ կառույցին անդամակցության հայտ ներկայացնելով: *Ազգերի Լիգան մերժում է Աղրբեջանի կառավարությանը այն պարզ հիմնավորմամբ, որ այդ պետությունը հավակնում էր այնպիսի տարածքների, որոնց նկատմամբ վերահսկողություն չուներ⁴:* Մինչդեռ, պետության կարևոր բնութագրիչներից մեկը, բացի որոշակի բնակչությունից և տարածքից, հանդիսանում է այդ տարածքի վրա միանձնյա իշխանության իրականացման իրավունքը, որը երեք չի ունեցել Աղրբեջանը Ղարաբաղի նկատմամբ: Դեռ ավելին, Աղրբեջանի Հանրապետության հոչակումից ընդամենը երկու ամիս հետո, **1918թ-ի հունիսի 22-26-ը Ծուշում անցկացված է Ղարաբաղի հայության առաջին համագումարը**, որում Լեռնային Ղարաբաղը հայտարարվում է անկախ վարչադարձական միավոր, մեավորվում է Ազգային Խորհուրդը և **Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը**: Այսպիսով, անդրկովկայացած երեք

4 Admission of Azerbaijan to the League of Nations: Memorandum By the Secretary General League of Nations// Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. Կարգավորման ուղիներ, Եր., 2006թ., էջ 293.

Զարաքաղաքան բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ազգային պետական կազմավորումներին գրագահեռ, միաժամանակ ձևավորվում է նաև Լեռնային Ղարաբաղյան անկախ կառավարությունը: Եվ, ի տարբերություն իր ներկայիս իրավահաջորդի՝ Ալյոբեջանի նորորյա հանրապետության, որը համառորեն անտեսում է Լեռնային Ղարաբաղյի Հանրապետության ընտրված և օրինական իշխանությունների գոյության փաստը, իրաժարվելով բանակցել ԼՂՀ ներկայացուցիչների հետ, 1918-1920թթ. «Ալյոբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը» 1919թ.-ի օգոստոսի 22-ին ստիպված համաձայնագիր է ստորագրում Լեռնային Ղարաբաղյի Հայոց Ազգային խորհուրդի հետ՝ Լեռնային Ղարաբաղյի Վերջնական կարգավիճակի հարցը տեղափոխելով Փարիզի խաղաղության կոնֆերանս:

Ըստ այդ համաձայնագրի, Ալյոբեջանի գորքերը չեն մտնում Ղարաբաղ, երկրամասի լեզվիմ իշխանության մարմններ էին ճանաչվում Հայոց Ազգային Խորհուրդն ու հայության համագումարները: Սակայն շատ կարծ ժամանակը հետո 1920թ.-ի փետրվարին Ղարաբաղի Ազգային Խորհուրդը, Ալյոբեջանի կողմից պարբերաբար համաձայնագրի կետերը խախտելու հետևանքով, մերժում է Ալյոբեջանի ներկայացրած նոր պահանջները և անվագեր է ճանաչում համաձայնագիրը: Իսկ այդեն 1920թ.-ի ապրիլի 25-ին կայացած Ղարաբաղյի հայության 9-րդ համագումարում Հայոց Ազգային Խորհուրդը հոչակեց Լեռնային Ղարաբաղյի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անքածան մաս⁵:

1920թ.-ի ապրիլի 28-ին պատմության ասպարեզը լրեց այսպես կոչված «Ալյոբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը», առանց միջազգայնորեն ճանաչված, լեզվիմ սահմաններ ունենալու, իր տեղը գիշելով Խորհրդային Ալյոբեջանին: **Այսպիսով, Ալյոբեջանի 1918-1920թթ-ի Առաջին Հանրապետության գոյության տարիներին Ղարաբաղը երեք չի եղել Ալյոբեջանի Հանրապետության կազմում:**

Ղարաբաղյի շուրջ քաղաքական իրավիճակը կտրակ փախվաւ է Ալյոբեջանի խորերդայնացումից հետո, երբ 1920թ.-ի ապրիլի 28-ին այնտեղ հաստատվում են խորհրդային կարգեր: Պատեհ առիթից օգտվելով, նույն թվականի մայիսի 12-ին խորհրդային 11-րդ Կարմիր բանակը գրավում է Շուշին՝ խորհրդայնացնելով նաև Ղարաբաղը: Սակայն դրանով դեռևս չեր կանչարշչում Ղարաբաղի պատկանելիության հարցը, և Խորհրդային Ռուսաստանը, Ազգերի Լիգայի որոշմանը համահանչ, 1920թ.-ի օգոստոսի 10-ին Հայաստանի դեռևս ոչ խորհրդային հանրապետության հետ ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի Խորհրդային

⁵ Քաղաքան Վ Արցախի պատմություն, Եր., 2002թ., էջ 303:

Հակամարտության իրավաքաղաքական գործոնները

Ուսասատանի կողմից Ղարաբաղի գրավումը չէր կանխորոշում այս տարածքի Աղբեջանին կամ Հայաստանին պատկանելու հարցի լուծումը⁶: Իսկ արդեն Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, 1920թի նոյեմբերի 30-ին, Աղբեջանի խորհրդայն Հանրապետությունը կամովին հրաժարվում է Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներից, Լեռնային Ղարաբաղո, Չանգեգործ և Նախիջևանը հոչակելով խորհրդային Հայաստանի անքակտելի մաս⁷:

Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումից հետո փոխվում են նաև բոլշևիկյան ռեկավարության արտաքին քաղաքական առաջնահերթությունները: Այս տարածաշրջանում բոլշևիկյան զաղափարախոսության հիմնադրույթներից մեկը հանդիսացավ ի դեմս Աղբեջանի, Վերագային, ինտերնացիոնալ տիպի խորհրդային պետության ստեղծումը, որը հետագայում առավելագույն կերպով պետք է նպաստեր բոլշևիկյան հեղափոխությունը դեպի արևելք արտահանելու «սուրբ» գործին: Այս կապակցությամբ, ինչպես նշում են շատ հեղինակներ, բոլշևիկյան զաղափարախոսության տարածման և հեղափոխությունների արտահանման գործում բոլշևիզմի աշխարհաքաղաքական ծրագրերում Աղբ. ԽՍՀ արտազգային բնույթն ավելի քան կարևորվում էր⁸: Այդ էր հիմնական պատճառներից մեկը, որ երբ 1918թ-ին Գերմանիայամ և 1919թ-ին Հունգարիայում հեղափոխությունները ծախողվեցին և ստեղծված խորհուրդները ցրվեցին, բոլշևիկյան Ուսասատանի հայացքն ուղղվեց դեպի արևելք⁹, որի ամենահարմար հենարիանը կարող էր հանդիսանալ հենց Աղբ. ԽՍՀ-ն, իր վերազգային, ինտերնացիոնալ բնույթով, ուր հայերը ամենեկին էլ ազգային փոքրանանության կարգավիճակով հանդես չէին գալիս, այլ համարվում էին կովկասյան թաթարներից հետո, Աղբ ԽՍՀ երկրորդ պետականակիր ազգը¹⁰: Այս զաղափարախոսությամբ ոգևորված, Աղբ. ԽՍՀ ռեկավարները, Ն. Նարիմանովի զիսավորությամբ, նորից բարձրացնում են Լեռնային Ղարաբաղի հարցը, բարդոքարկելով 1921թ.-ի հունիսի 3-ի ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի այն որոշումը, որի համաձայն Հայաստանի կառավարության հոչակագրում (1921թ. հունի-

6 Տես "ՀԿԲ: Պуть և վերшинам". (под ред. Н. Р. Мелкумян), Степанакерт. 2001г. с. 59.

7 Տես նոյն տեղում, էջ 307:

8 Սնամայան Ա. Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայերում, Եր., 2003թ., էջ 114. Բարայան Դ. Ղարաբաղյան հակամարտություն. պատմական, իրավական և այլ ասակելունը // «21-րդ դար» Եր. 2005/ 1(7), էջ 23:

9 Տես Մանայան Ա., նշկ. աշխ., էջ 167:

* Այդ մասին են վկայում նաև բուրքական և աղբեջանական առյուրները, տես՝ Գասանլի Ջ. ՀՀՀ-Ը Տուրքիա: պոլիգոն հոլոդու բանակ, Բակու, 2005, ս. 7.

Զարաքաղաքան բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

սի 12) պետք է նշվեր Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելիության մասին: 1921թ-ի հուլիսի 4-ին Կովկասություն, լսելով բարձրացված հարցը, ծայների մեծամասնությամբ որոշում է ընդունում Լեռնային Ղարաբաղը ներառել ՀԽՍՀ կազմում, անցկացնելով այնտեղ «պերիսցիտ» ժողովրդի կամքի համաձայն հարցը լուծելու համար¹⁰:

Այնուամենայնիվ, Ղարաբաղյան հակամարտության առաջացման հիմքում ընկած ամենակարևոր իրավական փաստաթուղթը, որով Լեռնային Ղարաբաղը հայտնվեց Աղրբեջանական ԽՍՀ կազմում, հանդիսանում է ՌԿ(թ)Կ Կովկասյան բյուրոյի 1921թ-ի հուլիսի 5-ի որոշումը: Այդ որոշումն իրապես հանդիսանում է Ղարաբաղյան հակամարտության առաջացման իրավաբարքական հիմքերից մեկը, քանի որ, բացի այդ որոշումից չկա որևէ այլ փաստաթուղթ, որով Լեռնային Ղարաբաղը դիտվեր Աղր. ԽՍՀ-ի կազմում: Բայց, նույնիսկ այդ միակ որոշումը, իրավական համապատասխանության առումով ամենին էլ չի կարող բավարար հիմք հանդիսանալ Լեռնային Ղարաբաղը Աղրբեջանի տարածքային մաս համարելու համար, քանի որ

1. ՌԿ(թ)Կ Կովկասյան բյուրոն տարածքային խնդիրներ լուծելու իրավասություններ չի ունեցել, ինչը կասկածի տակ է դնում 1921թ-ի հուլիսի 5-ի որոշման լեզվակիմությունը:

2. Այդ որոշումը ընդունված է եղել ընթացակարգային խախտումներով, առանց քվեարկության, մինչեռ, ընդամենը մեկ օր առաջ հուլիսի 4-ին, լսելով խնդրո առարկան, Կովկասություն ծայների մեծամասնությամբ հարցը որոշում է Հայաստանի օգտին: Դրանից հետո, Խորհրդային պետության ամենամեծ «Էքնոհնժեներ» Ստալինի պարտադրմամբ, հաջորդ օրը գումարված նիստում, առանց քննարկելու և քվեարկելու, հարցը որոշվում է Աղրբեջանի օգտին:

3. 1921թ-ի հուլիսի 5-ի որոշումը վկայում է, որ եթե Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության Կովկասյան բյուրոն, այդ ոչ սահմանադրական մարմինն է քննարկում Լեռնային Ղարաբաղի հարցը, ապա այն դժվար է դիտարկել որպես Աղրբեջանի համար ներքին խնդիր, ինչը մեկ անգամ ևս հավաստում է, որ Աղր. ԽՍՀ տարածքային ամբողջականությունը միշտ էլ սահմանափակված է եղել տարբեր միջազգային պայմանագրերով:

4. Ըստ այդ որոշման, Ղարաբաղը առանձնացված է հանդես

10 К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР. (1918-1925гг), сс. 90-91.

Հակամարտության իրավաքաղաքական գործունեություն

գալիս Աղրբեջանից նաև որպես աշխարհագրական տարածք: Այսպես, որոշման ներածական մասում նշվում է «Աղրբեջանի հետ Ղարաբաղի մշտական տնտեսական կապի» մասին, ինչը ևս ապացուցում է, որ Ղարաբաղը և Աղրբեջանը դիտարկվում են որպես աշխարհագրութեն տարրեր տարածքներ:

1921թ-ի հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշումն իրավես հանդիսանում է Ղարաբայան հակամարտության առաջացման կարևոր գործունեություն մեջը, որից, համաձայն հայկական դիրքորոշումների, բխում են հետևյալ իրավական հետևանքները.

❖ Մինչ այդ որոշումը Լեռնային Ղարաբաղը իրավաբանորեն (դեռ յուրեւ) չի ներկայացնում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում,

❖ Լեռնային Ղարաբաղը հանձվել է Ադր. ԽՍՀ-ին, որն առանց իրավահաջորդի 1991թ-ին լրեց պատմության քատերաբեմը: Հետևաբար, ներկայիս Աղրբեջանի Հանրապետությունը, որը հանդիսանում է 1918-1920թթ. Աղրբեջանի Հանրապետության իրավահաջորդը, ոչ մի իրավական հիմք չունի Լեռնային Ղարաբաղը դիտարկելու որպես Աղրբեջանի տարածք և փորձելու ի հավակնությունները արդարացնելու համար վկայակոչել տարածքային ամբողջականության սկզբունքը:

❖ Կովբյուրոյի որոշման համաձայն, Լեռնային Ղարաբաղի հանձնումը Ադր. ԽՍՀ-ին նշանակվում է, որ Ադր. ԽՍՀ-ն այդ տարածքի նկատմամբ միանձնյա իշխանության իրականացման իրավունք չի ունեցել, և նրա ինքնիշխանությունը իր սահմաններում հայտնված տարածքների՝ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ սահմանափակված է եղել քազմակողմ պայմանագրերով (1921թ-ի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիր) և համաձայնագրերով (1921թ-ի հուլիսի 5-ի ՌԿ(թ)Կ Կովբյուրոյի որոշում): Հետևաբար, այն չի կարող դիտարկվել որպես Աղրբեջանի ներքին գործ:

❖ Այդ որոշման համաձայն, Լեռնային Ղարաբաղը ծեռք է բերել հատուկ պետականական կարգավիճակ, իսկ Ադր. ԽՍՀ-ում ապրող շուրջ 1 մլն հայությունն իր անվտանգության լրացուցիչ երաշխիքներ, քանզի հանդիսանում էր Ադր. ԽՍՀ ինտերնացիոնալ հանրապետության երկրորդ պետականակիր ազգը:

Աղրբեջանական կողմը, հիմք ընդունելով Կովբյուրոյի որոշման տեքստում նշված «**Լեռնային Ղարաբաղը քողմել Ադր. ԽՍՀ կազմում**»

Զարաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Ճևակերպումը, փորձում է հիմնավորել, որ Լեռնային Ղարաբաղը նախկինում իրենն է եղել: Այլ կերպ ասած, Լեռնային Ղարաբաղը աղբբեջանական տարածք է եղել նաև նախկինում: Նման հիմնավորումը ոչ մի քննադատության շլ դիմանում այն պարզ պատճառով, որ այդ ճևակերպումը ներկայացվում է փաստաթղթի ամբողջական տեքստից դրւու, մինչեղ իր ամբողջական ընկալմամբ այն ներկայանում է որպես միջազնական համաձայնագիր «հայերի և մուսուլմանների (այլ ոչ թե աղբբեջանցիների!)» միջև՝ առաջնորդվելով Արևելյան Անդրկովկասի երկու խաչոր էրնիկական խմբերի ազգային համերաշխատթյան անհրաժեշտության և այդ տարածքում արտազգային խոչըր հեղափոխական կենտրոն ստեղծելու հրամայականով: Միայն այս «վեհ» գաղափարական հիմնավորումները, բոլշևիկների կարծիքով, կարող էին լինել այդ ոչ սահմանադրական մարմնի կողմից ընդունված անօրինական որոշման լեզիտիմացման ճևական հիմքը:

3.12 Եռամբւության գործունեություն

Ղարաբաղյան հակամարտության առաջացման հիմքում ընկած են նաև հայ և աղբբեջանցի ժողովուրդների էրնոմշակութային տարբերությունները ու նրանցից յուրաքանչյուրի պատմական հիշողության առանձնահատկությունները:

Գտնվելով Հայկական բարձրավանդակի արևելյան մասում, Լեռնային Ղարաբաղը՝ կամ Արցախը պատկանում է այն տարածքների թվին, որում հազարամյակներ առաջ տեղի է ունեցել հայ ժողովորդի ճևափրումը: Հայերն այս տարածաշրջանի բնիկ ժողովուրդն են հանդիսանում, որոնք մշտապես բնակվել են այստեղ հազարամյակներ շարունակ, **առեղծեղով են մշակույթ ու պատմություն», որը նրանց պատմական եկաղորդության մեջ ամրագրված է «հայերների» գաղափարով:**

Աղբբեջանցիները էրնիկ ծագումնաբանությամբ սերում են քուրքանեցու ժաղովուրդներից և մինչև 20-րդ դարի սկզբները հայտնի են կովկասյան բարարներ անվանմամբ, որոնց մոտ դեռևս ճևափրաված չեր ազգային հավաքական ինքնազիտակցությունը: Այդ իսկ պատճառով, այդ ժամանակաշրջանում նրանց բնութագրման համար կիրառվում էին այնպի-

11 Տե՛ս Ստրաբոն, Աշխարհագրություն, XI, Հերոդոտոս, Պատմություն ինը գրքերից, Եր., 1986. Գամկրելիձե Տ.Վ., Իվանոս Բ. Բ. Ինդոևրոպեйские языки и индоевропейцы, Тбилиси, 1987.

սի էքնոնիմներ, ինչպիսիք էին «քուրքեր», «կովկասյան բուրքեր», «մահմեղականներ» և այլն: Իսկ աղյոթեզանցի հեղինակ Ա. Ալեքպերովի համաձայն, «աղյոթեզանցի» էքնոնիմը բնակչության շրջանում լայն կիրառում է գտնում միայն 1936թ-ից սկսած¹²: Չնայած դրան, որոշ աղյոթեզանցի պատմաբաններ, ջանարքաբար փորձում են աղյոթեզանցիների էքնիկ ծագումնաբանությունը սերել ինագույն ալբանացիներից¹³: Այս տարածաշրջանում **եկողոր լինելու անընդհատ զգացումը աղյոթեզանցիների մոտ ժամանակի ընթացքում առաջ է քերառ որոշակի «քերարժենության բարդույթ», որն էլ պատճառ հանդիսացավ տեղաբնիկ հայերի նկատմամբ այդքան դաժան վերաբերմունքի համար:** Բացի այդ, աղյոթեզանցիների մոտ դարասկզբից սկսած այս տարածաշրջանում **հայրենիքի փնտրառութիւն**, ինչպես նաև հայերի և քարարների միջև կրթամշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում առկա տարբերությունները վերացնելու համար քարար առաջնորդները իրականացնում էին հայ-քարարական բախումներ, դրա միջոցով փորձելով վերացնել այն հսկայական կրթամշակութային անդունիքը, որ գործություն ուներ տարածաշրջանում առաջադիմական դիրքեր գրավող հայերի և հետամնաց քարարների միջև: Աղյոթեզանցիների շատ բույլ փորձերը իրենց էքնիկ ծագումնաբանությունը սերել ինչ ալբանացիներից քախվում են այն պարզ փաստարկին, որ ներկայիս աղյոթեզանցիների էքնիկ հիշողությունը սկսվում է բուրքական աշխարհիկ պետության հիմնադիր Քեմալ Արաբուրզով և Վերջանում է Հեյջար Ալիևի կերպարով: Այս ամենը իմք են տալիս կարծելու, որ **աղյոթեզանական ազգը գտնվում է կազմակորման գործընթացում, և որի վերջնական ճևակորումը դեռևս ավարտված չէ:** Իսկապես, աղյոթեզանցիների էքնիկ ինքնազիտակցությունը սկիզբ է առնում XX-րդ դարի սկզբներից, և ինչպես նշում են շատ հեղինակներ, այդ գործընթացում մեծ դերակատարում ունի Ղարաբաղյան հակամարտությունը՝ որպես աղյոթեզանական ազգի կոնսուլդացիայի և ի դեմս հայերի՝ «արտաքին քշնամու» կերպարի ճևակորման հիմնալի աղյուր: XX-րդ դարի առաջին տասնամյակների իրադարձություններն էլ ավելի արագացրին աղյոթեզանցիների էքնիկ ինքնազիտակցության գործընթացը: Զգտելով ինտ շմնալ իրենց մյուս հարևաններից՝ հայերից և վրացիներից:

12 Ст. А. Алекперов. Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку. 1960. с. 71.

13 Мамедова Л., Гусейнов Г. Армяно-азербайджанский конфликт: проблемы мира и войны...// "Центральная Азия и Кавказ", 2003/5(29). с 78.

14 Վարդամյան Թ. Ազգամիջյան հակամարտությունը որպես էքնիկ ինքնության ճևակորման գործոն, // Լրաբեր հասարակական գիտությունների, 2003, N 1(607), էջ 76:

բից, որտե՞ս մինչ այդ էլ ունին ազգային պետականության հարուստ փորձ, աղբքեջանցիներն այդ գործընթացը սկսեցին հախուսն կերպով։ Եթե վրացիներն ու հայերի (հայերի դեպքում դա հաջողվեց միայն պատմական տարածքի 1/10-րդի վրա) 1918-1920թթ-ի իրենց նոր պետականությունները հոչակեցին էրնիկ օջախներում, ապա աղբքեջանցիները 1918-1920թթ Աղբքեջանի Հանրապետության սահմանները որպեսիս հիմնվեցին միայն տարածքային սկզբունքի վրա, որում հաշվի չին առնված ոչ էրնիկական պատկաննելիության, ոչ էլ պատմականության սկզբունքները, դրանով իսկ ակամայից շեշտելով, որ այդ տարածքները էրնոմշակութային առումով իրենցը չեն, այլ միայն էրնողեմոգրաֆիկ էքսպանսիայի, տեղաբնիկների դուրս մղելու արդյունքում են դրանք ձևավորվել։ Այդ քաղաքականությունը սկիզբ է առնում XVII-XVIII -րդ դարերից սկսած, հետագայում ավելի մեծ քափ ստանալով XIX- րդ դարի վերջում՝ կապված Իրանական Աղբքեջանից քուրքախոս բնակության լայնածավալ միզրացիոն հոսքերի հետ¹⁵։ Ըստ այդ տվյալների, մինչ 1897թ.-ը այս տարածաշրջանում բնակվող 1 մլն. քուրքերից 600 000-ը (60%) Իրանի տարածքից տեղափոխվել են 20 տարուց էլ քիչ ժամանակահատվածում¹⁶։ Այս մեծ միզրացիոն հոսքերը, բնականաբար, սետք է բերեին իրենց հետ նաև էրնոմշակութային շարժեր, որոնց ընթացքում էրնիկական հողի վրա տեղի ունեցող բախումները պետք է հաճախակիանային։ Առաջին այդպիսի արյունավի հայ-քարաքական(աղբքեջանական) քախումները այս տարածաշրջանում սկիզբ առան 1905-1906թթ., Բաքվում, Նախիջևանում, Շուշիում և այլ հայաշատ վայրերում։ Դրանից հետո ազգամիջյան ընդհարումներն էլ ավելի սաստկացան 1918-20թթ.-ին, արդեն պետական մակարդակով, Հայաստանի և Աղբքեջանի միջև։ Իսկ ինչ վերաբերում է էրնողեմոգրաֆիկ էքսպանսիային, ապա այն առավել ցայտուն դրսարվեց խորհրդային տիրապետության տարիներին, եթե Աղբքեջանին խնամակալության հանճնված Նախիջևանն իսպառ հայաքափվեց, իսկ Լեռնային Ղարաբաղի աղբքեջանցիների քանակն խորհրդային տարիներին աճեց մոտ 4 անգամ¹⁷ (տես այսուսակ)։

15 Бабаян Д. Нагорно-Карабахский конфликт и самоопределение армянского народа. // “Центральная Азия и Кавказ”. 2003/5(29), с. 85.

16 Նոյն տեղում:

17Տես www.rg.ru/news/534678.html

Տնտեսական գործողութերը

Մարզի քնակչությունը	1926թ-ի դրույամբ	1939թ-ի դրույամբ	1959թ-ի դրույամբ	1979թ-ի դրույամբ	1989թ-ի դրույամբ
Դաշեր	111,7 հազար	132,8 հազար	110,1 հազար	123,0 հազար	145,5 հազար
Աղորեցանցիներ	12,6 հազար	14,1 հազար	18,1 հազար	37,3 հազար	40,7 հազար

Բնականաբար, այս բոլոր էքնոդեմոգրաֆիկ տեղաշարժերը, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի հայության բնական աճի բացասական տեմպերը և մարզի էքնիկ կազմը փոխվելու աղբեցանական իշխանությունների նպատակադրված քաղաքականությունը լուրջ վտանգ դարձավ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության համար:

3.1.3 Տնտեսական գործուները

1921թ-ի հուլիսի 5-ի որոշման մեջ կա մի հետաքրքիր ձևակերպում, որը, մեր կարծիքով, նոյնպես հատուկ ուշադրության արժանի է Ղարաբաղյան հակամարտության առաջացման գործուների ուսումնասիրման առումով: Խոսքը վերաբերում է Կովկասության ոլորշման առաջին կետում տեղ գտած ծևակերպման հետևյալ մասին. «Մոտավորապես այս կարգությունը կապահպանության մեջ կազմակերպված է առաջարկության անհրաժեշտությունից եկնելով, **Վերին և Ներքին Ղարաբաղի տնտեսական կապերն ու մշտական կազմ Աղբքանի ենու հաշվի առնելով...**»: Ինչպես երևում է, Լեռնային Ղարաբաղը Աղբ. ԽՍՀ-ին հանձնելու հիմնավորման երկրորդ կետը, բացի ազգային համերաշխատությունից, հանդիսանում է տնտեսական հիմնավորումը, որով ակնհայտ է դառնում նաև Ղարաբաղյան հակամարտության հիմքում ընկած տնտեսական գործոնի գոյության փաստը, որը, մեր կարծիքով, հակամարտության առաջացման կարևոր պատճառանձային հիմքերից մեկն է:

Չատ դեպքերում, էքնորադարքական հիմք ունեցող հակամարտությունների առաջացման մեջ մասնագետները փորձում են նախևառաջ տնտեսական պատճառավորվածություն տեսնել: Խսկ երբեմն էլ, անտեսելով հակամարտության իրական պատճառները, փորձեր են արվում միայն տնտեսական պատճառներ տեսնել առկա հիմնախնդիրների լուծ-

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

ման հարցում: Ինչպես, օրինակ, ժամանակին ներկայացվում էր վրացարխազական հակամարտությունը որպես «մանդարինային պատերազմ», կամ Զավախիքի հիմնահարցը որպես միայն սոցիալ-տնտեսական իշմբ ունեցող այլորթեմ: Անշուշտ, տնտեսական գործուները միշտ էլ առկա են հակամարտություններից շատերի հիմքում: Դա բացատրվում է նաև հակամարտությունների առաջացման տեսական երկու մոդելներով՝ «դեպքիվացիոն» և «ֆրուտրացիոն» մեխանիզմների գործառնությամբ: Առաջին կոնցեպցիայի համաձայն, գրեթե բոլոր հակամարտությունների հիմքում ընկած են սոցիալական սուբյեկտների սպասումների և իրական վիճակի միջև առաջացած անհամապատասխանությունները¹⁸: Երկրորդի դեպքում, առաջացած հիասքափությունը իրական վիճակի և սպասվածի միջև առաջ է քերում երևակայական (կամ իրական) շեման պատճառների փնտրում, որն ավելի հաճախ բյուրեղանում է հակառակ էրների խմբի ներկայացուցիչների կերպարում՝ որպես ակնկալվող կարգավիճակի, սպասումների և այլնին հասնելու ռեալ խանգարող հանգամանք: Ղարաբալյան հակամարտության ինչպես առաջացման, այնպես էլ ինտագո դինամիկայի հիմքում ընկած են այս մեխանիզմները, որոնք հակամարտության տարբեր փուլերում դրսևորվել են յուրովի:

Այսպիս, հակամարտության ծագման նախասկզբնական փուլում, Ռուսաստանին միանալուց հետո (1813), Ղարաբաղում և ամբողջ Անդրկովկասում ցարական կառավարությունը սկսեց իրականացնել նաև տնտեսական յուրացման քաղաքականություն, փորձելով այս տարածաշրջանը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա: Բացի դրանից, կատարվում էին նաև որոշակի քայլեր, որոնցով փորձ էր արվում աշխուժացնել երկրամասի տնտեսական կյանքը: Այս առումով, Լեռնային Ղարաբաղում ավանդականորեն և նոր իրողություններին համապատասխան մեծ քափով զարգանում էին տնտեսության մի քանի ճյուղեր: Աշխարհագրորեն մոտ գտնվելով «Մետաքսը ճանապարհին», Ղարաբաղը ակտիվորեն ներգրավված էր միջազգային առևտրական հոսքերին: Մասնավորապես, Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր գրադարձ էր շերամապահությամբ, իսկ դարաբարյան մետաքսը հայտնի էր ամբողջ աշխարհում: Ծերամի որոշ տեսակներ Ղարաբաղում հայտնվել են նոյնիսկ ճապոնիայից: Ծերամապահության վլիերը Ղարաբաղում հանդիսանում էր Ծուչու գավառը, ուր կենտրոնացած էին հիմնական արտադրական հզորությունները, և որը համարվում էր տարածաշրջանի ամենախոշոր շուկան: 19-րդ դարի վերջին

Տեսեսական գործոնները

Լեռնային Ղարաբաղի 85 բնակավայրերում շերամապահությամբ գրաղփում էին 12 000 տնտեսությունների, որոնք կազմում էին բոլոր տնտեսությունների 45%-ը¹⁹: Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուն վերելքը պայմանավորված էր մի շարք բարենպատ գործոններով, որոնցից էին տարանցիկ առևտրական ճանապարհների և անգույցակետում գտնվելու, Լեռնային Ղարաբաղի վաճառականների և գործարանատերերի սերտ կապերը և վրապայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ և այն: Քաղաքական գործընթացները, սակայն, չուտով լնդհատեցին տնտեսության այդ ճյուղի բնականոն զարգացումը: Առաջին համաշխարհային պատերազմից սկսած, ազգամիջյան բախումների հետևանքով, ավելից էին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները, խարաբվեցին եվրոպական և ասիական երկրների հետ տնտեսական կապերը:

Բացի մետաքսագործությունից, Լեռնային Ղարաբաղում տնտեսության իմբնական ճյուղերից էին նաև զյուդատնտեսությունը, հացահատիկային մշակաբույսերի մշակումը և անասնապահությունը: Լեռնային Ղարաբաղում անասնագլխաքանակը հակամարտության ծագման սկզբում հասնում էր մի քանի հարյուր հազարի: Լեռնային Ղարաբաղում տարածված էր նաև օղու և գինու արտադրությունը, որը գործում էր օղու թուրման 3000-ից ավելի տեղամաս: Այս բնագավառում Լեռնային Ղարաբաղը առաջին տեղն էր գրաղփում Անդրկովկասում:

Լեռնային Ղարաբաղի տնտեսական և արդյունաբերական կենտրոնը անվերապահ համարվում էր Հռոշին, որը կենտրոնացված էին արյունաբերական և արհեստագործական բազմաթիվ գործարաններ: Այդ իսկ պատճառով, ամենակին էլ պատահական չէր, որ իրենց տարածքային հավակնությունները Ալյորեցանական կառավարությունը սկսեց Հռոշոց, բազմից վերձելով գրաղփել այն, որը նրանց վերջապես հաջողվեց 1918թ-ի սեպտեմբերի 22-ին, իսկ արդեն Ալյորեցանի խորհրդայնացումից հետո՝ խորհրդային Կարմիր բանակը 1920թ-ի մայիսի 12-ին:

Ընդհանուր առմամբ, հայկական ֆինանսական և տնտեսական կայլուտակն էր տնօրինում նաև ողջ տարածաշրջանում: 1900-ական թվականների սկզբներին Բաքվի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների 29%-ը պատկանում էին հայերին, 27%-ը ոուսներին, 18%-ը աղյուսական գործություններին, իսկ մնացած 13%-ը օտարերկրացիներին²⁰:

19 Տես Քարպատ Վ., նշվ. աշխ., էջ 252:

20 Տես նոյս տեղում, էջ 256:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Բնականաբար, այս ամենը շատ լուրջ պատճառ էր ադրբեջանական ազրեսիայի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական ռեսուրսներին խշխելու համար: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում, հատկապես խորհրդային տիրապետության տարիներին: Լինելով Ալրբեջանի կազմում, մարզը գրկված էր տնտեսական ինքնուրույնությունից: Գործնականում խօված էին բոլոր կապերը ՀՀ-ի հետ: Արիստականութեն տնտեսությունները խոչորոցնելու նպատակով հայկական գյուղերից խվեցին բնակչության և բարեքեր մասերում արագրեն ստեղծվում էին ադրբեջանական բնակավայրեր: Լեռնային Ղարաբաղի հիմնական տղամարդկային աշխատուժն ուղղվում էր արտագնա աշխատանքներին մասնակցելուն և Ալրբեջանի անջրդի հողատարածքները յուրացնելուն: Խորհրդային խխանության տարիներին Լեռնային Ղարաբաղում զարգացած էր կանանց աշխատանքի պահանջարկ ունեցող արդյունաբերությունը, որը պատճառ էր հանդիսանում մարզից տղամարդկանց հեռանալու համար: Ընդհանուր տնտեսական ցուցանիշներով Լեռնային Ղարաբաղը նույնպես հետին պլանի վրա էր մղված: Լեռնային Ղարաբաղը Ալրբեջանին զիջում էր մեկ շնչին ընկնող համախառն հանրային արդյունքով, արդյունաբերության, գյուղատնտեսության մերենայացմամբ և կապիտալ ներդրումներով:

Աղյուսակ 1.

ԼՂ և Ալրբեջանի արդյունաբերության ցուցանիշները 1986թ. դրույամբ²

Երկիր	1 Շնչին ընկնող շնչ	Արդյունաբեր. արտադրանքի աճը	Արտադրական հիմն. ֆոնդերը 1 շնչի հաշվով
Ալրբեջան	1838ոուր.	136,2%	1805ոուր.
Ղարաբաղ	1370ոուր. (մոտ 1/3-ով պակաս)	129%	778ոուր. (մոտ 2.5անգամ պակաս)

Անհավասարաչափ բաշխման դինամիկա էր նկատվում նաև կապիտալ ներդրումների առավելությամբ: Այսպես, 1986թ. Ալրբեջանում մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումները կազմել են 473, Նախիջևանում՝

342, Լեռնային ‘Ղարաբաղստ’ 181 ոուրլի²²:

Ընդհանուր առմամբ, Ղարաբաղյան հակամարտության տնտեսական պատճառավորվածությունը, պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. Վերին և Ներքին, կամ Լեռնային և Դաշտային Ղարաբաղները միմյանց հետ կապված էին տնտեսական քազմաթիվ թելերով. և միայն Լեռնային Ղարաբաղի նվաճումով կարող էր նորահայտ Աղրբեջանական հանրապետությունը տնտեսապես նորմալ գործառնել և հավակնել տարածաշրջանում գերլիշխառ դերի,

2. Աղրբեջանի տնտեսությունը նախկինում (այնպես էլ այժմ) մեծապես հիմնված էր միայն նավբարյունաբերության վրա, մինչեւ, Լեռնային Ղարաբաղում ավանդաբար զարգացած էին տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին գյուղատնտեսությունը, արինստագործությունը, մետաքսագործությունը, գինեգործությունը և այլն, որոնք կարող էին յուրաքանչյուր պետության տնտեսական կայուն զարգացման կարևոր երաշխիք հանդիսանալ:

3. Հակամարտության ծագման և հետագա ընդլայնման համար վճռորոշ գործոն էին տարածաշրջանում ապրող հայերի և աղրբեջանցիների միջև տնտեսական, քաղաքական, կրամշակութային զարգացման անհավասարաշափ տեմպերը: Ընդ որում, հայերի գերակայությունը և առավելությունը այդ ոլորտներում ակնհայտ էին: Այդ իսկ պատճառով էլ աղրբեջանական պետության առաջնահերթ նպատակներից մեկն էր նաև հայերի առաջնաբացի կասեցումը և այդ տնտեսական անհավասարաշափ բաշխման վերացումը:

4. Աղրբեջանը տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վարում էր տնտեսական մեկուսացման քաղաքականություն, ծգտելով մարզի հայերի համար սոցիալ-տնտեսական վատքար պայմաններ ստեղծելու միջոցով փոխել երկրամասի դեմոգրաֆիական պատկերը ի օգուտ աղրբեջանական տարրի: Հետևաբար, տնտեսական այս անհավասարաշափ բաշխումն ու Լեռնային Ղարաբաղի՝ Աղրբեջանի համբային կցորդը դարձնելու շարունակական քաղաքականությունը լուրջ պատճառներից մեկն էր հակամարտության բորբոքման և հետագա ընդլայնման համար:

3.14 ԱԽՄՐԴՅԱՆ ՔՐԵԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղարաբաղյան հակամարտության առաջացման, դիմամիկայի և կարգավորման վրա ազդող կարևոր հիմքերից են էկզոգեն գործուները, որոնք դրսարքում են հակամարտության վրա արտաքին ազդեցության տեսքով: Իսկ այդ ազդեցության բաղկացուցիչ մասն է կազմում աշխարհաքաղական բարյարտարրը, որի նշանակությունն ու դերակատարումը Ղարաբաղյան հակամարտության դիմամիկայի վրա անժխտելի են: Հատկանշական կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ հարավկովկայան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացները Ղարաբաղյան հակամարտության փոխակերպման վրա ունեցել են և այսուհետև կարող են ունենալ ինչպես **բացասական**, այնպես էլ **ոդական ազդեցության փոխակերպման** (պոզիտիվ տրանսֆորմացիա) էֆեկտ: Առաջինի դեպքում տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոփոխությունները հանգեցնում են հակամարտության բացասական փոխակերպմանը, որն, իր հերթին, դրսարքում է ուղղակի առակատման ճանապարհով ինչպես տարածաշրջանի հիմնական աշխարհաքաղաքական ուժերի, այնպես էլ հակամարտող կողմերի միջև: Երկրորդի դեպքում գործ ենք ունենում աշխարհաքաղաքական այնպիսի փոխակերպումների հետ, որոնք դրականորեն են ազդում հակամարտության շարժընթացի և կարգավորման արագության վրա: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում ստեղծվում է աշխարհաքաղաքական հավասարակշռվածության վիճակ, որն, իր հերթին, մեղմացնում է լարվածությունը հակամարտող կողմերի միջև և նպաստավոր պայմաններ է ստեղծում կարգավորման համար:

Այս առողջության հակամարտությունն ունեցել է աշխարհաքաղաքական մի քանի փաստակերպումներ, որոնք հարաբերականորեն կարելի է բաժանել հետևյալ **բրոնքքաղաքական ժամանակահատվածների**.

- ✓ ռուսական և օսմանյան կայսրությունների քայլայման ժամանակահատված,
- ✓ խորհրդային աշխարհաքաղաքական ժամանակաշրջան,
- ✓ հետխորհրդային ժամանակաշրջան,
- ✓ Եվրոպաներիկյան քաղաքական հարթություն:

Աշխարհաքաղաքական գործուները

Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական փոխակերպման սկզբնական փուլն ընդգրկում է ոռուսական և օսմանյան կայսրությունների քայլայման ժամանակահատվածը։ Ռուսական կայսրության քուլացումը, ներքին քաղաքական քարդ իրավիճակը հանգեցրեցին նրան, որ մի քանի անգամ հեղափոխական փորձեր կատարվեցին իշխանափոխության համար։ Կայսրության ենթակայության տակ գտնվող տարածքները վերահսկելի դարձնելու համար կրակվեցին նաև միջերնիկական բախումներ։ Առավել արյունավի ընթացան հայ-քարարական բախումները 1905-1906թթ.։ 1917թ-ի բոլշևիկյան հեղափոխությունից հետո Ռուսատանը ստիպված էր ժամանակափորապես լրել տարածաշրջանը, դրանով իսկ մեծացնելով Թուրքիայի նկրտումները աշխարհաքաղաքական վակումում հայտնված տարածքների նկատմամբ։ 1918թ.-ից տարածաշրջանում սկսված քուրքական ինտերվենցիան նպատակ ուներ լցնել առաջացած աշխարհաքաղաքական վակումը. միաժամանակ, ծնունդ տալով քուրքական աշխարհաքաղաքական ծավալապաշտության ամենացայտուն վկային՝ Ալբրեթանի Հանրապետությանը, որպես պանթուրքական գաղափարախոսության կյանքի կոչման առաջին քայլերից մենքը, ինչպես նաև որպես օտար կողում քուրքական պետության ստեղծման նախակիալուական հաջողված տարբերակ։ Ինչիցէ, քուրքական ծրագրերը մասամբ հաջողվեցին, իսկ ընդհանուր առմամբ, ոռուսական կայսրության քուլացման հետևանքով և տարածաշրջանում աշխարհաքաղաքական գերակայության բացակայությունից օգտվելով, հոչակվեցին երեք պետական կազմավորումներ՝ Հայաստանի, Վրաստանի և Ալբրեթանի հանրապետությունները։ Դրան զուգահեռ, նորից իրեն որպես առանձին **միկրոաշխարհաքաղաքական դերակատար դրամարեց** Լեռնային Ղարաբաղը, որտեղ երեք հանրապետությունների անկախության հոչակումից ընդամենը երկու ամիս հետո, 1918թ-ի հուլիսի 22-26-ը Շուշիում անցկացվեց Ղարաբաղի հայության առաջին համագումարը, որտւ Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց անկախ վարչաքաղաքական միավոր, ծևափորելով իր լեզվիմ իշխանության մարմինները, հանձինս Ազգային Խորհրդի և Ղարաբաղի ժողովրդական կառավարության։ Այսպիսով, անդրկռվլասյան երեք ազգային պետական կազմավորումներին գուգահեռ, միաժամանակյա ձևավորվում է նաև Լեռնային Ղարաբաղի անկախ կառավարությունը։

Անդրկռվլասյան երկրների խորհրդայնացումը Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական տրաստֆորմացիայի նոր փուլի սկիզբը հանդիսացավ։ Աշխարհի քաղաքական քարտեզի վրա նոր՝

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

խորհրդային տիպի պետության ի հայտ գալը շատ լուրջ աշխարհաքաղաքական տեղաշարժեր առաջացրեց ինչպես Հարավկովկասյան տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում: Բնականաբար, նորից տարածաշրջան վերադարձած բոլշևիկյան Ռուսաստանի իր աշխարհաքաղաքական շահերն ու «հեղափոխական ծրագրերն» ուներ այստեղ: Մասնավորապես, բոլրաբական ինտերվենցիայի արդյունքում ստեղծված Ալյութազանը բոլշևիկյան զաղափարախոսության իրականացման և հեղափոխության դեպի Արևելք արտահանման ամենահարմար աշխարհաքաղաքական հենակետը կարող էր լինել՝ որպես բազմազգ, ինտերնացիոնալ մի պետական կազմավորում, որի օրինակը կարող էր հետագայում նաև վարակի լինել: Այդ իսկ պատճառով, հետևելով Թուրքիայի կողմից կնքված «Ալյութազան» անվանմանը, սոցիալիստական նոր հանրապետության համար քողնվեց Պարսկաստանի հյուսիս-արևմտյան նահանգի անունը, որի հիմնական նպատակը, ինչպես նկատում է Ա. Մանասյանը, դեպի մուսուլմանական Արևելք սոցիալիստական հեղափոխության արտահանումը պետք է լիներ²³: Սակայն նորաստեղծ խորհրդային պետությունն, ըստ եռյան, իր աշխարհաքաղաքական հաշվարկներում բույ տվեց նաև որոշակի սխալներ: Եվրոպական ուղղության վրա հեղափոխական փորձերի ծախողումից հետո, Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը վերջնականապես կողմնորոշվեց հեղափոխությունը դեպի Արևելք տարածելու ուղու օգտին: Այդ նպատակի իրականացման համար, արտաքին քաղաքական նկատառումներից ելնելով, բոլշևիկյան իշխանությունները հայ ժողովրդի համար հանցավոր գործարքների մեջ մտան քեմալական Թուրքիայի հետ, որը նրանց հաշվարկներով, առաջիններից մեկը պետք է կանգներ սոցիալիստական զարգացման ուղու վրա: Նախ 1921թ-ի Մոսկվայի, իսկ այնուհետև Կարսի պայմանագրերով հօգուտ Թուրքիայի և Ալյութազանի օտարեցին հայկական հսկայածավալ տարածքներ, իսկ այնուհետև, որպես այդ քաղաքականության շարունակություն, 1921թ-ի հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության կովկասյան բյուրոն Ալյութազանին հանձնեց նաև Լեռնային Ղարաբաղը: Որոշ մասնագետներ Ռուսաստանի նմանօրինակ քաղաքականությունը նույնիսկ օրինաչափ են համարում, գտնելով, որ Անդրկովկասում խորհրդային հանրապետությունների ստեղծումը հնարավոր էր միայն Թուրքիայի անմիջական աջակցության կամ գոնե չեզոքության պահպանման պայ-

23 Մանասյան Ա. Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., 2003, էջ 112:

Աշխարհաքաղաքական գործոնները

մաններում, քանի որ վերջինս անթաքույց հովանափորում էր Ալլրեզանին²⁴: Այս կապակցությամբ, ինչպես նշում է Վ. Պոյախինը. «Բնականաբար, Ստալինը նույնպես հիանալի հասկանում էր դա (այն, որ պետք է զիջումներ արվեն Թուրքիային-Խ.Գ.), իսկ Լեռնային Ղարաբաղն ուղղակի հանդիսացավ մանրադրամ այդ մեծ ռազմավարական խաղում»²⁵: Մինչդեռ, հետագա քաղաքական զարգացումները ցույց տվեցին, որ Թուրքիան ոչ միայն չընեց սոցիալիստական հեղափոխության ուղին, այլև Համաշխարհային երկրորդ պատերազմում դարձավ ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցը, իսկ պատերազմի ավարտից հետո անդամակցեց Հյուսիսաւանույան պայմանագրին, 1952թ.-ին դառնալով ՆԱՏՕ-ի լիիրավ անդամ: Ինչևէն, տարածաշրջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխվեց մի նոր՝ խորհրդային աշխարհաքաղաքական հարթություն, որի շրջանակներում մնաց մինչև այդ հսկայածավալ կայսրության վիրումը: Խորհրդային աշխարհաքաղաքական տարածության մեջ, բնականաբար, հակամարտությունը վերջնականապես չկարգավորվեց, այն ավելի շուտ, ակտիվ վիճակից փոխակերպվեց թաքնված (լատենտ) վիր: Սակայն, միաժամանակ, անժխտելի է նաև այն փաստը, որ հակամարտության լարվածության դինամիկան էականորեն նվազեց, որը որոշակի վերապահումներով, կարելի է նաև որպես «**հակամարտության պողիսիլ վոխոկերպման**» էթեկտ դիտարկել: Խորհրդային աշխարհաքաղաքական հարթության մեջ հակամարտության կարգավորման գագարնակետը հանդիսացան Ծելեզնովոլսկյան բանակցությունները, և եթե լիներ այն ժամանակվա խորհրդային դեկավարության քաղաքական կամքը, հիմնահարցը լիովին իր արդարացի լուծումը կստանար գործող իրավաքաղաքական իրողությունների շրջանակներում:

Խորհրդային Սլույրյան կազմալուծումից հետո, Հայաստանի, Ալլրեզանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների անկախության հոչակումից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացն ընթացավ **հետխորհրդային աշխարհաքաղաքական** հարթությունում: Այս նոր աշխարհաքաղաքական իրավիճակը, կարծես թե, 1918-1920թ-ին տարածաշրջանում հաստատված աշխարհաքաղաքական իրողությունների հայելային արտացոլումն էր, որը Ա. Թոյնբիի

24 Прахин В. "Черный сад" международного сообщества: конфликт в Нагорном Карабахе и проблемы глобального мироустройства после "холодной войны." // Центральная Азия и Кавказ, 2002/ 6(24), с. 17.

25 Նույն տեղում, էջ 17:

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

բնորոշման համաձայն, վկայում էր պատմության որոշակի ժամանակահատվածում պարբերաբար նկատվող աշխարհաքաղաքական ցիկլերի կրկնության մասին²⁶: Իսկ այդ աշխարհաքաղաքական իրավիճակների նմանությունը կայանում էր հետևյալում:

1. Խորհրդային Սիության կազմալուծումը շատ գծերով նման էր Ռուսական կայսրության քայլայման գործընթացին, որի արդյունքում Ռուսաստանը ժամանակավորապես հետ քաշվեց Անդրկովկասից:

2. Դրա արդյունքում ստեղծվեցին երեք ազգային պետական կազմավորումներ + Լեռնային Ղարաբաղը՝ որպես ինքնուրույն պետական կազմավորում: Նմանապես էլ 1991թ.-ին Խորհրդային Սիության կազմալուծումից հետո այս տարածաշրջանում նորից ծևափորկեցին երեք նորանկախ պետություններ՝ Հայաստանը, Աղբեջանը, Վրաստանը ու դրան զուգահեռ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

3. Տարածաշրջանում աշխարհաքաղաքական գերակա ուժի բացակայությունը երկու դեպքերում էլ իր հետ բերեց այլ աշխարհաքաղաքական դերակատարների ակտիվացում: 1918-1920թթ.-ին Թուրքիայի և արևմտյան տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի, իսկ 1991-ից հետո՝ Թուրքիայի, Իրանի, ԱՄՆ-ի, ԵԱՀԿ և այլ ուժային կենտրոնների կողմից:

4. Բնականաբար, Ռուսաստանը ամբողջովին չհայտնվեց խաղության մեջ դուրս վիճակում՝ երկու դեպքերում էլ, շատ արագ ուշքի գալով կայծակնային աշխարհաքաղաքական փոփոխություններից, նորից հայտ ներկայացրեց տարածաշրջանում գերակա ուժի կարգավիճակի համար:

Հետխորհրդային աշխարհաքաղաքական տարածության կարևոր բնութագրիչներից մեկն էլ հանդիսացավ տարածաշրջան ԵԱՀԿ (ԵԱՀԿ) միջնորդական առաքելության նորամուտը: Առաջացած աշխարհաքաղաքական վակումը լցնելու նպատակով, ինչպես արդեն նշվել է, տարածաշրջանում սկսեցին ակտիվանալ տարբեր դերակատարներ: Այսպես, 1992թ.-ի փետրվարի 24-ին տարածաշրջան այցելեց Իրանի արտգործնախարար Ա. Վիլայեթին, որի միջնորդական նախաձեռնությունը աջակցություն գտավ նաև հակամարտող կողմերի մոտ: Այն դադարեց

Աշխարհաքաղաքական գործոնները

1992թ-ի մայիս 8-ի Շուշիի ազատագրումից հետո, երբ նույն օրը Թեհրանում պետք է կնքվեր հրադադարի համաձայնագիր: Ռուսաստանը նոյնապես, իր «հատուկ հարաբերությունները» հակամարտող կողմերի հետ հաշվի առնելով, 1991-1994թ-ին և դրանից հետո էլ ընկած ժամանակահատվածում ինչպես առանձին, այնպես էլ Մինսկի խմբի շրջանակներում շարունակում էր միջնորդական գործունեությունը: Այս փուլը նշանափորվեց նաև **Ռուսաստան - ԵԱՀԿ(ՇԱՀԿ) հակամարտությունների սրումով**, որը արդյունքում հանգեցրեց **ԵԱՀԿ կառուցվածքային իրավական փոխակերպմանը**: 1993թ-ից հետո, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը արդյունք չտվեցին, Ռուսաստանը Մինսկի խմբին զուգահեռ սկսեց նոր բանակցային գործընթաց, որը հանգեցրեց «Քիշքերյան արձանագրության» ստորագրմանը և հակամարտող կողմերի՝ Աղյուսակի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև Հրադադարի համաձայնագրի կնքմանը(1994թ-ի մայիսի 12): Այս իրավիճակն, իր հերթին, հանգեցրեց Ռուսաստան-ԵԱՀԿ հարաբերությունների սրման: Ռուսաստանը սկսեց վիճարկել կովկասյան տարածաշրջանում ԵԱՀԿ միջնորդական գործունեության իրականացման մանդատը: Արդյունքում, 1994թ-ի Բուլղակեցույան գագաթաժողովից հետո որոշում ընդունվեց ԵԱՀԿ կառուցվածքային իրավական փոխակերպման մասին, որը խորհրդակցական մարմնից վերածվեց կազմակերպության, իսկ Մինսկի խմբի շրջանակներում ներդրվեց համանախագահների ինստիտուտը, որը մեկ անգամ ևս փոփոխության ենթարկվեց ԵԱՀԿ Լիսարքույան գագաթաժողովից հետո՝ ընդունելով եռանախագահության (Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ) տեսք: Այսպիսով, հետխորհրդային տարածաշրջանում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման կուլմինացիոն կետերը հանդիսացան 1994թ-ի Քիշքերյան բանակցությունները՝ Հրադադարի համաձայնագրի ստորագրմամբ և Լիսարքույան գագաթաժողովը՝ հակամարտության կարգավորման ոչ հայանապատ սկզբունքների ձևակերպմամբ:

Հայաստանում խիստափոխության իրականացումից հետո, ըստ էության, հանձինս նախագահ Ռ. Քոչարյանի անձի, որը խորհրդանշում էր և Ղարաբաղի, և Հայաստանի դիրքությունների միասնականությունը, հայկական կողմերը բանակցություններին ներկայանում են միայն Հայաստանի Հանրապետության մասնակցության տեսքով:

Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական տրանսֆորմացիայի տեսանկյունից, մեր կարծիքով, առանցքային նշանակություն ունեցավ **Հայաստանի և Աղյուսակի միաժամանակյա անդամակցությունը Եվրոպայի Խորհրդին**, որով, արդեն, հակամարտության կար-

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

գավորումը տեղափոխվեց մի նոր աշխարհաքաղաքական՝ միասնական եվրոպական հարթություն, որի շրջանակներում էլ փորձ է արվում գտնել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հնարավոր ճանապարհները։ Ըստ էության, կարելի է նկատել արդեն տարածաշրջանում, ի դեմս Եվրոպական և Եվրումիության, նոր խոչը աշխարհաքաղաքական դերակատարի։ Միացյալ Եվրոպայի ակտիվացման իրադրությունը։ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի նման աշխարհաքաղաքական տրամադրության բաղադրական կարգավորման վրա կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ։ Նախ և առաջ, պետք է նշել, որ Եվրոպայի Խորհրդին՝ այդ հեղինակավոր կազմակերպությանը երկու հարավկովկայան երկրների անդամակցությունը որոշակի առումով սահմանափակում է հակամարտող կողմերի հնարավորությունները զինված ուժի օգնությամբ լրացնելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը²⁷։ Բացառապես խաղաղ եղանակներով Ղարաբաղյան հակամարտության լուծման հավաստիացումը Եվրոպայի խորհրդի առջև և Ադրբեյջանի, և Հայաստանի ստանձնած կարևոր պարտավորություններից է։ Բացի այդ, համաեվրոպական կառույցներին անդամակցությունը կարող է դրականորեն ազդել հարավկովկայան երկրների ինտեգրացիան գործընթացների վրա, աստիճանաբար բարձրացնելով նրանց միջև վստահության, համագործակցության և գործընկերության մակարդակը։ Բանն այն է, որ աշխարհաքաղաքան առումով համեմատաբար փոքր տարածաշրջանում գոյություն ունեն երեք ազգային հանրապետություններ, երեք հակամարտության օջախներ, երեք ինքնահոչակ պետություններ և մի շարք կոնֆլիկտային օջախներ։ Մյուս կողմից, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Մինսկի խմբի շրջանակներում տարվող բանակցությունների ծանաչափը փոխենք և այն Եվրոխորհրդարան փոխադրենք (որը ջանադրաբար փորձում է իրագործել Ադրբեյջանը) էլ ավելի կընդլայնեն բանակցային գործընթացին ներգրավված սուբյեկտների քանակը, դրանով իսկ, դանդաղեցնելով հակամարտության կարգավորման դինամիկան։ Ասկածի վկայությունն է հանդիսանում 2005թ-ի Եվրոխորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի շրջանակներում այդ կառույցի ներկային դեկավար ժ. Դկիսի, իսկ այնուհետև նրան փոխադրինած Դ. Ատկինսոնի ներկայացրած գեկույցները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա փուլի վերաբերյալ, որոնք, այնքան էլ չ-

27 Галстян Х. Карабахский конфликт: перспективы переговорного процесса.// Изменяющееся общество. 2001/1-2. с. 56:

Աշխարհաքաղաքական գործոնները

ին փայլում հիմնահարցի խոր, մասնագիտական իմացությամբ: Գաղտնիք չէ, որ նման **հակամարտությունների կարգավորման ժամանակ նպատակահարմար** է ոչ թե ընդայնել սուբյեկտների շրջանակը, այլ ընդհակառակը, հնավորինս նվազագույնի հասցնել արտաքին ազդեցության աստիճանը, քանակցային գործընթացը տեղափոխելով հակամարտող կողմների միջև ուղղակի քանակցությունների ձևաչափ: Եվլուսայի՝ այս տարածաշրջանում հետզինետե ակտիվացուող դերակատարման մասին է վկայում նաև «Ընդդաշնակած Եվրոպա» նոր հարևաններ» ծրագրի մեջ Հարավկովկասյան երկրների բնոդրկումը, որը կարելի է դիտարկել որպես տարածաշրջանի նկատմամբ միացյալ Եվրոպայի աշխարհաքաղաքական նկրտումների լուրջ ազդակ:

Դարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական հետազա փոխակերպման առումով, մեր կարծիքով, հնարավոր են տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումների մի քանի սցենարներ.

ա/ Տարածաշրջանում **նոր բաժանարար գծերի ստեղծում**, հարավկովկասյան երկրների տարրեր անվտանգության համակարգերին մասնակցություն, որը կրերի ուղմաքաղաքական մրցակցության և ապահնատեղացիոն գործընթացների ուժեղացում տարածաշրջանում, ինչը տարածաշրջանը կրաչի անվերջ երնքաղաքական և այլ բնույթի հակամարտությունների հորդանուտ: Այս սցենարի զարգացման պոտենցիալ հնարավորությունները պահպանվում են, եթե հարավկովկասյան երկրները վերջնականացնեն որդեգրեն անվտանգության ավախովման տարրեր համակարգերին մասնակցության և անդամակցության ճանապարհը: Իսկ այդպիսի հավանական առճակատումը և նոր բաժանարար գծերի ստեղծումը պահպանվում են Հավաքրական անվտանգության պայմանագրի կազմակերպության, որի անդամն է Հայաստանը և ՆԱՏՕ-ի միջև, որին բազմից անդամակցության ցանկություն են հայտնել Վրաստանն ու Ալբրեթանը: Ի դեպ, ուսւ-վրացական օրբստորեն վատրաքացող հարաբերությունները, թերևս, խոսում են այս սցենարի մեծ հավանականության մասին: *Լեռնային Նարարադի Հանրապետությունը, ի տարրերություն մնացած պետությունների, կողմնակից է տարածաշրջանում օտար զինված ուժերի բացակայության հայեցակարգին:*

բ/ Աշխարհաքաղաքական ամենահավանական զարգացումների դեպքում տարածաշրջանն ամբողջությամբ, ինչպես նաև հակամարտող բոլոր կողմները միասին կհայտնին գլոբալ աշխարհաքաղաքական ազդեցության գուտում: Ամենայն հավանականությամբ, դա կլինի Եվրոպաներիկան ազդեցության գոտին: Այս դեպքում շատ կարևոր է հաշվի առնել

Զարաքաղաքան բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

Խորհրդային Միության փորձը՝ սխալները չկրկնելու համար, քանզի, հնարավոր է, որ կարգավորման գործընթացը տարվի ոչ թե հակամարտածին պատճառների, այլ հակամարտության միայն երևութական մասի հետևանքերի վերացման ուղղությամբ, ինչը հետագայում նորից հակամարտության վերսկսման վտանգ կարող է պարունակել: Այդպիսի մտահոգության առիջ են տայիս Եվրոկառույցների՝ հատկապես Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում ներկայացված գեկույցներն ու ընդունված բանաձևերը Ղարաբաղյան, որոնք հակամարտությանը պատկերի ծևախեղված միտում են պարունակում: Ահա թե ինչու Հայաստանի և ԼՂՀ արտաքին քաղաքականության առաջնահերթությունների մեջ պետք է կարևորվի Եվրովելտորի ակտիվացումն ու ուժեղացումը, հատկապես Ղարաբաղյան հակամարտության իրական պատկերի և հիմնական քաղադրատարրերի ներկայացման, Եվրոարժեքային համակարգի լույսի ներքո հիմնահարցի պարզաբանման առումներով:

Գ/ Չի բացառվում, որ տարածաշրջանում ծևափորվի **աշխարհաքաղաքական ուժերի հավասարակշռվածություն** հիմնական խոշոր դերակատարների միջև: Դրա օգտին էր, մասնավորապես, արտահայտվել ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի կողմից համանախագահ Յու. Մերզլյակովը, ըստ որի Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը պետք է լինի այնպիսին, որ հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերն ել իրենց ավելի անվտանգ օգան, իսկ այդ տարածաշրջանում պահպանվի պատճականորեն հատատված ուժերի հաշվեկշիռը, այլապես այն կվերածվի նոր մրցակցության ասպարեզի²⁸: Այդ պարագայում, ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով Ղարաբաղյան հակամարտության աշխարհաքաղաքական փոխակերպումների նախկին փորձը, Լեռնային Ղարաբաղը կշարունակի մնալ որպես առանձին, անկախ պետական միավոր, իր ուրույն աշխարհաքաղաքական նշանակությամբ, հանդիսանալով լուրջ գործոն տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման համար:

Հարավկովկասյան տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներում իրավես Լեռնային Ղարաբաղին լուրջ դերակատարում է վերապահված: Չուտ իր աշխարհագրական դիրքով այն բարենպաստ դիրք է գրավում, գտնվելով հարավկովկասյան տարածաշրջանի կենտրոնում, որը < Մակիների «Heartland-ի տեսության »> համաձայն, աշխարհաքաղաքական ամենաառանցքային կետերից

28 «Հայաստանի Հանրապետություն», 25 օգոստոսի, 2005թ., N 151(3767), էջ 2:

Աշխարհաքաղաքական գործոնները

մեկն է հանդիսանում²⁹: Այստեղից են, որ դարերի լնդացքում հզոր քաղաքակրական ազդեցությունը են հաղորդվել հարակից շրջաններին: Այն հանդիսացել է հայ ժողովրդի ծևափորման և զարգացման պատմաշխարհագրական տարածքը, իր մեջ մարմնավորելով հայ ժողովրդին բնույթի հզոր կենսադաշտը: Պատահական չէ, որ հենց այստեղից են դուրս եկել քաղաքական, ռազմական, մշակութային ոլորտի և գլուխության ասպարեզների գործիչների մի մարտող աստղաբարոյլ: Հայ ժողովրդի համար Լեռնային Ղարաբաղը նույնն է, ինչ եվրասիականության ներկայացուցիչների համար Ռասսաստանը, որի համբանկում է նրանց առաջ քաշած «աշխարհագրական անհատականության», «զարգացման տեղի» կոնցեպցիային, բայց որի, այդ տարածքի մեջ են միաժամանակ ամփոփվում տվյալ ժողովրդի աշխարհագրական, էրնիկական, տնտեսական, պատմական և այլ բնութագրիչները³⁰: Հետևաբար, Լեռնային Ղարաբաղն իր պատմական հերակատարմամբ և աշխարհաքաղաքական առանձնահատկությամբ կարող է աշխարհաքաղաքական կենտրոնից վերածվել լուրջ աշխարհաքաղաքական ներքուժ ունեցող ակտիվ գործող դերակատարի: Դրա հիմքերը կան և դրանք հետևյալում են.

1. անվիճելի է Հարավային Կովկասում Լեռնային Ղարաբաղի կենտրոնական դասավորվածությունը, որը տարածաշրջանային վերահսկողության և գերակայության հաստատման համար ամենահարմարն է:

2. Հարավային Կովկասը, իր հերթին, հանդիսանում է աշխարհաքաղաքական խոշոր կենտրոններից մեկը, որի միջով են անցնում եվրասիական հիմնական հալուստակցման ճանապարհները, այնպես որ, վերահսկողությունը տարածաշրջանում նշանակում է:

* Անգլիացի հայտնի աշխարհաքաղաքանակետ Հ. Մակինդերի տեսության համաձայն, պետության համար ամենանպաստավոր աշխարհագրական դիրքը միջանկյալ, կենտրոնական դասավորվածությունն է: Խակ կենտրոնական դիրքավորումը, նրա կարծիքով, հարաբերական մեծություն է և կարող է կոնկրետ աշխարհագրական ենթատերսուում գործիչական մեջքը լինել: Համեմատած կարծիքում կարող է համարվել աշխարհագրական մասնակից կենտրոնական է համարում Եվրասիայի դիրքը, որպես կենտրոնական ու պատմության աշխարհագրական տառանցքը հանդիսացող տարածք: Բնականաբար, առանցքը համեմերկայինց տարածաշրջանային հետագոտության մակարդակ տեղափոխելով, կատարելով, որ Հարավային Կովկասի տարածաշրջանում կենտրոնական դիրք է գրավում ինչն է Լեռնային Ղարաբաղը, իր բնակչության մասնակից կենտրոնական մասնակից մասմամբ, այլ ոչ թե այն տարածքով, որը մնացել էր Լ. ԴիՍ-ի կողմէ խորհրդային տարիներին:

29 Ավելի մանրամասն տես **Маккиндер X.** Географическая ось истории. // ПОЛИС, 1995. N 4.

30Տես **Дугин А.** Основы геополитики. Геополитическое будущее России. М., 1999. с 86.

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

նաև ազդեցություն և վերահսկողություն այդ կոմունիկացիոն միջանցքի նկատմամբ:

3. Հարավային Կովկասը, միաժամանակ, Միջին Ասիայի տարածաշրջանի հետ կապված է շատ համգույցներով. ինչպես նաև նման է աշխարհաքաղաքական դերակատարման նմանությամբ, որը Զ. Բժեզինսկու աշխարհաքաղաքական հայեցակալում հանդիս է գալիս որպես «Եվրասիական Բալկաններ»³¹: Այս աշխարհաքաղաքական նորագոյացությունը ապագայում, Զ. Բժեզինսկու կարծիքով, մեծ դերակատարում է ունենալու, քանի որ «տարածաշրջանում, քաջի օգտակար հանածոներից, ներառյալ նաև ոսկին, կենտրոնացած են բնական գազի և նավի հսկայական պաշտպաններ, որն էլ այս աշխարհագրական արեալին հատուկ ձգութականություն է հաղորդում»³²:

4. «Եվրասիական Բալկաններ», իրենց հերթին, Եվրասիական մայրցամաքի կենտրոնական մասում են գտնվում, և այդ մայրցամաքի աշխարհաքաղաքական ապագայի հարցում առանցքային նշանակություն ունեն, քանի որ Եվրասիական տարածքի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերահսկողությունն անհար է իրականացնել առանց համապատասխան վերահսկողության «Եվրասիական Բալկաններում»:

Այս պարագայում էապես մեծանում է Լեռնային Ղարաբաղի աշխարհաքաղաքական դերակատարման նշանակությունը, որը Հ. Մակին-դերի առաջ քաշած աշխարհաքաղաքականության հիմնական օրենքի վերածնակերպված տարիերակով ընդունում է հետևյալ տեսքը. **Նա, ով վերահսկում է Լեռնային Ղարաբաղը, վերահսկում է Հարավային Կովկասը, Հարավային Կովկասը վերահսկելով, վերահսկողության տակ է հայանքում «Եվրասիական Բալկանները», «Եվրասիական Բալկանները» վերահսկող գերակայում է Եվրասիա մայրցամաքում, իսկ Եվրասիան վերահսկող վերահսկում է ամբողջ աշխարհը:** Այնպես որ, որոշակի նպաստավոր աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ի գործ է ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համերկային մասշտաբով **աշխարհաքաղաքական հենակետից վերածելու գեռստրատօնիական ակտիվ գործող դերակատարի, լիակատար պատասխանավորություն ստանձնելով աշխարհում խաղաղության և կայունության հաստատման գործում:**

31 Бжезинский З. Великая шахматная доска. М. 2000. с. 150.

32 Նույն տեղում, էջ 151:

3.2 Պարսպության ՀԱԿՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՐԺԱԹԱՎԵՐ

Ղարաբաղյան հակամարտության ժամանակակից փուլի շարժներացը ներկայանում է, երկու փոխկապակցված, միամամանակ, հարաբերականորեն ինքնուրույն՝ 1. *LՂՄՍ-ի և Աղր ԽԱՀ միջև սահմանադրական հակամարտության խորացման(1988-1991թ.), 2. ճրանց միջև ուղղակի զինված քախման (1992-1994թ.) փողերի տեսքով:* Ընդ որում, Ղարաբաղյան հակամարտության շարժի հատկանշական առանձնահատկություններից է, հանդիսանում նաև սահմանադրական հակամարտությունների աստիճանական խորացմանը զուգահեռ, ուժային ճնշման քաղաքականության կիրառությունը ինչպես Մոսկվայի, այնպես էլ Շաքվի կողմից:

Ներ կուլմից կատարված հսկամարտության շարժներացը ժամանակագրական վերլուծությունը բույլ է տալիս հստակ թերզելու, որ *LՂՄՍ-ին Ղարաբաղի հայության օրինական և իրավական դաշտում ծևակերպված պահանջներին խորեղային և աղբբեջանական իշխանությունները մշտապես պատասխանել են կոշտ, ուժային որոշումներով, որոնք էլ, արյունքում, էլ ավելի են խորացրել հակամարտող կաղմերի հակամարտությունները՝ հանգեցնելով ուղղակի զինված քախման LՂՄՍ-ին Ղարաբաղի հայերի և աղբբեջանական կառավարության միջև:*

Այսպես, իմնակերպ խորիրդային ղեկավարության հոչակված ժողովրդավարեցման սկզբունքների վրա, Լ. Ենօնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 1988թ-ի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանում, բնակութանական աշխատավորների գանկությանը, որոշում թնդունվեց խնդրել Աղր. ԽՍՀ և ՀԽՍՀ Գերագույն Խորհրդիներին թնդության առնել ԼՂՄՍ-ի Աղր. խՍՀ-ի կազմից դուրս բերելու և ՀԽՍՀ-ին միանալու վերաբերյալ հարցը. միաժամանակ միջնորդելով ԽԽՍՀ Գերագույն Խորհրդի առջև հարցի դրական լուծման համար»: Այս որոշումը մեծ արձագանք առաջացրեց ինչպես աղբբեջանական, այնպես էլ խորիրդային կենտրոնական իշխանությունների մոտ, որոնք միանշանակ քացասարար վերաբերվեցին այդ խնդրանքին: ԼՂՄՍ աշխատավորների խնդրանքին աղբբեջանական իշխանությունները բնական մի քանի օր հետո պատասխանեցին սումգայիթյան ողբերգությամբ՝ մինչ այդ ԽԽՍՀ-ում նմանը չունեցող ազգային պատկանելության հողի վրա բնակչության զանգվածային սպանության դեպքերով: 1988թ-ի փետրվարի 26-28-ի աղբբեջանական Սումգայիթ քաղաքում երեք օր շարունակ ամբոխը դամանորեն սպանում, քալանում, բռնաբարում էր քաղաքի հայ ազգաբնակչությանը: Խորիրդային կենտրո-

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

նական իշխանությունների քողովագործությունն ու անգործությունը աստիճանաբար էլ ավելի էլեմ սրում իրավիճակը և ոգերում աղքաբեջանական իշխանություններին: 1988թ.-ի մարտի 24-ին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին բնույնեց «1988-1995թթ Լեռնային Ղարաբաղի Ինքնակար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների վերաբերյալ որոշումը», որով նախատեսված միջոցառումները հետագայում իմբնականում ուղղվեցին մարզի աղքաբեջանական բնակավայրերի արիեստական խոշորացմանը և միակողմանի, աղքաբեջանամետ քաղաքականության իրականացմանը: **Հայության, Լեռնային Ղարաբաղի հայության բարձրացրած քաղաքական հիմնահարցի իրական լուծման փոխարեն, հիմնախնդիրը խճճվեց մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումների անհետանկար փափերով:**

Դրանից հետո Աղքաբեջանում մեծ քափ առան հայերի զանգվածային բռնագալրման դեպքերը Բարքից, Կիրովաբայից, Շամխարից և հայաշատ այլ վայրերից: Այսպիսի պայմաններում 1988թ.-ի հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանը քննարկեց և համաձայնություն տվեց Լ. ՄիՄ Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը: Դրան ի պատասխան Աղյ ԽՍՀ Գերագույն Խորհրդուրդի հունիսի 17-ին մերժեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդական սպատգամագործների մարզային խորհրդի խնդրանքը Հայաստանին վերամիավորվելու վերաբերյալ:

1. Հակամարտության երկարամյա չկարգավորվածությունը գնալով առաջին ալիանի վրա է մղում հակամարտության հումանիտար կողմերի լուծման հիմնախնդիրները, որոնցից առաջնային են համարվում փախստականների և տեղահանված անձանց հետ կապված հարցերը: Այս հիմնախնդիրների առաջքաշումը առանց հակամարտության կարգավորման մնացած կողմերի այդ քվում նաև LՂ կարգավիճակի հստակ ամրագրման, իրականում խոչընդոտում են Ղարաբաղյան համակարտության համապարփակ կարգավորման գործընթացին, քանի որ ամբողջական փաթերի առանձին հարցերի լուծումը կարող է կողմերից մեկի հետաքրքրություննը բանակցային հետագա առաջխաղացման նկատմամբ բրոլացնել, ինչն, իր հերթին, անորոշ ժամանակով կծգծի վերջնական կարգավորման գործընթացը:

2. Հակամարտության կարգավորման գործընթացը ներկայումս տեղափախված է այնպիսի միջազգային առյաններ, որոնց շրջանակներում, ՀՀ ԱԳ նախարար Վ Օսկանյանի կարծիքով, նախապատվություննը տրվում է պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքին⁴⁵:

Մասնավորապես, ԵԱՀԿ շրջանակներում տարվող Ղարաբաղյան

45 «Հայաստանի Հանրապետություն», 30 մարտի, 2005թ.

Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի հիմնահարցը

հակամարտության կարգավորման ներկա գործընթացների համատեքստում կարելի է փաստել, որ ի սկզբան այլ կառույցի ստեղծման հիմնաւրար սկզբունքներից են հանդիսանում սահմանների անխախտելուուրյան և պետությանների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքները, որոնցում արտացոլվում էր ինչպես ՎՊԿ անդամ երկրների, այնպես էլ արևմտյան երկրների տրամադրություններն ու ցանկությունները⁴⁶: Նմանատիպ նոտեցումներ են ամբազրված նաև 2004-2005ք լրճացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ միջազգային տարրեր կառույցներում և կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցներում: Մասնավորապես. նման միտումներ են նկատվում 2004-2005ք ԵԽՆԽՎ շրջանակներում ներկայացված թ. Դեվիսի և Դ. Առաջինանի զեկույցներում, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժնովի շրջանակներում Գորան Լեն Մարակերի, «Միջազգային ճնշնաժամային խումբ» միջազգային ոչ կառավարական կազմակերպության, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագուհների (Սեբյու Բրայզա, ԱՄՆ) կողմից վերջերս գալունազերծած Լ.Շ հսկամարտությանը նվիրված զեկույցներում: Այս զեկույցներում Լ.Շ կարգավիճակի հարցը քննարկվում է Աղրբեջանի կազմում ինքնավար կառավարման բարձրագույն աստիճանի տրամադրման ենթատեքստում, կամ էլ «հետաձգվող կարգավիճակի» կոնցեպցիայի շրջանակներում, առաջարկելով Լեռնային Ղարաբաղում «լրացույշ հանրարկեի*» անցկացման գաղափարը, ըստ որի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կրուշվի 10-20 տարի հետո, եթե այնտեղ կվերադառնան ալյուրեզանցի բնակիչները և նրանց մասնակցությամբ միջազգային դիտուղների ներկայությամբ կիրականանա Լ.Շ կարգավիճակին նվիրված հանրարկեն⁴⁷: Այս մոտեցումները, միգրացի, գալիս են նրանից, որ իննվում են նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքների սխալ մեկնարանման և շեշտադրման վրա: Այսպես, «ինքնորոշման իրավունքի» մասին խոսելիս, չպետք է միջազգային հանրարկությանը ապացուցել, որ Լեռնային Ղարաբաղի հայությունը իրավունք ունի ինքնորոշվելու (այդ դեպ-

46 ԵԱՀԿ. կառույցվածքը, գործունեությունը, հեռանկարները, Եր., 2005թ., էջ 26:

* «Լրացույշ հանրարկեի» գաղափարը ներկայում լայնորեն շրջանառվում է ինչպես Եվրոպայի խորհրդի, այնպես էլ ներքաղաքական քննարկությունների շրջանակներում: Մեր կարծիքով, Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը արդեն մեկ անգամ և մեկրանդիշու ինքնորոշվել է դեպի ազատ, անկախ պետականության կայացման օգտին, որն արդեն կայսցած փաստ է, և այժ հնարիսվոր չէ կասկածի տակ դնել ոչ մի դեպքում, ոչ մի «լրացույշ հանրարկեի» անցկացման պատրվակով:

բում նոր հանրաքվեի գաղափարը կարող է արամարանական թվայ), այլ պետք է ցույց տայ, որ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը՝ օգտվելով իր ինքնորոշման իրավունքից, վաղուց այն իրականություն է դարձրել: Այս առումով հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի իրականացումը և անկախ պետականության հոչակումը իենվում են շատ լուրջ միջազգային իրավական պրակտիկայի վրա: Մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի իրականացումը դիտարկվում է որպես երկարամյա և բազմափուլ գործընթաց⁴⁸, որի դեպքում ինքնորոշված սուբյեկտը, անկախ պետականության հարցը բարձրացնելու համար, պետք է առնվազն անցնի «ներքին» և «արտաքին» ինքնորոշման ճանապարհով⁴⁹: Ընդ որում, «արտաքին ինքնորոշման» հարց ժողովուրդը կարող է բարձրացնել միայն «ներքին ինքնորոշման» փուլն անցնելուց հետո: «Ներքին» ինքնորոշումն այս դեպքում ընկալվում է որպես մեկ պետության կազմում ինքնակառավարման իրականացում: Իսկ «արտաքին» ինքնորոշման իրականացման կառուցակարգը ենթադրում է ժողովոյի կողմից սեփական քաղաքական կարգավիճակի որոշում: Լեռնային Ղարաբաղի հայությունն, ըստ էության, շուրջ 70 տարի գտնվել է «ներքին ինքնորոշման» իրականացման փուլում (այսինքն՝ յայն ինքնակարություն այլ պետության կազմում), որի ինքնորոշման իրավունքի իրականացումն ու անկախ պետականության հոչակումը ամբողջովին տեղափոխվում է այս մոտեցման շրջանակներում: Սակայն, այնուամենայնիվ պետք է փաստել, որ վերջին ժամանակներս, հատկապես մեծացել են դարաբաշխան հակամարտության հումանիտար կողմերի շեշտադրմանն ուղղված միջազգային կազմակերպությունների ջանքերը, որոնք տրամաբանութեն հանգում են հակամարտության կարգավորման բաղադրատարերից երկրորդի՝ փախստականների և տեղահանված անձանց հիմնահարցին:

48 Pomerance M. Self-determination in law and practice: The neq doctrine in the United Nations. The Hague: Martinus Nijhoff Publishers, 1982. p. 73.

49 Jacobson J. Notes on self-determination // New Politics: A journal of socialist thought. 1992. N 1. pp. 53-54.

3.3.2 Փախստականների Հիմնահարցը

Փախստականների և տեղահանված անձանց իրենց նախկին բնակուրյան վայրերը վերադառնալու խնդիրը նույնպես մինչ օրս առավել տարածայնությունների տեղինք տփող հիմնահարցերից է: Այս հիմնահարցի լուծման դժվարությունը նախ և առաջ կախված է նրանից, թե ի՞նչ են հասկանում կողմերը «**փախստական**» կամ «**տեղահանված անձ**» ասելով, և ովքե՞ր են հանդես գալիս այդ կարգավիճակներով: Բայտ աղբբեջանական տեսակետի, «փախստականներ» են համարվում Հայկական ԽՍՀ-ից 1989-1990քք տեղահանված ազգությամբ աղբբեջանցիները (քուվ մոտ 160 000 մարդ), իսկ «ներքին տեղահանված անձանց» կարգավիճակին համապատասխանում են Լեռնային Ղարաբաղից (շուրջ 35 000 մարդ) և հարակից շրջաններից (մոտ 300 000) տեղահանված աղբբեջանցիները: Աղբբեջանական արտաքին դիվանագիտական քարոզության առանցքային լրույթներից մեկն է հանդիսանում փախստականների և տեղահանվածների 1 000 000 բվարանակի ներկայացումը՝ որպես ավելի պատկառազնու և հրատապ լուծում պահանջող հարց: Իրականում, և Հայաստանից, և Լեռնային Ղարաբաղից և ԼՂ հարակից շրջաններից զնացած աղբբեջանցիների բվարանակը միասին վերցրած չի անցնում 500 000-ը: Այդ պարագայում արդեն տրամաբանական հարց կարող է առաջանալ՝ իսկ որտեղից է վերցված 1 000 000 փախստականների և տեղահանված մարդկանց զանգվածը: Բանն այն է, որ իսկապես այդ 1 000 000-ը կա, քայլ միայն մեկ վերապահումով. այդ 1 000 000-ի մնացած 500 000-ը կազմում են Աղբբեջանի ազգությամբ եայ այն քաղաքացիները, որոնք Աղբբեջանում տեղի ունեցած 1988-1990քք. Էթիկ գործուների արդյունքում ստիպված քողեցին իրենց ողջ ունեցվածքը և կյանքին սպառնացող ամնիքական վասնգի առկայության պայմաններում եայտնվեցին իրենց պատմական եայրենիքից դուրս: Հետևաբար, հայկական դիրքությունների համաձայն, ըստ միջազգային իրավունքի, «փախստական» կարգավիճակը կարստ է տարածվել միայն այդ՝ քով մոտ կես միլիոն մարդկանց վրա, որոնք հանդիսանալով հակամարտության իրական գոկր, այսօր Աղբբեջանը չի պնդում «փախստական» իրավական ձևակերպման վրա, այլ ավելի շատ խոսում է տեղահանված անձանց հիմնահարցերի առաջնային լուծման մասին, լավ հասկանալով, որ այս պարագայում «փախստական» իրավական կատեգորիայի կիրառումը

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

աշխատում է լի վնաս իրեն: Փախստականներ ըստ էության, կարելի է համարել մյայն նախկինում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում բնակող ալլիքեջանցիներին, այն էլ մի քանի լուրջ վերապահումներով.

1. Հայկական ԽՍՀ-ում բնակող աղյօթեջանցիների մեծ մասը հեռացել է խաղաղ պայմաններում, իսկ նրանց տեղահանումը կազմակերպվել է ԽՍՀՄ համապատասխան գինված ստորաբաժանումների ուղեկցությամբ, անվտանգ պայմաններում:

2. Այդ լներացրում աղյօթեջանցիներից շատերը հասցրել էին իրենց տներն ու ունեցվածքը վաճառել կամ փոխանակել Բաքվից, Սումգայիթից, Կիրովարադից և այլ վայրերից մազապործ եղած հայերի հետ:

3. Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Լոռում, Շիրակում և Տավոչում բնակող աղյօթեջանցիները 1988թ դեկտեմբերյան երկրաշարժի ժամանակ ստացել էին ունեցվածքի համարժեք փոխսհատուցում, ինչպես երկրի մնացած բնակչները, և իրենց բնակուրյան վայրերը լրել էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից ենելով: Այսինքն, այդ մարդկանցից շատերին դասական առումով «փախստական» համարել չի կարելի, քանի որ համաձայն միջազգային իրավական սահմանման փախստական է կոչվում այն անձը, որը «**առասայական, դավանանքի, քաղաքացիության, քաղաքական, կամ էլ ոռօչակի սացիալական խմբին պատկանելության համար հետապնդումների հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դրւու և չի կարող օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ էլ չի ցանկանում օգտվել այդ պաշտպանությունից վերը նշված սպառնալիքների պատճառվածք»: Այլ կերպ ասած, փախստական է այն խաղաղ բնակիչը, որը հակամարտության արդյունքում հայտնվում է իր քաղաքացիության երկրից դրւու: Իսկ Լ.Դ.-ին հարակից աղյօթեջանական շրջանների բնակչները ակտիվորեն ներգրավված են եղել ինչպես ուազմական գործողություններին, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակմանը, այդ իսկ պատճառով ևս փախստական համարվել չեն կարող:**

Հետևաբար 1 000 000 փախստականների գոյությունը միֆ է, որով փորձ է արվում ահարեկել միջազգային հանրությանը, այդ հարցը ներկայացնելով հումանիտար իրավունքի անունից: Իրականում, հենց հակահումանիտական տեսանկյունից է Աղյօթեջանի կառավարությունը վարդում սեփական ժողովրդի նկատմամբ: Բերենք մի քանի օրինակներ:

Փախստականների հիմնահարց

1. Այս 10 տարիների ընթացքում միջազգային հանրությունը հսկայան գումարներ է ուղարկել Ադրբեջան հակամարտության ընթացքում տուժած մարդկանց կարիքները հոգալու, նրանց բնակարաններով ապահովելու և այլնի հարցում: Մինչեռ ադրբեջանական կառավարությունը այդ գումարները ծախսել է ոչ նպատակային, գրանցվել են կաշառակերության և գումարների յուրացման բազմաթիվ դեպքեր, այդ շարաշահումները հասնում են միլիոնավոր դոլարների: Այս փաստի վրա են ուշադրություն դարձել մի շարք միջազգային կառույցներ, այդ թվում նաև ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը, մատնանշելով այդ հսկայական շափերի հասնող հավշտակումները: Մինչդեռ, այդ գումարների նպատակային ծախսման դեպքում այդ մարդկանց վիճակը կիմներ ավելի բարվոր:

2. Ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանի Հանրապետությունը, հակամարտության վերսկսման առաջին խև օրերից, 1988թ Սումգայիթյան ջարդերից հետո բախվեց փախստականների խնդրի հետ: Այդ մարդկանց խնդիրները լուծելու համար միջազգային օգնությունը բաշխվեց նպատակային, խև Հայաստանում մինչ օրս էլ շարունակվում է փախստականներին բնակարաններով ապահովելու պետական քաղաքականությունը: Բացի այդ, ՀՀ-ը բարձրացնելով միաժամանակ փախստականների հիմնահարցը, հումանիտար իրավունքի տեսանկյունից, գուգահեռաբար տանում է այդ փախստականներին հասարակության մեջ ինտեգրելու գործընթաց, ի հակառակ ադրբեջանական կառավարության, որն այդ զանգվածին պահում է մարզինալացված վիճակում՝ դարձնելով քաղաքական շահարկման առարկա՝ լրացուցիչ ազդեցության լծակ դարձնելով այն միջնորդների և այլ միջազգային կառույցների վրա ազդելու համար:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը այս տարիների ընթացքում ՀՀ քաղաքացիություն է տվել մոտ 70 000 փախստականի: Խև դա նշանակում է որ մոտավորապես 15%-ով մեղմացել է այդ հիմնահարցը Հայաստանի համար: Փոխարենը Ադրբեջանում չկա նման որևէ գոնե մեկ դեպք:

4. Հակամարտության ընթացքում հայերը Ադրբեջանում թողել են մոտ 110 000 բնակարան: Հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայկական ընտանիքները ավելի քարանակ են, միջինը 4-5 հոգի: Դրանց մեծ մասը լրել է իր բնակության վայրը առանց մի

Քաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

որինց է փոխհատուցման, այն դեպքում երբ Հայաստանից գնացած աղյոթեզանցիները վաճառել են իրենց բնակարանները, դրանց մեծ մասը 1988թ երկրաշարժի ժամանակ ստացել է փոխհատուցում: Եթե աղյոթեզանական կառավարությունը միայն հայերի լրած բնակարանները տրամադրեր իր սեփական ժողովրդին, ապա այդ մարդկանց բնակարաններով ապահովման հարցը փաղուց լուծված կլիներ: Իսկ այսօր մենք ունենք մի իրավիճակ, երբ իշխող վարչակարգը իր սեփական ժողովրդի թշվառության հաշվին հարստացել է, հայերի այս բայոր բնակարանները գտնվել են իշխանականում Բարգում և Աղյոթեզանի մնացած քաղաքներում, ինչը կողմնակի եկամտի լավ առյուր է հանդիսացել նրանց համար: Փոխարենը, մի քանի հազար մարդկանց աղյոթեզանցիները մինչ օրս պահում են ծանր պայմաններում, վլաններում, ծնունդ տալով և ամեն կերպ իրախուսելով ահաբեկչության և խալամական ծայրահեղականության տարածմանն այդ վայրերում, միաժամանակ, փորձելով շարժել միջազգային հանրության ու զանազան միջազգային կազմակերպությունների գործը:

Խնդրահարույց է հանդիսանում տեղահանված անձանց կարգավիճակի հստակեցման հարցը: Ըստ աղյոթեզանական դիրքորոշման, հակամարտության արդյունքում այդ կարգավիճակը ձեռք են բերել բացառապես աղյոթեզանցիները, որոնք ստիպված են եղել լրել ԼՂ-ին հարակից իրենց մշտական բնակության վայրերը և տեղափոխվել են նոյն երկրի այլ մասեր: Այս կապակցությամբ հարց կարող է առաջանալ, իսկ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կան արյու՞՞ ագգությամբ հայ ներքին տեղահանվածներ, թե այդ կարգը տարածվում է միայն ԼՂ-ին հարակից Աղյոթեզանի 7 շրջաններում բնակվող աղյոթեզանցիների նկատմամբ: Պարզում է, որ **«սիմեարիկ վախզիշման»** տրամարանության համաձայն, քոնի կերպով **«մերքիճ տեղահանված անձնաց»** կարգավիճակով են օժտված Լեռնային Ղարաբաղի Մարտունու, Մարտակերտի և հայաբնակ Շահումյանի շրջաններից գաղթած հայ տեղաբնակները, քանի որ 1991թ սեպտեմբերի 2-ի, իսկ այնուհետև դեկտեմբերի 10-ի հանրավելով, այդ տարածքներում ևս հոչակվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Հետևաբար, այդ տարածքների բնակիչները, հանդիսանալով ԼՂ քաղաքացիներ, ստիպված են եղել լրել իրենց բնակության վայրերը աղյոթեզանական օկուպացիայի արյունքում և հայտնվել իրենց երկրի՝ Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններում: **Այնպես որ, համարժեքության առումով, աղյոթեզանցի «մեր-**

Փախստականների հիմնահարց

քին տեղահանված անձանց» հիմնախնդիրը պետք է դիտարկել ԼՂ Մարտունու, Մարտակերտի և Չափումյանի շրջանից տեղահանված հայերի՝ իրենց բնակության վայրերը վերադառնալու հարցին գուգահեռ, պահպանելով փախստականների համաձայնության գալու հակամարտող կողմերի որդեգրած տրամարանությունը:

Իսկ ինչ վերաբերում է մինչ այժմ՝ Ղարաբալյան հակամարտության կարգավորման բանակցային փաստարդերում փախստականների և տեղահանված անձանց հիմնախնդիրներին վերաբերող ձևակերպումներին, ապա պետք է նշել, որ դրանք նույնպես որպահպահ փախակի փախստակերպման են ենթարկվել, թեև կարելի է պնդել, որ այդ ձևակերպումները, այնուամենայնիվ, ամբողջությամբ չեն արտացոլում փախստականների և տեղահանված անձանց հետ կապված հիմնախնդիրները։ Այսպես, 1997թ. «վերեթքային» տարբերակում կարգավորման բաղադրյալարը մեջ առաջնային կարևորության հարց էր դիտարկվում «տեղահանված անձանց» վերադարձի խնդիրը (Խոդված V) և նրանց տեղաբաշխումը բաժանարար զծի երկայնքով։ Բնականաբար, այդ բաժանարար զին ընդգրկում էր միայն ԼՂ-ին հարակից շրջանները, իսկ համաձայնագրի մեջ չէր խոսվում Աղբեջան հայ փախստականների վերադարձի մեխանիզմների մասին, բավարարվելով միայն ոչ հստակ ձևակերպմամբ, որ «Կողմերը համաձայնվում են համագործակցել Միջազգային Կարմիր Խաչի, ՄԱԿ-ի փախստականների հարցու գերազույն հանձնակատարի և այլ միջազգային կազմակերպությունների հետ հակամարտության արդյունքում տեղահանված անձանց, անհայտ կորածների վերադարձի շուրջ»⁵⁰։ Հակամարտության կարգավորման «փալային» տարբերակում, ըստ էության, շատ վիճակարույց հարցեր, այդ քում նաև ԼՂ կարգավիճակի, փախստականների վերադարձի, Լաշինի, Շուշիի և Շահումյանի հիմնահարցերը բողնովում էին հետագա լուծման համար, իսկ կողմերը պարտավորվում էին միայն «քարեխսդորեն» շարունակել բանակցությունները հակամարտության մնացած ասպեկտների վերացման ուղղությամբ⁵¹։ Հաջորդ՝ «ընդիմանուր պետության» փարերում, Շուշիի և Շահումյանի հիմնախնդիրներին նվիրված III-րդ զիստում նշվում էր, որ «Կողմերը համաձայնվում են, որ բոլոր աղբբեջանցի փախստականները կարող են վերադառնալ իրենց բնակության վայր Շուշի»⁵²։ Ինչպես երևում է ձևակերպումից, Շուշիի աղբբեջանցիների փախստականի կարգավիճակով հանդես գալը մի բան կարող է միայն նշանակել՝ այն, որ

50 Տե՛ս Աբասօս Ա., Խաչատրյան Ա., նշվ. աշխ., էջ 147:

51 Նոյյն տեղում, էջ 156:

52 Նոյյն տեղում, էջ 161:

Զաղաքական քանակցություններ (տեսություն և պրակտիկա)

նրանք տեղաշարժվել են մեկ պետության տարածքից (այսինքն՝ ԼՂՀ) մեկ այլ պետության (այն է՝ Ադրբեյջանի Հանրապետության) տարածք. որն առավել օրյեկտիվորեն է, արտացոլում Լեռնային Ղարաբաղից հեռացած փախստականների իրավական կարգավիճակը: Քի Ուերյան փախստաբերում արդեն, քանի որ հարցը ներկայացվում էր ՀՀ - ԱՀ հակամարտության համատեքստում, փախստականների հարցին տրված էր այնպիսի լուծում, բայց որի, յուրաքանչյուր կողմ ինքն է փոխհատուցում իր ազգակիցների (փախստականների) կորուստները և պարտավորվում է հետագայում որևէ պահանջ չներկայացնել հակառակ կողմին ԼՂ հակամարտության հետ կապված (հոդված 12): Կարծում ենք, որ նման մոտեցումը մասսմբ արդարացված կարելի է համարել: Այսօր առավել իրատեսականը Հայաստանից և Ադրբեյջանից գնացածների համար հենց փոխհատուցումների մեխանիզմի կիրառումն է, սակայն ոչ թե «յուրաքանչյուրն իր համար» սկզբունքի համաձայն, այլ կիրառելով **տարրերակված մռացում Ադրբեյջանից և Հայաստանից հեռացած փախստականների նկատմամբ**, քանի որ կյանքին սպառնացող աննիջական վտանգների, գույքի, կայրի և ունեցվածքի կորուստների առումով դրանք անհամեմատելի մեծություններ են: Այդ փաստն է արձանագրել նաև ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի (ECOSOC) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն իր 33-րդ նստաշրջանում (18-26 նոյեմբեր 2004 թ.): Մասնավորապես, «կոմիտեն հորդորում է Ադրբեյջանին միջոցներ ծեռնարկել, որպեսզի հայերը և այլ ազգային փորբանասնությունների ներկայացուցիչները, որոնց սեփականությունն ապօրինի բռնագրավվել է, ստանան համապատասխան փոխհատուցում կամ համարժեք սեփականություն»*: Ադրբեյջանից զարդած հայերի թիվը գրեթե երեք անգամ շատ է ադրբեյջանցիների թվաքանակից, գումարած դրան նաև այն համագամանքը, որ հայերի մեծ մասը մազապուրծ են փախել Ադրբեյջանից, մինչդեռ հայաստանաբնակ ադրբեյջանցիների մեծ մասը վաճառել է իր ունեցվածքն ու խաղաղ հեռացել Հայաստանից: **Իսկ ինչ վերաբերում է «ներքին տեղահանված անձանց» խնդրին, ապա այդ իմնահարցը պետք է լուծել ադրբեյջանից և հայ «ներքին տեղահանվածների» խնդրների համարժեք կարգավորման ճանապարհով, ԼՂ վերահսկողության տակ գտնվող տարածքներում ապրող ադրբեյջանցիների վերադարձը կապելով ԼՂ Սարտունու, Մարտակերտի, Շահումյանի և Գետաշենի* շրջանների հայերի իրենց բնակության վայրերը վերադառնալու հարցի հետ:**

* E/C. 121/Add 104, 26 November 2004.

3.3.3 ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԵՏ ՔՍԵՄՍՆ ԵՒ ՏԱՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մյուս առանցքային և առավել վիճակայություն հարցերից մեկն է հանդիսանում հակամարտության գոտուոց զինված ուժերի հետ քաշման, այնտեղ միջազգային խաղաղարար ուժերի տեղաբաշխման և տարածքների վերադարձի խնդիրները: Համաձայն 1994թ Բուդապեշտի զագարաժողովում ընդունած որոշման՝, համաձայնություն էր ձեռք բերվել ԵԱՀԿ միջազգային խաղաղարար ուժերի կազմավորման և հակամարտության գոտում նրանց տեղակայման մասին: Է սկզբանե տարածայնությունների տեղիք տվող հարցերից մեկը հանդիսացավ միջազգային խաղաղարար ուժերի կազմի ճգրտումը: Զինված հակամարտության դադարեցման հարցում մեծ ակտիվություն և դերակատարում ցուցաբերած Ռուսաստանի համար օպտիմալ լուծում կլիներ արխազական և մերձդիմեստրյան սցենարների կիրառումը, ըստ որոնց հակամարտության գոտում կտեղակայվեին ԱՊՀ խաղաղապահ ուժերը, իսկ դա իմանականում ենթադրում էր մեծամասմբ միայն ռուսական գործերի ներկայություն տարածաշրջանում: Բնականաբար, դա ԵԱՀԿ անդամ մյուս երկրների կողմից դիտվում էր որպես Հարավկովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի կայսերական աշտական նկրուումների դրսնորում և, արդյունքում, ընդհանուր հավանության չարժանացավ: Սակայն լուրջ վիճաբանությունների տեղիք էր տալիս նաև, բացի Ռուսաստանից, ԵԱՀԿ մյուս պետությունների խաղաղարար մասնակցությունը: Մասնակուրապես, հայկական կողմերը լուրջ վերապահում ունեին Թուրքիայի զինված ուժերի բաժանարար գոտում տեղակայման վերաբերյալ, քանի որ այդ պետությունը հստակորեն հանդես էր գալիս հակամարտող կողմերից մեկին միակողմանի աջակցության օգտին, բազմից ուղղակիորեն իր անքարույց օգնությունը ցուցաբերելով Ալբրեժանին: Բացի այդ, 1914-1923թթ. Թուրքիայի կողմից

* Վերոհիշյալ տարածքները ներկայում գտնում են աղբբեջանական օկուպացիայի մեջ, իսկ բանի որ Հակոբյանի հայրանակ շրջանը 1991թ սպահտեմբերի 2-ին մասնակցել է ԼՂ անկախության հանրաքենն և նախկին ԼՂԻՄ-ի հետ միասին է դրսել եկել Ալբրեժանի կազմից, սպաս այնտեղ բնակվող հայերը, որոնք հակամարտության արդյունքում ստիպված են եղել բողոքի մշտական բնակության վայրերը, իրենց միջազգային իրավական կարգավիճակով համապատասխանում են «մերքին տեղահանված անձանց» կարգավճակին:

Զաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

հայոց մեծ եղեռնի իրականացումը, Հայաստանի Հանրապետության շարունակվող շրջափակումը, Ալբրեժանին ուղղակի ռազմական և միջազգային տարբեր ատյաններում դիվանագիտական օգնության ցուցաբերումի հայերի մոտ պատմականորեն ձևափորել են որոշակի անվատակարություն այդ պետության նկատմամբ, ի դեմս որի հայերը տեսնում են իրենց ազգային անվտանգության լուրջ սպառնալիքի: Այդ իսկ պատճառով, Քի Ռուսական բանակցությունների ժամանակ համաձայնեցվել էր մի բանաձև, որը, մեր կարծիքով, կարող է հետագայում ևս ընդունելի լինել միջազգային խաղարարար ուժերի կազմի որոշման համար: Ըստ այլ փաստաբերի, **Ղարաբաղյան հակամարտության գոտի ուղարկված ԵԱՀԿ գորակազմի մեջ ընդգրկվելու էին ԵԱՀԿ այն պետությունները, որոնք վախաղարձարար ընդունելի էին հակամարտող կողմերի համար, բացի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախազման երկրների, ինչպես նաև հակամարտող կողմերի հարկան երկրների զինված ուժերի ներկայացուցիչները (Խոդված 15):** Սակայն, հակամարտության գոտում միջազգային խաղարարար ուժերի տեղակայման հարցում մտահոգության մեջ այլ առիջ ևս գոյություն ունի: Բանն այն է, որ մինչ այժմ, շուրջ 11 տարի, հրայտադարձ ուժին հիմնականում պահպանվում է առանց որևէ օտար զինված ներկայության, գուտ հակամարտող կողմերի քաղաքական կամքի շնորհիվ: Հետևաբար, միջազգային ստորաբաժանումների տեղակայումը կարող է լարվածության նոր ալիք առաջացնել հայերի և աղյութեանցների միջև: Այնպես որ, հակամարտության կարգավորման հետագա ծրագրերում, մեր կարծիքով, պետք է այս առանձնահատկությունը հաշվի առնել և մշակել կարգավորման այնպիսի տարբերակ, որը հենվի բացառապես հակամարտող կողմերի՝ Ալբրեժանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հանրապետությունների քաղաքական կամքի և պատասխանատվության վրա: Նման մոտեցման հիմք կարող է ծառայել հակամարտության գոտում, այսպես կոչված, **«Վործնական գոտիներ»** ստեղծումը, որը կենքաղրի ռազմական, տեխնիկական ապահովման և անվտանգության տեսանկյունից երկուստեք վերահսկվող այնպիսի տարածքների փոխանակում, որոնք կապահովենին գորբերի լրաց քաշում և այնտեղ նախկին բնակիչների վերադարձ, որից ենոտ քայլ առ քայլ կարելի կլիներ հաջողված փորձը կիրառել ավելի լայն մասշտաբով: Իսկ որպես խաղարարար ուժեր, մեր կարծիքով, հնարավոր է կիրառել երկրագնդի այլ քեժ կետերում (մասնավորապես՝ Կոստոյան) հայ և աղյութեանցի խաղաղապահ գումարտակների մասնակցության ու համատեղ գործողությունների իրականացման վործը: Այլա-

Հարորդակցության ուղիմների վերաբացման և ապաշրջափակման խնդիրները

պես, ավելի լայն ընդգրկմամբ, զինված ուժերի դուրս բերումը, ինչպես ենթադրվում էր բանակցային մինչ այժմ գոյություն ունեցող համաձայնագրերի տարբերակներում, նման խիստ քենուացված բանակցային դիրքորոշումների, փոխադարձ անհանդուրժողականության հասարակական կարծիքի և տրամադրությունների պարագայում կասկածելի է թվում: Մինչդեռ նման փոքրիկ «**փարծնական գոտիներին»** ատեղծումը կարող է եապես մեծացնել փոխադարձ վստահության մակարդակը, նվազեցնել հոգական լարվածության աստիճանը և երկու էքնիկ խմբի ներկայացուցիչների՝ հայերի և ազդրեցանցիների համատեղ ապրելու և արարելու դրական օրինակ ծառայել:

3.3.4 Հսուրուսկառության ուղիների վերսբացման եւ սուստրացանության խնդիրները

Դարարայան կարգավորման առանցքային մյուս հիմնահարցը վերաբերում է հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափակման հիմնախնդրին: Ընդհանրապես, կարելի է նկատել, որ կարգավորման մինչ օրս առկա փաստաթղթերում այս հիմնահարցին շատ մեծ տեղ չի տրվում, բավարարվելով ընդամենը մեկ հոդվածի շրջանակներում (բոլոր երեք տարբերակներում էլ այս հիմնահարցը ըննարկվում է հոդված 6-ի մեջ)⁴⁴. Մասնավորապես, նախատեսվում էր բացել հաղորդակցության ուղիները՝ ճանապարհային և երկարուղային հաղորդակցությունը, կապի և էլեկտրահաղորդակցության գծերը, առևտրային և այլ բնույթի հարաբերությունները: Ծավալային առողմով նման ընդգրկումը, թերևս, կարող է նշանակել, որ այս հիմնահարցը իր կարևորությամբ զիջում է կարգավորման մնացած բաղադրիչներին: Իրականում, այս հիմնախնդիրը սերտորեն կապված է դարարայան կարգավորման հիմնական ուազմավարական ուղիների ճշգրտման հետ, որը հանգում է հետևյալին. **համագործակցություն կարգավորումից առաջ, քեզ կարգավորում, ենթա ոոր միայն համագործակցություն:** Ինչպես հայտնի է, աղբբեցանական կողմը որդեգրել է երկրորդ մուտեցումը, որի պաշտոնական դիրքորոշումը խարսխված է այն դրույթի վրա, որ համագործակցությունը հնարավոր է միայն Դարարայան հակամարտության վերջնական կարգավորումից հետո: Այս պաշտոնական տեսակետը իր ուղղակի արտացոլումն է գտնում նաև Աղբբեցանի վարած բաղաքանության մեջ,

որի հիմնական առանցքն է հանդիսանում ՀՀ-ի և ԼՂ-ի նկատմամբ «մեկուսացման» քաղաքականության իրականացումը, փորձելով հայկական կողմերին դրս մղել տարածաշրջանային նախագծերից, ինչպես նաև տարբեր մակարդակներում արգելակել հայկական կողմերի հետ համագործակցության բոլոր առաջարկները։ Այդ քաղաքականության վառ ապացույցն է նաև մերժիայի հետ համատեղ տարածաշրջանային այնպիսի ծրագրերի ֆինանսավորումը, որոնք անթաքույց հակահայկական ուղղվածություն ունեն և շրջանցում են Հայաստանը (խոսքը մասնավորապես Վերաբերում է Բաքու-Մբյալսի-Զեյխան նավքամուլի, Կարս-Ախալքալաք-Բբյալսի-Բաքու երկարօգի կառուցմանը և այլն)։ Այդքեզանի որդեգրած «կարգավորում, որը համագործակցություն» բանաձևը չի համապատասխանում նաև հակամարտության կարգավորման ներքին տրամարանությանը, քանի որ հաղորդակցության ուղիների վերաբացման և ապաշրջափակման, կամ ընդիւնուր առմամբ, համագործակցության հիմնահարցը անհնարի է։ Կարգավորման ընդիւնուր գործընթացից լրիս դիտարկել, քանի որ **այն կազմում է կարգավորման քաղաքությներից մեկը, այդ իսկ պատճառով այն պետք է կարգավորման գործընթացին գուգահեռ իրականացնել**։ Դեռ ավելին, ոչ ոք չի վիճարկում այն հանգամանքը, որ հակամարտուր կուղմերի միջև ծևափորված է անվստականության մի մեծ պատվար, որն առանց հաղթահարելու անհնարի է այն կարգավորել։ Իսկ նման դեպքերում միայն փոխադարձ անվստականության աստիճանական հայրահարտմը, քայլ առ քայլ վստահության վերականգնումը կարող են հակամարտության կարգավորման իրական բանալին լինել։ Այդ առումով, հարկ է նշել, որ հայկական կողմերի դիրքորոշումներն ավելի կառուցողական են։ Սասնավորապես, միայն դարսաւոյան կողմը ժամանակին 40-ից ավելի համագործակցության առաջարկներ է արել աղյոթաշնական կողմին սահմանային հիմնահարցերի, համատեղ ջրօգտագործման, բնապահպանական և այլ ոլորտների վերաբերյալ, որոնք բոլորն էլ մերժվել են Այրեքանի կողմից։ Նմանատիպ առաջարկներ են եղել նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից։ 1997թ համանախագահները կարգավորման փաթեթին գուգահեռ, ներկայացրել էին նաև հակամարտուր կողմերի միջև վստահության վերականգնման միջոցառումների քայլեր, ինչպիսիք էին Խջևան-Ղազախ շվման գծի երկայնքով համատեղ միջոցառումների իրականացումը (ի դեպ, ժամանակին լցորեն քննարկվում էր նաև Վրացական Սալախլու սահմանային անցակետի փախարեն, հայ աղյոթաշնական առևտրային շփումները տեղափոխել հջևան-Ղազախ գիծ), նույնը նաև Լեռնային Ղարաբաղի և

Կարգավորման նոր միտումներ

Աղքեցանի սահմանակից շրջաններում շուկաների և համատեղ փոքրիկ տնտեսական նախածեռնորյունների իրականացումը: Միայն այս դեպքում կարելի կլինի երբեկցե հաղթահարել հայերի և աղքեցանցիների՝ միմյանց նկատմամբ տածած այն հսկայական անվտահորյան անդունդը, որը տարիների ընթացքում ձևավորվել է նրանց միջև: Մինչդեռ ներկայում հաստատված «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակում ժամանակն առավելագույնս պետք է օգտագործել կողմերի միջև համագործակցության ծրագրերի մշակմանն ու կյանքի կոչմանը, որոնց հաջող իրականացումը միայն կարող է հակառակ կրողմի նկատմամբ կորսված վստահությունը վերականգնել:

3.3.5 Կսրագործության և մուտքային գործություններ

Խորշողական և ժողովրդական դիվանագիտության գեհսափեռ

Մարդկային քաղաքակրթության զարգացման հազարամյա փորձը կուտակել է հակամարտությունների ու վիճահարույց հարցերի կարգավորման հայտատ ավանդույթները: Դրանց քում, թերևս, ամենակատարելագործվածն ու կանոնակարգվածն են համարվում դիվանագիտական մեխանիզմները: Այսօր դիվանագիտությունը դարձել է այն համընդունելի գործիքներից մեկը, որի շնորհիվ են հաղթահարվում պետությունների միջև առկա տարածայնություններն ու մշակվում նրանց հետագա արդյունավետ համագործակցության ուղիները: Իր հազարամյա գոյության ընթացքում դիվանագիտությունը նույնպես զարգացել ու բարելավել է, հանդես գալով տարբեր մակարդակներուն: Այսօր Դարաբառյան հակամարտության կարգավորման առումով, մենք առնվազն գործ ենք ունենում տարբեր ձևաչափերում դրսնորվող դիվանագիտական ջանքերի հետ, որոնցից, թերևս, կարելի է առանձնացնել հետևյալները:

1. Պետական, պաշտոնական դիվանագիտության ձևաչափ: Այս դեպքում, պետականորեն, հատուկ դիվանագիտական ծառայությունների և մարդկանց միջոցով միջազգային հարաբերությունների ասպարեզում առաջ են քաշվում և պաշտպանվում տվյալ պետության պատշոնական դիրքորոշումները միջազգային հնչեղություն ստացած զանազան հարցերի վերաբերյալ: Ի թիվս դիվանագիտության այլ մակարդակների, պաշտոնական դիվանագիտության համար նույնպես հիմնական առաքելություններից է հանդիսանում շուտափույթ ու խաղաղ ճանապարհով.

քանակցային եղանակներով հակամարտությունների և վիճակարույց հարցերի լուծումը: Սակայն դա ոչ միշտ է լինում այդպես: Երբեմն, հենց երկրի վարած պաշտոնական դիվանագիտությունն է, որ խանգարում է տվյալ տարածաշրջանում հիմնահարցերի լուծմանն ու կայուն խաղաղության հաստատմանը: Ահավասիկ, որպես օրինակ կարելի է նշել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում Աղրբեզանի պաշտոնական դիվանագիտության որդեգրած ուղղեգիծը, որն, ընդհանուր առմամբ, վարում է «status quo» -ի պահպանման քաղաքականություն, իուս ունենալով հակամարտության «ասոեցված» իրավիճակից օգտվելով, հետագայում ունաշի հասնել հայկական կողմերի նկատմամբ, արյունքում, ստանալով առավելագույնը: Դրան եթե գումարենք հետզինտե ահազնացող և մեծ քափ առնող ռազմատենչ քարոզությունը, ապա խաղաղության հեռացող ուրվականի պատկերն էլ ապելի կամքողանա: Հայկական կողմերի համար ևս, որքան էլ տարօրինակ հնչի, ներկա իրավիճակի պահպանումը նույնպես կարող է ձեռնտու լինել, միայն այն տարբերությամբ, որ «status quo»-ի պահպանումը կհանգեցնի Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախ գոյության փաստի ճանաշմանը և հետագայում դրա միջազգային լեզիտիմության ամրագրմանը: Իրապես, հայկական կողմերի համար ներկա իրավիճակը կարգավորման մինչ օրս շրջանառված բոլոր տարբերակներից լավագույնը կարելի է համարել, հատկապես տարածքային խնդրի լուծման տեսանկյունից: Բոլորն էլ հասկանում են, որ փոխգիծման զնալիս պետք է ունեցածից ինչ որ քան զիջես, իսկ որպես այդպիսի զիջման մաս այսօր դիտարկվում են անկտանգության գոտու շուրջ քանակցությունները և ազատագրված տարածքի մի մասի վերադարձը Աղրբեզանին: Հետևաբար, մենք տեսնում ենք, որ ոչ միշտ է պաշտոնական դիվանագիտությունը իր ներուժն ուղղում խաղաղության հաստատմանն ու խաղաղ եղանակներով հակամարտությունների կարգավորմանը:

2. Խորհրդարանական դիվանագիտության ձևաչափ

Խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում նախկինում ևս նախաձեռնություններ եղել են, որոնցից, մասնավորապես, ամենանահակալիցը «Բիշքեքյան արձանագրության» ստորագրումն էր 1994թ մայիսի 6-ին, հակամարտող կողմերի՝ Աղրբեզանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի խորհրդարանների դեկավարների մակարդակով: Վերջին տարիներին նույնպես նորից նկատելի է խորհրդարանական դիվանագիտության ձևաչափի ակտիվացում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Նմանօրինակ հետաքր-

լուրջան աճը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանը, առավել քան երբեմ, ներգրավված է միջազգային քաղաքական գործընթացներում, իր ակտիվ մասնակցությունն է ունենում ԵԱՀԿ, Եվրոպայի խորհրդի և ՆԱՏՕ-ի խորհրդանական վեհաժողովներում, որոնց շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, այսօր լայնորեն քննարկվում է նաև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Այդ իսկ պատճառով, ի տարբերություն պետական իշխանության այլ կառույցների, ժամանակակից հայ խորհրդարանական դիվանագիտությունը մեծ հնարավորություններ ունի Ղարաբաղյան հիմնահարցն ավելի ազատ, անկաշկանդ և հափոր պատշաճին ներկայացնելու տարբեր միջազգային բանակցային ֆորումներում: Այդ հնարավորություններից բացի, զուտ միջազգային տարբեր կառույցներում (ՍԱԿ, ԵԱՀԿ, ԵԽՆՎ, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողով) ՀՀ խորհրդարանական պատվիրակությունների ներգրավվածությունն արդեն իսկ պարտավորեցնում է ունենալ հայեցակարգային, համակարգված և բազմավեկտոր մոտեցումներ:

Ղարաբաղյան հիմնախնդրի ներկայացման հարցում, մեր կարծիքով, խորհրդարանական, ինչու չե, նաև պետական դիվանագիտական ջանքերը պետք է կառուցել առնվազն երեք մակարդակի դիրքորոշումների նախապատրաստման և ներկայացման մարտավարության վրա. հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում աղբբեջանական կողմի որոշեցրած դիրքորոշումների բնույթը: Այս առումով առաջարկում ենք հայ խորհրդարանական դիվանագիտական ջանքերը կառուցել հետևյալ մակարդակների դիրքորոշումների կառուցման վրա.

1. առավելապաշտական (մաքսիմալիստական), երբ հայկական կողմերը վարում են ակտիվ հարձակողական դիվանագիտություն և ներկայացնում մաքսիմալ դիրքորոշումներ,

2. փոխզիջումային (կրոմայդիսային), երբ կարող է խոսք գնալ «տարածքներ կարգավիճակի դիմաց» կամ «տարածքներ խաղաղության դիմաց» և նման այլ մոտեցումների մասին,

3. ինվացիոն-մորարարական, որի լեռացում խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում քննարկվում, մշակվում և շրջանառվում են սկզբունքորեն նոր մոտեցումներ»:

Հակամարտության կարգավորման ներկա փուլում, կարծես թե, աղբբեջանական կողմի որսենքել է «գրոյական կետից» սկսելու մարտավարությունը, փորձ անելով տարբեր միջազգային ատյաններում Ղար-

55 Գալայան Խ. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի. կարգավորման ուղիներ. // Խորհրդարանական լումներ 29-30 մարտի, 2005թ., Եր., 2006թ., էջ 89:

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)

բաղյան հակամարտությունը ներկայացնել նոր լույսի (համանխար իրավունքի, եվրոպական արժեքային համակարգի) ներքո, խեղաքյուրելով հակամարտության իրական ակունքների, առաջացման և զարգացման շարժի հետ կապված շատ հարցեր: Այդրեցանական կողմի նման մարտավարության դեպքում, առավել նպատակահարմար է կիրառել «առավելապաշտական» մոտեցումը: Այս դեպքում հայկական կողմերը պաշտպանողական դիրքորոշումից պետք է անցում կատարեն ավելի ակտիվ քաղաքական քայլերի և ծեռնարկումների իրականացման: Մասնավորապես, հաշվի առնելով այն հաճագամնքը, որ Այդրեցանը, տարբեր միջազգային կառույցների՝ ԵԽԽՎ-ի և ՍԱԿ-ի հարթակներն օգտագործում է Ղարաբաղյան հակամարտության սեփական տեսլականը ներկայացնելու համար, որպես նախահարձակ քայլ, առաջարկվում է դիմել ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեային (իր խկ կամոնադրության 10-րդ եռվածի համաձայն⁶) քննության առնել 1992թ. ընդունած այն որոշման իրավական համապատասխանության հարցը, համաձայն որի Այդրեցանը միջազգային իրավունքի սույնեկությունը է ճանաչվել Ադր. ԽՍՀ սահմաններում: ՍԱԿ-ի կողմից ընդունված այս որոշումը, թերևս, արդարացված կարելի էր համարել միայն քաղաքական նպատակահարմարությունից եղնելով, հաշվի առնելով՝ այն էլ միայն այդ ժամանակահատվածում ԽՍՀՄ նման հղում կայարարության առանցքության գնացումների և սահման կազմայուժման, ինչպես նաև միջուկային գենքի շտարածման և միջազգային անվտանգության ապահովման իրամայականը: Խսկ ինչ վերաբերում է այս որոշման իրավական համապատասխանությանը, ապա պետք է նշել, որ այն գուրկ է որևէ իրավական իիմքից, քանի որ, նախ ՍԱԿ-ը 1992թ ճանաչել է Այդրեցանի Հանրապետությանը Ադր. ԽՍՀ սահմաններում, մինչդեռ այդ պետությունը իրեն հոչակել է 1918-1920թ. Այդրեցանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդ, և երկրարդ, եթե նույնիսկ լինդունելու լինենք այն տրամաբանությունը, ըստ որի այդ պետությունը ճանաչվել է իր խորհրդային սահմաններում, հետևաբար, պետք է լինդունել նաև, որ Լեռնային Ղարաբաղը լրիվ օրինական կերպով, գոյություն ունեցող իրավական լինքացակարգերին համապատասխան է դրաս եկել Ադր. ԽՍՀ կազմից, համաձայն 1990թ. ապրիլի 3-ի «Միութենական հանրապետությունների ԽՍՀՄ կազմից լույս գալու կարգի մասին» օրենքի: Ինչո՞ւ պետք է հենց այս որոշման օրինականությունը վիճարկվի: Բանն այն է, որ ՍԱԿ-ի այս որոշումը բավականին շատ է շրջանառվում՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավոր-

56 Устав ООН и Статут Международного Суда, Нью-Йорк, 1994, с. 11.

Կարգավորման նոր միտումներ

մանն ուղղված տարբեր միջազգային փաստաթղթերում: Աղրբեջանի Հանրապետությունը, չհամարելով իրեն Ալլը. ԽՍՀ իրավահաջողության միաժամանակ, միջազգային հանրության կողմից ճանաչվել է Ալլը. ԽՍՀ «տարածքներում»: Այս հանգամանքն են նշում նաև եվրոպական կառույցները. խնդրի իրավաքաղաքական իիմքերին անդրադառնալիս: Մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԽՆՎ կողմից գեկուցող Դ. Ատկինսոնը, որի ներկայացրած գեկույցի բացատրական նեմուրանումի 5-րդ կետում ուղղակիորեն նշվում է. «Լեռնային Ղարաբաղի տարածքին վերաբերող հակամարտությունը իրավես հակամարտություն է երկու սկզբունքների՝ տարածքային ամրողականության և ինքնորոշման: Մյու կողմից Ալլրբեջանի սահմանները միջազգային ճանաչում են գտել այն ժամանակ, երբ այդ երկիրը հոչակել է անկախություն (1991): Այդ ժամանակ Աղրբեջանի կազմում կար Լեռնային Ղարաբաղը: Մյուս կողմից, Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչությունը (որը մեծամասնություն էր նույնիսկ 1992-1994թթ. «էքնիկական զտումներից» առաջ) ծգում է ինքնորոշման իրավունքի իրականացման»⁷: Ի դեպ, աղրբեջանական կողմը փորձում է իրեն որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ներկայացնել 1991թ (այդ ծգումը ամրագրվել է նաև Դ. Ատկինսոնի գեկույցում), մինչդեռ այդ պետությունը միջազգային կառույցներին անդամակցել է 1992թ Խոնվարի 30-ին (ԵԱՀՆ) և 1992թ մարտի 2-ին (ՍԱԿ): Բացի այդ, աղրբեջանական կողմը փորձում է հնարավորինս չիշատակել 1991թ օգոստոսի 30-ին բնդունած «Անկախության հոչակագրություն», իսկ այնուհետև 1991թ հոկտեմբերի 18-ին «Պետական անկախության մասին» սահմանադրավկան ակտով խորհրդային Աղրբեջանի իրավահաջորդությունից հրաժարվելու և իրեն 1918-1920թթ. Աղրբեջանի Դենկրատական Հանրապետության իրավահաջորդ հոչակելու հանգանքը: Այդ քայլով Աղրբեջանը միանալաւակութեան գրկվեց Լեռնային Ղարաբաղի նկատմամբ որևէին տարածքային հավակնություններից: Չպետք է մոռանալ, այս բնիակառակը՝ պետք է հիմնավոր փաստարկումներով լայն շրջանառության մեջ դնել այն իրուղության գործոնը, որ նախակին խորհրդային միութենական հանրապետություններից, բացի մերժաթարյան երկրները, միայն Ալլրբեջանն է հրաժարվել Ալլը. ԽՍՀ իրավահաջորդությունից:

Այս նախաձեռնության քննարկումը ՍԱԿ-ում քույլ կտա իսկապես վեր հանել, որ միջազգային հանրության կողմից Աղրբեջանի միջազգային իրավասության կտիլիության ձեռք բերման հիշատակումը եղել է ավելի

շատ **քաղաքական**, **այլ ոչ թե իրավական** որոշման արդյունք, և ցույց տալ, որ տարածքային ամբողջականության սկզբունքը այս դեպքում կիրառելի չէ։ Այլրեջանի Հանրապետության նկատմամբ՝ 1991թ հոչակած անկախ պետականության ակտով Այլրեջանը իրաժարվում է խորհրդային Այլրեջանի իրավահաջորդությունից, որանով իսկ գրկվելով Ադր. ԽՍՀ-ին հանձնած տարածքների՝ ԼՇ-ի և Նախիջևանի նկատմամբ հավակնություններից։ Հետևաբար, համաձայն մեր առավելապահտական դիրքորոշման, միջազգային իրավունքի տեսանկյունից **«կօլուպացված տարածքներ են»** հանդիսանում Նախիջևանի և Ղարաբաղի մնացած տարածքները, որոնք գտվում են աղրեջանական վերահսկողության ներքո։


Փոխգիշումային դիրքորոշումների որդեգրուման դեպքում, բնականաբար, բանակցային ուազմավարությունը կառուցվում է **«կոչուա առևորի»** մարտավարաւթյան վրա, որի դեպքում արդեն խոսք կարող է գնալ «տարածքներ կարգավիճակի դիմաց», «տարածքների խաղաղության դիմաց» կամ այլ նման բանաձևերի մասին, որոնք, սակայն, մեր կարծիքով, քիչ արդյունավետ կարաղ են լինել։ Բանն այն է, որ նման էքնությալքական հականարտությունների կարգավորման ժամանակ փոխգիշումային լուծումների գնալս միշտ գիշման մասը հականարտող կողմերի համար ավելի ցավագին է լնդունվում, քան ձեռք բերածը։ Այս մասին 1994թ իր հարցազրայցներից մեկում բարձրածայնում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ակտիվ մասնակցություն ունեցած ուսու դիվանագետ Վ. Կազիմիրովը, նշելով, որ կողմերն, ընդիհանուր առմամբ, չեն սպառել առևտուր անել և փոխգիշումների գնալ, այլ իսկ պատճառով էլ էապես նժվարեցնում են բանակցությունների առաջխաղացումը⁵։ Իսկապես, փոխգիշումների տեխնոլոգիան և փոխգիշումային մշակույթի ծևափորամբ բավականին բարոյ և երկարատև քաղաքական գործընթացի արդյունք միայն կարող են լինել։ Բանն այն է, որ փոխգիշումային լածումները հենվում են այն սկզբունքի վրա, որ կողմերն, ընդհանուր առմամբ, մնում են շրավարարված, կամ կիսով շափ բավարարված։ Բացի այդ, փոխգիշումների հիմքով որոշումների ընդունման ժամանակ հարկ է նաև հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները։ 1. խոսում են **արդյո՞ք հականարտող կազմերը «միևնույն լեզվով», այսինքն՝ ծզգրաված է արդյո՞ք հականարտության քննկալման հիմնական հասկացութային ապարատը, 2. հստակեցված են արդյո՞ք նրանց միջև փոխգիշման համարժեքությունն ապահովող օրյեկտիվ շափանիշները և**

58 Տես «Ազգ», N 106 (608), էջ 2:

այլ:

Հետևաբար, փոխազդումների գնալիս հստակ պետք է ունենալ նմանատիպ հարցերի պատասխանները:

Ինչ վերաբերում է խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում **ինովացիոն-նորարական** դիրքորոշումների կառուցմանը, ապա այսուղի կարևորվում են սկզբունքորեն նոր մոտեցումների նշակումն ու դրանց համապատասխան հիմնավորումների ներկայացումը: Մասնավորապես, եթե խոսում ենք փոխազդման մասին, այն սահմանափակում է այլ հնարավոր առավել արդյունավետ լուծման տարրերակների փնտրությը: Տես գրաֆիկ՝



Ինովացիոն-նորարարական մոտեցումների ներկայացման առումով, թերևս, կարելի քննարկել մի քանի տարրերակներ: Մասնավորապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի կամ այլ եվրոպական կառույցների շրջանակներում ԼՂ հիմնահարցի կարգավորման մոդելների մեջ կարելի է ներառել հետևյալ մոտեցումը. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դիտարկել ոչ թե զուտ որպես մոնուեթնիկ հայկական պետություն, այլ այնպիսի պետական կազմավորում, որը երաշխավորված կլինեն, այդ քվում նաև ինստիտուցիոնալ-սահմանադրական ձևով, աղյորեցանական փոքրամասնության իրավունքները: Եթե այսօր, նույնիսկ հակամարտության վերջնական կարգավորման դեպքում, դժվար է պատկերացնել, որ Հայաստան կամ Աղյորեցան կարու են վերադառնալ փախստականները (ինչն արձանգրված էր նաև Ֆի Ուսեբյան փաստաթղթում), ապա դա կարելի է ընդունել ԼՂՀ պարագայում: Այդ դեպքում աղյորեցանական կողմի համար նման առաջարկից հրաժարումը կարող է ունենալ «քրամներանգի էֆեկտ» իր համար: Չէ՞ որ, եթե Աղյորեցանը չի համաձայնվում այն մտ-

քի հետ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադառնան և ապրեն այն 35 000 աղբբեջանցիները, որոնք բնակվում էին այնտեղ մինչ հակամարտության բորբոքումը և որոնց անվտանգությունը կերպաշխավորվի ԼՂՀ իշխանությունների կողմից, ապա ինչպես հակառակ դեպքում Լեռնային Ղարաբաղի հայերը համաձայնվեն 8 մլն.-անոց Աղբբեջանում ապրելու մտքի հետ՝ թեկուզեւ ինքնավարության ամենաբարձր աստիճանի պայմանով: **Այդ դեպքում արդեն, գործեւ, տրամադրանական կարող է թվայ «ըրացուցիչ հանրաքվեի» գաղափարը, քայլ ոչ թե իճնորոշման հանրաքվեի տեսքով, այլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր սահմանադրության ընդունման հանրաքվեի կազմակերպման առումով, որին այդ դեպքում, իրենց մասնակցությունը կունենան նաև Լեռնային Ղարաբաղի ազգությամբ աղքաղքանցի բնակիչները:** Կարգավորման հեռանկարների տեսանկյունից ինովացիոն-նորարարական մուտքումների կիրառման մեծ ներուժ կա նաև հակամարտության աշխարհադարձական տրանսֆորմացիայի ընդերքում, հատկապես դեպի եվրոպական նիհասնական ընտանիք հարավկովկասյան երկրների ինտեգրացման դեպքում: Հակամարտության փոխակերպման նման ուղի է նախանշում նաև հանրահայտ կոնֆլիկտաբան Յ. Գալտունզը, որը եվրոպական ինտեգրացիայի մեջ է տեսնում դարաբաղյան հակամարտության դրական փոխակերպման և **«առանցենդի»** մեթոդի կիրառման իրական հնարավորությունները, որի դեպքում հակամարտության կողմերի շահերը կարելի կիներ բավարարել առավելագույն²⁹:

3. Ժողովրդական դիվանագիտության ձևաչափ: Հակամարտությունների կարգավորման այս ձևաչափը, դիվանագիտական վերոնշյալ մեխանիզմների համեմատ, ունի որոշ առանձնահատկություններ: Նախ, ոմանք բավականին հոռետեսորեն են Վերաբերվուն ժողովրդական դիվանագիտության ռեսուրսին հակամարտությունների կարգավորման գործընթացում: Նրանց հիմնավորումը, որպես կանոն, հետևյալն է լինում. միջազգային հարաբերություններն ու նրանցում առկա հակամարտությունները արհեստավարժ քաղաքական-պետական գործիչների մենաշնորհային գործունեության ոլորտն են, այդ իսկ պատճառով էլ կասկածի տակ են դրվում ժողովրդական դիվանագետների ներուժն ու հնարավորությունը հակամարտությունների կարգավորման ու խաղաղության հաստատման գործում: Ժողովրդական դիվանագիտության ռեսուրսների նկատմամբ թերահավատության հաջորդ հիմնավորումն առնչվում է քաղաքականության ոլորտում որոշումների ընդունման հիմ-

նախնդիրների հետ: Բանն այն է, որ ինչքան էլ ժողովրդական դիվանագիտության ներկայացուցիչները հանդիպեն միմյանց, ընդհանուր հայտատարի գան, մեծացնեն փոխադարձ շփումների մակարդակը, այնուամենայնիվ, քաղաքական որոշում ընդունողներին է վերապահված վերջնական համաձայնությունների կնքման բացառիկ իրավունքը, հետևաբար, հենց քաղաքական էլիտայի մակարդակում է, որ պետք է ձեռք բերվեն երկուստեր ընդունելի և փոխահավետ լուծումները, որոնք նաև կպարտադրվեն կամ էլ ուղղակի կրնդունվեն հակամարտող հասարակությունների լայն շերտերի կողմից: Այս դեպքում, տրամաբանական հարցերից մեկը, որ կարող է առաջանալ, հետևյալն է՝ ի՞նչ դերակատարում ունի ժողովրդական դիվանագիտությունը հակամարտությունների կարգավորման գործընթացում և ե՞րբ պետք է այն կիրառել:

Ժողովրդական դիվանագիտության դերակատարումը. Հակամարտությունների կարգավորման գործընթացում ժողովրդական դիվանագիտության դերակատարումը հիմնականում կայանում է հետևյալում.

1. Ժողովրդական դիվանագիտությունը միտված է **բացառապես խաղաղ եղանակներով** հակամարտությունների և պետությունների միջև առկա հիմնախնդիրները կարգավորելուն:

2. Ժողովրդական դիվանագիտության մյուս կարևոր դերակատարումն ու առաքելությունը **հակամարտող հասարակություններում վատահության մքնարարակի ամրապնդումն ու ամրակայտումն** է, որն իրենից ներկայացնում է հասարակության ամենատարբեր շերտերի և մասնագիտությունների տեր մարդկանց միջև փոխադարձ շփումները, կապերն ու վերջապես, միջմշակութային երկխոսությունը, որն այսօր այդքան պակասում է մեզ:

3. Ժողովրդական դիվանագիտության կարևոր դերակատարումներից մեկն էլ **քաղաքական որոշումների ընդունման նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումն** է: Բոլորին էլ պարզ է, որ քաղաքական որոշումները ժողովրդի կողմից պետք է ունենան գոնեն նվազագույն աջակցություն դրանց լեզվիմությունը ապահովելու համար: Այդ առումով ժողովրդական դիվանագիտությունն ունի հսկայական ներուժ:

4. Ժողովրդական դիվանագիտության ծևաշափը լավ է աշխատում նաև հակամարտությունների կարգավորման վերաբերյալ **հնարավոր որոշումների փորձագիտական մշակման և դրանք քաղաքական որոշումներ ընդունողմերին տրամադրման ժամանակը**:

5. Ծատ կարևոր և արժեքավոր գաղափարներ կարող են իրենց նախ-

Քաղաքական բանակցություններ (տեսություն և պրակտիկա)


Անկան փորձարկումն անցնել հենց ժողովրդական դիվանագիտության մակարդակում, հետո նոր միայն կիրառվել պաշտոնական հանդիպումների ժամանակ:

Սակայն, որպեսզի ժողովրդական դիվանագիտության վերոնշյալ գործառույթներն հաջողությամբ իրականանան, անհրաժեշտ են հակամարտությունների խաղաղ կարգավորմանը նպաստող որոշակի նախադրյալներ, որոնց ստեղծման գործում ժողովականագիտության ուսուրսը ամենակին էլ երկրորդականներից չէ:

Հակամարտությունների խաղաղ կարգավորման նախադրյալները.

Հակամարտությունների կարգավորմանը նպաստող գործոնների շարքում, կարելի է առանձնացնել հետևյալները.

Հակամարտությունների կարգավորմանը նպաստող գործոնները*.



Հակամարտությունների կարգավորմանը նպաստող վերոնշյալ չորս գործոնների ձևավորման գործում ժողովրդական դիվանագիտությունն ունի որոշակի անելիքներ.

